



# ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ

ԵՒ ԻՐ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ, ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ, ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ,  
ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆԸ, ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ,  
ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ, ՈՒ ՆԵՐԿԱՅ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ .



Նախապես զաղղիբեհն հրատարակեց եւ այժմ հայերեհի վերածեց

ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՕՐՄԱՆԵԱՆ

ՆԱԽԿԻՆ ՊԱՏՐԻԱՐԲ



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՀՐԱՏԱՐԱԿԻԶՔ Վ. ԵՒ Հ. ՏԷՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ

1911

2003



156

2882

Պատ. Ինքնագրաբան  
" Երկր " օրաթիթիթի  
11/24 Երկր. 1911 Ինքնագրաբան

# ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ

ԵՒ ԻՐ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ, ՎԱՐԳԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ, ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ,  
ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆԸ, ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ,  
ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ, ՈՒ ՆԵՐԿԱՅ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ .



Նախապէս զազդիբրէն հրատարակեց եւ այժմ հայերէնի վերածեց

ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՕՐՄԱՆԵԱՆ

ՆԱԽԿԻՆ ՊԱՏՐԻԱՐՔ



ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ

ՀՐԱՏԱՐԱԿԵԶԷ Ս. ԵՒ Հ. ՏԷՐՆԵՐՍԷՍԵԱՆ

1911

A  $\frac{\text{II}}{5679}$

---

Տպագրութիւն Վ. Է. Հ. ՏԷՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ, Կ. Պոլիս

## Ն Ա Խ Ա Բ Ա Ն

---

ՀԱՅՈՅ ԵԿԵՂԵՑԻՆ իւր խնկական տեսակէտն նկատել, անոր բնութիւնը հեղութեամբ բացատրել, անիկայ օտարներուն հաստատութեամբ ծանօթացնել, անոր նկատմամբ տարածուած սխալ տարածայնութիւնները պարզել. այս էր շատոց խլիւր ունեցած բաղձանիս, բայց պատշտական զբաղմանց անողոք հարկը անոր գործադրութիւնը կը խափանէր: Հագիւ թէ այդ արգելէն զիս ազատ զգացի, առաջին ձեռնարկներէս մին եղաւ հնօրեայ բաղձանիս գործադրութիւնը, որուն հրատարակութիւնը ստանձնեց Փարիզի հրատարակիչներէն ERNEST LEROUX, հայերէնագէտ FRÉDÉRIC MACLER ուսուցչապետին միջնորդութեամբ:

Աւիստատարութիւնս համեստ չափի մէջ պարփակուած է, եւ ծանօթեցնեալ ուսումնասիրութեանց կերպարանը չունի, որովհետեւ նպատակս էր ընթերցողներու հանրութեան եւ դիւրաւ ըմբռնողութեան յարմար, եւ պարզ տեղեկութեան ծառայող գիրք մը պատրաստել, եւ ոչ թէ բնագիտական եւ հետազոտական տեսութիւններով ընդ-

լայնել: Գաղղիներէն լեզուով գրելու ալ նոյնպէս ունեցած նպասակիս նեշեւանքն էր. կը դիտէի օտարներուն միտքը լուսաբանել Հայաստանեայց Ռոզափառ Եկեղեցւոյն նկատմամբ: Օտարագրիներ շատ անբաւական տեղեկութիւններ ունեցած են մեր ներքինին նկատմամբ. իսկ ազգային օտարադաւաններ, աւելի իրենց ընթացքը արդարացնելու ջանացած են, Հայոց Եկեղեցւոյն ներքինը չթափանցելով, եւ մինչեւ իսկ պատմական եղելութիւնները այլագուցելով:

Եւրոպական մամուլին նեղիմախուօր քննադատները նպաստաւոր ընդունելութիւն յայնեցիկն համեատ աշխատանքիս: Ինձի աւելի գոհունակութեան առիթ տուաւ անոնց խոստովանութիւնը, թէ ցարդ գրեթէ անծանօթ մնացած նիւթի մը վրայ՝ բաւարար տեղեկութիւն կը ստանային:

Գործս նկատեցիկն իբր *Հայ Եկեղեցւոյ պատմութեան եւ սկզբունքներուն միջոց եւ գրեթէ կատարեալ անփութումը, որ նշանաւոր կերպով կ'անբողջացնէ իրենց յեզմով գտնուած սաստածարանական գրականութեան դատարկը* (FRANCIS CHAPONNIÈRE). Եւ միանգամայն կը ջանցնէ *Արեւելիի խնդիրներով շանագրգռող Արեւմտացիներուն զգացած մեծ պակասը* (EDWIN PEARS): Որովհետեւ, կ'ըսեն, կը բացատրէ *Արեւելեան տրիստնէտիքեան խնդիրներն ու արտայայտութիւնները, զորս Արեւմտացիներ մեծ օգտակարութեամբ պիտի կարդան*. նկատի առնելով զլիաւորապէս այն միտքեան կասկը որ *Եկեղեցիին ազգին նեշ կը միացնէ, եւ այն զարպարներն ազատամտութիւնը, որ Հայոց Եկեղեցւոյն տիրապէս ժողովրդականութեան արդիւնքն է* (A. DE SIEFANO): Սոյն գիրքը, կ'ըսեն, *պիտի*



չհազրգո՞ւն մանաւանդ անոնք, որ կը գրադին արկածներով հոշակաւոր եղած ժողովուրդի մը՝ կրօնական և պատանական խնդիրներով: Մեր եկեղեցւոյն մասին տեսութիւննիս ալ իւրացնելով կը յարեն, թէ նա իւր իմաստուն նկարագիրովը կրցած է հիմզերորդ դարեն առին առանդական քաջամտներով շնորհմանից, և համեմատաբար ողջամիտ մնացած է, ժողովուրդին հետ շփումը չկրակնցնելով (ALBERT HOUTIN): Մինչեւ իսկ եկեղեցական խնդիրներու նուազ հետամուտ եղողներ, կը գնահատեն մեր եկեղեցին, որ դառնական կէտերը նուազագոյն չափի կը վերածէ, կրօնական պաշտամանց կամայական ծանրութիւններ չբարդէր, իսկ դարս եղողները փրկութենէ չզրկէր, էպպէս ժողովրդական կազմութիւն ունի, և աշխարհական տարիս հետ կապակցեալ կը մնայ, իւր մասկարարութիւնն իսկ անոր ձեռքը յանձնէրս ասիճան (VICTOR CHAPOT): Կընդունին, թէ Հայոց եկեղեցւոյն ուսումնասիրութիւնը, հրահանգից է Արեւմտեան եկեղեցիին ալ, որուն նախապետութիւնը աշխարհական տարրէն կը մեկուսանայ, երբոր զայն չիրևար կտտախարել: Իսկ զիւրին պարունակութիւնը կը գտնեն *ուրիշ ու ձիշոյ* *քննադատութեանը* *անփոփոտած*, և *սոյց կամ հաւանականագոյն եղերութեանց* *փայ հիւնում*, և *իսկական կշտադատութեանը* *ուսումնասիրում* (ANGELO DE GUBERNATIS): Վերջապէս մեծ հեղինակութիւն մը կը վկայէ, թէ այդ գիրքը *հիմնապէս կը ձանչցնէ*, *չստ հին և շատ սկզբնաւոր եկեղեցի մը*, որ պահումն ու զարգացած է *ուրիշ եկեղեցիներու ազդեցութենէն դուրս*, *անոնց գերիշխանութիւնը երբևէ չէ ձանչցած*, և *հաւատարմութեանը պահպանումն է Արեւելեան նախնական տրիստնութեան ժառանգութիւնը*, *ինչպէս որ այն կազմումն էր սուսփ*

*Խաչներուն անմիջապէս յաջորդող դարուն մէջ* (HYACINTHE LOYSON): Այդ դաստիարակները աշխատանքիս նպատակին ծառայած ըլլալուն գոնունակութիւնը կը ներշնչեն:

Իսկ ինչ որ ինձի գրեթէ անակնկալ մը եղաւ, ազգային շնորհակից եւ ազգային մամուլին մէջ արտայայտած համարձակ գնահատումն էր, որով նոյնիսկ մերայնոց հմտութեան յարմար ու կարեւոր նկատեցին այդ հրատարակութիւնը. եւ մինչեւ իսկ օգտակար դատեցին, որ *այդ աշխատութիւնը ծառայէր իբրեւ ձեռնարկ մեր հոգեւոր դպրոցներում, իբրեւ յաւազոյն դասագիրքը Հայոց եկեղեցոյ մասին (Մշակ)*. Եւ բացարձակ յայտարարեցին, թէ *ամէն Հայոց մասնակցարանին մէջ գտնուեալ արժանի է այս գիրքը, որ Արեւելիի ամէնէն ազատական եկեղեցիին վրայ կը խօսի, Արեւմտսիի ամէնէն անկաշկանդ միսիստեր ֆրիսոնեայ մասնակցի ոճովն ու ներշնչումովը (Քիւզանդիան):*


Ասկէ առաջ եկաւ նոյն աշխատութիւնը հայերէնի քարգմանելու միտքն ու առաջարկը, որուն սկիզբէն համալիս չգտնուեցայ, քանի որ խմբագրութիւնը իսկապէս օտարներու ուղղուած լեզուով ու ռոնով պատրաստուած էր. մինչդեռ յօժարակամ հաւանեցայ ռուսերէնի եւ անգղիերէնի քարգմանել ուղղուելուն: Բայց առաջարկներուն կրկնուիլը եւ փափաքներուն զօրանալը՝ զիս այ համակերպելու բռնադատեցին, մանաւանդ երբոր գերագնիւ եւ եկեղեցաւէր ազգային մը, Կարապէտ Էփէնսի Արապեան, Զմիւռնիոյ առեւտրական հրատարակի գլխաւորներէն, պատրաստակամութիւն յայտնեց սպագրական ծախսերուն ձեռնարկութեան: Անա թէ ինչպէս եւ ինչու առաջիկայ հրատարակութեան ձեռնարկեցի:

Այս տեղ իդէպ կը սեպեմ անցողակի ակնարկել ինչինչ ֆննադասութեանց, որոնք մեր հոռոճադաւան ազգայիններէն ոմանց կողմէն յայտնուեցան: Իրողութիւնը շատ բնական էր, քանի որ իմ տեսութիւններս իրենց նպաստաւոր չէին: Իսկ պատմական կէտերու մասին, որոնք յիշած եմ, թէ տարբեր կարծիքներ ալ կը գտնուին, բայց նպատակս չէ եղած եւ չէ, ֆննադասական հետազոտութեանց հետեւիլ այդ գրուածքին մէջ, այլ ընդհանրացնել եւ ընկալելով դրութեամբ յառաջել: Ազգային եկեղեցւոյ պատմութեան մասին առանձինն աշխատութեան սեռնարկած եմ, եւ անոր մէջ տեղի կը գտնեն պէտք եղած բացատրութիւնները:

Պարզիւրեւէն հայերէն *վերածել* ըսի մակագիրին մէջ, եւ ոչ *թարգմանել*. Վասնզի ստիպուած էի բացատրութեանց ոմը ոչնչս օտարներու ուղղուած ձեւերով պահել: Երբեմն ալ պէտք էր մերայնոց նուազ ծանօթ կէտերը աւելի յստակ կերպով պարզաբանել: Ասկէ զատ եւրոպական լեզուներ շատ մը նշարանութիւններ ունին, որոնց համապատասխանը հայերէնի մէջ վնասուած չէ, եւ պէտք կ'ըլլայ դարձուածներով բացատրել: Նոյն իսկ բառերու սեռերը, որ մեր մէջ չկան, կը ստիպեն կրկնութիւններով իմաստները նշել: Այդչափ տարբերութիւններ հասարակ թարգմանողի մըն ալ մեղադրանք չեն կազմեր, բոլոր ներկայ պարագային, նոյնիսկ նեղիմակն է՝ որ իւր գրածին թարգմանիչը կը լինի: Աւելի երկարել պէտք չեմ տեսներ՝ ներկայ հրատարակութեան պատճառն ու նպատակը ու պարագաները բացայայտ կերպով ծանուցանելու համար:

Մեր Ազգային եկեղեցւոյն անկեղծ սէրն է, եւ

անոր իսկութեան մասին կազմած համոզումն է, որ ինչ-  
պէս կեանքիս եւ գործերուս, նոյնպէս գրիչիս եւ խօսքե-  
րուս կ'առաջնորդեն. փառիակելով միտ՝ Հայաստանեայց  
սուրբ եւ առաքելական Ռդդափառ եկեղեցին աւելի սի-  
րելի ընել իրեններուն, եւ յարգելի օտարներուն:



Քերտ, 1911 ապրիլ 2/15

---

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

ԳՐԵՑ՝ Մ. ՊԷՐԹՐԱՆ ՊԱՐԷՅԸ

Հայոց եկեղեցւոյ պատմութեան վրայ հրատարակութիւն մը, զոր գրած է նոյն եկեղեցւոյ բարձրաստիճան ներկայացուցիչներէն մէկը, անշուշտ պէտք է իբր օգտակարագոյն հրատարակութիւն ճանչնալ: Ներկայ աշխատութիւնը ճշգութեամբ կը պատկերացնէ արեւելեան քրիստոնէութիւնը իւր վարդապետութեամբ, իւր հաւատալիքներով, իւր նուիրապետութեամբ, ու միեւնոյն ատեն քաղաքական եւ կենցաղական ուսումնասիրութեանց ալ կը նպաստէ: Այս եղած է իւր Հեղինակին ալ նպատակը, որ ուզած է ամէնուն դիւրամտելի ընծայել իւր նիւթը. հետեւաբար պէտք չէ անոր մէջ փնտռել Հայաստանի քրիստոնէութիւն ընդունելէն մինչև մեր օրերը կատարեալ և տարեգրական պատմութիւն մը: Այսպէս ըրած ըլլալու համար, Հեղինակը պարտաւոր պիտի ըլլար վկայութեանց ներքև խճողել իւր գործը. իսկ նա վախցած է իւր ընթերցողները յոգնեցնել այնպիսի մանրամասնութիւններով, որ անոնց հասնելի պիտի չըլլային: Անոր համար նա գոհ եղած է յառաջ բերել նշանաւոր եղելութիւնները, և այն պարագաները միայն, որոնք աւելի կը նպաստէին Արեւելեան աշխարհի կարեւորագոյն մէկ ճիւղը մօտէն ճանչնալու և ճանչցնելու:

Այդ պատմութիւնը աւելի շահագրգիռ կը դառնայ անով, որ հեղինակը, Օրմանեան Սրբազան, բնիկ Արեւելցի մըն է, և տասուերկու տարի կոստանդնուպոլսոյ պատրիարքական աթոռին վրայ գտնուած է: Հետեւաբար ներկայ աշխատութիւնը չնամիր այն սովորական և աննշանակ հրատարակութեանց, որոց հեղինակները իրար ընդօրինակելով բան մը մէջտեղ կը նետեն: Ասկէ զատ Հե-

դինակը, ձեւին և ոճին գեղեցկութեան հետեւող մը չէ, և իւր գիրքը մի միայն սկզբունքներու և եղելութիւններու արձագանգն է: Ընթերցողը պիտի տեսնէ թէ որչափ ալ ուզաւորաւ է, եւ թէ ինչպէս միայն համոզման վրայ հիմնուելով գրած է, այլ և միտքի այնպիսի անկասկածի մամբ մը, որ զարմանք կը պատճառէ Եւրոպացի ընթերցողներու, որոնք վարժ չեն այդչափ ազատութեամբ զբող եկեղեցականներու հանդիպել:

Միւս կողմէ ուղիղ պիտի չըլլար կարծել, թէ այս գիրքին մէջ յայտնուած զգացումները մի միայն հեղինակին յատուկ են: Ինչու որ զազափարններու ազատամտութիւնը բացարձակապէս սեփական է Հայոց եկեղեցոյն, և հետեւանք է անոր ժողովրդական կազմակերպութեան: Երբ մէկը սոյն եկեղեցոյ կազմած ու կերպաւորած հասարակութիւնը կ'ուսումնասիրէ, իր աչքին զարնող առաջին կէտն է՝ եկեղեցականութեան անջատուած դասակարգ մը չկազմելը: Անոր մէջ եկեղեցին և Ազգը միեւնոյն և միակ հաստատութիւն մը կը կազմեն: Երկուքին մէջ ոչ ազդեցութեան և ոչ հեղինակութեան պայքար կայ, և ոչ ալ ուրիշ որեւէ մրցում մը: Ուստի պէտք չէ որ մէկ մը կարծէ, թէ հասարակութեան զուտը պատրիարք մը ըլլալուն համար, Հայոց ազգը կղերին տիրապետութեան ներքեւ գտնուի: Այս գիրքին մէջ պիտի տեսնուի, թէ այն բարձրաստիճան եկեղեցականին ամէն գործերը մանրազնինքն քննութեան ենթարկուած են, և թէ եկեղեցոյ վարչութիւնը կատարելապէս աշխարհականներուն ձեռքն է: «Թուրքիոյ մէջ, կը գրէ հեղինակը, եկեղեցին կը մատակարարուի, ամբողջապէս աշխարհականներէ բաղկացած և թաղեցիներէ ընտրուած խորհուրդի մը ձեռքով»: Եւ քիչ ետքը կ'աւելցնէ. թէ «Աշխարհական տարրին մասնակցութիւնը կը յայտնուի նախ և առաջ կրօնական պաշտօնեաներուն ընտրութեամբ»: Պէտք է ևս դիտել, որ աշխարհականներէ ընտրուած և անոնց քննութեան ենթարկուած եկեղեցականութիւնը, միմիայն կամաւոր նուէրներով և նպաստներով կ'ապրի, ինչ որ գինքը ամբողջապէս հաստացեալներու կամեցողութեան կ'ենթարկէ: Այս կերպով աշխարհականը եկեղեցոյ մէջ կ'ըլլայ, և կղերը ազգին հետ սերտ կերպով միացած մարմին մը կը կազմէ: Վերջապէս երկու տարրեր այնպէս իրարու խառնուած և իրարու մէջ թափանցած են, որ կարծես թէ Հայ ազգին համար կազմուած է Ազգային եկեղեցի բացարձակութիւնը:

Այդ կէտը այնչափ ստոյգ է, որ քրիստոնէութեան զառնալէն իրեր՝ Հայ ազգը այդ գիտակցութիւնը ունեցած է: Այդ գի-

ասկզու թիւներ հաստքի սկզբունքով հաստատուեցաւ չորրորդ դարուն սկիզբը, և անկէ ի վեր ազգին բախտը եկեղեցւոյ բախտին հետ միացած ըլլալէ երբեք չդադրեցաւ: Հայոց եկեղեցին կազմակերպութեան և պահպանութեան զարմանալի սկզբունք մը ունեցաւ: Հայը, իւր եկեղեցւոյն ապաւինելով, ոչ միայն միաւորութեան և կապակցութեան կեդրոն մը գտաւ անոր մէջ, այլ և փրկութեան տապան մը, որուն մէջ ազատեց ու պահեց ինչ որ զինքն անցեալին հետ կը կապէր, աւանդութիւններ և սովորութիւններ, լեզու և գրականութիւն: Առանց՝ երկրայութեան, այդ շահերու սերտ կապակցութեան և նոյնութեան, և աշխարհական տարրին հետ զգացումներու համաձայնութեան շնորհիւն է, որ Հայ եկեղեցին պահած է ներողամտութեան և ազատամտութեան սկզբունքները: Բայց աւելի խորունկ պատճառներ ալ կան գիտելիք:

Հայը կը հաւատայ, թէ ո՛չ մի եկեղեցի, ինչչափ ալ ընդարձակ և կարեւոր ըլլայ, չկրնար ամբողջ քրիստոնէութիւնը ներկայացնել. թէ մասնաւոր եկեղեցիներ, զատ զատ առնուած ատեն, կրնան սխալիլ. թէ միայն Լ'նդհանուր եկեղեցւոյ կը պատկանի դաւանական որոշումներու մէջ անսխալ ըլլալու սուանձնաշնորհութիւնը: Նա կը հաւատայ և.ս, որ եթէ դաւանութիւնները անփոփոխ պէտք է մնան, որովհետեւ անոնք են ներկայն իւր ծագումին հետ կապող թելերը, սակայն միւս կողմէն պէտք է դիւրութիւններ ընծայել պարզ վարդապետական կէտերու նկատմամբ: Պարզ վարդապետութիւնը ժամանակին ըմբռնումին արտայայտութիւնն է, և նետեւարար փոփոխուելու ալ ենթակայ է, որովհետեւ ոչ մի բան փոփոխականութեան օրէնքէն ազատ չէ: Սխալած ըլլալ չեմ կարծեր ըսելով, թէ ամէն զարգացումներուն սերմերը այդ սկզբունքներուն մէջ կը պարունակուին:

Արեւելեան եկեղեցիներու դերը, իբր պահպանութեան նախասկիզբն, Հեղինակին կողմէ մէկ բառով մը բացատրուած է, երբ կ'ըսէ, թէ նախնական եկեղեցիներ ազգութեանց համաձայն կազմուեցան: Այդ կազմակերպութեան առիթ տուաւ անշուշտ այն հարկը, որ կը ծագէր իւրաքանչիւր ազգութեան իւր լեզուով Աւետարանը քարոզելու պահանջէն: Այս կերպով պէտք եղաւ այրուբէններ գտնել այն լեզուներուն որ չունէին, որպէսզի կարենան սուրբ գիրքերը գործածել. և զպրութիւն չունեցող ազգերու համար ասիկայ առաջին քայլ մը եղաւ. դէպի մտաորական կեանքը: Այսպէս եղաւ Հայերուն համար հինգերորդ դարուն մէջ, և Սլաւներուն համար իններորդ դարուն մէջ: Առանց այդ պարագային,

հաւանական է որ շատ մը ազգային տարրեր անկապակից հաւաքոյթներ եղած պիտի ըլլային՝ առանց ներքին հաստատութեան, և դիւրութեամբ պիտի հալէին ու ձուլուէին տիրապետող ժողովուրդներու բազմութեան մէջ: Բայց անոնք ապրելու համար պարտաորուեցան իրենց եկեղեցիներուն շուրջը ամփոփուիլ, և եկեղեցիներու հովանոյն ներքեւ շարունակեցին ապրիլ, վերակենդանութեան նախախնամական ժամուն ակնկալութեամբ: Այսպէս է որ հետզհետէ երևան եկան շատ մը ազգութիւններ, որոնք մեռած ու քնջուած կը կարծուէին: Ութնետասներորդ դարուն մէջ Յոյներու գոյութիւնը մոռցուած էր, և ոչ ոք կը մտածէր թէ Ռուս կոչուած ըստ ժողովուրդը պիտի կարենայ յատուկ մարմին մը կազմել իրր անկախ ազգութիւն: Երբոր Յոյներ ազատութիւն ստացան, հրապարակագիրներ և դիւանագէտներ ուրիշ բան չէին տեսներ Արեւելքի մէջ, բայց եթէ Որթողոքս Յոյներ ամէն տեղ: Անոնք կ'անզիտանային տակաւին Գանուբի և Պալքաններու Ալաններուն գոյութիւնը, զորս դիւրաւ կը շփոթէին 1821'ին յանկարծ ընդհանուր մտադրութեան առարկայ դարձած Յոյն տարրին հետ: Նոյն իսկ Յոյներն ալ անխորհուրդ գոհունակութեամբ մը կը սիրէին այդ սխալ ըմբռնումը հռչակել: Բիցիբիոս ալ 1856'ին կը գրէր. «Յոյն Որթողոքս անունին ներքեւ կը հասկցուին ամէն քրիստոնեաներ, ինչ ցեղէ ալ ըլլան, որոնք Օսմանեան մականին ներքեւ կ'ապրին», Ազգութեանց շարժում կոչուած մեծ երևոյթը, այդ յուսախարութիւնները փարատեց: Ազգային զգացումը, Արեւմտեան գաղափարներու շփամբը արթնցաւ, և ինչ որ Արեւելեան ժողովուրդներուն գիտակցութեան մէջ կը քնսնար, ոչ նուազ ուժգնութեամբ շարժուեցաւ անոնց սիրտին մէջ, քան որչափ եղած էր Իտալացոց և Գերմանացոց սիրտին մէջ: Անոնք սկսան նորէն ազգային կեանքի զգացումով ապրիլ, իրր թէ երբեք այդ զգացումին ընդհատում կրած չըլլար, հին աւանդութիւնները ներկային կապեցին, և իրարու նրմանցնելով արծարծեցին ինչ որ կրնար իրենց զարգացման նպաստաւոր ըլլալ: Եփեսոսի Եօթն Մանկանց աւանդական քունին նման, ասոնք ալ յանկարծ արթնցան, առանց իսկ կասկածելու թէ շատ դարեր տեւած քուն մը անցուցած են: Ինչ որ առաւելագէս գարմանայի է, այն զգացումներու նոյնութիւնն է, զոր Հայ ազգը պահած է, և որով Հայեր իրարու միացած են, հակառակ իրենց բոլոր աշխարհի մէջ ցրուած ըլլալուն:

Այս է պատճառը որ կրօնական խնդիրը չէ դադարած կենսական խնդիր մը ըլլալ բոլոր Արեւելքի քրիստոնեայ հասարակու-



թեանց մէջ : Կրօնքի նշանակութիւնը միշտ շատ մեծ է անոնց համար, և ներկայ դարուն հոգին հազիւ թէ կրցած է անոնց միտքերը շօշափել : Եթէ ներկայ սերունդները չեն ուզիր այլեւս կղերէն առաջնորդութիւն, ինչպէս առջի ասեմներ, ասով մէկտեղ ոչ ոք կը մտածէ խզել այն կապը զոր Ազգը հաստատած է Եկեղեցւոյ նետ : Ես յաճախ և շատ յստակ տպաւորութիւն գոյացուցած եմ, որ Հայը, եթէ հաւատալէ ալ դադրի, հաւատացեալ մը ըլլալէ չդադրիր : Նա ներքնապէս կը զգայ, որ եթէ իւր Եկեղեցւոյ նշանակութիւնը վերցուի, բոլոր իւր զգացումներուն շէնքը կը կործանի :

Եթէ Հայ ազգը, իւր քրիստոնէութեան գարձէն ետքը, պահ մը իւր զարգացման շաւիղին մէջ դադար մը զգաց, զայն պէտք է վերագրել պատմական բացառիկ պարագաներուն զժբախտութեան, Կղզիացած իւր բարձրաւանդակներուն մէջ, և գաղթող ժողովուրդներու և տիրապետող հրոսակներու մեծ ուղեգիծին վրայ գտնուած, Հայոց աշխարհը եղաւ այն սահմանափակ ասպարէզը, ուր յուզուեցան և լուծուեցան նին Ասիոյ բոլոր խնդիրները : Եթե ներքող դաբէն սկսելով, մինչեւ վերջին ասեմներ, արշաւանքներ արշաւանքներու յաջորդեցին, աւերածներ կոտորածները մղեցին, և մէկ խօսքով, Իւր պատմութիւնը երկար վկայաբանութիւն մը եղաւ, հեղինակին ազգու բացատրութեան համեմատ : Հայաստան պարտաւորուեցաւ բիրտ ոյժին առջեւ տեղի տալ, բայց նոյն իսկ օրինակը չտեսնուած դառն բախտի մը ներքեւ ընկճուելով ալ, կըրցաւ զոնէ էականը ազատել ընդհանուր նաւարկութենէ, այսինքն է իւր կեանքը, և կեանքին նետ վերակենդանութեան տարրները, որոնք օգտակար եղան թէ իրեն և թէ ուրիշին, և պիտի կազմեն Թուրքիոյ վերակազմութեան պէտք եղած ոյժերէն մէկը :

Ամէնուն գիտցած մէկ բանն է, թէ Թուրքեր, իրենց աստուածպետական սկզբունքներուն ազդեցութեան ներքեւ, զրեթէ բան մը չը փոփոխեցին իրենց տիրապետած ժողովուրդներուն ներքին կացութեան մէջ : Անոնք զոհացան համակերպիլ Ղուրանին պատուէրներուն, որ իրեն հաւատացեալներուն կը հրամայէ, յաղթուածներուն թողուլ իրենց ունեցածները, բաւական է որ խառան կամ գլխահարկը վճարեն : Քրիստոնեաներ, այդ կարգադրութիւններէ օգտուելով, ներքին կազմակերպութիւննին պահեցին որչափ կրցան, և իրենց սեփական կենցաղով ապրեցան, միշտ հպատակ մնալով այն տիրապետող ազգին, որուն նետ կապուած էին :

Պատրիարքը, որ Բարձրագոյն Դուռէն կ'ընդունէր իւր հաստատութիւնը, եղաւ օրինաւորապէս ճանչցուած Միլլէր պաշը կամ

ազգայեան մը, այսինքն պատասխանատու գլուխ մը քաղաքական իշխանութեան հանդէպ: Նա կը հսկէր հարկերու հաւաքումին, որ կը կատարուէր իր պաշտօնեաներուն ձեռքով և իւր երաշխաւորութեան ներքեւ: Իրեն ատեանին կը հանուէին բոլոր դատական խընդիրները, ըլլան քաղաքական կամ պատժական, որոնք որ կապակցութիւն ունէին ամուսնութեան կամ անհատականութեան հետ: Յոյներն ալ յարեւմտեան վարչութեան ենթարկուած էին, որովհետեւ Մէհմէտ Բ. ուրիշ բան բրած չէր, բայց եթէ Հայերուն ալ տարածել այն պայմանադրութիւնները զորս տուած էր Յոյներու պատրիարք Գեննադիոսին:

Պէտք է դիտել, որ Հայերուն իրենց եկեղեցւոյն հետ ունեցած այդ կապակցութիւնը, երբեք իրենց արգելք չեղաւ նոր գաղափարներու ալ հետեւելու: Հակառակ իրենց անհաստատ կացութեան, ընկերական և քաղաքական զարգացման գործունէութիւնին շատ աւելի նշանաւոր եղաւ, քան որչափ ինչ կրնար ենթադրուիլ: Գլխաւորապէս Հայերուն միջնորդութեամբն է, որ իրենց Մահմետական հայրենակիցները սկսան արեւմտեան գաղափարներու և սովորութիւններու հետ շփուիլ: Հայերուն մէջէն է որ Սուլթան Մահմուտ գտաւ իւր առաջին գործակիցները այն ձեռնարկներուն մէջ, որոնց աննկուն և յամառ նախաձեռնութիւնն ունեցաւ: Նա գիտցաւ օգտակար ընել Հայերուն գործի համար ունեցած յարմարութիւնները, ու ելեմտական դարձուածներու համար ունեցած յաջողակութիւնները: Եթէ պետական վարչութեան անկարգութիւնները չըլլային, Արեւելք շատ աւելի մեծ օգուտներ քաղած կ'ըլլար Հայերուն վաճառականական հանճարէն և ճարտարարուեստական կարողութենէն:

Առաջին անգամ հրատարակուած 1839 տարւոյ Հաթիթ Ծէրիֆէն ետքը, որ քրիստոնեաներու ազատագրութեան հիմնական օրէնքը, և պետութեան աշխարհականացման նախաքայլը եղաւ, Հայերուն առաջին մտածումը եղաւ, նոր եւրոպոյից գաղափարներէն և կերպերէն ինչ ինչ իրենց սեփականել: Նախ և առաջ ուղեցին պատրիարքին իշխանութիւնը նուազել, աշխարհական տարրին միջամտութիւնը ընդարձակելով: Ասով վերադարձած կ'ըլլային իրենց եկեղեցւոյն կազմակերպական ոգւոյն, որ կ'արգելու եկեղեցականաց գերակշռութիւնը քաղաքական շրջանակի մէջ: Նախ 1847ին երկու ժողովներ հաստատեցին որ պատրիարքին հետ գործերը վարեն, թէպէտև զրամատէր աւագանին հակառակութիւն կը ցուցնէր: Երկու ժողովներէն մէկը եկեղեցականներէ կը բաղկանար հոգեւորական

վարչութեան վրայ հսկելու համար, և միւսը աշխարհականներէ քաղաքական գործերով զբաղելու համար:

Վերջապէս 1860ին ազգը, այդ առաջին յաջողութեամբ զօրացած, Սահմանադրութիւն մը կազմեց, պետութեան հաւանութեամբ, որուն հիմնական ուղղութիւնն էր ժողովրդական գերիշխանութեան սկզբունքը: Իրաւ Սահմանադրութիւնը միայն Հայ ազգին մասնաւոր շահերը կը կարգաւորէր, բայց միանգամայն նշանաւոր յեղափոխութիւն մը կը գործէր Արեւելքի սովորութեանց մէջ: Սահմանադրութիւնը ազգին գլուխը կը պահէր պատրիարքը, իբր պաշտօնական միջնորդ հասարակութեան և կառավարութեան մէջտեղ: Հարկաւ չէին կրնար ազգային կազմակերպութեան այդ կարեւոր կէտը փոփոխել, առանց ազգին տրուած առանձնաշնորհումները վտանգի ենթարկելու. բայց դժուարութիւնը հեռացուցին պատրիարքին գործերը Ընդհանուր ժողովին հսկողութեան և քննութեան ենթարկելով: Այդ նոր կանոնադրութեանց շնորհիւ, սկսան ինքնին յառաջ գալ և ծաղկիլ շատ մը ընկերական և կենցաղական զարգացման կէտեր, և ասով կը յայտնուէր թէ ինչչափ մեծ էր ժողովուրդին մէջ լատագոյն կացութեան մը անհամբերութիւնը: Սահմանադրութեան գլուխը գտնուող հիմնական սկզբունքներուն մէջ գրուած է, թէ Ազգը կ'ուզէ որ երկու սեռէ մասնուկները, ինչ որ ալ ըլլայ իրենց վիճակը, ամէնքն ալ առանց խտրութեան ընդունին կրթութեան բարիքը, և գոնէ անհրաժեշտ եղող գիտելիքները ստացած ըլլան: Ասով հաստատուած կ'ըլլար ծրագիր մը, զոր հազիւ քսան տարի ետքը պիտի հռչակէր հանրապետական Գաղղիան, նախնական կրթութեան օրէնքով: Այդ նպատակին պէտք եղած ծախքը հոգայու համար, Ազգը, որ արդէն իւր տուրքերը պետութեան կը վճարէր, պարտաւորուեցաւ ինք իրեն վրայ զօնողութեան նոր բեռ մը բարդել: Այդ զօնողութիւնները անով աւելի ծանր կը դառնային, որ Ազգը պարտաւոր էր արդէն իւր նպատաներով պահպանել բարեպաշտական և բարեգործական բազմաթիւ հաստատութիւններ:

Այդ կենցաղական բարելաւութիւնները, զորս Ապտիւլ-Ազիզի ներողամիտ կառավարութիւնը զիւրացուցած էր, չէին կրնար չյուզել իւր յաջորդին կասկածոտ և անվստահ տեսութիւնները: Ապտիւլ-Համիտ գէշ աչքով նկատեց այդ տարօրինակ երեւոյթը, որով ազատամիտ վարչութիւն մը կը ծաղկէր իւր բռնապետական կառավարութեան հովանուոյն ներքեւ. լաւ աչքով չտեսաւ որ Հայը, թէպէտ ստրկացած և ընկճուած իբրև Օսմանեան հպատակ, ազատարար ապրի

իրրեւ իւր Եկեղեցոյն անդամ : Ասոր համար այն դրութիւնը երկար պիտի չտեւէր : Շուտով Հայերը կառկածոս դարձան թէ Թուրքիոյ և թէ Ռուսիոյ մէջ հաւասարապէս, և այլեւս հանգստութեան վայրկեան մը չկրցան ունենալ :

Այս պատճառով, Թուրքիոյ ժողովուրդներէն և ոչ մէկը, որչափ Հայը, այնչափ ուրախութեամբ չողջունեց ազատական կառավարութիւնը, զոր Երիտասարդ-Թուրք կուսակցութիւնը հռչակեց, և կառավարութիւնը ընդունելու բռնադատեց 1908 յուլիսին : Հայերը այդ անակնկալ պատահարին մէջ տեսան, ոչ միայն քմահաճ կառավարութեան մը ղեղձուկներուն դէմ երաշխաւորութիւն մը, այլ և զարգացման նուիրագործում մը, ինչ որ արդէն իրենց սուրբազան դարձած էր, և որուն կը դիմէին իրենց բնական ձգտումներով : Այդ բանին մէջ միտքերու համաձայնութիւն մը կար, որ զօրեղապէս պիտի օգնէր համերաշխութիւն հաստատելու, և ասանկ ալ եղաւ արդեամբ : Բայց նոր կառավարութիւնը փորձեց աւելի առջեւ անցնիլ, նա կարծեց թէ ատենը հասած է կրօնական հասարակութեանց առանձնաչնորհումները ջնջել, իրրեւ աւելորդ բաներ : Նա մտածեց թէ նոր վարչութեան պատշաճ էր նոր պայմաններ յարմարցնել, կասկած չունինք, թէ Հայերը հեռու չին այդ տեսութիւններուն համաձայնելէ : Անոնք ամենեւին մասնաւորութեանց գաղափարներ չունին, և երբեք կամք չունին համերաշխութեան գործին արգելքներ յարուցանել : Անոնք գիտեն թէ գործնական կացութիւնը, որ այժմ կը տիրէ, խորհրդարանական վարչութեան հիմնական կէտերուն նետ համաձայն չէ, և որչափ ատեն որ այդ հակառակութիւնը կը մնայ, օրէնսդիր խնամութիւնը ազգային կամքին վրայ հաստատուած չկրնար ըստիլ, և թէ պէտք է որ միութեան գործը հաւասարութեան վրայ հիմնուած ըլլայ : Բայց ատանց ուրանալու ստացուած արդիւնքներուն կարեւորութիւնը, Քրիստոնեաներ կը սպասեն որ կառավարութիւնը նոր ճիգ մըն ալ ընէ, և յեղափոխութիւնը մինչեւ իւր վերջին կէտը յառաջ մղելով, Օսմանեան պետութիւնը որչափ հնար է կատարեալ աշխարհականացման ճանպարհով : Այն ատեն միայն ինքնին պիտի իյնան բաժանման միջնորմները, որոնք այժմ իրարու դիմաց գտնուող ազգութիւնները իրարմէ կը գատեն : Վասն զի եթէ կրօնքը մինչեւ հիմայ իրենց տեւականութիւնը ապահովեց, միեւնոյն ատեն ալ զիրենք իրարու ներձակ գտնուելու բարոյապէս օգնեց : Բարենորոգմանց ընդհանուր շարժում մը միայն կրնայ այդ նպատակին հասցընել : Անոր համար ալ առաջին պայման է, — ինչ որ պէտք չէ

երբեք միաքէ հեռացնել — , որ հողիները կանխաւ պատրաստ ին զպրօցներով և ազատութեան գործնական վարժութեամբ :

Միայն այդ կերպով կրնան զանազան ազգութիւններ իրարու հետ միանալ , և հաստատուն միաօրութիւն մը կազմել , որ կրնայ ամէնուն հասարակ եզով հայրենիքը մեծութեան և բարօրութեան հասցնել :

Կոստանդնուպոլիս , 1910 յունիս 1 .

Bertrand BAREILLES .



II  
A 5679  
~~3066~~



# ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ

Ա.

ԻՆՉ Է ՄԵՐ ՆՊԱՏԱԿԸ

Ներկայովս միտք չենք ունեցած հասարակութեան ընծայել երկար ուսումնասիրութեամբ պատրաստուած աշխատութիւն մը: Այն խնդիրները որ Ընդհանուր Եկեղեցւոյ կամ մասնաւոր Եկեղեցիներու շուրջը կը յուզուին, ընդարձակ ասպարէզ կը բանան քննադատական, պատմական և իմաստասիրական վէճերու, որոնց մէջ մտնելու միտք չունինք. միւս կողմէն ալ այս չէ այն գետինը որուն վրայ մենք նպատակ ունինք կանգ առնել: Պէտք է խոստովանիլ, թէ Եկեղեցին տակաւին ամբողջապէս կը պահէ իւր գոյութիւնը, ինչպէս իւր ազդեցութիւնն ալ, հակառակ այն ծանր հարուածներու, զորս նոր հողւով գործողներ կարծած են անոր հասցնել: Վարդապետութեան ինչ ինչ կէտեր իբր անտեղի նկատուած են, պատմական ինչ ինչ եղելութիւններ իբրեւ առասպելներ մէկ կողմ դրուած են, բայց ասով մէկտեղ, թէ Ընդհանուր Եկեղեցին և թէ մասնաւոր Եկեղեցիներ, չեն դադարած, նոյնիսկ քսաներորդ դարուս մէջ, նշանաւոր կենսականութիւն մը պահել: Մտաւորական զարգացման ձգտումներն ալ, քաղաքական եւ պետական կեանքերն ալ, պարտաւորուած են նկատի առնել այն ոյժը,

դոր կրօնական սկզբունքներ տակաւին հոգիներու վրայ կը ներգործեն :

Հայը, մինչև հիմայ գրեթէ մոռցուած, քանի մը տանեակ տարիներէ առջին այթմէութիւն մը ստացաւ : Իւր անցեալը, իւր ներկայն և իւր ապագայն ուսումնասիրութեանց զատ զատ կէտեր սկսան կազմել : Վերջապէս ամէն ոք սկըսաւ շահագրգռուիլ այդ հին ազգութեան պարագաներով, որ բազմաթիւ դարերու ընթացքին և ամէնէն աւելի դառն արկածներու շրջանին մէջ, չզաղբեցաւ իւր անհիջանելի կենսականութեան համար յայտնի փաստեր ընծայել : Եթէ որեւէ ազգի մը կենսականութեան զաղտնիքը թափանցելու համար անհրաժեշտ է անոր կրօնքին ուսումնասիրութիւնն ընել, պէտք է ընդունիլ, թէ այս տեսակ աշխատութիւն մը անօգուտ չէ, մանաւանդ երբ գիտողութեան առնուի, որ Հայոց Եկեղեցին, — որ մեր պարագային մէջ Հայ Ազգութեան հետ ալ նոյնացած է —, նշանաւոր դեր մը ունեցած է ազգային կեանքին մէջ :

Այս սասնիկ բլբլով մէկտեղ, Հայոց Եկեղեցին հազիւ թէ ճանչցուած է աշխարհին մէջ : Եկեղեցական և կենցաղական ուսումնասիրութեանց աւելի հետամուտ մտանալ գիրներն ալ, իրենց մտադրութեան առարկայ չեն բրած այս եկեղեցին : Բայց, հակառակ իւր համեատ կացութեան և իւր վիճակին միջին մնալուն, նա շատ մեծ և առաջնակարգ ու նշանակելի կարեւորութիւն ունի, այն սկզբունքներու և այն վարդապետութիւններու տեսակէտէն, որք անոր սեփական են : Մենք կը կարծենք թէ անոր սկզբունքները արժանի են իրը հիմնակէտ նկատուիլ այն զաղտփարական մեծ նպատակին, որ է քրիստոնէութեան միութիւնն ու պարզութիւնը :

Բայց չկանխենք եզրակացութեան յանդիլ, այլ յաւելտ աշխատինք խնդիրին մէջը մտնել : Այդ նպատակով մենք նախ համառօտ տեղեկութիւններ պիտի տանք այդ Եկեղեցւոյն պատմութեան, վարդապետութեան, բարե-



կարգութեան, արարողութեան և գրականութեան վրայ :  
Այդ բանը պիտի ընենք այնպիսի կերպով մը , որ այն եզրա-  
կացութիւնը որուն կ'ուզենք առաջնորդել ընթերցողը , բնա-  
կան և դիւրին կերպով մը յայտնուի , արամուսանական  
ոճով հետեւի , և ընթերցողին միտքին մէջ տեղ ընէ :

---

# ՊԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ

Բ.

## ՀԱՅ ԵԿԵՂԵՅԻՈՅ ԾԱԳՈՒՄԸ

Ամէն եկեղեցիներու ծագումին վերաբերող եղելութիւններ անթափանցելի վարագոյրի մը ներքեւ ծածկուած են, և մեր հետազոտութիւններէն կը խուսափին. որովհետեւ կը պակսին այն վաւերագիրերը՝ որոնք պիտի լուսարանէին առաջին առաքեալներուն գործերը, և ընդհանրապէս բովանդակ առաքելական գործունէութիւնը: Հռոմէական եկեղեցին ալ, որ այդ տեսակէտէն ամէնէն նպաստաւոր դիրքն ունեցած է, քանի որ նոյն իսկ կայսերութեան մայրաքաղաքին մէջ իւր ծագումն ստացած է, նա ալ ծանր դժուարութեանց դիմաց կը գտնուի, երբոր հարկ կ'ըլլայ Ս. Պետրոս առաքեալին Հռոմի մէջ անցուցած ժամանակը ճշդել. մինչդեռ այդ խնդիրը իրեն համար էական կէտ մըն է, քանի որ անոր վրայ կը հիմնէ բոլոր իւր վարդապետական կազմածը: Այս պատճառով եկեղեցական պատմութիւնը, երբ աւելի հաստատուն փաստեր չգտնուին, կը գոհանայ առաւելագոյն հաւանականութեան փաստերով, աւանդութեանց վրայ հիմնուած պատճառաբանութիւններով, և չարունակութեամբ հաստատուած եղելութիւններով: Բաւական է որ հաւանականութեամբ ցուցուած կէտերը,

զբականապէս հաստատուած և պատմութեամբ ստուգուած եղբրութիւններու հետ հակասութեան մէջ չգտնուին : Ասկէ աւելի բան մըն ալ պէտք չէ պահանջել Հայոց եկեղեցիէն, իրեն ծագումը հաստատելու համար :

Հայոց եկեղեցւոյն նախնական և հաստատուն աւանդութիւնը իրեն սկզբնական հիմնադիրներ կը ճանչնայ Ս. Թադէոս և Ս. Բարթողիմէոս առաքեալները, զորս ինքն յատուկ կոչմամբ ալ Առաջին Լուսաւորիչ Հայաստանեայց կ'անուանէ : Անոնց գերեզմաններն ալ իբրև նուիրական սրբավայրեր կը յարգէ և կը պահպանէ, Արտաղի (Մակու) և Աղբակի (Պաշքալէ) վանքերուն մէջ, որոնք Հայաստանի հարաւարեւելեան կողմը կը գտնուին : Բոլոր քրիստոնեայ եկեղեցիներ համամիտ են Ս. Բարթողիմէոս առաքեալին նկատմամբ եղած աւանդութեան մասին, և համաձայնութեամբ կ'ընդունին թէ՛ անոր առաքելական շրջանը, և թէ՛ Հայաստանի մէջ քարոզած եւ այնտեղ մարտիրոս եղած ըլլալը : Աղբակ կամ Աղբակոս անունը, զոր օտարներ տուած են անոր մարտիրոսութեան տեղւոյն, կը համաձայնի Աղբակ կամ Աղբակոս անունին, որ նուիրագործուած է Հայոց աւանդութեամբ և գերեզմանին գոյութեամբ : Իսկ Թադէոս առաքեալին նկատմամբ աւանդութիւններ կը տարբերին : Այն աւանդութիւնը որ կը պատմէ, թէ Ս. Թադէոս Դիդիմոս (երկուորեակ), Ս. Թովմաս առաքեալի եղբայրը, Եդեսիա գացած և անկէ Արտաղ անցած է, Յոյներու և Լատիններու կողմէն ճանչցուած չէ : Ասորինբարև աւանդութիւնն ալ, որ Թադէոս Դիդիմոսի գոյութիւնը կ'ընդունի, չհամաձայնիր անոր Եդեսիայէ Արտաղ անցնելուն մասին : Բայց եթէ ասորերէն զրուածը լաւ զննենք, դժուար չէ անոր մէջ ալ տեսնել կամատոր աղաւաղումներ, և նոյն իսկ ժամանակագրական վրիպակներ, որոնք պատմուած եղբրութիւնները մինչև քրիստոնէութեան երկրորդ դարը կրնան յետաձգել : Բայց մենք զիստել կու տանք, թէ առանց այս աւանդութեան ալ, Ս. Թադէոս առաքեալի

անունը հաստատուն կը մնայ Հայ Եկեղեցւոյ աւանդութեան համաձայն . որովհետեւ հնար է հիմնուիլ ուրիշ մէկ աւանդութեան վրայ , որուն համեմատ Հայաստանի մէջ աւետարանական քարոզութեան սկզբաւորութիւնը կը վերագրուի Ս. Յուդա թագէտ առաքեալին , որ Ղերէսս ալ կոչուած է : Այդ վերջին աւանդութիւնը , որուն Յոյն ու Լատին եկեղեցիներն ալ կը ձայնակցին , և նոյն իսկ Հայ մատենագիրներն ալ իրր ճշմարտանման և պատմութեան համաձայն կը նկատեն , բաւական է հաստատելու և արդարացնելու Հայ Եկեղեցւոյ աւանդութիւնը , ինչպէս նաև Արտաղի վայարանին ու գերեզմանին վաւերականութիւնը նուիրագործելու :

Առաքելութեան կնիքը , զոր Հայոց եկեղեցին ամէն տան իրեն սեփականած և իւրացուցած է , և զոր ամէն պաշտօնական գրութեանց մէջ համարձակօրէն հռչակած է , մէկ կողմէն կը հաստատէ անոր սկզբնական և նախնական ծագումը , և միւս կողմէ կը հաւատէ անոր ուղղակի ինքնուրոյն սկզբնաւորութիւնը , առանց ուրիշ հնադոյն եկեղեցւոյ մը գործակցութեան :

Առաքելական ծագումը , որ ամէն քրիստոնեայ եկեղեցիներէ իրր պայման կը պահանջուի , որպէս զի Քրիստոսի եկեղեցւոյ երկնաւոր Հիմնագիրին հետ միացեալ և կապակցեալ ըլլալին հաստատուի , երկու տեսակ է : Մէկը ուղղակի ծագում է , երբոր եկեղեցին անմիջապէս առաքեալի մը անձնական քարոզութեամբ սկսած է . միւսը անուղղակի է , երբոր ծագումը յառաջ եկած է առաքեալներէ հաստատուած ուրիշ եկեղեցւոյ մը միջնորդութեամբ : Ըստ այսմ Հայոց եկեղեցին ամենայն իրաւամբ կրնայ հռչակել և իրեն սեփականել ուղղակի առաքելական ծագումը :

Սովորաբար ընդունուած ժամանակագրութիւնը Ս. թագէտս առաքեալին քարոզութեանց ուժը տարի միջոց կը վերագրէ (35—43) , և տասներկու տարի ալ Ս. Բարթողիմէոս առաքեալին քարոզութեանց (44—60) : Բայց

մենք աւերորդ կը նկատենք թուականներու և տեղերու մանրամասն հետազոտութեանց մասնել, որոնք յաճախ անլուծանելի վիճարանութիւններու տեղի կու տան :

Բաւական ըլլայ զիտնալ, թէ Հայոց եկեղեցւոյ ուղղակի առաքելական ծագումը, եկեղեցական պատմութեան մէջ, ստոյգ և անհերքելի եղելութիւն մը պէտք է նկատուի, յարեւմտեան ուրիշ առաքելական եկեղեցիներու ծագումին : Եթէ երբեք այն աւանդական և պատմական տղրիւրները որ այս եղելութիւնը կը հաստատեն, քննադատական դիտողութեանց կրնան առիթ բնծայել, դիտել կու տանք որ Հայ եկեղեցւոյ աւանդութեանց գէ՛մ յարուցուելիք քննադատութիւնները, աւելի զօրաւոր չեն քան այն քննադատութիւնները, որոնք յարուցուած են այն եկեղեցիներուն ծագումին մասին, որոնք ընդհանրապէս իրրեւ առաքելական ճանչցուած են :

Գ .

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՆԱԽՆԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ

Քրիստոնէութիւնը Հայաստանի մէջ տիրող կրօնք դարձաւ չորրորդ դարուն ճիշդ սկիզբը, 301 տարին, իսկ անկէ առաջ միշտ հարստանքներու ենթարկուած էր : Մենք մտադիւր կ'ընդունինք, որ առաջին երեք դարերու շրջանին՝ Հայաստանի մէջ քրիստոնէութեան գոյութիւնն ու զարգացումը հաստատող յիշատակներէն մեզի հասածները, թէ քիչ են և թէ լիութի չեն : Այդ յիշատակները իրենց առատութեան կողմէն չեն կրնար բազմատուութեան մասնել այն յիշատակներուն հետ, որ նոյն շրջանէն մեզի հասած են Յունահռոմէական աշխարհին պատմութեանէն : Սա-

կայն յիշատակներու պակասութիւնը, չկրնար երբեք եղելութեանց չդոյութեան փաստ համարուիլ :

Յունահռոմէական աշխարհը այն սասն իրեն քաղաքակրթութեան գաղաթմնակէտին վրայ էր, բազմաթիւ մատենագիրներ և իմաստուններ ունէր, և իւր գպրոյցներով մտաորական զարգացման գլուխը կը գտնուէր : Ատր հակառակ Հայաստան գեռեւս անուսումնութեան խտարին մէջ կը մնար. ոչ միայն զարգացեալ գրականութիւն մը չունէր, այլ նոյն իսկ սեփական այբուբէնի ալ կարօտը կը քաշէր : Այդ հանգամանքներու մէջ, յայտնի է, թէ Հայոց համար դժուար՝ և գրեթէ անհնարին էր պատմութիւններ գրել և յիշատակներ աւանդել իրենց ժամանակին եղելութեանց վրայ, որոնցմէ յետագաներ կարենալին օգտուիլ : Ասով մէկտեղ, ինչ ինչ դէպքեր՝ զորս ազգային աւանդութիւնը մեղի հասուցած է, և ինչ ինչ պատմական յիշատակներ՝ զորս օտարազգի մատենագիրներէ կը քաղենք, իրարու խառնուելով կատարելագէս կը բաւականան յուցնել, թէ ընդհատ ժամանակներու մէջ քրիստոնէութիւնը իսկապէս գոյութիւն ունեցած է Հայաստանի մէջ : Արդ, ուղիղ արամարանութիւնը չներեր ըսել, որ քրիստոնէական հաստօքի տարածումը հետզհետէ ընդհատուած և վերսկսած, կամ թէ պարբերական խտարումներ ունեցած ըլլայ այդ չըջանին մէջ : Մեղի հասած աւանդական և պատմական յիշատակներ, որչափ ալ իրարմէ անջատ և ժամանակով ընդհատուած ըլլան, սակայն քանի որ շարադարութիւն մը կը կազմեն, բաւական են հաստատուելու, թէ քրիստոնէութիւնը շարունակական և անւղակիս գոյութիւն ունեցաւ Հայաստանի մէջ առաջին երեք դարերու շրջանին ստեն :

Այդ յիշատակներուն կարգին, նախևառաջ պիտի յիշենք աւանդութիւն մը, որ Արտաղի ակնոյն վրայ եօթը եպիսկոպոսներու անունը կու տայ. որք են, Զաքարիա տառնուիլեց սարի, Զեմենտոս չորս, Ատրներսէհ տառնուհինց,

Մուշէ երեսուն, Շասէն քսանուհինգ, Շասարչ քսան, եւ  
Ղեւոնդիտ տասնուեօթը: Այդ տարեթիւերը գումարելով  
կը հասնինք երկրորդ դարուն վերջերը:

Արիչ աւանդութիւն մըն ալ Սիւնեաց աթոռին վը-  
րայ ութը եպիսկոպոսներ կը յիշէ, որոնք յաջորդած են  
Եւստաթէոս առաքեալին, որ աւետարանը քարոզած է այդ  
նահանգին մէջ: Ասոնք ալ են, Կումի, Բարեւաս, Մուշէ  
որ ետքէն Արտաղի աթոռին անցած է, Մոլոէս Տարոնեցի,  
Սահակ Տարոնեցի, Զբուանդատ, Ստեփանոս եւ Յովհաննէս:  
Այս եպիսկոպոսներուն ալ ժամանակները մերձաորարար  
հաշուով կը հասնին երրորդ դարուն սկիզբները:

Միւս կողմէն Եւսեբիոս Կեսարացի կը յիշէ Աղեք-  
սանդրիոյ հայրապետ Գրնեօրոսի մէկ նամակը, զոր գրած  
է շուրջ 254 յին, Հայոց եպիսկոպոս Մեհրուժանի, զոր վե-  
րոյիշեալ Արտաղու եպիսկոպոսներուն յաջորդը պէտք է  
ճանչնալ, նկատի առնելով թէ՛ պարզապէս Հայոց կոչումը,  
և թէ՛ Մեհրուժան արեւելեան անունը:

Հայոց եկեղեցին իւր տօնացոյցին և յայսմատուրքին  
մէջ ունի առաքելական դարերու մէջ նահատակուած շատ  
մարտիրոսներու ալ անուններ: Այս կարգին առաջին յիշա-  
տակուածն է Ս. Սանդուխտ արքայազուն իշխանուհին. անոր  
հետ կը յիշուին, Ս. Զարմանդուխտ ազնուազգի տիկինը, Ս.  
Սամուէլ և Ս. Իսրայէլ նախարարները, և Ս. Թաղէոս առաք-  
եալին հետ նահատակուած Հազար վկաները, Կը յիշուին ևս  
Ս. Բարթողիմէոսի հետ նահատակուած Ս. Աղուհի արքայա-  
զարս՝ իշխանուհին և Ս. Տերենտիոս զօրավարը, և Ս. Բար-  
թողիմէոսի աշակերտած երեք կուսանները, Մարիամ Յուս-  
կանեան, Աննա Որոզդատեան և Մարթա Մաքրտրեան:  
Յիշենք ևս Ս. Ոսկեանց և Ս. Սուրխասանց տօները, որք են  
Ս. Ոսկի չորս ընկերներով, և Ս. Սուքիաս տանըութը ըն-  
կերներով, որոնք նահատակուած են երկրորդ դարուն սկիզբ-  
ները: Լատին մարտիրոսագիրքն ալ կը յիշէ Ս. Արարատեան  
վկաները, որք են Ս. Ակակիոս զօրավար տասն հազար զին-

ուորակից ընկերներով, որոնք նահատակուած են Հայաստան, Արարատ գաւառը, Ադրիանոսի կայսերութեան տանն :

Այդ յիշատակներուն պէտք է կցենք վկայութիւն մը՝ զոր մեզ կ'ընձեռէ Տերաուղիանոս, երկրորդ գարու հոշակաւոր եկեղեցական մատենագիրը : Սա յառաջ բերելով Գործք Առաքելոց գիրքին Բ. գլուխին 9 համարը, ուր յիշուած են կարգաւ այն օտար երկիրները, որոնց լեզուները լատեցան պենտեկոստէի հրաշալի օրը, Միջագետքի և Գամիրքի մէջտեղ կը յիշէ Հայաստան, և ոչ շեքստան, ինչպէս կ'ընթեռնուենք աստուածաշունչի սոփորական օրինակներուն մէջ : Արդ չրէաստան երբեք չէր կրնար օտար երկիրներու կարգը գաստիլ, և յայտնի ալ է, որ չրէաստան Միջագետքի և Գամիրքի մէջ չգտնուիր : Տեղագրական ճշգրտութեամբ և տրամաբանական պահանջմամբ Միջագետքի և Գամիրքի կամ Կապադովկիոյ մէջտեղ գտնուող երկիրը Հայաստանն է : Օղոտախնոս շիպոյնացին ալ կրկնած է Տերաուղիանոսի ընթերցուածը : Ասկէ կը հետեւի, թէ Ափրիկեան եկեղեցւոյ այդ երկու վարդապետները հաստատուն համոզում ունէին, թէ Հայաստանն ալ այն երկիրներէն մէկն էր, ուր քրիստոնէութիւնը տարածուած էր առաքելական գարուն մէջ :

Նմանապէս Հայաստանի գրեթէ վայրկենապէս քրիստոնէութեան գառնայր շորթորդ գարուն սկիզբը, հնար չէ ուրիշ կերպով մեկնել, բայց եթէ Հայաստանի մէջ քրիստոնէական տարրի մը առաջուրնէ գոյութիւն ունեցած ըլլալը ընդունելով : Եւ իրօք, պատմութիւնն ալ կը յիշէ, թէ Հայոց թագաւորներէն Արտաշէս 110'ին ատենները, Խորով շուրջ 230'ին, և Տրդատ 287'ին սրաշունապէս հարձանքներ հրամայեցին քրիստոնէութեան դէմ : Արդ, այսպիսի հարձանքներ տեղի ունեցած չէին ըլլար, եթէ Հայաստանի մէջ բաւականաչափ քրիստոնեաներու բազմութիւն մը գտնուած չրկար : Այդ հարձանքներէն վերջինին տանն էր, որ Ս. Թէոդորոս Սալահունին ալ մարտիրոս եղաւ, նոյն իսկ իւր հօր՝ Սուրէն նախարարին ձեռքով :



Այդ ամէն յիշատակները իրարու կցելով մենք իրաւունք կ'ունենանք եզրակացնել, թէ քրիստոնէութիւնը ստուգապէս գոյութիւն ունեցած է Հայաստանի մէջ առաջին երեք դարերու շրջանին, թէ քրիստոնէութիւնը իրեն բաղմամբ հետեւողներ ունեցած է Հայերու մէջ, և թէ հաստատեցելոյ այդ առաջին խումբն եղած է, որ իւր անդրդուելի հաստատութեամբ և արդելքներու և հպարտանքներու դէմ տոկունութեամբ պահած է քրիստոնէութիւնը Հայաստանի մէջ մինչև անոր տիրող կրօնք հռչակուիլը :

## Գ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԲՈՂՁԱԿԱՆ ԴԱՐՁԸ

Հայաստանի ամբողջարար քրիստոնէութեան դառնալուն, կամ քրիստոնէութեան Հայաստանի մէջ տիրող կրօնք հռչակուելուն թուականը, սովորաբար ընդունուած է 301 տարին, հետեւելով ժամանակագրական ճշգրտոյն հետազոտութեանց : Նոր հեղինակներէն ոմանք այդ թուականը մինչև 285 կը բարձրացնեն, ինչ որ աւելի հաւանական չկարծուիր : Սակայն 301 թուականն այլ կը բաւէ հաստատելու, թէ Հայաստան աշխարհի մէջ առաջինն եղաւ, ուր թագաւորն, թագաւորական զերդաստանը, նախարարները, բանակն ու ժողովուրդը համանդամայն քրիստոնէութեան դարձան, և քրիստոնէութիւնը պաշտօնական կրօնք հռչակուեցաւ : Կոստանդիանոս կայսեր դարձը, տասուերկու տարի ետքը, 313'ին կատարուած իրողութիւն մըն է :

Այդ հրաշալի դարձին գլուխն ու նոր առաքեալը եղաւ Գրիգոր Պարթև, զոր Հայեր Լուսաւորիչ անունով պատուած են, որովհետև նա եղաւ որ Հայ ազգը աւետա-

րանի լրջով լուսաւորեց : Տրդատ թագաւորն ալ պէտք է ճանչնալ իրր Գրիգորի գործակից, այսինքն առաքելակից և լուսաւորչակից մը : Տրդատ թագաւոր Արշակունի հարըստութենէ էր, և Պարթեւական ծագում ունէր, ինչպէս էր նաև Գրիգորի հայրը, այնպէս որ ազգակցութեան կապ մըն ալ կը միացնէր երկու գործակիցները, շրիստոնէութեան քարոզիչ առաքեալը և շրիստոնէութեան պաշտօնային թագաւորը : Բայց արենակցութենէ աւելի հաւատոյ եռանդն էր, որ երկուքը զօրաւոր կապերով իրարու միացուցած էր :

Քաղաքական յեղափոխութիւն մը տեղի ունեցած էր այդ միջոցին Պարսկաստանի մէջ, և Սասանեանք յաջորդած էին Արշակունիներու, մինչ տակաւին Արշակունիներու հայկական ճիւղը կը թագաւորէր Հայաստանի մէջ : Պէտք էր այն ալ կործանել, որ Պարսկաստանի նոր հարստութիւնը կարենար ապահովապէս հաստատուիլ, սակայն զէնքի բախար նպաստաւոր չէր եղած Սասանեաններու : Այդ պարագային հանդէպ Արշակունի մը, Անակ իշխանը, յօժարութեամբ ստանձնեց Հայոց թագաւոր Խոսրովը՝ իւր մերձաւոր ազգականը դաւաճանութեամբ սպաննելու գործը : Յանձնառութիւնը կատարեց, բայց ինքն ալ սպանուեցաւ Հայ նախարարներու ձեռքով : Գրիգոր Անակի որդին էր, Տրդատ ալ Խոսրովի. բայց երկուքն ալ տակաւին մանուկ էին 240 տարին, որ կրկին սպանութեանց թուականն է :

Առանց կենսագրական մանրամասնութեանց մանելու, բաւական կը սեպենք յիշել, թէ Գրիգոր շրիստոնէութեան մէջ մեծցաւ ու կրթուեցաւ Կապադովկացոց կեսարիա քաղաքը, մինչ Տրդատ իրեն նախնեաց կրօնքին մէջ մնաց, և Հռոմեայեցոց ու Պարսից մէջ տեղի ունեցած պատերազմներու հետեւանքով արկածալից պատահարներու մէջ զբաւնուեցաւ : Տրդատ վերջին անգամ Հայոց թագաւորական գահը զբաւած էր, Գիտկղեօտիանոս կայսեր օգնութեամբ, 287 թուականին, երբ Երիզայի մէջ կատարուած գոհարանական տօնախմբութիւններու առիթով յայտնուեցան Գրի-

գորի ծագումն ու հաստատութիւնը, և անտանելի չարչարանքներէ ետքը Արտաշատի Վիրապին արգելարանը նետուեցաւ: Գրիգոր տասնուհինգ տարի ապրեցաւ այդ սոսկալի գորին խորը, և կենդանի մնաց մահացու և երկարատեւ տանջանքներու մէջ: Ազգային պատմութիւնը՝ վերնային նախախնամութեան յայտնի նշանը կը տեսնէ այդ պարագային մէջ:

Նոյն միջոցին Հայաստանի մայրաքաղաքը՝ Վաղարշապատ հասան խումբ մը քրիստոնեայ կուսաններ, իրենց արասուհւոյն Ս. Գայանէի առաջնորդութեամբ, Հռոմէական կայսերութեան մէջ բռնացող հալածանքներէն փախչելով: Ընդհանուր կարծիքն էր թէ Հռոմէ կու գային Պաղեստինի և Միջագետքի ճանապարհով, բայց արդէք մը չկայ կարծելու որ սղղակի Հայաստանի սահմանակից կայսերական զաւառներէն էին, և աւելի հաւանականութեամբ Մծրին (Նիսիպին) քաղաքէն, և թէ ուղենք այդ պարագայն համեմատել Ս. Փերրոնէի վկայարանութեան հետ: Այդ կոյսերէն մէկուն, Ս. Հռիփսիմէի, անզուգական զեղեցկութիւնը, թագաւորին մտադրութիւնը գրաւեց, որ ուղեց զայն իւրացնել: Բայց զանազան պարագաներ, ինչպէս են կոյսին գիմաղրութիւնը թագաւորին հրապոյրներուն և բռնութեանց դէմ, երեսունըութը կայսերուն մարտիրոսութիւնը, թագաւորին վրայ եկած զայլամարդութեան օխտը և կատաղութիւնը, գործածուած զարմաններուն ապարդիւնութիւնը, թագաւորին քրոջ Խոսրովիկուխտի կողմէ քրիստոնէից Աստուծոյն գիմելու թախանձանքը, և վերջապէս Վիրապէ հանուած Գրիգորին ազօթքով թագաւորին բժշկուելը, որոնք 300 տարուոյ վերջերը և 301 տարուոյ սկիզբները տեղի ունեցան, այնպիսի մեծ ազդեցութիւն գործեցին, որ Տրդատը քրիստոնէութիւն ընդունելու ստիպեցին: Ասիկայ ալ իւր նորահաստ եռանդին բորբոքմամբ փութաց քրիստոնէութիւնը իբր պետութեան պաշտօնական կրօնք հռչակել:

Գրիգոր պարզ աշխարհական մըն էր, և իրեն հետ

ու քարոզիչ բնկերներ ունէր, և ոչ գործակից եկեղեցականներու խումբ մը. այսու հանդերձ 301 տարին չփերջացած, Հայաստանի կրօնական կերպարանը հիմնապէս փոփոխուած էր, աստուածներու պաշտօնը գրեթէ դադրած, և քրիստոնէութիւն ընդհանուր կերպով ընդունուած էր Արդ այս երեսոյթը անմեկնելի կը մնայ, եթէ չընդունուի քրիստոնէութեան կանուխէն տարածուած ըլլալը, ինչպէս որ վերեւ ալ գիտել տուինք:

Այդ հրաշալի դարձին ստուգութեան վկայութիւնները կը գտնուին ժամանակակից պատմիչներու և յաջորդ դարու մատենագիրներու մօտ. նոյնը կը հաստատեն Ս. Հրաբոխի, Ս. Գայիանէի և Ս. Մարիանէի կամ Շողակաթի վկայարաններն ալ, որք շորրորդ դարուն շինուած են Էջմիածնի (հին Վաղարշապատի) մօտերը, և որոնց մէջ կը գտնուին յիշուած սրբուհիներուն գերեզմանները: Վաւերական արձանագրութիւններ ալ պակաս չեն որ այդ եղելութեանց կ'ակնարկեն: Աւրիչ ոչ նուազ կարեւոր վկայութիւն մըն ալ կ'ընծայէ Եւսեբիոս Կեսարացոյ պատմութիւնը, երբ կը խօսի 311 թիւին տեղի ունեցած պատերազմին վերայ, զոր Մաքսիմիանոս Գաւ կայսրը բացառ Հայերուն դէմ, անոնց քրիստոնէութեան գարձած ըլլալուն համար:

## Ե.

### ՆՈՒՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԸ

Ս. Գրիգոր ինքնին նշանակուած էր Հայոց եկեղեցոյ գլուխ ըլլալու, իւր ընծայած սուրբ երախտիքին և կատարած մեծ գործունէութեան հետեւանօք: Ուստի բրնական կերպով այդ աստիճանին կոչուեցաւ թագաւորին ու

ազգին կողմէ, իսկ եպիսկոպոսական ձեռնադրութիւնը ստացաւ 302 ին, Կեսարիոյ Կաթաղովկայոց ոչ արքեպիսկոպոս Ղեւոնդիոսի ձեռքէն: Եղելութիւնը պատմագիրներով եւ ազգային աւանդութեամբ հաստատուած է: Միայն թէ այդ ձեռնադրութիւնը առիթ տուած է զանազան վիճարանութեանց, անոր նշանակութիւնը, այսինքն Հայաստանեայց աթոռին Կեսարիոյ աթոռին հետ ունեցած յարաբերութիւնները ճշգրտ. տեսակէտէն: Յոյներուն կարծիքով, թէ Հայոց աթոռը Կեսարիոյ աթոռին ենթարկուած էր, և թէ հինգերորդ դարու մէջ անոնց իրարմէ բաժնուիլը՝ պարզապէս հերձուածի հետեւանք եղած է: Լատիններուն կարծիքով ալ, Հայոց աթոռը թէպէտ սկիզբէն Կեսարիոյ աթոռին ենթարկուած էր, բայց յետոյ ինքնազուխ աթոռ հռչակուեցաւ Սեղբեստրոս Ա. պապէն արուած առանձնաշնորհութեամբ: Հայոց տեսութիւնը ոչ մէկն է և ոչ միւսը: Անոնք իրենց աթոռը առաքելական հաստատութիւն մը կը ճանչնան, իր ծագումէն ինքնուրոյն, և իւր սկիզբէն ինքնազուխ եղած ու նոյնպէս ալ շարունակած, որովհետեւ, ինչպէս բացատրեցինք, Հայոց աթոռը ոչ թէ սկզբնաւորեցաւ, այլ վերանորոգուեցաւ Ս. Գրիգորի ձեռքով, և Կեսարիայէ ձեռնադրութիւն ընդունած ըլլալը, երբեք նուիրապետական կախում ունեցած կամ անոր ենթարկուած ըլլալու փաստ մը չէ:

Անոնք որ կ'աշխատին Հայաստանը իր Կեսարիոյ ենթարկուած վիճակ մը ցուցնել, կ'ենթադրեն թէ Հայաստանի մէջ սկսած առաքելական քարոզութիւնը վաղանցուկ երեւոյթ մը եղած է, որ հետք թողած չէ, և նոյն իսկ առաքեալներուն մահուամբը վերջացած է: Կր կարծեն եւս թէ Ս. Գրիգորի քարոզութիւնը պարզապէս Կեսարիոյ աթոռին կարգադրութեամբը կատարուած է, և թէ քրիստոնէութիւնը Հայաստանի մէջ առաջին անգամ չորրորդ դարուն մէջ հաստատուած է: Բայց մեր յառաջ բերած պատմական յիշատակները և անոնցմէ քաղած հետեւութիւնները հակառակը

կը հաստատեն, և պէտք չենք տեսներ նորէն կրկնել այն փաստերը, որոնցմով հաստատեցինք Լուսաւորիչէ առաջ Հայաստանի մէջ քրիստոնէութեան տարածուած ըլլալը: Որչափ ալ մեր յառաջ բերած յիշատակներուն վրայ զիտողութիւններ ըլլան, գոնէ աւանդական պատմութեան մը հիմք ունին: Մինչ հակառակը պնդողներ ոչ մի յիշատակութիւն չունին իրենց կարծիքը հաստատող, և լոկ մտայածին ենթադրութիւններով կը խօսին, Հայոց Եկեղեցւոյ առաքելականութիւնը ուրանալու մարմաջէն ազգուած:

Իսկ Սեղբեսարոսէ արուած կարծեցեալ առանձնաշնորհութեան ենթադրութիւնը կը հիմնուի Խաչակիրներու ժամանակ Հայերու կողմէ յօրինուած կեղծ գրուածի մը վրայ, որ Կաւսուց թուրք անունով ճանչցուած է: Այդ գրուածին նպատակը եղած է Հայոց աթոռին անկախութիւնն կամ ինքնազիտութիւնը պաշտպանել, առանց պապութեան անձնասիրութիւնը վիրաւորելու, որպէսզի միևնոյն ատեն հնար ըլլայ Խաչակիրներուն օգնութիւնն ունենալ իրենց կիլիկեան թագաւորութիւնը պաշտպանելու համար: Արդէն բոլոր պատմական, ժամանակագրական, քննադատական և լեզուաբանական հանգամանքներն ալ, համաձայն կերպով կը հաստատեն նոյն գրուածին կեղծ ու սուտ ըլլալը, որ այլ եւս իրեն նպատատոր պաշտպան մըն ալ չունի: Հայոց աթոռին սկզբնական և կատարեալ անկախութիւնը, զոր Հայ Եկեղեցւոյ բոլոր հայրապետներն ու մատենագիրները շարունակ և համարձակարար հռչակած են, որիչ հանգամանքներով և տեսութիւններով ալ կը հաստատուի:

Յայտնի է թէ Հռոմէական կայսերութեան սահմաններուն մէջ, պատրիարքներու և մետրապօլիտաներու փոխադարձ յարաբերութեանց և իրաւասութեանց սահմանները, կատարելապէս կուսակալներու և կառավարիչներու քաղաքական կազմակերպութեան վրայ ձեւուած են: Երկու իշխանութեանց, այսինքն քաղաքականին և եկեղեցականին կազմութիւնները, իրարու կատարելապէս նման ու ճշգիւ հա-

մահաւասար են: Այդ դրութեան հետեւանքով այն ամէն երկիրները, որ կայսերութեան դաւառներուն շարքին մէջ չէին, և կայսերութեան մաս չէին կազմեր, Յունահռոմէական սահմաններուն մէջ գտնուող պատրիարքութեանց ալ կազմակերպութիւններէն դուրս մնային: Այս կերպով կազմուեցան Հայոց և Պարսից և Եթովպացոց անկախ պետները, որոնց երկիրները կայսերական սահմաններէն դուրս կը մնային:

Կեսարիոյ կամ Պոնտոսի եքսարքութեան ներքեւ կը գտնուէին Հայք անունով երկու մետրապոլտութիւններ, Առաջին Հայք կամ Սերաստիա, և երկրորդ Հայք կամ Մեղիտինէ, որոնք կատարեալպէս Կեսարիոյ արքեպիսկոպոսին իրաւասութեան ներքեւ էին, Այդ Հայք կոչումն է, որ առիթ տուաւ երբեմն անունները իրարու շփոթելու, և Առաջին ու երկրորդ Հայքը, Մեծ Հայք և Փոքր Հայք գրելու: Այդ անուններու փոխանակութենէն առաջ եկած շփոթութիւնը յայտնի կերպով կը հաստատուի, երբոք Պատրիարքաբանց տեղեկութիւններ կոչուած եկեղեցական ցանկերը՝ Վաւառաց ցուցակներ կոչուած քաղաքական ցանկերու հետ բազդատութեան գրուին:

Կեսարիոյ պետն ալ, ինչպէս նաև Անտիոքի և Կոստանդնուպոլսոյ պատրիարքութիւններն ալ, ոչ մի պարագայի մէջ, բուն Հայաստան կոչուած սահմաններու վրայ երբեք իշխանութեան կամ իրաւասութեան գործ մը կատարած չեն: Կեսարիոյ արքեպիսկոպոս Ս. Բարսեղի թուղթերուն մէջ ալ Հայոց նկատմամբ տեսնուած ակնարկութիւններ կամ կարգադրութիւններ, յայտնապէս նիկիոյոյց և Մասաղայի եպիսկոպոսութեանց կը վերաբերին, որոնք Պոնտոսի եքսարքութեան ենթարկուած Առաջին և երկրորդ Հայոց մէջ կը գտնուին, և ոչ թէ Մեծ Հայոց սահմանին մէջ:

Այս տեսութիւններէ զատ, պէտք է նաև դիտել, որ եթէ չորրորդ դարուն սկիզբը և նիկիոյ ժողովէն, այսինքն 325-էն առաջ մեծ պետներու մէջ տիրող եկեղեցական յարաբերութեանց պատմութիւնը խղճամիտ կերպով ու-

սու մնասիրենք, պիտի տեսնենք, որ երբեք նշան մը կամ յիշատակութիւն մը չկայ, որով մէկ ամուսին՝ միսին գործերուն միջամտելուն ենթագործիւնը արգարանայ։ Այս բանն ալ բնաւ զարմանալու կէտ մը չէ, որովհետեւ իրաքանչիւր եկեղեցական շրջանակ խտաբ. սահմանափակուած էր իրեն համապատասխանող և իրեն կազմակերպութեան հիմը կազմող քաղաքական շրջանակով։

Արիշ կողմէ ալ գիտենք որ չորրորդ և հինգերորդ դարերու մէջ չյիշուիր հաստատ եղելութիւն մը, որով Հայաստանի և Կեսարիոյ ամուսնեւրուն յարաբերութեանց մէջ փոփոխութիւն մը տեղի ունեցած ըլլայ։ Այդ որևէ յիշատակութեան բացակայութիւնը իրաւունք կու տայ եզրակացընելու, թէ ինքնագլուխ անկախութեան ձեւը որ մշտապէս կերպով կ'երեւայ, ոչ թէ յետագայ պարագայով մը սկսած է, այլ իր ծագումն ունեցած է նոյն իսկ նախնապետութեան սկզբնաւորութեան օրէն, և միեւնոյն կերպով պահուած ու շարունակած է Հայ եկեղեցւոյ վարչութեան մէջ։

Իրօք ալ ինչ որ ասոր հակառակ կրցան ըսել հակառակ կարծիքը պաշտպանողներ, պարզ ենթագործիւններէն անդին չանցնիր։ Անոնք կը հիմնուին այն տեսակ ձեւակերպութիւններու վրայ, որոնք տեղի չունէին նախկին դարերուն մէջ, որոնց վրայ կը խօսինք, այլ յետագայ դարերուն մէջ երեւան եկած նորութիւններ են։ Ինչինչ փոփոխութիւններ տեղի ունեցան Բիզանդական տիրապետութեան Հայաստանի վրայ տարածուած ատեն, և կամ Խաչակիրներու արշաւանքներուն ազդեցութեան ներքեւ, և ամուսնեւրու յարաբերութիւններն ալ այլայլեցան. բայց այս պատահարները չէին կրնար և չկրցան յետագարձ ներդրածութիւն մը ունենալ, և ոչ ալ հնար է առաջին դարերու եղելութիւններուն իսկութիւնը՝ յետին դարերու եղելութեանց վրայ ձեւել։

Հետեւաբար Ս. Լուսաւորչին Կեսարիոյ արքեպիսկոպոսէն ձեռնադրութիւն ընդունիր, պէտք է որևէ պատահական պարագայի վերադրել որ իրաւական կամ իրաւա-



սական նշանակութիւն մը չունիւ թերեւս նոյն ինքն Ս. Լուսաւորչին անձնական մի փափաքէն յառաջ եկած է, քանի որ Կեսարիոյ մէջ եղած էր անոր դաստիարակութիւնը: Իսկ այս պարագայն չկրնար երբեք ծառայել, իբրեւ եկեղեցական յարաբերութիւնները ճշգրտու որոշ փաստ մը:

## 2.

### ՉՈՐՐՈՐԿ ԳԱՐՈՒ ԵԿԵՂԵՅԻՆ

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայ եկեղեցին կառավարեց քառօրդ դարու միջոց մը, և լրացուց այն ամէն գործողութիւնները, որ պէտք էին անոր հաստատուն և ամբողջական կազմակերպութիւն մը տալու համար: Իրեն անունով ունինք Կանոններ և Յաճախապատում ճառեր, և շատ մըն ալ բարեկարգական և ծիսական սովորութիւններ կան, որոնց ծագումը մինչեւ իւր օրը կը բարձրանայ: Նա չորսհարիւրի չափ եպիսկոպոսական և արքեպիսկոպոսական վիճակներ սահմանեց, Հայաստանի և անոր յարակից երկիրներու հոգեւորական վարչութեան համար: Ինքն եղաւ որ գլուխ կանգնեցաւ Վրաստանի, Աղուանից երկրին և Ատրպատականի քրիստոնէութեան դառնալուն, և եկեղեցական պաշտօնեաներ զրկեց այդ կողմերը, և վախճանեցաւ 325 ին, Նիկիոյ Ժողովին գումարման միջոցին: Իրեն յաջորդեցին իւր որդիները, նախ կրտսերը Ս. Արիստակէս (325—333), որ կուսակրօն էր. յետոյ երէց որդին Ս. Վրթմանէս (333—341), որ ամուսնացեալ էր: Այս վերջինին ալ յաջորդեց իւր իսկ որդին Ս. Յուսիկ (341—347): Հայրապետական յաջորդութեան միեւնոյն ընտանիքին մէջ շարունակելը, այն ատեն ազդին համար փափաքելի ձեւ մը եղաւ: Այս կերպով Հա-

յը, ոչ թէ միայն իւր մեծ Լուսաւորչին հանդէպ խորին յարգանքի նշանակ մը կ'ընծայէր, ալ և հեթանոսական հին սովորութեան հետեւած կ'ըլլար. թերեւս առանց ուշադրութիւն իսկ դարձնելու իսկ Յուսիկի զաւակներուն եկեղեցական կոչում ընդունելու գէժ ցուցած հակառակութիւնը, հայրապետական աթոռ բարձրացուց Փառէն Աշտիշատեցին (348—352), Լուսաւորչի գերդատանին մերձաւոր կամ ազգակից մը. բայց նորէն շուտով ձեռք առնուեցաւ Լուսաւորչի սերունդին ուղղակի յաջորդութիւնը, և ընտրուեցաւ Ս. Ներսէս (353—373), Ս. Յուսիկի թոռը: Անոր ալ մահուան ատեն, իւր զաւակին կաննական տարիք չունենալուն պատճառով, ազգին կողմէ հայրապետական աթոռ կոչուեցան Նահակ (373—377), Զաւէն (377—381), և Ասպուրակէս (381—385), երեքն ալ Աղբիանոսի քահանայական սերունդէն, որ Ս. Լուսաւորչին գործակիցն ու օգնականը եղած էր աւետարանի քարոզութեան մէջ: Ասոնցմէ ետքը հայրապետական աթոռը անդամ մըն ալ Ս. Լուսաւորչի սերունդին կը դառնար, Ս. Սահակի ընտրութեամբ, որ Ս. Ներսէսի որդին էր, և որ ամբողջ յիսներեակ յորեւեան մը լրացուց հայրապետական աթոռին վրայ (387—439): Գիտենք որ չորրորդ դարու կաթողիկոսներուն ժամանակադրական թուականները, և մինչև իսկ անունները, տարբերութիւններ ունին նոր պատմագիրներուն մօտ, սակայն մեր նշանակած կարգն ու թուականները, հիմնուած են նախնական աղբիւրներու բաղդատութեան վրայ, և անձամբ կտաարած ուսումնասիրութիւններով ճշգրտւած ենք:

Չորրորդ դարու Հայ եկեղեցին, թէպէտև նուիրապետութեան և վարչութեան տեսակէտէն պէտք եղած կազմակերպութիւնը ստացած էր, սակայն ամենակարևոր տարր մը կը պակսէր իրեն, այն է իւր սեփական լեզուով աստուածաշունչի թարգմանութիւն և ծիսական գիրքեր ունենալ. որովհետև հայերէն լեզուն այրուէն չունէր տակաւին, և էր կրնար սուրբ գիրքերուն կենդանի խօսքերուն մնա-

յուն և հաստատուն գրոշմ՝ սալ գրութեան միջոցով։ Գրարոցական ուսումն ու կրթութիւնը Հայաստանի մէջ օտար լեզուներով կը արուէր, և Կեսարիոյ և Եգեսիոյ հռչակաւոր դպրոցներն էին իրեն լուսոյ վառարանները, որոնցմէ մտաւորական լոյսը կը ստանար։ Յունարէն լեզուն կը գործածուէր Կեսարիոյ դպրոցին մէջ, ուր կը յաճախէին Հայաստանի հիւսիսային նահանգներուն ուսանողները. ասորերէն կը գործածուէր Եգեսիոյ դպրոցին մէջ, ուր կը գիմէին հարաւային նահանգներու ուսումնաստեղները։ Ս. Գրիգոր սկսաւ Հայաստանի մէջ քրիստոնեական դպրոցներ բանալ, սակայն պարտաւորուած էր անոնց գլուխը օտարազգի կամ օտարախօս ուսուցիչներ զնել։ Իւր յաջորդներն ալ իւր օրինակին հետեւեցան, բայց ամէնէն աւելի այդ գործին զարկ տուաւ Ս. Ներսէս Մեծ հայրապետը, որ կրթական և բարեգործական հաստատութիւնները բազմացուց ու ծաղկեցուց։

Ս. Գրիգոր հայրապետի և Ս. Տրդատ թագաւորի միացած ջանքերուն հակառակ, Հայաստանի անթերի քրիստոնեանալը բացառութիւններ ունեցաւ, և հեթանոսական պաշտամունքը աստեւանդ ծածկուած մնացին, և բոլորովին չանհետացան։ Մանստանդ լեռնային և գժուարամտաչելի կողմեր հին շատուածներ իրենց համար տաճարներ և զիրենք պատուող քուրմեր ունէին տակաւին։ Ուստի Լուսաւորչին յաջորդող հայրապետները ամենայն նախանձաշուղովեամբ աշխատեցան հեթանոսական զեղծումները վերջնել։ Բայց բոլորովին արմատախիլ ընել զխրին չէր։ Այս վիճակը շարունակեց մինչև Ս. Ներսէսի օրերը, որ անոնց դրեթէ վերջնական հարուածը տուաւ, թէպէտե ինչ ինչ հեռքեր Ս. Մահակի օրով ալ տակաւին կը գտնուէին։ Աւելի գժուար եղաւ անհետացնել հեթանոսական սովորութիւններն ու զեղծումները, որոնք ժողովուրդին մէջ կը տիրէին, և առաւելապէս արքունիքին և նախարարներու տուներուն մէջ։ Հայրապետներ, նոյն խկ քաղաքական իշխանութեան կողմէ եղած սպառնալիքներն ու անոնց զայրոյթէն բղխած

վտանգներն ալ անարգելով, միշտ հովուական արիտ թեամբ  
և վեհօգի նախանձայուզութեամբ զխնազրեցին, և բարոյա-  
կան զեղծումներու և անպարիշտ սովորութիւններու գէժ  
մտքառեցան: Իրենց այս քաջարտութեան հետեւանք  
եղաւ, որ Ս. Արիստակէս՝ Ծովաց նախարարին դաւաճանու-  
թեամբը սպանուեցաւ. Ս. Վրթանէս հաղի կրցաւ թա-  
ղուհիին կողմէն զրգուած Սիմ (Սասուն) դաւառի լեռ-  
նականներուն յարձակումներէն ազատիլ. Ս. Յուսիկ՝ Տիրան  
թագաւորի կամակցութեամբ բրածեժ հարուածներու հետե-  
ւանօք հոգին տանուեց, և Ս. Գանիէլ Աշտիշատեցին ալ,  
որ հայրապետական աթոռ կոչուած էր, միւսնայն վախճանն  
ունեցաւ: Բայց այդ հարածանքները երբեք չնուազեցին ու  
չխիջուցին սուրբ հայրապետներուն քաջարի նախանձա-  
յուզութիւնը:

Գարդ վարդապետութեան, զոր ունէին չորրորդ դա-  
րու Հայ Եկեղեցւոյ հայրապետները, այս մասին յատուկ  
ըսելիք մը չունինք: Միւսնայն դաւանութիւնն էր որ չորրորդ  
դարուն մէջ բոլոր եկեղեցիները կը միացնէր, և Արեւելք  
ու Արեւմուտք՝ հաւասոյ և սիրոյ կատարեալ հաղորդակ-  
ցութեան մէջ էին: Այդ միջոցին երեւցած մարտութիւնները,  
ինչպէս եղան Արիանոսներու և Մակեդոնեաններու հերե-  
սիկոսութիւնները, ընդհանուր եկեղեցւոյ համաձայնութեամբ  
դատապարտուեցան՝ նիկիոյ (325) և Կոստանդնուպոլսոյ (381)  
ժողովներուն մէջ, և Հայոց Եկեղեցին ալ կատարեալպէս  
այդ ժողովներուն դաւանութիւնն ու որոշումները ընդու-  
նեցաւ: Ս. Արիստակէս անձամբ ներկայ եղաւ յիշուած ժո-  
ղովներէն առաջինին, և եթէ երկրորդին մէջ Հայոց Եկե-  
ղեցին ներկայացուցիչ չունեցաւ, սակայն ուղղակի տեղե-  
կութիւն ստացաւ անոր որոշումներուն նկատմամբ, և ըստ  
ամենայնի համակերպեցաւ և միացաւ անոր հօդույն և անոր  
դաւանական կանոններուն:

Հայ Եկեղեցւոյ սեփական և ազգային ծէսին մասին,  
արդէն ակնարկեցինք, թէ այն գեռուս կազմակերպուած

չէր, որովհետեւ հայ լեզուն ոչ յատուկ այբուբէն և ոչ բնիկ դպրութիւն ունէր, և աստուածաշունչն ու ծիսարանները յունարէն և ասորերէն լեզուով կը գործածուէին: Բայց հասարակ ժողովուրդը չէր կրնար օտար լեզուներու տեղեակ ըլլալ. անոր համար կարգացուած գիրքերը նոյն խոկ եկեղեցւոյ մէջ բերանացի կը թարգմանուէին: Այս նպատակով Թարգմանիչ պաշտօնեաներու յատուկ դասակարգ մը կար, որ եկեղեցական պաշտամունքներու կը մասնակցէր, և պաշտօն ունէր բերանացի թարգմանել և բացատրել աստուածաշունչի այն կտորները, զորս վերծանող պաշտօնեաներ օտար լեզուով կը կարգային: Թարգմանիչներու պաշտօնն էր նաև մայրենի լեզուով ժողովուրդին բացատրել ծիսական ազօթքները, և անոնց սորվեցնել բերանացի եւ գոց արտասանել սաղմոսներէ կամ՝ ծիսարաններէ առնուած գլխաւոր ազօթքները: Եթէ մտադրութիւն դարձուի այն բառերու տարբերութեանց, որոնց կը հանդիպինք պաշտամանց մէջ գործածուած և աստուածաշունչի ամբողջութեան մէջ պարունակուած միեւնոյն սաղմոսներուն բացատրութիւնները իրարու բաղդատած ատեննիս, դիւրաւ պիտի կարենանք զանազանել ազօթական հաստուածներուն նկատմամբ երկու տարբեր թարգմանութիւններ, մէկը չորրորդ դարու մէջ կատարուած ժողովրդական կիրառութեան համար, եւ միւսը հինգերորդ դարու մէջ գասական սճով կատարուած յունական բնագիրին վրայ:

## Է.

### ՀԱՅ ԴՊՐՈՒԹԵԱՆՑ ՍԿՁԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Յատուկ այբուբէնի եւ ազգային գրականութեան պակասութիւնը, հիմնական արդելք մըն էր, ոչ միայն ազգին մտասրական եւ կենցաղական զարգացման, այլեւ եկե-

զեցւոյ գոյութեան եւ անկախութեան, որ առանց անոր չէր կրնար, ոչ իրեն յատուկ եւ սեփական կազմակերպութիւնն ունենալ, եւ ոչ ալ զայն պահել ու սրաշտպանել: Ժողովուրդը ոչ մի հաստատուն միջոց չունէր իւր կրօնական կեանքին եւ հոգեւոր շինութեան համար, քանի որ բերանացի եւ անցաւոր թարգմանութիւններ չէին կրնար իւր սիրտին ձգտումները եւ հոգւոյն աննշանքը յազեցնել: Այդ կացութիւնը առաւելագէս Ս. Սահակ հայրապետին մտադրութեան աւարկայ և հոգացողութեան նիւթ պիտի ըլլար, քանի որ ինքն հեղինական և ասորական գալլութեանց եւ դիտութեանց մէջ այնպէս կատարեալ կերպով զարգացած էր, որ ժամանակակիցներու վկայութեամբ, իւր դարուն իմաստուններուն մէջ գերազանց դիրք մը կը գրաւէր:

Ս. Մեսրոպ-Մաշթոց, նախկին արքունական գիւմնաս-գ-պիր, յետոյ Ս. Ներսէս հայրապետի աշակերտած, միաքը գրաւ անհետացնել հեթանոսութեան վերջին մնացորդները, որոնք տակաւին Գողթն (Ագուլիս) գաւառին մէջ կը գլտնուէին: Այդ աշխատութեան պահուն էր, որ փորձով զգաց այրութէն մը չունենալու անտեղութիւնները, և տեսալ թէ անհնար կ'ըլլայ հաստատուն պատուէրներ եւ գրաւոր ուսանելիքներ յանձնել այն ժողովուրդին, որ լոկ բերանացի քարոզութեամբ աշակերտած էր: Ս. Սահակ հայրապետի հետ խորհրդակցեցաւ, և երկուքը միասին գիմնեցին Վառաշապուհ թագաւորին, որ այդ տխուր կացութեան դարման մը հոգացուի: Այս առաջին շարժումը տեղի կ'ունենար հինգերորդ դարուն ճիշդ սկիզբը, 401 տարին: Վառաշապուհ անոնց տրամադրութեան ներքեւ գրաւ, ինչ միջոց և գիւրութիւն որ իրեն ձեռքէն կու գար: Շատ մը աշխատութիւններէ և դիմումներէ ետքը, 404 տարին, Ս. Մեսրոպ յաջողեցաւ կազմակերպել այրութէն մը, որ կատարեալ կերպով կը համապատասխանէր հայ լեզուին ոգւոյն և առողջանութեան: Որովհետեւ Ս. Մեսրոպ իւր նպատակին մէջ յաջողելու համար, աղօթքով ալ գիմնած էր երկնային ոգ-

նականութեան, անոր յաջողութիւնն ալ աստուածային սքանչելեաց արդիւնք ընդունուեցաւ : Հայերն ալ ազգովին, իրենց համար միշտ պարձանքի նիւթ մը բրած են, որ իրենց ազգային դպրութեանց ծագումը, գերբնական ազդեցութեան արդիւնք եղած ըլլայ : Ս. Մեսրոպի գիւտը Ս. Սահակի գլխաւորութեամբ կազմակերպուեցաւ, նոյն ինքն սուրբ հայրապետը գլուխ ճանչուեցաւ այն մեծ գործունէութեան, որ միեւնոյն ատեն զբաւան էր և նուիրական միանգամայն Ս. յս է պատճառը որ Հայերը Ս. Սահակը կը ճանչնան իբր Լուսաւորիչ մտաց՝ դպրութեանց լոյսով, ինչպէս Ս. Գրիգոր եղած էր Լուսաւորիչ հոգւոց՝ հաւատքի լոյսով, և Ս. Ներսէս Լուսաւորիչ սրբից՝ բարոյականութեան լոյսով :

Հայ այբուբէնը սկիզբէն երեսունուփեց տառեր ունէր, որք կը պարունակէին Հայ լեզուի ամէն հնչումներն տառագանութիւններն. իսկ վերջին ատեններ երկու տառեր ևս աւելցան, և ամբողջութիւնը երեսունութնի յրացաւ : Այդ տառերուն յարմարութիւնը այնչափ յաջող ու կատարեալ է, որ կրնայ առանց դժուարութեան օտար լեզուներու գրելիք բոլոր հնչումները արտագրել : Մենք մեր նպատակին մէջ ամփոփուինք, և այդ նոր յաջողութեան եկեղեցական տեսակէտէ ունեցած արդիւնքները բացատրենք :

Առաջին ձեռնարկուած գործն եղաւ աստուածաշունչի թարգմանութիւնը, որուն նուիրուեցան Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ, իրենց ընտրելագոյն աշակերտներուն գործակցութեամբ, զորս զատած էին Թարգմանիչ պաշտօնեաներու զատակարգէն երկուքին աշակերտներուն թիւը պատմութիւնը հարիւրի կը հասցնէ, որոնց վաթսուներ Ս. Սահակի հետևողներ էին, և մնացածը Ս. Մեսրոպի : Հին կտակարանի հայերէն թարգմանութիւնը եղած է Եօթանասնից կոչուած յունական օրինակին վրայ, բայց բաւական թոով տարբերութիւններ կը նկատուին, հետեւողութեամբ ասորական թարգմանութեան և Թարգմանութեան աշխատութիւնը որ 404 ին սկսաւ, վերջնապէս փակուեցաւ 433 ին,

նոր վերաքննութենէ մը ետքը, զոր Ս. Սահակ անձամբ կատարեց Կոստանդնուպոլսոյ պատրիարքէն յատկապէս զըրկուած ընտիր օրինակին հետ բաղդատելոյս Աստուածաշունչի թարգմանութենէն ետքը, սկսան ծիսական կարգերը կամ դիրքերը պատրաստել, ինչպէս են, պատարապամատոյցը, մկրտութեան և դրոշմի կանոնները, ձեռնադրութեան և ամուսնութեան կարգերը, եկեղեցեաց հիմնարկութիւնն ու նուիրագործութիւնը, թագման կանոնները, օրական ժամերգութիւնները, և ասոնքու տամարը Ս. Սահակ այդ աշխատութիւնները կատարեց, ըլլայ ուղղակի անձամբ, ըլլայ անուղղակի Ս. Մեսրոպի և իւր աշակերտներուն գործակցութեամբ: Հայոց ծիսական կարգադրութիւնները ընդհանրապէս ներշնչուած են Ս. Բարսեղի կրօնածարարութիւններէն, որ կը կազմեն Կեսարիոյ կամ Կապադովկացոց եկեղեցւոյն ծէսը: Այդ բանն ալ իրաց բնական ընթացքին համաձայն էր, քանի որ, ինչպէս յայտնի է, Հայ եկեղեցւոյ բոլոր պետերը, իրենց կրթութիւնն ու ուսմունքը Կապադովկիոյ գաղտնիքն մէջ ստած էին:

Բայց Կեսարիոյ կամ Կապադովկացոց ծէսին հետեւելով ալ, բնաւ անոր ստրկական հետեւողութիւն չունեցան և կատարելապէս բառացի թարգմանութիւն չբրին: Ս. Լուսաւորիչն արդէն Հայոց ազգային սովորութիւններէն և հեթանոսական ծէսերէն շատ կէտերու ձեւեր ստած, և քրիստոնէական ծիսակատարութեան վերածած էր: Այս փոխառութիւնները դարու մը տեսողութեամբ և ժամանակին ազդեցութեամբ, ազգային քրիստոնէական սովորութեանց մէջ այնչափ խոր արմատացած էին, որ հինգերորդ դարու բարեկարգիչները չէին կրնար այլեւս անոնց ազդեցութիւնը չյարգել, ոչ ալ կրնային անոնք խափանել ու տարբեր ձեւեր մտցնել: Այս պատճառով չուղեցին և չկրցան ալ ծառայարար համակերպիլ յունական ծէսին ամէն մանրամասնութեանց: Ինչ որ հայկական ծէսին սուսնձնայատուկ պէտք է նկատել, իւր շարականներն են, որոնք բնիկ ազգային և



սեփական ճաշակ մը ունին, և ազգային հին երգերու արձագանգներն են, թէպէտեւ մասամբ Ս. Եփրեմի ասորերէն երգերուն հետ ալ նմանութիւններ ունենան:

Հայկական գրականութեան յատկանիշներէն մէկն ալ, սուրբ հայրերուն գործերուն թարգմանութեանց առատութիւնն է: Նկատողութեան արժանի է, որ անոնց գործերէն ոմանք, որոնք բնագրական լեզուով կորսուած են հայերէն թարգմանութեան մէջ պահուած կը մնան: Սուրբ հայրերէն զատ թարգմանուած են ևս հին իմաստասէրներուն գործերէն շատեր: Իսկ իբր բնագրական գործեր կրնանք յիշել միայն հին և ժամանակակից պատմութեան գիրքեր բառական թիւով:

## Ը.

### ՀԻՆՔԵՐՈՐԴ ԳԱՐՈՒ ԵԿԵՂԵՑԻՆ

Ս. Սահակի հայրապետութեան միջոցը կը գրաւէ հինգերորդ դարուն առաջին երրորդ մասը: Եթէ նկատի չառնենք գրական յաջողութիւնները, որ այդ միջոցը պայծառացուցին, ինչպէս պատմեցինք. ուրիշ մէկ կողմէ նշանաւոր պարագայ մը չկայ յառաջ բերելու արժանի: Համարձակ կրնանք ըսել թէ այդ գրական յաջողութեան մէջ պէտք է երկնային նախախնամութեան յատուկ ներգործութիւնը տեսնել, որովհետեւ այն եղաւ որ ազգեցութիւն և զօրութիւն ունեցաւ ազգը յայտնի կործանումէ և ստոյգ ոչնչացումէ պաշտել. այն եղաւ որ անոր տուաւ ինքնուրոյն և անկախ գոյութեան պէտք եղած տարրները, երբ ուրիշ ամէն կենցաղական և քաղաքական պարագաներ անոր տեսականութեան դէմ կը դառնային: Հայաստան կանուխէն

Յոյներուն և Պարսիկներուն մէջ բաժնուած էր (387), և Ս. Սահակի կաթողիկոսական ընտրութիւնը եղած էր Պարսկական բաժինին վրայ թագաւորող Խորովի կամքովը միայն, երբ Արշակ առանձինն կը թագաւորէր Յունական բաժինին մէջ: Ս. Սահակի ձեռք առած խոհական և իմաստուն միջոցներուն արդիւնքն էր, որ իւր հայրապետութիւնը երկու բաժիններու մէջ ալ հասարակեալ գնահատուեցաւ ու ճանչուեցաւ: Քիչ ետքը Յունական Հայաստանը Բիւզանդացի կուսակալներու կառավարութեան յանձնուեցաւ, իսկ Պարսկական Հայաստանի վրայ, Վասակայուհի համեմատաբար խաղաղական թագաւորութենէ ետքը, Պարսիկ նապուհը թագաւորեց, որուն յաջորդեց Արշակունի Արտաշէսը, անսանձ և մոլի երիտասարդ մը: Նոյն ինքն Հայ նախարարներ դատախազ կանգնեցան իրենց թագաւորին դէմ՝ Պարսիկ վեհապետին առջեւ, Արտաշէսի գահընկէցութիւնը պահանջեցին, և Պարսիկ կուսակալով կառավարուելու ինդրամատոյց եղան: Իրենց զիմուժը առանց գիտարութեան ընդունուեցաւ և անմիջապէս Վեհմիհրչապուհ Պարսիկ նախարարը Պարսկական Հայաստանի մարզպան անուանուեցաւ (428): Նախարարներ Ս. Սահակն ալ բռնադատեցին իրենց հետ միանալ, և ամէն տեսակ միջոցներ գործածեցին, սպառնալիքներ ու հրապոյրներ ալ փորձեցին, որպէս զի իրենց հետ գնաւաճանելու ստիպեն, բայց չյաջողեցան: Ասոր վրայ սուրբ հայրապետին զիմադրութեան վրէժը լուծելու համար, ան ալ ամբաստանեցին թէ Արտաշէսի կամակից է և Պարսիկ վեհապետին թշնամի: Այդ դաւաճանութեան հետեւանքով Ս. Սահակ ալ պաշտօնանկ հռչակուեցաւ և Պարսկաստան աքսորուեցաւ, և իրեն տեղ հակաթու կաթողիկոս անուանուեցաւ Սուրմակ Մանազկերտացի, որ նախարարներուն միացած էր (428):

Այդ փոփոխութիւնը մեծ խառնակութիւն պատճառեց Հայաստանի եկեղեցական գործերուն սէջ: Հայրապետական ակտը վարչական կերպով հակաթուներու ձեռքն

անցաւ, ասկից դրամական հասոյթներ և նիւթական օգուտներ միայն կը քաղէին: Հաստատուն կայութիւն ալ չունէին, որովհետեւ շատ իրարու յաջորդեցին, Սուրմակ (428), Բըրքիչոյ (429), Ճուռէլ (432), և դարձեալ Սուրմակ (437): Իսկ եպիսկոպոսական դասակարգը, կղերն ու ժողովուրդը, բացէքաց մերժեցին հակաթուներուն իշխանութիւնը, և միշտ իբր իրենց հոգեւոր ղլուից և հայրապետ ճանչցան աքսորական Ս. Սահակը: Երբոր սա աքսորէ ալ դարձաւ, չուղեց պաշտօնական գիրք կազմել, այլ ասանձնացաւ Բողբեւանդ գաւառի Բլուր գիւղը (Արաչկերտի Եասնիթէրէն), և Ս. Մեսրոպ ու Ս. Ղեւոնդ, իբրեւ օգնականներ, կրօնական և հոգեւորական գործերը կը հոգային միշտ Ս. Սահակի հովանաւորութեամբ, որ ոչ մի ժամանակ ձեռքէ չժողուց իւր հաւատացեալ հօտին խնամքն ու հսկողութիւնը:

Հակառակ այդ անկայուն կացութեան, Ս. Սահակ ընդհանուր եկեղեցւոյ պատկանող խնդիրներու մէջ ալ գործունեայ դեր մը պահեց: Եփեսոսի Ս. Ժողովը (431) դատապարտած էր նեատորի մոլորութիւնները, և ժողովին վճիռները կոտանդնուպոլիսէ Հայաստան բերուած էին Ս. Սահակի աշակերտներուն ձեռքով: Բայց Թէոդորոս Մոսկոսեոսացիի գիրքերը, որ նեատորի նախընթաց կարապետն էր եղած, ժողովին մտադրութեան անարկայ եղած չէին: Նեատորականներ այդ զանցաւորութենէ օգտուելով, կը յաջողէին իրենց մոլորութիւնները քօզարկել Թէոդորոսի անունով: Ս. Սահակ խնդիրը ձեռք առաւ, Աչախչատի մէջ ժողով մը գումարեց (435), Թէոդորոսի մոլորութիւնները երեւան հանեց, և դաւանական գրութեամբ մը հազորդեց կոտանդնուպոլսոյ Պրոկզ պատրիարքին: Այդ նամակը վերջէն իբրև փաստ ծառայեց կոտանդնուպոլսոյ Երկրորդ ժողովին (553) Երկոյ-Գլխոց դատապարտութիւնը վճուելու համար:

Ս. Սահակի մահը (439) ասկի ազետալի պատահարներու սկզբնաւորութիւն եղաւ: Սուրմակ կը շարունակէր

Հայրապետական ակտուը գրաւել իրր Պարօկական սիրապետութիւնէ ճանչցուած հոգեւոր գլուխ, մինչ Մեարոյ կը յարատեւէր հոգեւոր հսկողութիւնն ու հոգացողութիւնը կատարել իրր հայրապետութեան տեղակալ . բայց նա ալ շուշայաւ Ս. Սահակին հետեւիլ հանդերձեալին ճանաչուն մէջ (430)։ Ս. Յովսէփ հոլոցմեցի Ս. Մեարոյի տեղ անցաւ հոգեւոր գործերու հսկողութեան կամ հայրապետական տեղակալութեան մէջ, մինչեւ որ Սուրմակի մահուանէ ետքը (444), Վասակ Սինի մարզպանին միջնորդութեամբ, Պարսից տէրութենէն ալ ճանչցուեցաւ իրրեւ հոգեւոր գլուխ եւ կաթողիկոս։

Պարսից արքայից-արքայն, որ Հայաստանը իւր պետութեան խառնած և մարդ կամ արքունական գաւառ մը դարձուցած էր, Զրադաշտական կրօնքին պաշտօնեայ մտգեբուն խորհրդով յորդորուեցաւ քրիստոնէութիւնը ջնջել Հայաստանէն ալ, և բոլոր իւր հպատակները արեւի և կրակի պաշտաման բռնադատել։ Այդ նպատակը իրագործելու համար, նոյն ձեռնարկից Հայաստանը մերկադնել իւր զինուորական զօրութենէն, և Հայոց այրուծի գանդերը փոխադրել զէպ հիսօս, կովկասարեակ բարբարոս ազգերու գէմ պատերազմելու համար։ Անկէ ետքը հրովարտակ մը հրատարակեց (449), որով գէնի-մայրէջը կամ գրադաշտական կրօնքը պարտադրիլ կը հռչակէր բոլոր իւր սիրապետութեան հպատակներուն անխարարար Ս.յդ առթիւ սկսաւ յայտնի հալածանք մը քրիստոնէութեան գէմ, որուն մէջ նախեաւ աջ նահատակուեցան Ս. Ատոմ Գնունի և Ս. Մանածիհր Ռըշտունի իրենց գանդերով։ Եպիսկոպոսները Արտաշատի մէջ ժողովի գումարուեցան (450), և հաւատոյ ջատագովական գրութեամբ մը բացարձակապէս յայտարարեցին իրենց անգրդուելի հաստատամտութեանը քրիստոնէական հաստոյ վրայ։ Այդ բացարձակ բնդդիմութեան պատճառով զխաւոր նախարարներէն տասը հոգի Պարսից արքունիքը կանչուեցան, և բռնադատութեան ենթարկուեցան քրիստոնէա-

կան հաւատքնին ուրանալու: Նախարարները երկայրի վը-  
տանդներու հեռապատկերին հանդէպ գտնուեցան, կամ  
արքայից-արքային կամքին հնազանդիլ, կամ իրենց երկիրը  
անդլուխ և անպաշտպան լքանել: Անելանելի տագնապին  
ստիպմամբ որոշեցին՝ կեղծուրացութեամբ ազատութիւն  
ստանալ, և իրենց երկիրը գառնալով կանոնաւոր և զօրա-  
ւոր դիմադրութիւն պատրաստել:

Արեւի եւ կրակի պաշտօնեայ մողերու բաղմութիւն  
մը, իրենց կրօնքին պէտք եղած առարկաներով ու նշաննե-  
րով, և յաղթական ձեւով ճանապարհ ելան կեղծուրաց նա-  
խարարներուն հետ, բայց սարտաւորուեցան ցրուիլ և ընկըր-  
կիլ Բաղրեւանդի դաշտին մէջ զինեալ ժողովուրդին յար-  
ձակումներուն առջեւ, որուն կ'առաջնորդէր Ս. Վեռնիգ  
մեծ երէցը Տարուան մը պայմանաժամ տրուած էր, 450  
օգոստոսէ մինչեւ 451 օգոստոս, Հայաստանի մէջէն քրիս-  
տոնէութիւնը անհետացնելու, և Հայեր այդ պայմանաժա-  
մէն օգտուեցան՝ զինեալ դիմադրութիւն պատրաստելու  
Պարսիկ բանակներուն դէմ, որոնք կու գային արքունի հրա-  
մաններուն կատարման հսկելու եւ ընդգիմադիրները ընկ-  
ծելու: Ծատ հաւանական է, որ եթէ Հայերը այդ պարա-  
գային իրենց բոլոր ոյժերը համամիտ եւ համերաշխ կերպով  
միացուցած ըլլային, պիտի կարենային իրենց դիմադրու-  
թեան մէջ յաջողիլ, և թշնամի բանակը ամօթով յետս  
գարձնել: Դժբախտաբար նախարարներէն շատեր, Վասակ  
մարդպանը գլուխնին, որոշակի Պարսիկներու հետ համա-  
ձայնած էին եւ անոնց կողմը կը պաշտպանէին: Երբ 451  
տարւոյ մայիս 26 օրը, Աւարայրի ճակատամարտին մէջ  
վաթսուներկու հազար Հայեր, Վարդան Մամիկոնեանի ընդ-  
հանուր հրամանատարութեամբ, երկու հարիւր քսան հազար  
թշնամիներու դէմ կը դնէին, հայազունը նշանաւոր բա-  
նակ մըն ալ թշնամի գունդերու մէջ էր եւ անոնց կողմը  
կը զօրացնէր Ս. Վարդան եւ ուրիշ Ս. զօրավարներ եւ  
հազար քսանուեօթը Ս. զօրականներ, պատերազմի դաշտին

մէջ նահատակուեցան, որոնց յիշատակը ամէն տարի կը տօնուի Հայ եկեղեցւոյ մէջ, բուն բարեկենդանին նախընթաց հինգշաբթի օրը:

Այդ օրէն սկսելով Հայոց եկեղեցին դժբախտ ժամանակամիջոց մը ունեցաւ շիտթութիւններով եւ նեղութիւններով լեցուն, որոնք յառաջ եկան ներքին եւ արտաքին արկածներէ, և որոնց ներքեւ եկեղեցին տառապեցաւ ու տանջուեցաւ: Ս. Յովսէփ հայրապետ, որ իբր կրօնական շարժումին գրգռիչը ամբաստանուած էր, ձերբակալուեցաւ, Պարսկաստան տարուեցաւ, և մարտիրոսութեամբ նահատակուեցաւ (454) ուրիշ եկեղեցական ընկերներու հետ, որոնց յիշատակը կը տօնուի Ս. Ղեւոնդեանց անունով: Անոր յաջորդեցին Մեղիսէ (452—456) և Մովսէս (456—461), և ասոնցմէ ետքը հռչակաւորն Գիւտ Արահեղացի (461—478), որ նորէն պարտաւորուեցաւ Պարսիկներուն հալածանքներով տառապիլ, որոնք կրկին անգամ ձեռնարկած էին իրենց կրօնքը պարտաւորի ընել բոլոր իրենց հպատակներուն: Անգամ մըն ալ Հայերը ստիպուեցան ղէնքի գիմել Վահան Մամիկոնեանի հրամանատարութեամբ, որ Ս. Վարդանի եղբորդին էր, և թշնամական գործողութիւնները շարունակեցին մինչեւ Յովհաննէս Մանդակունի հայրապետին ժամանակը (478—490), որ Գիւտի յաջորդած էր: Այդ կացութիւնը անվերջանալի ըլլալ կը սպաննար, երբ Վաղարշ, նոր արքայից-արքայն, համոզուելով իրենց ճիգերուն անօտակարութեան, վերջ տուաւ կրօնական հալածանքներուն: Խոհական նախատեսութեամբ կրօնքի ազատութիւն հռչակեց, և նոյն ինքն Վահանը նախ զինուորական սպարապետ նշանակեց (484), և ետքէն Հայաստանի մարզպան կամ կուսակալ անուանեց (485), որով Հայաստանի մէջ թէ քաղաքական և թէ կրօնական խաղաղութեան ժամանակ մը սկսաւ: Այդ առթիւ երանելին Յովհաննէս Մանդակունի հայրապետական աթոռը պաշտօնապէս Գիւտին փոխադրեց, Պարսկական կառավարութեան մայրաքաղաքը, քրիստոնեայ

մարդպանին հոխանաորութեան ներքեւ, և սկսաւ ամենայն փութաճանութեամբ և ազատութեամբ աշխատիլ եկեղեցւոյ բարեղարդութեան և ժողովուրդին բարեկարգութեան: Իւր իմաստուն վարչութեամբ մեծապէս արդիւնաւոր եղաւ, և բազմամեայ խառնութիւններու և պատերազմներու երեսէն կործանուածները վերաշինեց և խանգարուածները դարմանեց: Այս պատճառով իւր անունը Ս. Սահակի անունէն ետքը առաջին տեղը կը դրաւ պատմութեան մէջ, իբրև եկեղեցւոյ պայծառացուցիչ և ժողովուրդին բարեկարգիչ:

Թ՛.

### ՔԱՂԵԿՈՐԿԻ ԺՈՂՈՎԸ

Եւտիքէս Բիզանդացի վանահայրը այնչափ սաստիկ նախանձալուզութեամբ զինուած էր նեստորի մուրթութեան դէմ, որ բոլորովին հակառակ արդիւնքի յանդեցաւ իւր բուն յարձակումը: Եւտիքէսի յարուցած վիճարանութիւնները առիթ տուին անվերջանալի խնդիրներու, թէ Քրիստոսի համար մէկ բնութիւն թէ ոչ երկու բնութիւն բացատրութիւնը գործածուելու է. և ասկէ սաստիկ հակառակութիւններ յուղուեցան Կոստանդնուպոլսոյ, Աղեքսանդրիոյ և Հռոմայ պատրիարքութեանց միջեւ: Անտիոքի դպրոցը, որուն կը հետեւէր Կոստանդնուպոլսոյ աթոռն ալ, այնպիսի վարդապետութիւն մը կը ստրվեցնէր, որ Քրիստոսի աստուածութեան և մարդկութեան մէջ կերպով մը բաժանում կամ անջատում կ'ենթադրուէր: Իսկ Աղեքսանդրիոյ դպրոցը ասոր հակառակ Քրիստոսի աստուածութեան եւ մարդկութեան մէջ կատարեալ միասորութիւն կը պաշտպանէր,

որպէս զի փրկագործութեան խորհուրդին որեւէ կերպով նուազութիւն կամ ստուերած մը չհասնիւ Եփեսոսի երրորդ տիեզերական ժողովին մէջ (431), յաղթութիւնն ու վճիռը Աղեքսանդրիոյ դպրոցին վարդապետութեան կողմը եղած էր, եւ իբր քրիստոնէութեան հիմնական վարդապետութիւն ընդունուած էր, Ս. Կիրեղ Աղեքսանդրացիի կազմած բանաձեւեր, Մի բնութիւն Բանին մարմնացելոյ նեստոր, Անտիոքայ դպրոցին աշակերտ, որ Կոստանդնուպոլսոյ պատրիարք ընտրուած էր, եւ Քրիստոսի երկու բնութեանց, այսինքն աստուածութեան եւ մարդկութեան մէջ պարզ եւ լոկ բարոյական միասորութիւն մը կը սորվեցնէր, նոյն ժողովին վճռովը դատապարտուեցաւ: Ասկէ ետքն էր որ Եւսեբէս, եօթանասնամեայ ծերունի վանահայր մը, իւր վարդապետութիւնը հրապարակեց (447), որով միասորութիւնը մինչեւ երկու բնութեանց իրարու խառնուելուն ու չլիթուելուն ու նոյնանալուն կէտք կը մղէր, այնպէս որ մարդկային բնութիւնը գրեթէ կը ջնջուէր եւ Քրիստոսի մարմինին ալ երկնային ծագում կը վերագրուէր:

Այս եզու պատճառը, որ Փլաբիանոս Կոստանդնուպոլսոյ պատրիարքը մասնաւոր ժողով մը գումարեց իւր ակթոսին մէջ (448), եւ Եւսեբէսն ու նորա վարդապետութիւնը դատապարտեց: Գիտակորտ Աղեքսանդրիոյ հայրապետ, Փլաբիանոսի այդ որոշումը իւր նախորդներուն եւ իւր զըզրոցին անարգանք, եւ անոնց վարդապետութեան հերքում, եւ կերպով մը նեստորական մտորութեան արդարացում ըմբռնեց: Այս պատճառով նոր ժողով մը գումարեց Եփեսոսի մէջ (449), եւ այն տեղ կրկին անգամ դատապարտել տուաւ նեստորականները, Փլաբիանոսն ալ մէկտեղ: Այս անգամ Լեւոն Ա. Հռոմայ հայրապետ մէջ տեղ ելաւ Փլաբիանոսը պաշտպանելու: Աղեքսանդրիոյ ակթոսին գէմ, եւ մասնաւոր ժողով մը գումարեց Հռոմի մէջ (450), եւ դատապարտեց Եւսեբէսն ու Գիտակորտը: Լեւոն իւր ձեռնարկին աւելի ծանրակշռութիւն եւ զօրութիւն տալու համար,



Մարկիանոս կայսրը համոզեց, նոր ընդհանուր ժողով մը գումարելու, որ հաւաքուեցաւ Քաղկեդոն քաղաքը (451), եւ ուր արտաքին եւ բռնադատական միջոցներով իրրեւ հաւատոյ կանոն ընդունել տուաւ իւր առ Փլարիանոս գրած թուղթը, որ ծանօթ է Տոմար Լեոնի անունով:

Երկու կողմերուն մէջ միտած այս կատաղի հակառակութեան պատճառը իմանալու համար պէտք է գիտնալ, որ գլխաւոր խնդիրը ոչ թէ պարզապէս աստուածարանական վերացեալ կէտ մըն էր, Քրիստոսի բնութեանց տեսական խնդիրը, այլ բուն նպատակը՝ կատարելապէս գործնական եւ գերազանցապէս թանձրացեալ կէտ մըն էր. այսինքն է հայրապետական անթոններու փոխադարձ յարաբերութեանց եւ առաւելագոյն ազդեցութեան խնդիրը: Նիկիոյ ժողովին ժամանակ, Յունահռոմէական քրիստոնէութիւնը երեք անթոններու վրայ բաշխուած էր, որոնք էին Հռոմայ, Աղեքսանդրիոյ եւ Անտիոքայ պատրիարքութիւնները, եւ ասոնցմէ իւրաքանչիւրը իւր սահմանին մէջ իրաստութիւն կը վարէր, առանց ուրիշներու վրայ գերիշխանութեան յաւակնելու: Բայց այդ կացութիւնը փոփոխուած էր հինգերորդ դարուն սկիզբները: Կոստանդնուպոլսոյ անթոնը պատրիարքութեան կը բարձրացուէր նոյն քաղաքին մէջ գումարուած ժողովին վճռով (381), եւ Հին Հռոմի ազդեցութեան հետզհետէ տկարանալն ու իյնալը, եւ նոր Հռոմին ազդեցութեան օրրատօրէ աճիլը, սկսած էր Կոստանդնուպոլսոյ պատրիարքներուն կարծեցնել, թէ իրենք միւս պատրիարքներէն բարձր են: Արդ, Աղեքսանդրիոյ անթոնը չէր կրնար այդպիսի յաւակնտա ձգտումներու հանդուրժել. նա զիտակից էր այն ազդեցութեան զոր ինքն ունեցած էր նախնեթեաց ընդհանուր ժողովներուն մէջ. յայտնի կը տեսնար այն նշանաւոր արգիւնքները, զորս ունեցած էին իւր անթոնին հայրապետներէն, Աղեքսանդր, Աթանաս, Թէոփիլոս, Կիւրեղ եւ Գիտակորոս, եւ համալուած էր թէ իրեն սեփական իրաւունքն է քրիստոնէական վարդապետութեան մասին որո-

չումներ արատանել, և գաւանական խնդիրներու մէջ վերջնական վճիռը տալ: Կը կարճէր ևս որ Աթմանասի՝ Նիկիոյ, և Կիւրեղի՝ Եփեսոսի ժողովին մէջ տարած պայծառ յաղթութիւնները կը նսեմանային, եթէ Փլաբիանոսի և Լեււոնի յառակնոտ պահանջները իրականանային, և թէ անոնց ընթացքը նախատինք մին էր Աղեքսանդրիոյ աթոռին դէմ արձակուած: Իրօք ալ Աղեքսանդրիոյ այդ պահանջկոտութիւնը մերժելու և ճնշելու համար էր, որ Հռոմի և Կոստանդնուպոլսոյ աթոռներ գաշնակցած էին հասարակաց հակաակորդին դէմ, և Մարկիանոսի աշխարհական բաղուէն ալ իրենց պաշտպան հանդիսացած էր, և այս անուղիղ միջոցներով կրցած էին Քաղկեդոնի մէջ յաղթանակել Աղեքսանդրիոյ աթոռին վրայ:

Սակայն եթէ գործին իսկութեան թափանցենք, կարծեցեալ յաղթութիւնը ոչ իրական էր և ոչ հաստատուն: Քաղկեդոնի ժողովը, ուրիշ որոշումներուն կարգին, վրձնուած էր նաև Կոստանդնուպոլսոյ պատրիարքութեան միւս պատրիարքութեանց վրայ նախաթու ըլլալուն իրաւունքը, ինչ որ Հռոմ չէր կրնար ընդունիլ, կասկածելով որ շուտով նոյն բանը իրեն նկատմամբ ալ կրնար ճշմարտուիլ, և հինգերորդէն երկրորդ տեղը անցնող աթոռը, երկրորդէն ալ առաջին տեղը կրնար անցնիլ: Այդ պատճառով Հռոմ չընդունեցաւ Քաղկեդոնի ժողովին այդ կանոնը, և միեւնոյն ժողովին նկատմամբ ընդունելի և անընդունելի կանոններու տարբերութիւն մը սկսաւ գնել: Յունահռոմէական աշխարհի եպիսկոպոսներն ալ երկու խումրի բաժնուեցան, նոյնպէս ժողովուրդներն ալ, որոնք իրարու դէմ բուռն ու կատաղի ցուցմունքներ սկսան կատարել: Նեստորականութիւնը քաջաբերած ըլլալու գայթակղութիւնը օրբաօրէ կը տարածուէր մասնաւոր եկեղեցիներու մէջ, և երկու անձնաւորութանց ու երկու բնութեանց մէջ մտածուած նուրբ տարբերութիւնը, չէր բաւեր քրիստոնէից խիղճերը հանգարակել: Այս պատճառով Քաղկեդոնի կանոնները առկաթ կը մնային, և

ընդհանուր կերպով ամէն եկեղեցիներէ և բոլանդակ քրիստոնէութենէ ընդունուած չէին: Անտիօքի մէջ նոր ժողով մը գումարուեցաւ (476), որ Քաղկեդոնի ժողովին վարդապետութիւնը կասկածելի հռչակեց, Բասիլիսկոս կայսրն ալ հրովարտակով արգելեց անոր կանոնները պաշտպանել: Զենոն կայսր ալ Հելսինսիոն հրովարտակը հրատարակեց (482), որով Քաղկեդոնի ժողովին հեղինակութիւն ունենալը կը մերժէր, և Եփեսոսի սուրբ ժողովին (431) կանոնները իրեն վերջնական և հիմնական կը նշանակէր: Վերջապէս Անաստաս կայսրն ալ ուրիշ հրովարտակ մը կը հանէր (491), և անով կը ջնջէր Քաղկեդոնի ժողովին կարեւորութիւնը, և անոր քննադատութիւն ու նշանակութիւն չէր վերադրեր: Այդ ամէն գործողութեանց մէջ պաշտօնական նպատակը նետտորականութեան դէմ՝ մաքառելն էր, որ Յունական կայսերութեան սահմաններէն հալածուած, ապաստանած էր Ասորական սարբին մէջ, և օգուտ կը քաղէր այն աղատութենէնէն զոր իրեն կը շնորհէին Պարսից թագաւորները: Բայց չմոռնանք որ պատրիարքական ակտներու մրցակցութիւնը՝ նշանակելի դեր մը կը վարէր այդ հակառակութեանց մէջ:

Հայաստան այս խնդիրներու մէջ մասնակցութիւն չունեցաւ մինչեւ վեցերորդ դարուն սկիզբները: Ինքն աեղեկութիւն չէր ունեցած Եւաիքէսի հակառակ կամ՝ անոր նրպաստաւոր ժողովներուն գումարմանց նկատմամբ: Քաղկեդոնի ժողովը, որ 451 հոկտեմբեր 8'ին սկսած էր, Աւարայրի ճակատամարտին, այսինքն 451 մայիս 26'ին գրեթէ վազումն կ'իյնար: Արդէն պատմեցինք թէ Հայաստան ինչ աղետալի և անկերպարան վիճակի մէջ էր այդ միջոցին. կաթողիկոսն ու եպիսկոպոսներ կամ՝ բանտարկուած էին և կամ՝ աքտուուած, նախարարներ հալածուած ու ցրուած, զինուորական գունդերը ցանուցիր եղած, ժողովուրդը ահուղօղի մասնուած ու սարսափահար եղած: Դիւրին է բմբրանել, թէ ինչու Հայաստանէ գուրս յուզուած թէ՛ դատանական թէ՛ պատրիարքական խնդիրներ չէին կրնար Հայոց

մտադրութիւնը գրաւել: Մեկիսէ և Մովսէս որ Ս. Յովսէփի յաջորդեցին, այդ խնդիրներով զբաղելու կարող անձեր չէին: Գիւտ և Յովհաննէս կաթողիկոսները, թէպէտեւ ուսմամբ զարգացած և կարողութեամբ հռչակուած, բայց կրօնական հալածանքներու և բռնադատեալ ուրացութեանց գէմ մաքառելու պարտաւորուած էին ընդհանուր խռովութեանց մէջ: Երբ վերջապէս Յովհաննէս Մանգակունի պահ մը հանդարտութեան երես տեսաւ, հազիւ թէ կրնար ներքին գործերու անհրաժեշտ պէտքերուն հասնել: Թող որ այդ միջոցին Քաղկեդոնի ժողովր մտադրութիւն գրաւելու և կարեւորութիւն ազգելու կերպարանն ալ չունէր: Յունական սահմաններուն մէջ ալ հակառակութեանց առարկայ եղած եւ կայսերական հրովարտակներով հեղինակութենէ զուրկ հրչակուած էր: Աւստի բնաւ պէտք չէ զարմանալ որ Քաղկեդոնի ժողովր, իւր գումարումէն քառասուն տարի ետքը, տակաւին Հայոց եկեղեցւոյն և հայրապետներուն կողմէն նկատի առնուած եղելութիւն մը չէր:

Այդ մասին առաջին շուկները Պարսկաստանի կողմէն հասան Բարդէն Աթմսեցի կաթողիկոսին օրով (490—515). նեստորականներ արդէն հաստատուած և հետզհետէ զօրացած էին Պարսկական Միջագետքի մէջ: Եփեսոսի ժողովին ուղղափառ դաւանութեան հաստատրիմ մնացած Ասորիներ, սկսած էին նեղուիլ անոնց ազգեցրութեան զօրանալէն, եւ դաւանական շիթութեանց ալ մասնուած էին. ուստի որոշեցին Հայոց եկեղեցւոյն դիմել, ուրիշ վարդապետութեան մասին լոյս մը և իրենց ընթացքին կանոն մը ստանալու համար: Հայերն ալ, Ս. Սահակէ աւանդուած հակամեատարական սկզբունքներու վրայ խղճամիտ կերպով հաստատուած, չէին կրնար հարկաւ այդ մասին որեւէ զիջողութիւն ընդունիլ կամ յարմարելու համաձայնիլ: Նեստորականներ իրենց սրաչափանութեան համար յառաջ կը բերէին Կոստանդնուպոլսոյ եկեղեցւոյն կողմէն դումարուած Քաղկեդոնի ժողովր, որ հակառակ ելած էր Ալեքսանդրիոյ եկեղեց-

ւոյն, որուն վարդապետութեանց հետ Հայերը անխղելի կերպով կապուած էին, անդտօին սկիզբէն, այսինքն նիկիոյ և եփեսոսի ժողովներէն: Աւերջնէնք նաև որ Քաղկեդոնի ժողովը գումարուած և յաջողած էր Մարկիանոսի ձեռքով, այն որ մերժած էր Հայոց պատգամաւորութիւնը, երբոր ասոնք կայսերութեան օղնութիւնը կը խնդրէին Պարսիկներուն դէմ քրիստոնէական հաւատոյ պաշտպանութեան համար: Բայ աստի Քաղկեդոնի ժողովը անկարելորդատուած էր Բասիլիսկոս և Զենոն և Անաստաս կայսրներու հրովարտակներով, որոնք պաշտօնապէս մերժած էին քաղկեդոնական դատանութիւնը: Այդ պարագաներու հանդէպ դժուար չէր նախատեսել, թէ ինչ պէտք էր ըլլար Հայ եկեղեցւոյ բռնելիք դիրքը իրեն եղած դիմումին հանդէպ: Գոնի ժողովը, որ գումարուեցաւ Բարդէն կաթողիկոսի նախագահութեամբ (506) Հայ և Վրացի և Ալուան եպիսկոպոսներու ներկայութեամբ, պաշտօնապէս և բացարձակապէս հռչակեց եփեսոսի ժողովին հաւատոյ դատանութիւնը, և մերժեց անոր հակառակ եղած որևէ վարդապետութիւն, թէ բուն նեստորականը և թէ նեստորականութեան կասկածաւորը, Քաղկեդոնի ժողովին որոշումներն ալ մէջը ըլլալով: Բայց Գրենայ ժողովը չիւրացոյց Ատիքէսի վարդապետութիւնը, որուն անունը յայտնապէս և պաշտօնապէս դատապարտեց Արիոսի և Մակեդոնի և նեստորի անուններուն կարգին: Այս եղած է Հայոց եկեղեցւոյ անդրանիկ պաշտօնական յայտարարութիւնը Քաղկեդոնի ժողովին նկատմամբ:

Յոյներ ու Լատիններ, յետագայ դարուն մէջ, իրենց հակառակութենէն ետ կենալով, Քաղկեդոնի ժողովը իբր չորրորդ տիեզերական ժողով բնդանեցան: Բայց Հայոց եկեղեցին երբեք իւր որոշումէն ետ դառնալու զիջողութեան չհամակերպեցաւ, մանաւանդ որ միւսներուն յետ կասիլն ալ բնաւ աստուածաբանական տեսութիւններէ յառաջ եկած չէր: Հայ եկեղեցին հաստատուն և անասան մնաց և կը մնայ իւր առաջին որոշման վրայ, և չէ դադա-

րած այդ մասին իւր պահպանողական գիրքին վրայ ամուր կենալ: Նա իրեն հաստատուն կանոն բրած է աստուածային յայտնութեան աւանդին վրայ եղած որևէ յաւելում մերժել, ինչպէս նաև չընդունիլ որևէ նորութիւն որ կրնայ դոյզն չափով ալ նախնական դատնութիւնն այլայլել: Նա չէր կրնար շտեմել որ քաղկեդոնական խնդիրներուն մեծ շարժառիթը Յունահռոմէական աշխարհին հայրապետութեանց նախանձընդէմ մրցումն ու հակառակութիւնն էր. բան մը որ իրեն համար կարեւորութիւն չունէր, և չէր ալ կրնար զինքն շահագրգռել, քանի որ ինքը այդ շրջանակէն դուրս էր: Նա միտք ալ չունէր կոստանդնուպոլսոյ պատրիարքութիւնը պաշտպանել, որ Քաղկեդոնի մէջ իւր նախապատուութիւնն ու նախաթուութիւնը յաջողցնելու աշխատած էր, իրեն նեցուկ ու հովանաւոր ունենալով քաղաքական իշխանութեան աշխարհային բազուկը:

Դուինի ժողովին մէջ հաստատուած հաւատոյ դաւանութիւնը (506), Բարգէնի կաթողիկոսութեան ժամանակին ամէնէն նշանաւոր եղելութիւնն է: Նոյն սկզբունքն ու դաւանութիւնը պաշտպանեցին իրեն յաջորդներն ալ, Սամուէլ Արժկեցի (516—526), Մուչէ Այլարեբեցի (526—534), Սահակ Բ. Ուղկեցի (534—539), Քրիստափոր Տիրառիջցի (539—545), և Ղեւոնդ Եռաստեցի (545—548): Այս կաթողիկոսներուն քառասնամեայ միջոցին մէջ յիշատակուելու արժանի բան մը չենք գտներ: Քաղկեդոնի ժողովին նկատմամբ անգամ մը տրուած որոշումը, կրկին հաստատուեցաւ Ներսէս Բ. Բագրեւանդացի կաթողիկոսին օրով (548—557), Դուինի մէջ երկրորդ անգամ գումարուած ժողովով (554). ուր անգամ մին ալ բացարձակ կերպով հաստատուեցաւ ու հռչակուեցաւ եփեսոսական դաւանութեան ճշմարտութիւնը, նեստորականներու մոլորութեանց և Քաղկեդոնականներու յաւակնութեանց դէմ:

## Ժ.

## ՔՈՂԿԵՒՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Հայոց եկեղեցւոյ պատմութիւնը այդ միջոցին ուրիշ բան չներկայեր, բայց եթէ կրօնական խնդիրներու շարք մը, որոնք թէպէտ դարերով տեւեցին և տարբեր տարբեր ուղղութիւններ ունեցան, բայց երբեք չայլալեցին եկեղեցւոյ հիմնական գիրքն ու հաստատուն կերպարանը: Միտք չունինք այդ խնդիրներուն մանրամասնութեանց մասնէլ, որոնք չեն յարմարիր մեր հետեւած համառօտութեան, և կրնան ընթերցողներն ալ ձանձրացնել: Բաւական ըլլայ ըսել, թէ այդ խնդիրներուն ու յուզմունքներուն սկզբնական պատճառը Հայաստանի վրայ տիրող պետութեան, կամ՝ Հայաստանի դրացի պետութեանց քաղաքական ազդեցութիւնն էր: Հայաստան իւր անկախութիւնը կորսնցնելէ ետքը, հետզհետէ ենթարկուեցաւ Պարսկական, Յունական և Արարական տիրապետութեանց, որոնք երկրին կրօնական վիճակէն կը քաղէին իրենց քաղաքական ուղղութեան ներշնչումները: Հայերուն ալ անհնարին էր այդ գիւտնագիտական ճարտարութեանց ազդեցութենէն ազատ մնալ և անկախաբար գործել: Մէկ կողմէն չէին ուզեր հեռանալ այն դաւանական սկզբունքէն, զոր անգամ մը պաշտօնապէս 506 տարւոյ ժողովով հաստատած էին. միւս կողմէն կ'աշխատէին պետութիւններու համակրանքը գրաւել, որպէս զի աւելի ազդեցիկ եղողին կողմէ յուսացուած քաղաքական օգուտներէ չը զրկուին: Այս պատճառով ալ չէին ուզեր ոչ մի կողմը վերաորել, և պատրաստ էին մինչեւ իսկ զիջողութիւններ ալ ընել, մինչեւ ուր որ կրնային, առանց իրենց հիմնական սկզբունքներուն հետ հակասութեան մէջ գտնուելու:

Հայաստան յաճախ քանի մը տէրութեանց մէջ բաժնուած էր, բայց իւր բախար կապուած էր այն տէրութեան հետ որ մեծագոյն մասին վրայ կը տիրէր: Պարսկական տիրապետութիւնը, զոր կը վարէին արքայից-արքաներուն կողմէն անուանուած մարզպաններ, երկու ամբողջ դար շարունակեց (428—633): Անոր յաջորդեց Յունական տիրապետութիւնը, զոր կը վարէին կայսրներէն անուանուած կլուպաղասներ, բայց ասոնց իշխանութիւնը երկար չեղաւ, հազիւ վաթսուն տարուոյ միջոց մը (633—693): Ետեւէն եկաւ Սարակինոսներու տիրապետութիւնը, որոնք Յունականէն ետքը իրենց իշխանութիւնը հաստատեցին, և ամիրապետներուն կամ խալիֆաներուն կողմէն անուանուած ստիկաններ, մէկուկէս դարէ աւելի (693—862) Հայաստանը կառավարեցին: Սակայն հանդարտ ու խաղաղական տիրապետութիւններ չեղան ասոնք: Զանազան տէրութիւններուն իրարու դէմ մղած պատերազմները, ընդհանրապէս Հայաստանի մէջ կը կատարուէին, և կռիւներուն ասպարէզ դարձած երկիրը կը կրէր ամէն ազետալի հետեւանքները: Իսկ Հայերը, իրարու հակառակ տէրութեանց մէջտեղը մնացած, անկայուն ու տարտամ քաղաքականութեան կը հետեւէին, ոչ կրնային իրենց քաղաքական շահերը վտանգել, ոչ կ'ուզէին իրենց հաւատոյ սկզբունքները փոփոխել: Յունական կայսերութեան ազդեցութիւնը միշտ ծանրակշիւթիւն ունէր քրիստոնէութեան տեսակէտէն, եթէ քաղաքականապէս ալ Հայեր Յոյներու տիրապետութեան ներքելզանուէին: Յունական ազդեցութիւնը շարունակ Հայերը կը ստիպէր քաղկեդոնական դատանութիւնն ընդունիլ, և որպէս զի Հայեր զիջողութեան յորդորուին, քաղաքական խոտամուկները կ'առատացնէր: Իսկ Պարսիկներ և Արաբացիներ անոնց աչքին առաւել հրատարիչ երեւոյթներ կը ներկայէին, պայմանով որ Յունաց հետ յարաբերութենէն խրդուին ու հեռանան: Հայեր ոչ կրնային և ոչ ալ կ'ուզէին Յոյներուն հրապոյրներուն հետեւելով Քաղկեդոնի դաւա-



նութեան համակերպիլ, և ոչ ալ կ'ուզէին բացարձակ մերժումով անոնց թշնամութիւնը զրոգուել. ինչպէս որ չէին ալ ուղեր ինքզինքնին կատարելագէտ ոչ-քրիստոնեայ պետութեանց ձեռքը յանձնել: Այդ գժտարին կացութիւնը եւ այդ սարտամ անորոշութեան հոգին, կը բնորոշեն Հայ եկեղեցւոյ պատմութեան ընթացքը վեցերորդէն մինչեւ իննեւորդ դար. միջոյ մը զոր կ'ուզենք ընդհանուր զիծերով նկարագրել, ամէնէն նշանաւոր եղելութիւնները յիշատակելով:

Պարսկաստանի քրիստոնէից յարաբերութիւնները, որոնց առաջին նշանները տեսանք Բարդէնի ժամանակ, շարունակուեցան անկէ ետքն ալ յաճախ գիմումներով Հայոց կաթողիկոսութեան: Սա ալ ամէն կերպով ջանաց անոնք պաշտպանել նեստորականներու բռնարարութեանց դէմ, որոնք յաջողած էին Պարսիկ արքունիքին համակրութիւնը չափիլ, իրենց հակայունական ուղղութեամբ: Մասնաւորապէս Քրիստափոր Տիրաւոյցի կաթողիկոսը, ոչ միայն հակա-նեստորական քրիստոնեաները արքայից-արքային առջեւ պաշտպանեց, այլ և անոնց համար եպիսկոպոսներ ձեռնադրեց, և անոնց եկեղեցւոյն կառավարութեան և բարեկարգութեան համար պէտք եղած հոգածութիւնները կատարեց:

Ընտել ի Կոստանդնուպոլսոյ երկրորդ ժողովին պատմութիւնը, զոր Յոյներ ու Լատիններ իրր հինգերորդ տիեզերական կը ձանձնան: Քաղկեդոնի ժողովով յուզուած ինդիքները դեռ հանդարտած չէին, երբ Յուստինիանոս կայսերական գահը բարձրացաւ (527): Երկու կողմերուն մէջ խտրազտութիւն զոյացնելու համար թափած ճիգերուն ազարդին մնալը տեսնելով, Յուստինիանոս որոշեց դատապարտել տալ Երևի-Գլուխի կոչուած գրութիւնները, որք են Թէոդորոս Մոսպուեստացիի, Թէոդորեոս Կիրացիի և Իրասեղեսացիի գրուածները, որոնք նեստորի վարդապետութեան նպաստաւոր և եփեսոսական վճիռներուն հակառակ էին, և քաղկեդոնական դատմութեան համաձայն կը հնչէին: Յուստինիանոս կը մտածէր այս կերպով եփեսոսի դատմութեան

Հաստատրիմ ուղղափառները շահիլ, և միանգամայն Քաղկեդոնականներուն բուն ձգտումները չափաորելչ նոր ժողովը գումարելու հրովարտակը արդէն հրատարակուած էր (546), բայց Հռոմի պապերը սկսան դժուարութիւններ հանել, վախնալով որ չբլայ թէ անուղղակի կերպով Տումար Լեւոնի ալ դատապարտուած կարծուի, և իրենց պիտուին աղդեցութիւնը նուազիւ Ազապետոս պապը Կոստանդնուպոլիս բերուեցաւ, բայց լուծման շյանդած հոն մեռաւ: Իրեն տեղ ընտրուեցաւ Վիգիլիոս, կայսեր կամբով, և այն պայմանով որ երեք-Գլուխներուն դատապարտութեան հաւանի, բայց Հռոմայեցիք զինքը չընդունեցան և Սիլվերիոսը պապ հռչակեցին: Սակայն այս վերջինին վերահաս մահը գիտնալութիւնը ընկճեց, և Վիգիլիոս ընդունուեցաւ: Ժողովն ալ վերջիվերջոյ բացուեցաւ (553) և երեք-Գլուխներ դատապարտուեցան, Վիգիլիոս ալ համակերպեցաւ, և այս կերպով քաղկեդոնական ինդիքը Յունահռոմէական աշխարհին մէջ վերջացաւ, բայց բողոքովն անուղղակի կերպով մը, և շեշտելով Քրիստոսի վրայ միութեան կամ միաւորութեան դաւանութիւնը, ինչ որ կրկնումն էր Եփեսոսի ժողովին վճիռներուն:

Հայերը, որ Եփեսոսի ժողովին դաւանութեան անգորդուելի կերպով հաստատրիմ մնացած էին, հակառակ Քաղկեդոնականներուն կողմէ դորձածուած խոտախոզական ձեւերու, բնաւ նոր վճիռի պէտք չունէին նորէն եփեսոսական ուղղափառութեան դաւանալու: Համար Այս պատճառով անոնք պէտք չունեցան կարեւորութիւն ընծայել նոր ժողովին վճիռներուն, որչափ ալ անոնք՝ ոչ միայն իրենց սկզբունքներուն համաձայն էին, այլ և հաստատուած էին իրենց Ս. Սահակ հայրապետին հեղինակութեամբը, որուն սու Պրոկղ ուղղած թուղթը հանդիսապէս կարգացուեցաւ ժողովին մէջ, Ս. Կիրեղ Ազեքսանդրացիի երկոտասան զբլուխներէն անմիջապէս ետքը՝ Ներսէս Բ. Բագրեւանդացի կաթողիկոսը բաական սեպեց յաջորդ տարին Գուինի մէջ:

ժողով մը գումարելով (554), անդամ՝ մըն ալ կրկնել ու հռչակել եփեսոսական դատանութիւնը, Քաղկեդոնականներուն յառակնութեանց դէմ:

Յոյներուն յորդորներն ու հրապոյրները, որոնք Հայերու վրայ ազդեցութիւն չունեցան, յաջող ընդունելութիւն գտան Վրացիներուն մօտ: Կիւրիոն Վրաց կաթողիկոս, թէ և Հայոց հայրապետանոցին մէջ սնած ու յառաջացած, Հայոց աթոռէն բաժնուելու դադափարը յղացաւ. Յունաց պատրիարքութեան հետ միանալով կայսերական շնորհներու արժանանալու համար: Քաղկեդոնի ժողովը և անոր դատանութիւնը ընդունելը, անհրաժեշտ պայման էր այդ նպատակը իրագործելու, և Կիւրիոն այն ալ ընդունեցաւ: Մովսէս Բ. Եղիվարդեցիի մահօրէնէ ետքը (574—604) աթոռը կառավարող Վրթանէս տեղակալի ջանքերը, և նոր կաթողիկոսին Արրահամ Ազրաթանեցիի (607—615) աշխատութիւնները, չկրցան Կիւրիոնը իւր մտադրութենէ դարձնել, և Վրաց եկեղեցին, Կիւրիոնի գլխաւորութեամբ, քաղկեդոնական դատանութեան աշակերտեցաւ և Յունական եկեղեցւոյն խառնուեցաւ: Գոմինի նոր ժողով մը (609) վճռեց Վրաց եկեղեցւոյն Հայոց Ուղղափառ եկեղեցիէն բաժնուած ըլլալը: Այս բաժանումը վերջէնվերջ ձախող հետեւանք պիտի ունենար Վրաց եկեղեցւոյն համար. սրովհետեւ երբոր իննևստաներորդ դարուն սկիզբը Ռուսական տիրապետութիւնը տարածուեցաւ Կովկասի վրայ, Վրաց ազգային եկեղեցին այլ ևս առանձին գոյութեան նշանակութիւնը կորսնցուց, և միեւնոյն դատանութեան և սկզբունքներու պատճառով Վրաց եկեղեցին ընկճեցաւ և ձուլուեցաւ Ռուսաց եկեղեցւոյն հետ: Այսօր ամենայն ինչ սուսացած է Վրաստանի մէջ, նոյնիպէս Ռուսական եկեղեցականութիւնը, արարողութիւններն ու լեզուն, նայն իսկ Վրաց երասարքն և եպիսկոպոսներն ալ Ռուս կղերին մէջէն կ'ընտրուին:

Պէտք չէ լռութեամբ անցընենք, Հայերը իրենց կողմը դրաւելու համար Յոյներու կողմէ կատարուած վերջին

փորձն ալ, որովհետեւ Հայաստանի մէկ մասը Բիւզանդական կայսերութեան ներքեւ կը գտնուէր, կայսրն ու պատրիարք փութացին իրենց հլու և կուսակից կաթողիկոս մը հաստատել այն տեղ (590), Մովսէս Եղիսարդեցիի կենդանութեան ատեն. որ եղաւ Յովհաննէս Բագարանցինս Բայց այս նոր փորձն ալ ապարդիւն մնաց, որովհետեւ նոր հաստատուած հակաթոռ կաթողիկոսութիւնը նոյն իսկ Յովհաննէսով վերջացաւ, երբոր սա զերի ինկաւ Պարսից ձեռքը (611), և գերութեան մէջ մեռաւ: Յոյները այլեւս անոր յաջորդ մը չգրին, որովհետեւ չքաջալերուեցան իրենց նպատակին մէջ. քանի որ նոյն իսկ Յունական տիրապետութեան ներքեւ եզոյզ Հայերն ալ չուզեցին հակաթոռ կաթողիկոսը ճանչնալ, և ոչ ալ ընդունիլ քաղկեդոնական գաւանթութիւնը, որուն նա ներկայացուցիչը պիտի ըլլար:

## ԺԱ.

### ԽՆԴԻՐՆԵՐՈՒՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Պարսից թագաւորութիւնը Յունական կայսերութեան վրայ յարձակած (614), Երուսաղէմը գրաւած և Ս. Խաչափայտը զերի տարած էր, անկէջ անցնելով մինչև Կոստանդնուպոլիս հասած, և մայրաքաղաքին պարիսպներուն ներքեւ բանակած էր: Հաղիւ այդ պարագային Հերակլ կայսրը իւր թմրութեանէն շարժուեցաւ, պատերազմի ելաւ, և յաջողութիւն ունեցաւ (623): Պարսիկներ յալթուեցան, և պարսաւորուեցան եւս զարձնել Խաչափայտը, որ նորէն Երուսաղէմ յանձնուեցաւ: Հայագունդ զինուորները, Մովսէս Գեորգիի հրամանատարութեամբ, մեծապէս օգնած էին պատերազմին յաջողութեան: Ասկէ ետքն էր որ Հերակլ խոր-

հեցաւ Յոյներու և Հայերու միջև գաւանական մտութիւն ալ հաստատել: Այդ նպատակով փորձեց Հայերը ստիպել քաղկեդոնական վարդապետութիւնն ընդունելու, զոր Յունական եկեղեցին վերջիվերջոյ ընդունած էր Երեք-Փլուխներու գատապարտութենէն ետքը: Այդ խորհուրդը իրականացնելու գիտամտը երկրորդ անգամ Հայաստան եկաւ, և բանակցութիւններու մասւս Կաթողիկոսական ակնախն վրայ կը դնուէր Եզր Փառամակերտացի, որ ակնու բարձրացած էր Արրահամ Աղբաթանեցիէ, և Կամրասա Աղբեցիէ (615—628), և Քրիստափոր Ապահունիէ (628—630) ետքը:

Եզրի և իւր եպիսկոպոսներուն վարանտ մները, և Յոյն ու Հայ եպիսկոպոսներուն բանակցութիւնները վերջացան գաւանական բանաձեւով մը, որ կայսեր կողմէ պատրաստուեցաւ ու հրամայուեցաւ: Այդ բանաձեւը ընդհանրապէս համաձայն էր Հայ եկեղեցւոյ գաւանական սկզբունքներուն, միայն թէ Քաղկեդոնի ժողովին նկատմամբ բացարձակ լռութիւն պահուած էր: Համաձայնութիւնը հաստատուեցաւ Կարինի մէջ գումարուած ժողովով (632), որուն վերջը հանգիստապէս պատարագ մատուցուեցաւ և երկու կողմեր, Յոյներ և Հայեր, միասին հաղորդուեցան: Կաթողիկոսին կողմէ յայտնուած զիջողութիւնը և կայսեր կամբին առջև խնամահիլը, մեծապէս զայրացուցին Հայ եպիսկոպոսները և բոլոր Հայ ժողովուրդը: Սասանի գրգռութիւն մը բորբոքեցաւ Եզրի դէմ, բայց գրգռութեան չափն ինչ ալ ըլլայ, զինքն ակնուէ վար առնել չխորհեցան: Բայց զայրացման զգացումն ալ երբեք չմարեցաւ, և դարէ դար շարունակեց, իր անունը կաթողիկոսներու շարքին մէջ գլխիվայր գլխադիրով գրելու չափս Սակայն սրդար ըլլալու համար պէտք է դիտել տանք, թէ Եզր Հերակլէ աւելի քաղկեդոնիկ չէր կրնար ըլլալ. իսկ Հերակլ Միակամեայց վարդապետութեան հետեւողն էր. և այդ վարդապետութեան հեղինակն եզրը Կոստանդնուպոլսոյ Աերգիոս կամ Սարգիս պատրիարքին պաշտպանն էր: Միակամեայց վարդապետութիւնն ալ, քո-

զարկեալ կերպով կրկնումն էր Եփեսոսի ժողովին միարնակ վարդապետութեան, որ Հայերուն ընդունած և բուն հոգւով պաշտպանած դաւանութիւնն էր: Յոյներ չէին կրնար այլևս Քաղկեդոնի ժողովին դէմ ուղղակի հակառակութիւն ցուցնել, քանի որ 553 տարւոյ ժողովով զայն պաշտօնապէս ընդունած էին, անոր համար անուղղակի միջոցներու կը դիմէին, և քաղկեդոնիկ դաւանութեան նշանակութիւնը կը տկարացնէին, թէ՛ Երեք-Գլուխները գտաապարտելով, և թէ՛ Քրիստոսի վրայ կամքի միութիւնը պաշտպանելով, որ բնութեանց միաւորութեան հետ կը նոյնանար:

Առանձին յիշատակութեան արժանի է Ներսէս Գ. Իշխանցի կաթողիկոսը, որ Նինոյ մականունն ստացած է, իւր իշխանութեան միջոցին ցոյց տուած շինարար արդիւնքներուն համար: Այդ նախկին զինուորականը աթոռ բարձրացած էր Սարակինոսներուն արչաւանքին սկիզբները (641): Հայաստան տարակուսանքի մասնուած էր, չէր զիտեր թէ հին տիրապետողներուն կողմը բռնէր, թէ ոչ նոր եկողներուն կողմը դաւնար: Ներսէս անձամբ Յունական տիրապետութեան կուսակից էր, բայց Յոյներուն անգործունեայ և անկարող ըլլալէն զատ, Հայաստանի զինուորական գլխաւորները, Սմբատ Բագրատունի և Թէոդորոս Ռչտունի, Սարակինոսներուն առջև խոնարհելու պէտքը կը զգային: Կոստանդին Գ. կայսրը ուղեց Հայերուն Յոյներէն պաղելուն ու բաժնուելուն վրէժը լուծել, և զօրաւոր բանակի մը գլուխը անցած յարձակեցաւ, Հայերը ոչ միայն քաղաքականապէս այլ և կրօնապէս նուաճելու համար: Ներսէս Գ. կաթողիկոս յաջողեցաւ կայսրը ամնքել, բայց Յոյներուն հեռանալէն ետքը, նոր ժողով մը գումարեց Գլուխի մէջ (645), և նորէն համարձակօրէն հոչակեց առաջին երեք ժողովներէն զատ ուրիշ դաւանական վճիռ չընդունելու որոշումը, հերքելով և մերժելով ինչ որ անոնցմէ ետքը հաստատյ դաւանութեան վրայ եղած յաւելումներ են: Սակայն քաղաքական ուղղութեամբ Ներսէս կաթողիկոս և Թէոդորոս

նախարար գէմ՝ գէմի ելան. Թէոդորոսի կողմը աւելի զօրաւոր էր, և ներսէս սրարտասորուեցաւ գործերէ քաջուիլ մինչև. Թէոդորոսի մահը, որ վեց տարի ետքը տեղի ունեցաւ: Անկէ ետքը նորէն յունական ազդեցութիւնը զօրացաւ. ներսէսի ձեռքով, բայց միշտ սկար և վարանտա կերպով:

Այդ կացութիւնը ներսէսի մահուանէն (661) ետքն ալ շարունակեց իւր յաջորդներուն օրով, որոնք եղան Անաստաս Ակոսեցի (661—667), Իսրայէլ Սթմսեցի (667—677) և Սահակ Գ. Զորոփորեցի (667—703): Այս վերջինին կաթողիկոսութեան ատեն Արարական տիրապետութիւնը վերջնապէս հաստատուեցաւ. Հայաստանի վրայ, և այդ սլատճառով Յունահայ դասնական խնդիրներ իրենց կարեւորութիւնը կորսնցուցին: Արարացի ամիրապետներն ալ կ'ուզէին և իրենց համար օգտակար կը տեսնէին, որ Հայերը իրենց կրօնական խնդիրները Յոյներու հակառակ ուղղութեան մէջ դնեն, որով իրարմէ հեռացած կ'ըլլային: Սահակ Գ. կաթողիկոս ճանապայ ելած էր Արարացի զօրավարին երթալով անոր սիրտն առնել, և Հայաստանի վրայ սպառնացող արկածները խափանել, երբ ճանպորդութեան միջոցին վախճանեցաւ: Բայց իւր ձեռնարկը ապարդիւն չը մնաց, վասն զի իւր խնդրած կրօնական առանձնաշնորհումներուն մեծազոյն մասը խալիֆայութեան կողմէն շնորհուեցաւ:

Իւր յաջորդին Եղիա Արճիշեցի կաթողիկոսին (703—717) զլխաւոր գործն եղաւ այն նախանձայոյդ աշխատութիւնը, որով Աղուանից եկեղեցին Հայոց եկեղեցիին հետ միաբանութեան մէջ պահեց: ներսէս Բակուր, Աղուանից կաթողիկոսը, փորձուեցաւ Կիւրիոն Վրաց կաթողիկոսին ընթացքին հետեւիլ, և Յունական եկեղեցւոյ հետ միանալու կողմը հակիլ: Եղիա փութաց զայն ակոռէ զրկել, և անոր տեղ Սիմէոնը Աղուանից կաթողիկոս ձեռնադրել: Եղիանոյն նախանձայուղութիւնը ցուցուց նաև քանի մը Հայ վարդապետներու հանդէպ, որոնք Կոստանդնուպոլսոյ մէջ ուսած

ըլլալով, քաղկեդոնիկ միտումներ ստացած և նոյն միտքով քարոզել սկսած էին:

Յովհաննէս Գ. Օձնեցի կաթողիկոսը, որ Իմաստասէր մականուն ստացաւ, զարդացեալ, գիտնական և վարչազէտ անձ մըն էր, և իւր դարուն ամէնէն կարկառուն գէմքը եղած է: Զանազան մուրթութեանց գէմ՝ գրած ճառերը, և բարեկարգական և ծիսական բարենորոգումները, նորա ունեցած խորին հմտութիւնը կը հաստատեն: Ինքն է նաև եկեղեցական կանոններու և կանոնական թուղթերու հաւաքածոներուն հեղինակը, որոնք եկեղեցական իրաւադատութեան կանոնադիրք մը կը կազմեն: Գիտելու արժանի է որ այդ հաւաքածոները հռոմէական եկեղեցւոյ Սուտ-Իսիդորեան հաւաքածոներէն առաջ են: Ամիրապետներու հետ պահած յարաբերութիւնները և ձեռք բերած առանձնաշնորհութիւնները, վարչական կարողութիւնը բարձրացնող փաստեր են: Գաւանական շրջանակին մէջ ալ յաջողեցաւ վերջացնել Քրիստոսի մարմնոյն նկատմամբ յուզուած ապականելիութեան ինդիքը, որ ուղղափառ միաբնակներու մէջ կը յուզուէր: Այդ ինդիքը ծագում տուած էր Յուլիանեանց և Սեւերեանց վարդապետութիւններէն, և Հայկական և Ասորական եկեղեցիներու միջև բաժանմանց առիթ տուած էր: Մանազկերտի ժողովը, զոր Յովհաննէս իւր նախագահութեամբ հաւաքեց (726), Հայ և Ասորի եպիսկոպոսներու մասնակցութեամբ, տասը կանոններ հաստատեց, որով երկու աղանդներուն ալ ծայրայեղութիւնները հերքուեցան, և Քրիստոսի մարմնոյն նկատմամբ ողջամիտ և ուղղափառ վարդապետութիւնը հաստատուեցաւ, անոր ծագման և հանդամանաց բնականութիւնը հռչակելով, և միանգամայն պաշտպաններով այն գերազանցութիւնն ու յարգանքը, զոր պէտք է ընծայել Բանին Մարդացելոյ մարմինին: Յովհաննէս Օձնեցի փառօք կնքեց իւր կեանքը (728), և իւր յիշատակը Հայոց եկեղեցւոյն կորմանէ սուրբերու շարքը գասակարգուեցաւ:

Օձնեցիին յաջորդող շրջանին վրայ (728—755) շատ



բսկիք բան չկայ Տասուերիու կաթողիկոսներ իրարու յաջորդեցին. այն խաղաղութեան միջոցին, զոր ամիրապետներ Հայոց եկեղեցւոյն թողոցին: Միայն յիշատակութեան արժանի կը սեպենք, որ երբ ամիրապետները Հայաստանի հարկատու թագաւորութիւններ շնորհեցին և Հայեր սկսան ինքնուրոյն կառավարութիւն վայելել, Փոս Կոստանդնուպոլսոյ պատրիարքը նորէն ձեռնարկեց Հայ եկեղեցւոյ հետ յարաբերութիւններ հաստատել: Այդ մերձեցուցման շնորհիւ նա կ'ուզէր իրեն նոր նեցուկ մը աւելցնել, որ կրնար իրեն օգտակար ըլլալ Հռոմի եկեղեցւոյն հետ յազած իրնդիրներուն մէջ: Այս նպատակով յատուկ թուղթեր գրեց Զաքարիա Զաղեցի կաթողիկոսին (755—878), և Աշոտ Բագրատունի իշխանաց-իշխանին, հրատէր կարգաւով Քաղկեդոնի ժողովին վճիռներն ընդունիլ: Բայց կաթողիկոսին և իշխանապետին կողմէ գրուած վճռական պատասխանները, վիճարանութեան մօտնելու յոյն ալ կտրեցին, և Փոսի ձեռնարկած փորձը արդիւնք մը չունեցաւ:

## ԺԲ.

### ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՏԵՂԱՓՈԹՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հայոց կաթողիկոսութիւնը երբէք տեղադրական անուն չունեցաւ. աթոռին կամ հայրապետանոցին տեղէն առնուած, այլ միշտ կոչուեցաւ Կարողիկոսութիւն Ամնւայն Հայոց: Այդ կոչման զօրութեամբ նա իրաւունք ունեցաւ իւր հայրապետանոցը հաստատել. այն տեղ ուր կը գտնուէր ազգին քաղաքական կեդրոնը, որն ալ ըլլար ժամանակին իշխող կամ տիրապետող կառավարութեան գլխաւոր քաղաքը: Էջմիածինը, որ նախնական աթոռը եղաւ քրիստոնէութեան Հայաստանի պաշտօնական կրօնքն ըլլալէն սկսելով, նոյն ինքն չորրորդ դարուն սկիզբը Հայոց

Թագաւորութեան մայրաքաղաքն եղող Վաղարշապատն էր։ Արշակունեաց թագաւորութեան վերջանալէն և անոր յաջորդող խռովութեանց զազարելէն ետքը, երբ Գուինի մէջ Հայ մարզպան մը, Վահան Մամիկոնեան, խաղաղական կառավարութիւն հաստատեց (484), Յովհաննէս Ա. Մանդակունի կաթողիկոսը այն տեղ փոխադրեց պաշտօնապէս հայրապետական աթոռը։ Այն տեղ Մասիս ստորտը, Արարատի դաշտին մէջ, և Էջմիածինէն ոչ շատ հեռու նստեցան Հայոց կաթողիկոսները չորս դարէ աւելի, մինչեւ Յովհաննէս Ե. Գրասխանակերտացին (899—931)։

Ամիրապետներուն կողմանէ Հայերուն շնորհուած հարկատու թագաւորութեան ձեւը, ազգին համար նշանաւոր և օգտակար արդիւնք չունեցաւ։ Նախ որ այդ ձեւով կազմուած թագաւորութիւնները հեաղհեաէ շատցան, և Անի, Վան, Կարս, Գուգարք, իրենց համար զատ զատ թագաւորներ ունեցան, որք իրարու հեա թշնամական մրցումներ սկսան և իրարու դէմ՝ եղբայրասպան պատերազմներ ալ վարեցին։ Ասկէ զատ Հայազգի թագաւորութիւններուն հաստատութիւնը չվերջացուց Արարական ոստիկաններուն իշխանութիւնը, որոնք հարկերը կը դանձէին, և ներքին կառավարութեան վրայ կը հսկէին, և մինչև իսկ թագաւորներուն անձին վրայ մահու և կենաց իրաւունք կը գործածէին։ Մեր միաքը չէ մանրամասնօրէն պատմել այն տըխտը պատահարները, որ նոր հաստատուած կառավարական ոճին հետեւանքներն եղան։

Բազրատունի թագաւորները, Անի մայրաքաղաքը չենցնելէն և հոն հաստատուելէն առաջ, առժամաբար ճիրակատան, Բազարան ու աստեանդ կը մնային, և հայրապետանոցն ալ կը շարունակէր պաշտօնապէս Գուինի մէջ մնալ, մինչեւ որ վերջնապէս աւերեցաւ Եւսուֆ ոստիկանին ձեռքով։ Յովհաննէս Ե. կաթողիկոսը, որ իբր հաշտութեան բանապնաց ոստիկանին մտադարացած էր, պատանդ պահուեցաւ, և փրկանք վճարելով ազա-

տեղէն ետքը, երկար ատեն Հայաստանի մէջ թափառեցաւ, ու չկրցաւ Գուինի հայրապետանոցը նորոգել: Այս եղաւ պատճառը, որ իւր կեանքին վերջերը որոշեց երթալ հաստատուիլ Վանայ կողմերը՝ Վասպուրականի թագաւորներուն պաշտպանութեան ներքեւ: Պահ մը մնաց Զորովանք (Սալնապատ), Վան քաղաքի մտերիւր, և անկէ անցաւ Աղթամար կղզին, ուր Վասպուրականի թագաւորները հաստատեցին իրենց արքունիքը: Այս տեղ Յովհաննէս կաթողիկոս, Պատմաբան մականուանեալ, կնքեց իւր կեանքը (931), երեսունուերկու տարի շարունակ երկիրն աղէտներուն և արկածներուն փորձառու և ականատես վկայ ըլլալէ, և անոնց պատմութիւնը յետնոց աւանդելէ ետքը:

Իւր յաջորդներէն երեքը միայն, Ստեփանոս Բ. (931—932), Թէոդորոս Ա. (932—938) և Եղիսէ Ա. (938—943), մնացին Աղթամարի հայրապետանոցը՝ Վասպուրականի Արժրունի թագաւորներուն արքունիքին մօտ: Բայց Անանիա Մոկացի կաթողիկոսը (943—967) օգտակարագոյն սեպեց Աղթամարի կղզիին մեկուսացած զիրքէն ելլալ և Հայաստանի միջավայրը հաստատուիլ, Անի նստող Բագրատունի թագաւորներուն մօտ Առաջ առժամապէս հաստատուցաւ Արդինա քաղաքը, Անիի մօտ, մինչեւ որ Անիի մէջ հայրապետանոց մը և կաթողիկէ եկեղեցի մը կառուցուի (992): Անանիա կաթողիկոս նշանաւոր դիրք կը վայելէ կաթողիկոսներու շարքին մէջ, իրեն կատարած եկեղեցական բարեկարգութիւններով, քաղաքական ձեռնարկներով և խոհական վարչութեամբ, որով յաջողեցաւ թէ եկեղեցւոյն և թէ ազգին համեմատաբար խաղաղ ու կանոնաւոր կացութիւն մը պարարատել: Վահան Սիւնի որ անոր յաջորդեց (967—969), կասկածելի եղաւ, Յոյներու հետ ցուցած համաձայնութեամբը, քաղկեդոնիկ վարդապետութեան միտումովը և ինչ ինչ յաւնական ծէսեր մտնանելովը: Հայ եկեղեցւոյ կաթողիկոսական դասակարգը զգաժուեցաւ անոր ընթացքէն, Անիի մէջ ժողով դաժարուեցաւ, և Վահան

կաթողիկոս զահրնկեց հռչակուեցաւ, և Ստեփանոս Գ. Սեւանցին կաթողիկոս հաստատուեցաւ (969—971): Նորընտիր կաթողիկոսը Բագրատունի թագաւորներու պաշտպանութիւնը կը վայելէր, մինչ Վահան՝ Արծրունի թագաւորներու հովանաւորութեան ապաւինած էր, և այդ պատճառով ներքին գոտաթիւններ և թշնամութիւններ տեղի ունեցան Հայաստանի մէջ, մինչև որ երկուքն ալ, Ստեփանոս և Վահան, միեւնոյն տարին վախճանեցան: Ատոր վրայ Խաչիկ Ա. Արշարունի, կարող և գործանեայ անձնաւորութիւն մը, երկու կողմերու համաձայնութեամբ կաթողիկոսութեան բարձրացաւ (971—992): Նա ոչ միայն կրցաւ հաշտութիւն գոյացնել զանազան Հայազգի թագաւորութեանց և իշխանութեանց մէջ, այլև ուժղնակի պաշտպանեց ազգային եկեղեցւոյ դաւանութեան հետեւող Հայերը, որ Բիւզանդական դաւաններու մէջ կը գտնուէին, և որոնց վրայ բռնադատութիւններ կը գործադրուէին Յունական եկեղեցւոյ զիրկը մտնելու համար: Խաչիկ եղաւ որ առաջին անգամ Հայ եպիսկոպոսներ ձեռնադրեց Յունական վիճակներու մէջ գտնուող Հայադասան հաստացեալներու համար: Մինչև այն աստի, խրաքանչիւր վիճակի մէջ մէկէ աւելի եպիսկոպոս չէր գտնուեր, եկեղեցւոյ նախնական կանոններուն համաձայն: Իրօք ալ այդ միջոցէն սկսելով կը տեսնենք, որ միեւնոյն վիճակի մէջ տարբեր եպիսկոպոսներ կը գտնուին ծէսերու և դաւանութիւններու տարբերութեանց համեմատ: Խաչիկ առաջ Արզրնայի մէջ հայրապետանոց ու կաթողիկէ մը շինեց, և վերջէն ձեռնարկեց աւելի փառաւորները կառուցանել Անիի մէջ, բայց վայելելու չհասաւ: Իւր յաջորդն Սարգիս Ա. Սեւանցի (992—1019) անոնց նաւակառփքը կատարեց և այն տեղ հաստատուեցաւ, բայց երկար չեղաւ անոնց տնօրէութիւնը, որովհետև նոյն իսկ Սարգիսի անմիջական յաջորդն Պեարոս Ա. Գետտոզարձ (1019—1054) պարտաւորուեցաւ Անիէ հեռանալ, երբոր այն Յոյներէ գրաւուեցաւ (1046):

Վերջէն յիշուած երկու կաթողիկոսներուն օրով տեղի ունեցած գլխաւոր եղելութիւններէն մէկն ալ Խոնդրակեցոյ աղանդին գործն է, որոնք Պաղիկեաններու մէկ տեսակն էին, ամէն արտաքին պաշտամունքներու կը հակառակէին, եւ իրենց եռանդը մինչեւ յանդգնութիւն ու բռնութիւն կը մղէին: Յակոբ Հարքայ եպիսկոպոսը անոնց կողմն անցաւ, և սկսաւ իւր վիճակը կառավարելոյն աղանդին սկզբունքներուն համեմատ, առանց ուղղափառ եկեղեցւոյ հետ իւր հաղորդակցութիւնը խզելու: Յակոբ երկու անգամ՝ եպիսկոպոսական ատեանի առջեւ դատատանի ենթաբնակեցաւ, բայց գիտցաւ վարպետութեամբ զինքն արշարացնել: Բայց վերջապէս հնար եղաւ իւր ընթացքին եւ մոլորութեան մասին հաստատուն փաստեր ձեռք ձգել, եւ Սարգիս կաթողիկոսէ դատապարտուեցաւ և կարգէն ու աստիճանէն զրկուեցաւ: Կաջի գիւղի մէջ հաստատուած աղանդաւորներու խումբ մըն ալ Խաչիկոյին գլուխը կանգնած խաչը կործանած էր. այդ սրբապիղծ ձեռնարկին գործիչներն ալ վնասուեցան, գտնուեցան ու պատժուեցան խիստ կերպով: Մարմնոյ սրտախմբեր ալ գործածուեցան այդ աղանդաւորներուն դէմ, ինչ որ Հայոց եկեղեցւոյն համար սովորական բան մը չէր: Բայց այդ առթի մէջ, հաւանեցան Յունական եկեղեցւոյ օրինակին հետեւիլ, որոնք ամենախիստ կերպով կը վարուէին Պաղիկեանց հետ, քանի որ անոնց յանդուգն գործերը հասարակ եղեւնագործութեանց ոճիրներ էին, ինչպէս յայտնի եղելութիւններ կը հաստատեն:

Անիի առումը եւ Բագրատունեաց հարստութեան վերջանալը, ներքին կերպով կապուած են Պետրոս Գետադարձ կաթողիկոսին անունին հետ Պետրոս, որ Խաչիկի եղբորորդին էր, աթոռ բարձրացած էր Սարգիսի կենդանութեան, որ կամովին հրատարեցաւ (1019) և քանի մը տարի ետքը վախճանեցաւ (1022): Գաղիկ Անիի թագաւորը, իւր մահուընէ ետքը (1020) իրեն յաջորդ թողած էր իւր երէց որդին Յովհաննէս Սմբատը, թուլամորթ ու տկարամիտ անձ

մը, որ խորհեցաւ իւր իշխանութիւնը ապահովել Վասիլ Բ. կայսեր հետ դաշնակցելով, և իւր մահունէ կտքը Հայոց թագաւորութիւնը անոր թողլով: Պետրոս կաթողիկոս անձամբ Տրապիզոնի գնաց (1022), կայսեր հետ դաշնագրութիւնը յաջողցնելու և հաստատելու համար: Անկէ դառնալով Սերաստիա մնաց (1023), ուր կը թագաւորէր Սենեքերիմ Արծրունի, որ իւր ժառանգական Վասպուրականի երկիրը Յոյներուն հետ փոխանակած էր՝ Սերաստիոյ գաւառը անոնցմէ ստանալով: Պետրոս Սերաստիայէ Զորովանք գնաց Վանայ մօտ (1029), անկից Անի եկաւ (1036), բայց յանկարծ աթոռէն վար առնուեցաւ, և իրեն տեղ կաթողիկոս հռչակուեցաւ Իրոսկորոս Սանահնեցիին: Կղերն ու ժողովուրդը այդ փոփոխութեան չհամակերպեցան, և հազիւ տարի մը ետքը Իրոսկորոս վտարուեցաւ (1037), և Պետրոս իւր աթոռին վրայ հաստատուեցաւ, և տասը տարիի չափ ևս այդ վիճակը շարունակեց: Յովհաննէս Սմբատ մեռաւ (1042) առանց զաւակ թողլու, և յաջորդութիւնը ինկաւ իւր Աշոտ եղբոր որդւոյն Գագիկի, հազիւ հնգետասանամեայ պատանի մը, զոր ուզեցին իրաւունքէ զրկել: Պետրոս կաթողիկոս գիտէր Տրապիզոնի դաշնագրութիւնը, որուն վաւերական գիրը Միւրայէլ Գ. Պափղագոնացի կայսեր ձեռքը անցած էր: Վեստ Սարգիս, վախճանեայ թագաւորին գլխաւոր պաշտօնեայն, ինքն կը մտածէր թագաւոր հռչակուիլ: Միայն Վահրամ Պահլաւունի սպարապետն էր, որ ազգին իրաւունքին եւ անկախութեան պաշտպանութիւնը անկեզօրէն ստանձնած էր: Յոյներ և Թաթարներ և Գուգարաց թագաւորը իրարու դէմ ելած էին Անին դրաւելու համար: Վահրամ յաջողեցաւ յաջորդաբար անոնց յարձակումները յետ մղել, և բաւական տարիներ մըցիլ Պետրոս Գետադարձի և Վեստ Սարգիսի մեքենայութեանց դէմ: Բայց վերջէն վերջ իւր ոյժերը սպառեցան, և Անի քաղաք անձնատուր եղաւ: Յունաց կայսերական բանակներուն (1046) կաթողիկոսը առաջ ամէն տեսակ ակնածութեանց և պատիւներու

առարկայ եղաւ Յոյներուն կողմէն, որոնք վերջէն զինքն Կոստանդնուպոլիս տարին, և հոն պահեցին երեք տարի արդեւականի վիճակով: Պետրոս ետքէն Սերասաիա փոխադրուեցաւ, կաթողիկոսական պաշտօնին մէջ մնալով, և այդ տեղ կնքեց իւր կեանքը (1054): Արդէն Կոստանդնուպոլիս գտնուած ժամանակին իրեն օգնական և աթոռակից առած էր իւր եղբորորդին Խաչիկը, որ կաթողիկոսական գործերը կը վարէր, թէ՛ Պետրոսի բացակայութեան և թէ՛ անոր վերջին տարիները, և ետքէն ալ անոր յաջորդեց:

Խաչիկ Բ. Անեցին ալ Կոստանդնուպոլիս տարուեցաւ, ուր տեսակ տեսակ նեղութեանց ենթարկուեցաւ, որպէս զի թէ Պետրոսէ մնացած գանձերը յայտնէ ու յանձնէ, և թէ Յունական եկեղեցւոյ դաւանութեան հաւանի: Բայց նա իւր հաստատամտութենէն ետ չկեցաւ, ամէն առաջարկութեանց դիմադրեց, ու նեղութիւններուն ներքեւ չը տկարացաւ: Վերջապէս երեք տարի (1054—1057) Կոստանդնուպոլսոյ մէջ մնալէն ետքը, Թուրլուր ըսուած աւանը զրկուեցաւ, Փոքր Ասիոյ մէջ, Տարանտիա (Տարէնտէ) քաղաքին մօտերը, և այն տեղ մնաց մինչեւ իւր մահը (1060):

## ԺԳ.

### ԿԻՒԻԿԻՈՅ ՀԱՅՐԱՊԵՏԱՆՈՅԸ

Յոյներ, որ Հայաստանի ամբողջապէս տիրացած էին, Խաչիկի մահունէ ետքը նոր կաթողիկոսի ընտրութեան դէմ արդեւքներ դրին, կարծելով թէ այս կերպով կրնան Հայերը Յունական եկեղեցւոյ դաւանութիւնն ընդունելու եւ անոր հետ ձուլուելու ստիպել: Բայց իրենց ճիգերուն ապարդիւն մնալը, ամէն կողմէ կրկնուած գանդաաները, և Կար-

սի թագաւոր Գագիկի միջամտութիւնը, որ իւր ժառանգական երկիրը Յոյներուն յանձնելով Ամասիոյ գաւառակին հետ փոխանակած էր, վերջիվերջոյ Յոյները զիջողութեան յորդորեցին Կոստանդին Տուկիժ կայսրը հաւանեցաւ Գրիգոր Վահրամի կաթողիկոս անուանուելուն, որ Յունական կայսերութեան ներքեւ կուսակալութեան պաշտօն վարած Գրիգոր Մաղխատրոսի որդին էր, ինքն ալ արդէն կայսերական պաշտօններու մէջ գործածուած անձ մը (1065): Բայց միանգամայն պայման դրուեցաւ, որ նոր կաթողիկոսն Գրիգոր Բ. Վկայասէր, Հայաստանի մէջ չհաստատէ իւր աթոռը Այդ պատճառով նա իրեն կեդրոն ընտրեց Ծամնգաւ աւանը, երբեմն Կարսի, և յետոյ Ամասիոյ թագաւոր Գագիկի սահմաններուն մէջ:

Վկայասէրի կաթողիկոսութեան տեսողութիւնը քառասուն տարի եղաւ (1065—1105): Ընտիր ձիրքերու տէր և մեծ հմտութիւն ունեցող անձ մըն էր, բայց իւր կաթողիկոսութիւնը նշանաւոր արդիւնք մը չունեցաւ, անշուշտ առանց յօժարութեան պաշտօնը ստանձնած ըլլալուն համար. զգացում մը զոր մինչեւ ետքը անփոփոխ պահեց, Կրնանք ըսել որ ինքն կաթողիկոսանալու հաւանութիւնը տուած էր պարզապէս կաթողիկոսական աթոռին պարագայութեան վերջ մը տալու համար, քանի որ իւր անունը Յոյներուն վատահամբիւն պիտի ներշնչէր, և ոչ թէ իսկապէս ատրիճանին կապուած պաշտօնը վարելու համար:

Նա իւր բոլոր ժամանակը անցուց գրական աշխատութիւններով, և Պաղեստին ու Եդիպոսու ճանապարհերով: Կաթողիկոսական պաշտօնին բոլոր գործերը փոխանորդներու ձեռքը թողուց, զորս ինքն ընտրեց, և աթոռակցութեան ատրիճանին բարձրացուց օժում ալ տալով և լիազօր իշխանութիւն յանձնելով անոնց: Ասոնց առաջինը, Գէորգ Գ. Լոսեցի (1069—1072), իւր գործունէութեան մէջ յաջող չեղաւ և չգոհացուց, ուստի վար առնուեցաւ, և իրեն տեղ դրուեցաւ Բարսեղ Ա. Անեցի, Վկայասէրին քեռորդին (1085),



որ խոհական ու գործունեայ տեղակալ մը եղաւ, չև ամէն պատասխանատուութիւն վրան առնելով կատարելապէս կաթողիկոսութիւն վարեց, մինչև իւր մտրեզորոք մահը (1105), ուսկից ետքը պաշտօնապէս ալ անոր յաջորդեց: Հայրապետանոցը այդ միջոցին պաշտօնապէս ճամնդատի մէջ կը նկատուէր, Ամասիոյ մօտ, բայց թէ՛ կաթողիկոսը և թէ՛ իւր աթոռակիցները շատ քիչ այնտեղ մնացին: Բարսեղ երբեմն Անի կը դանուէր, և երբեմն ալ Կիլիկիա ու Կոմագենէ նահանգները, ուր սկսած էին գաղթել Հայերը, Թաթարներուն արշաւանքներէն փախչելով:

Շուրջ վաճառքը, որ Ամասիոյ կամ Սեաւ-Վեոյ բարձունքներուն վրայ ծաղկիկ սկսած վանականութեան կեդրոնն էր, հայրապետութեան աթոռանիստ եղաւ, որովհետեւ այն կողմերը սկսած էր կազմուիլ Կիլիկիոյ Հայ իշխանապետութիւնը: Ռուբէն, Անիի Բագրատունի թագաւորներուն ազդակցութենէն, հիմ դրած էր այդ իշխանութեան, որ աւելի կերպարորուեցաւ իւր որդւոյն Կոստանդինի օրով (1095—1110): Ասոր ալ յաջորդեց Թորոս, որուն Բարսեղ կաթողիկոս զօրաւոր թեւեթիկունք եղաւ, նոր իշխանապետութեան քաղաքական ձեւ տալու և սահմանները հետզհետէ ընդարձակելու համար: Բարսեղ պատահական արկածով մեռաւ, տանիքի մը փլչելուն հետեւանօք (1113): Անոր յաջորդեց Գրիգոր Գ. Պահլաւունի, հազիւ քսան տարեկան երիտասարդ մը, որուն կաթողիկոսացման համար յատուկ յանձնարարութիւններ բրած էր Գրիգոր Բ. Վկայասէր իւր վերջին օրերուն մէջ, տեսնելով անոր վրայ ընտիր ձիւքերու և կանխահաս կարողութեան յայտնի նշաններ:

Գրիգոր Վկայասէրին կաթողիկոսական պաշտօնավարութեան մէջ թուրութիւնը, առիթ բնծայած էր հակաթոններու երեսնալուն, ինչպէս եղան Սարգիս Հոնեցի, Թէոդորոս Ալախօսիկ և Պօղոս Վարազցի, որոնք սակայն պարտաւորուեցան տեղի տալ Բարսեղի գործունէութեան առջև: Գրիգոր Պահլաւունի երիտասարդութիւնը պատճա-

ուանք եղաւ Աղթամարի արքեպիսկոպոս Գաիթ Թոռնիկեանի ինքզինք կաթողիկոս հռչակելու: Անանիա Մոկացի կաթողիկոսի ատեն հայրապետանոցին Աղթամարէն Արգինա փոխադրուելուն օրէն, Աղթամարի արքեպիսկոպոսներ հայրապետական ձեւեր պահելու և ինքզինքնուն բացառիկ պատիւներ եւ իրաւունքներ վերագրելու մեծամտութիւնն ունեցած էին, որուն սակայն կարեւորութիւն չէր տրուած: Գաիթ Թոռնիկեան, ժրջան և գործունեայ անձնաւորութիւն մը, այդ մեծամտութեան աւելի ընդարձակութիւն տուաւ և յաւակնոտ ձեռնարկներու ալ յանդըպնեցաւ, և Գրիգոր Պահլաւունի երիտասարդութիւնը իբր անվաւերութեան փաստ գործածեց, և Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը ուղեց իրեն վերագրել (1114): Անսովոր բազմութեամբ, երկուհազար հինգհարիւր եկեղեցականներուն երկայութեամբ, ժողով մը դումարուեցաւ, Կղիկիոյ իշխանապետութեան հեղինակութիւնն ալ զայն զօրացուց, և Գաիթ Թոռնիկեան դատապարտուեցաւ: Բայց հակառակ այդ ժողովին յճիւսին, Աղթամարայ հակաթաւ կաթողիկոսները իրենց յաջորդութիւնը պահեցին, մինչեւ որ Մայր աթոռին հետ հաղորդակցութիւննին ալ կանոնաորեցին, և շարունակեցին մինչեւ մեր օրերը:

Կաթողիկոսական աթոռը, միշտ երեբուն ու թափառական, տակաւին Սեաւ-Լեւո կը գտնուէր, երբ Գրիգոր Գ. Պահլաւունի աթոռ բարձրացաւ: Տասուերկու տարի ետքը հայրապետանոցը փոխադրեց Մովք (Տիւլուք) գլեակը, որ իւր գերդաստանին իշխանական սեփականութիւնն էր, ուր և մնաց քսանուերկու տարի (1125—1147): Բայց Գրիգոր՝ կաթողիկոսութեան համար աւելի վայելուչ աթոռանիստ տեղ մը ուղելով պատրաստել, Գերմանիկոյ (Մարաշի) կոմս Ժոպէնի որդիէն զնեց Հռոմկլայ (Ռոմքալէ) գլեակը, և հոն հաստատուեցաւ: Կաթողիկոսներ մէկուկէս դար այնտեղ բնակեցան (1147—1293), մինչեւ որ գլեակը Եգիպտացիներուն կողմէ գրաւուեցաւ: Անկէ ետքը անցան

Սիւս, Կիլիկիոյ Հայ թագաւորութեան մայրաքաղաքը, և մէկ ուկէս դար ալ այնտեղ բնակեցան (1293—1441), և անկէ ետքն է, որ կաթողիկոսական աթոռանիստը կամ հայրապետանոցը նորէն Լջմիածին դարձաւ իւր նախնական տեղը։ Հայոց կաթողիկոսարանին տեղափոխութիւններուն տեւողութիւնը, Գուինէ հեռանալէն մինչեւ Լջմիածին դառնալը, ընդ ամէնը 540 տարի տեւեց (901—1441)։

## ԺԳ.

### ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՓՈՐՉԵՐ

Յիրաւի պէտք է զարմանալ, երբոր ոք զիտէ Հայոց եկեղեցւոյն ընթացքը. մէկ կողմէն միաբանութեան համար բրած ձեռնարկները, և միւս կողմէն իւր դաւանութեան վրայ հաստատամտութիւնը։ Իրօք ալ առեղծուածական պէտք էր սեպել այդ ընթացքը, եթէ նկատի չառնուէր անոր գերազանցապէս թոյլատու և ներողամիտ ու զզու թիւնը։ Հայ եկեղեցին միշտ բարեմտութեամբ ընդունած է միաբանութեան առաջարկները, քանի անգամ որ իրեն ներկայացուած են. բայց միշտ հեռացած չէ իւր ինքնուրոյն և առանձնայատուկ կացութեան գիրքէն։ Իսկ այն եկեղեցիները, որոնց հետ Հայ եկեղեցին կրցած է յարաբերութեան մէջ ըլլալ, են Յունականը, Ասորականը և Լատինականը։

Յունական եկեղեցին, իրմէ աւելի զօրաւոր և աւելի ընդարձակ ըլլալով, աներկրայապէս գերազոյն զիրք մը կը գրաւէր, որ յառաջ կու գար հեղինական զարգացման հին աշխարհին մէջ վայելած բարձրագոյն ազդեցութենէն, եւ Արեւելեան կայսերութեան ունեցած քաղաքական զօրութենէն։ Այս պատճառով Յունական եկեղեցին ջանաց միշտ

Հայ եկեղեցւոյ վրայ տիրող դիրք մը ունենալ և զօրաւոր ազդեցութիւն գործածել, Աշխատեցաւ զայն իրեն հարատակեցնել, մինչև իսկ զայն իրեն մէջ ձուլել, եթէ դորժը իւր կամքէն կախուած ունենար և իւր կարողութեան ներքեւ ըլլար: Այն համառօտ տեղեկութիւնները զօրս սուինք Քաղկեդոնի ժողովէն ետքը տեղի ունեցած խնդիրներուն վրայ, բաւական են ընթերցողին պէտք եղած գաղափարը տալու այս մասին: Հայեր երբեք Յոյներուն առաջարկներուն առջև կանուխէն դուռները չդոյցեցին, բայց երբեք ալ վերջնականապէս հասանութիւն չտուին, և դրական կերպով առաջարկի մը համակերպեցան:

Ատորական եկեղեցին Հայ եկեղեցւոյ հանդէպ աւելի տկար կացութիւն մը ունենալուն, անոր հետ համաձայնութիւնը աւելի դիւրին եղաւ: Եթէ մէկ կողմէն Ատորիներ չէին կրնար յաւակնտ պահանջներ առաջարկել, միւս կողմէն ալ Հայեր երբեք իրենց պայմանները ծայրայեղութեան չհասուցին:

Լատինական եկեղեցւոյ հետ յարաբերութիւնները ոչ ատեն տեղի ունեցան, անոր հետադրութեան պատճառով, և միայն Խաչակիրներու ժամանակ սկսան:

Հայոց եկեղեցին միաբանութիւնը հասկցաւ միշտ, բաւին ճիշդ և սեղօ՛ նշանակութեամբ: Նա միաբանութիւն բռնելով, ուղեց եկեղեցիներու միջև ունենալ հոգեւորական հազորակցութիւն, փոխադարձ յարաբերութիւն, և իրարու դիրքին հանդէպ յարգանք: Խրաքանչիւրին համար իւր չըջանակին և սահմաններուն մէջ ազատութիւն, և ամէնուն վրայ տիրապետող քրիստոնէական սուրբ սէրը: Նա երբեք չուղեց հանդուրժել, որ միաբանութիւնը տիրապետութեան փոխուի. և մարդօրսութեան վերածուի Գծրափտարար Յունական և Լատինական եկեղեցիներ, իրենց քաղաքական և կենցաղական դիրքերուն առաւելութենէն զբոլորելով, այն համոզմամբ վարտեցան, թէ եկեղեցիներու միաբանութիւնը ուրիշ կերպով չկրնար իրականանալ, բայց եթէ ուրիշները

իրենց եկեղեցւոյն հնազանդեցնելով: Մեր միաքը յայտնելու մէջ աւելի ճիշդ բլլալ ուղեւորով, պէտք կը զգանք աւելցընել, որ Լատիններուն կողմէն դորժածուած ձեր աւելի տիրապետութիւնն է եղած, մինչ Յոյները աւելի չահելու կամ աշակերտելու ձեւին են հետեւած: Հայը թէ մէկին և թէ միւսին կողմանէ եղած առաջարկութեանց հանդէպ, երբեք բանակցութեանց մաննիէ չքաշուեցաւ, թէպէտև դրեթէ միշտ իւր ակնկալութեանց մէջ յուսախարութեան հանդիպեցաւ: Այսու հանդերձ առանց ձանձրանալու միշտ վերագարձաւ միաբանութեան և հաշտութեան առաջարկներու վրայ բանակցիլ, որչափ ալ անոնց յաջող ելք ունենալուն ակնկալութիւնն ու վտահոյթիւնը չունէր:

Մենք բացէրաց հերքում մը պիտի չգիտնադրենք անոնց, որ Հայերուն զիջողականութեան մէջ, օգուտի դիտումներ ալ կ'ուզեն տեսնել, և ոչ պարզապէս քրիստոնէական ոգւոյ արտայայտութիւն մը: Հայերուն քաղաքական և կենցաղական կացութեան վրայ ակնարկ մըն ալ կը բաւէ ցուցնել, թէ անոնք զօրաւոր և անկախ վիճակ մը չունեցան, եւ այս բաւական է անոնց վերադրուած օգուտի նպատակն արդարացնելու: Հայեր ներքին գաւառներու մէջ կղզիացած, և ամէն կողմերէն, արեւելքէն ու արեւմուտքէն, հիւսիսէն ու հարաւէն, եկող հրոսակներուն և արշաւանքներուն ասպարէզ դարձած, իրենք թուով ալ տկար, և նիւթական ու մտաւորական միջոցներէ զրկուած, պէտք զգացին միշտ իրենց պաշտպան մը ունենալ քրիստոնէայ իշխանութեանց մէջէն: Ահա այդ նպատակով է, որ միաբանութեան փափաքներ կը սնուցանէին և ձգտումներ կը մշակէին, բայց երբեք յանձնառու չեղան կրօնական տիրապետութեան ալ ենթարկուիլ, և ոչ ալ հրապարկներով որսացուիլ: Այս է բուն պատճառը, որուն համար միշտ առանձնացած մնացին, և իրենց դաւանական և կազմակերպական աւանդութեանց վրայ պնդեցին: Որչափ ալ միաբանութեան մէջ տեսան իրենց կենցաղական

և քաղաքական շահերուն համար վերկութեան ակնկալութիւններ, բայց եւ քաշուեցան երբոր խնդիրը իրենց քրիստոնէական և կրօնական սկզբունքները զոհելու կէտին մօտեցաւ: Պէտք չէ նաև միարանութեան համար եղած ճիշդերը իր վերջին ատեններու նորութիւն նկատել: Մենք տեսանք արդէն թէ այդ ձգտումներով ինչ յարաբերութիւններ եղան Յոյներու հետ ալ, թէպէտև գործնական արդիւնք մը չունեցան: Հայ եկեղեցին երբեք իւր ուղղութենէն չշեղեցաւ, և հաստատուն մնաց միեւնոյն ատեն միարանութիւնը սիրող և անկախութիւնը սիրող գիրքին մէջ, նոյն իսկ երբ հարկատու թագաւորութիւններն ալ հետզհետէ կը տկարանային ու կ'իյնային, և թաթարներու արշաւանքներուն երեսէն եկած հարուածները կ'ընդարձակուէին:

Այդ միջոցին էր որ Հայեր խմբովին գաղթականութիւններով սկսան ցրուիլ, ինչ որ գլխաւոր պատճառն է եղած Հայկական հայրենիքին հետզհետէ իյնալուն և քայքայելուն: Գաղթականութեանց մէկ մասը հիսթոակողման ճանպան բունեց, Կովկասեան լեռները և Նեփոնեան ծովը անցաւ, և գնաց բնակիլ Վրաստան ու Խրիմ, Ուլաճ ու Պուլտան, Լեհաստան ու Մաճառաստան: Մենք միտք չունինք այս խումբին գնացքին հետեւիլ, որ հետզհետէ իւր կերպարանը մերկանալու, և դանուած տեղերուն բնիկներուն հետ ձուլուելու դժբախտութիւնն ունեցաւ: Ուրիշ ճիւղ մը հարաւակողման ճանպան բունեց, և հետզհետէ բնակեցաւ Կովմագենէ և Ատրիք, Կիլիկիա և Իսաւրիա, Լիկայոնիա և Պամփիլիա, ուր առաջ իշխանապետութիւն մը հաստատեց, որ յետոյ թագաւորութիւն եղաւ, և երկրին կերպարանն ալ փոխուելով, նոր Հայաստան մը դարձաւ: Այսպէս յայտնի կ'ըլլայ թէ ինչո՞ւ Հայեր պարագաներու ստիպմամբ և Արեւելքէն եկող արշաւանքներուն առջև փախչելով, դէպ Արեւմուտք դարձացին աշտրնին, և քրիստոնեայ տէրութիւններէն պաշտպանութիւն ակնկալեցին: Ահա թէ ինչո՞ւ, ինչպէս պատմական յիշատակներ ալ կը վկայեն, անընդհատ

կերպով միարանական բանակցութիւններ շարունակեցին Ռուբինեան հարստութեան ժամանակ (1080—1375) թէ Յոյներուն և թէ Լատիններուն հետ հասարակապէս Անոնք որ այդ բանակցութեանց, զիսաւորապէս Լատիններու հետ եղածներուն մէջ, կը կարծեն Հռոմէական կաթողիկոսութեան փաստեր տեսնել, պէտք չէ նկատառութենէ վրիպեցնեն, որ միեւնոյն ատեն միարանական բանակցութիւններ կ'ըլլային Յոյներուն հետ ալ, այնպիսի ժամանակ մը՝ որ Յոյներու Լատիններ պառակտած և եկեղեցականապէս իրարմէ բաժնուած էին, Փոռ պատրիարքի ժամանակէն յուզուած ինգիրներուն հետեւանօք Հարկաւ Հայեր միեւնոյն ատեն երկու կողմերուն հետ ալ միարանութիւն հաստատել պիտի չկարենային, եթէ երկուքէն մէկուն հետ դաւանապէս միացած ըլլային, և իրենց անկախ ու ինքնուրոյն գիրքը պահած չըլլային:

Միարանական բանակցութեանց առաջին փորձերը սկսան Գրիգոր Վկայասէրին օրէն, որ իրեն ուղերորութեանց միջոցին, երբոր զիսաւոր նպատակ ունէր մտրտիրոսներու վկայարանութիւններ հաւաքել, փորձեց նաև Կոստանդնուպոլսոյ և Աղեքսանդրիոյ և Երուսաղէմի եկեղեցիներուն հետ մերձաւորութիւններ և համաձայնութիւններ մշակել: Գիտենք որ պատմադիրներէն մէկուն մէջ Հռոմ գացած ըլլալու ակնարկ մին ալ կայ, բայց ա՛յլ և ստուգուած է թէ Վկայասէր Հռոմ գացած չէ, այլ միայն Հռոմ ու Հոռոմ բառերու գրչազրական չիօթութիւնը թիրիմացութեան պատճառ տուած է: Միանգամայն յայտնի է որ Վկայասէրի օրով բնաւ մէկ կողմի հետ պաշտօնական բանակցութիւն չբացուեցաւ, հակառակ Վկայասէրին Յոյներու հետ ունեցած սերտ ու մտերմական յարաբերութեանց: Անոր ձեռք ձգած մեծ յաջողութիւնն եղաւ՝ վերջացնել այն բռնադատութիւններն ու ճնշումները զորս կայսրները կը գործադրէին Պետրոս Ա. և Խաչիկ Բ. կաթողիկոսներու ատեն:

Իււոն Ա. իշխանապետին օրով (1123—1137), Յոյ-

ներ ու Հայեր իրարու հետ պատերազմի ելան, որովհետեւ Լեւոն Յոյներուն ձեռքէն քանի մը քաղաքներ գրաւեր էր Այդ թշնամութիւնները յանդեցան Հայ իշխանին գերութեան եւ իւր երկրին գրաւման (1137), որ տեւեց մինչեւ որ Թորոս Բ., զերի ինկած Լեւոնի որդին, կրցաւ ձեռք ձգել հօրենական իշխանութեան ժառանգութիւնը (1144):

Այդ թշնամութիւնն ու գերութիւնը առիթ տուաւ որ Կիլիկիոյ իշխանապետութեան Հայերը յարարերութեան մանեն Խաչակիրներուն ձեռքով Արեւելքի մէջ նոր հաստատուած Լատին իշխանութիւններուն հետ: Գրիգոր Ք. կաթողիկոս եւ իւր եղբայրն՝ Ներսէս եպիսկոպոս Շնորհալի, Անտիօքայ Լատին Ժողովին հրաւիրուեցան (1141), որ պիտի գումարուէր պապին նուիրակ Այրերիկոս կարգինալին նախադատութեամբ, Անտիօքի Լատին եպիսկոպոս Հռոգոլփոսի գործը քննելու համար: Պապին նուիրակը Ժողովէն ետքը Գրիգոր կաթողիկոսը հրաւիրեց միտին սուրբ տեղիք երթալ, ուր իրեն պատուոյ տեղ մըն ալ նշանակեց Երուսաղէմի Ժողովին մէջ (1143): Այդ առիթի նուիրակը իւր խօսակցութիւններն աւելի առջեւ տանելով կաթողիկոսը հրաւիրեց Հռոմի եկեղեցւոյն հետ միարանութիւն հաստատել, բայց կաթողիկոսը խոհական կերպով առաջարկութեան առջեւն առաւ, յայտարարելով թէ երկու եկեղեցիները իրարմէ բաժնող էական կէտ մը չտեսներ ինքն:

Երկու կողմերն ալ օգտակար չգտացին վիճարանութիւններն աւելի առաջ մղել, որովհետեւ թէ՛ Լատիններ եւ թէ՛ Հայեր փոխադարձաբար իրարմէ օգտուելու եւ օգնութիւն գտնելու յոյսեր ունէին: Ղուկիոս Բ. պապը (1143—1144) փութաց Գրիգոր կաթողիկոսին եկեղեցական ընծաներ յղել, որուն գիմնաց կաթողիկոսն ալ չուզեց առատաձեռնութեան մէջ ետեւ մնալ, եւ իւր ընծաները յղեց յատուկ պատգամաւորութեան մը ձեռքով, որ վիթէրպօ քաղաքին մէջ ներկայացաւ Եւզինէոս Ք. պապին (1145—1153): Այդ առիթի սկսան վարդապետական եւ ծիսական



տարբերութեանց նկատմամբ փիճարանութիւններ բացուիլ, և Եւզինէոս Գ. պապ պաշտօնապէս գիր մը ուղղեց Գրիգոր Գ. կաթողիկոսին, հրաւիրելով որ Հռոմայ եկեղեցւոյն համակերպի և անոր հետ միանայ, որուն պատասխան չտրուեցաւ: Այսպէս առանց հետեւանքի վերջացաւ Հայոց և Լատինաց մէջ սկսած յարաբերութեանց առաջին շրջանը:

Ներսէս եպիսկոպոս Շնորհալի, կաթողիկոսին եղբայրը, որ Թորոս և Օշին իշխանները հաշտեցնելու և երկուքին միջև տեղի ունեցած թշնամութիւնները վերջացնելու համար Լամբրոն գղեակը գացած էր, դարձած ատեն Մոսկոսեոսի հանդիպեցաւ, Յունական Ասիոյ կուսակալ Ալեքսիս իշխանին այցելութիւն մը տալու համար (1165): Այդ առթիւ նորէն խօսք բացուեցաւ Յոյն և Հայ եկեղեցիներու միաբանութեան վրայ, և խնդիրը հիմնապէս յուսարանութեանց առարկայ եղաւ, որովհետեւ թէ եպիսկոպոսն և թէ իշխանը կրօնական խնդիրներու մասին խորունկ հմտութիւն ունեցողներ էին: Ներսէս Հայոց եկեղեցւոյն վարդապետութեան և ծէսին նկատմամբ ջատագովական գրութիւն մըն ալ պատրաստեց այն տեղ և իշխանին յանձնեց, որ ուրախութեամբ առաւ, և խոստացաւ անձամբ տանիլ եւ ներկայացնել Մանուէլ Ա. Կոմնենոս կայսեր (1143—1180): Նոյն միջոցին Գրիգոր Գ. պաշտօնէ հրաժարեցաւ և իրեն տեղը անցուց իւր ներսէս եղբայրը (1166 ապրիլ), սակայն երկու ամիսէն վախճանեցաւ, և այն ատեն միայն ներսէս Գ. Շնորհալի, գործի գլուխ անցաւ և հրատարակեց իւր հուշակաւոր Ընդհանուրակարգը, որ մինչև այսօր եկեղեցական խնդիրներու մասին գերագոյն հեղինակութիւն կը վայելէ:

Ներսէսին Ալեքսիս իշխանի յանձնած գրութեան պատասխանը, թէպէտեւ Գրիգոր Գ. ի հասցէին ուղղուած, նոյն իսկ ներսէսի ձեռքը հասաւ (1167): Մանուէլ կայսր Գրիգորի հրաժարիլը և վախճանիլը իմացած չէր, ուստի կ'առաջարկէր որ միաբանական բանակցութեանց մտնելու համար ներսէս Կոստանդնուպոլիս զբնուիւ Բայց այդ բանը

այլեւս գործադրելի չէր, ուստի ներսէս իւր պատասխանին մէջ, իւր գալուն անհնարութիւնը յայտնելով, կ'առաջարկէր որ կայսրը Թաթարաց դէմ պատերազմին պատճառաւ Ասիա անցած ատեն, հաճի կիրիկիս հանդիպել, նոյն միջոցին Հռոմէն ալ նուիրակներ եկած էին Կոստանդնուպոլիս, Յոյներու և Լատիններու միաբանութեան վրայ բանակցելու: Ներսէս կը խնդրէր որ անոնք ալ միատեղ բերէ, Ասորոց պատրիարքն ալ արդէն Հռոմկլայ կը գտնուէր, այս կերպով հնար կ'ըլլար համագումար ժողովով մը չորս եկեղեցիներու մէջ միանգամայն միաբանութիւն հաստատել, և վերջացնել այն բաժանումը որ եօթը դարէ ի վեր քրիստոնեայ եկեղեցիներու մէջ կը տիրէր: Եթէ, կ'ըսէր ներսէս, կէտեր կան զոր Հայեր պիտի պարտաւորուին ուղղել Յոյներուն առաջարկութեանց համեմատ, փոխադարձաբար կէտեր ալ կան զորս Յոյներ պէտք է ուղղեն Հայերուն գիտողութեանց վրայ: Այդ առթիւ ներսէս երկրորդ ջատագովական գրութիւն մըն ալ կը զրկէր կայսեր, որով իբր կաթողիկոս կը հաստատէր ինչ որ իբր եպիսկոպոս գրած էր:

Մանուէլ Կոմնենոս խափանուեցաւ Ասիա անցնիլ Թեսաղոյ խռովութեանց պատճառով, բայց միաբանական խնդիրը չբանելու համար երկու վարդապետներ ճամբայ հանեց, Թէորիանոս յունազգի և Յովհան Ութման հայազգի (1170), որպէս զի ներսէսի մտ երթան, բանակցին, փիճաբանին, ու զայն Յոյներուն առաջարկութեանց հասնութեան բերեն: Գրութիւն մը կը գտնուի այժմ, Տրամսբանուրիւն հրեշտակին Յունաց Տրիսմէի ընդ կարողիկոսին Հայոց Տեառն ներսէսի մակազրութեամբ, զոր Թէորիանոս պատրաստած է Կոստանդնուպոլիս դառնալէն ետքը: Անոր մէջ Թէորիանոս այնպիսի խօսքեր կը գնէ ներսէսի բերանը, որք կատարելապէս կը հակասեն ուրիշ կողմէն ներսէսի միտքին և կարողութեան վրայ մեզի հասած ստոյգ և հաստատուն վկայութիւններուն: Ինչ որ կը ջուջնէ թէ Թէորիանոս ուզած է իրեններուն առջեւ քողարկել իւր պատ-

դամուսրութեան անյաջողութիւնը նրկու աարի ետքը (1172) Մանուէլ կայսր նորէն ձեռք կ'առնէր միաբանական բանակցութիւնները, և ինն գլուխներ կ'առաջարկէր Հայերուն որ ընդունին իբրև միութեան պայման ներսէս այս նպատակով ընդհանուր ժողով մը հրաւիրեց, բայց ժողովը չգումարուած ինքն վախճանեցաւ (1173 օգոստոս 16), և իւր յաջորդն ու եղբորորդին, Գրիգոր Գ. Տղայ, Մանուէլի պատասխանեց (1175), թէ անհնար էր որ Հայերը կարենան առաջարկուած ինը գլուխները ընդունիլ:

Մանուէլ կայսր ինը գլուխները երկուքի վերածեց, և առաջարկեց միայն Քաղկեդոնի ժողովն ու նրկու բնութիւն բանաձեւը ընդունիլ (1177): Գրիգոր նորէն ընդհանուր ժողով հրաւիրեց, բայց Արեւելեան եպիսկոպոսներ ու վարդապետներ չուղեցին ժողովի դալ, և ոչ իսկ ինդիրի նիւթ ընել Յոյներուն առաջարկած կէտերը: Գրիգոր կաթողիկոսին և անոր հօրաքեռորդույն ներսէս Լամբրոնացիին թախանձանքները յաջողեցան վերջապէս Հռոմկայի մէջ ժողով մը գումարելու, որ առանց յունական առաջարկներուն հաւանութիւն ապու, իւր կողմէն նոր և միջասահման բացատրութիւններ կազմեց Յոյներուն առաջարկելու համար: Բայց Հռոմկայի ժողովական թուղթին Կոստանդնուպոլիս զրկուելէն առաջ Մանուէլ կայսր մեռաւ (1180): Կայսերութեան մէջ ալ խռովութիւններ սկսան, և բանակցութեանց շարունակութիւնը խափանուեցաւ, և միաբանական ջանքերը Մանուէլի կեանքովը վերջացան: Իսահակ Անդեղոս կայսր, բարբովին հակառակ ուղղութեան ձեռնարկեց, և միաբանական բանակցութիւնները մէկ կողմ թողլով, սկսաւ բռնական միջոցներ հրամայել (1185), կայսերութեան մէջ զըտնուող Հայերը քաղկեդոնական դատնութեան ստիպելու համար:

## ԺԵ .

## ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԶԳՏՈՒՄՆԵՐ

Քաղաքական նպատակը հետզհետե՛ս աւելի յստակ կը յայտնուի Հայերուն վրայ, երբ ուրիշ եկեղեցիներու հետ մերձեցուցման կամ միութեան համար փորձերու կը ձեռնարկեն: Անոնք հազիւ թէ զգացին որ Յոյներուն հետ սկսած բանակցութիւններէն օգուտ պիտի չգտնեն, և տեսան որ Խաչակիրներուն ազդեցութիւնը Արեւելքին մէջ կը զօրանայ, և նոր փայլ մըն ալ կը ստանայ Փրեզերիկոս Պարպարօսս կայսեր անձամբ արչաւանքին գլուխ անցնելովը, մէկէն մտադրութիւննին այն կողմ դարձուցին և սկսան Լատիններուն հետ յարաբերութեանց մտնել: Այդ յանկարծական փոփոխութիւնը հետեւանք էր քաղաքական և զինուորական պաշտպանութիւն մը ճարելու փափաքին, որով պիտի կարենային զօրաւոր հովանաւորութեան մը ներքեւ իրենց նոր հաստատած իշխանապետութիւնը թագաւորութեան բարձրացնել: Այս վերջին կէտը գլխաւորապէս Լեւոն Բ. իշխանին (1185) ջանքերուն մեծ նպատակակէտն էր: Սոյն այս քաղաքականութեան կ'օժանդակէին Գրիգոր Գ. Տղայ կաթողիկոսը և Ներսէս Լամբրոնացի Տարսնի արքեպիսկոպոսը, որոնք ըստ ամենայնի Լեւոնի ազդեցութեան ներքեւ էին: Ընդհակառակն Հայաստանի ներքին դատաւներու մէջ գանուող եպիսկոպոսներն ու կղերը, որք ընդհանրապէս Արեւելեան վարդապետ անունով ճանչցուած էին, և մեծ գոհունակութեամբ տեսած էին Հռոմկալի ժողովին որոշու մեերուն անդորձադիր մնալը, բողոքի ձայներ կը բարձրացնէին Կիլիկիոյ մէջ յայտնուած միութեանական և ըստինասէր ձգտումներուն դէմ:

Գրիգոր Գ. վախճանեցաւ առանց որոշակի բան մը ընելու (1193): Կաթողիկոսական աթոռին հաւանական յաջորդներ կը նկատուէին Գրիգոր Ապիրատ և Ներսէս Լամբրոնացի եպիսկոպոսները, երկուքն ալ իրենց լատինափառ համակրութիւններով կասկածելի դարձած, և այս պատճառով Արեւելեան վարդապետներուն հակառակութեան առարկայ եղած: Լեւոն իշխան Արեւելեաններու համակրութիւնը չկորսնցնելու համար, երկուքն ալ ետեւ ձգեց, և կաթողիկոսական աթոռ բարձրացնել տուաւ Գրիգոր Ե. Քարալէօք, քսանուերկու տարեկան երիտասարդ եպիսկոպոսը, նախորդ կաթողիկոսներու ազգականութենէն: Բայց ետեւ թողլուած թեկնածուներուն նախանձը անտեղի զրպարտութիւններ հանեց երիտասարդ հայրապետին դէմ, որ գահնկէց եղաւ և Կոպխտառի բերդին մէջ բանտարկուեցաւ: Գրիգոր Քարալէօք մարմինը անշնչացած գտնուեցաւ բերդին ներքեւը (1194), բայց չկրցաւ ստուգուիլ, թէ պատահական արկածի թէ ոչ եղեանական ոճիրի մը արդիւնք էր եղած այդ անակնկալ վախճանը:

Միութենական տենչը չէր դադարած տակաւին կալութեան վրայ տիրապետել: Արեւելեան վարդապետներուն հաստատամիտ գիմնադրութեան, և Կիլիկեցի գլխաւորներուն պատրաստակամ զիջողութեան մէջտեղ, Լեւոն երկու կողմերը իրարու մօտեցնելու կերպ մը փնտռէր, որպէս զի ձեռքէ չհանէ թաղաւորական պակը, զոր Լատիններ իրեն կը խտտանային: Սակայն չէր ալ կրնար Արեւելեաններուն համակրութիւնը ոտնակոխ ընել, քանի որ կը մտածէր անոնց օգնութեամբ իւր իշխանութիւնը մինչեւ Հայաստանի խորերը տարածել: Գրիգոր Զ. Ապիրատի կաթողիկոսութիւնը Արեւելեանները շնորհունեցին, և Բարսեղ Բ. Անեցին կաթողիկոս հռչակեցին, և Լեւոնէ պահանջեցին որ Բարսեղի կաթողիկոսութիւնը ընդունի և Ներսէս Լամբրոնացին հայրապետանոցի գործերէն հեռացնէ (1195): Լեւոն միայն այս երկրորդ պայմանին համակերպեցաւ, և Ապիրատի կա-

թողիկոսութիւնը պնդեց, որով աթոռներու պառակտումը տեւեց մինչեւ Բարսեղի մահը (1206)։

Միւս կողմէն Հայերուն՝ Լատիններուն կողմը հակիրճ Յոյներուն անվասահմանութիւնը գրողուց, և Ալեքսիս Անգեղոս կայսր զայն պատճառանք ըրաւ իւր կայսերութեան մէջ գտնուող Հայերուն դէմ՝ դաւանական հալածանքը սաստկացնելու։ Եռանդուն Լամբրոնացին Կոստանդնուպոլիս յղուեցաւ (1196), որպէս զի Յոյներուն խօսք հասկցնէ եւ հաշտարար կացութիւն մը պատրաստէ. բայց երբ իւր պատուիրակութեան անյաջող ելքը անտաւ և իւր ակնկալութեանց մէջ յուսախար եղաւ, իւր եռանդն ալ մարեցաւ, և սկսաւ զգալապէս շարժուիլ իւր միութենական բուն ձգտումները։

Հայերն նորէն սկսան Լատինաց մերձեցումը մշակել, մանաւանդ որ Արեւմտեան և Արեւելեան կայսրներ համամիտ կը գտնուէին Լեւոնին արքունական թագ շնորհելու մասին (1197)։ Սակայն Արեւմտեայց սովորութեան համեմատ պապին կողմէն ալ պէտք էր շնորհումը հաստատուէր, և այս մասին պէտք եղած բանակցութիւնները երկու տարի եւս գործը երկարածողային, և կրօնական միութեան մասին որոշուելիք կէտերը և գործածուելիք բանաձեւները անվերջանալի վիճաբանութեանց առիթ ընծայեցին։ Պապին նուիրակը իւր առաջարկներուն մէջ այնպիսի խիստ և պահանջկոտ ձեւեր գործածեց, որ Հայ եպիսկոպոսները որոշակի մերժեցին անոնց հաւանիլ և ստորագրել։ Լեւոն, որ իր ստանալիք թագէն և անձնական օգուտէն բարձր հոգ մը չունէր, առաջարկեց որ ինքն անձնապէս զիջանի և պապական նուիրակին դրած պայմաններուն ստորագրէ, սակայն նուիրակը կը գիտէր գլխաւորապէս եպիսկոպոսները խոնարհեցնել և եկեղեցականութեան հաւանութիւնն ստանալ։ Վերջապէս Լեւոն յաջողեցաւ նուիրակը համոզել, որ փոխանակ բոլոր եպիսկոպոսներուն համամիտ ստորագրութեան, բաւականանայ տասուերկու եպիսկոպոսներու ստորագրու-

Թեամբ, կաթողիկոսին և թագաւորին հետ (1198): Ըստ այսմ՝ թագադրութեան հանդէսը տեղի ունեցաւ 1199 յունուար 6'ին: պապական նուիրակը արքունական թագը դրաւ Լեւոնին գլուխը, և կաթողիկոսն ալ թագաւորական օծումը տուաւ Ասոր վրայ քանի մը տարի անցաւ և Գրիգոր Զ Ապիրատ կաթողիկոսը մեռաւ 82 տարեկան: Լեւոն որ թագը չստացած այնչափ նախանձայուղութեամբ պաշտպանած էր Լատիններուն կողմը, թագադրութենէն ետքը սկսաւ բնաւ կարեւորութիւն չտալ այն պայմաններուն, որոնք հաստատուած էին, իբրեւ միութեան հիմնակէտեր:

Յովհաննէս Զ. Մեծարարոյ կաթողիկոսին օրով (1203—1221), Լեւոն մինչեւ իսկ համարձակեցաւ պապական նուիրակին հրահանգները մերժել, և նոյն իսկ Լատին կրօնաւորներն ալ Կիլիկիայէ արտաքսել: Յովհաննէս կաթողիկոսն ալ, որ ներքնապէս օտարներու շատ համակիր չէր, սկսաւ կարեւորութիւն չտալ 1198 տարւոյ միութենական պայմաններուն: Միւս կողմէն Կիլիկեցոց զիջողական ընթացքը առիթ տուաւ նոր հակաթուռեր ստեղծելու, որք Յովհաննէսի կաթողիկոսութիւնը դժուարացուցին. սակայն Բարսեղ Անեցիի և Անանիա Սերաստացիի և Գառիթ Արքակաղնեցիի հետզհետէ վախճանները (1206), հակաթուռութեանց վերջ տուին: Արեւելեան վարդապետներն ալ զիջան Յովհաննէսի կաթողիկոսութիւնը ճանչնալ Զաքարէ Օրբելեանի ազդեցութեան շնորհիւ, որ Վրաց թագաւորին ներկայացուցիչն էր Հայկական զաւառներու մէջ: Այս կերպով կացութիւնը կանոնաւորուեցաւ և Յովհաննէս Զ. Մեծարարոյ կրցաւ խաղաղութեամբ կնքել իւր կեանքը (1221):

Կոստանդին Ա. Բարձրբերդցի, իւր երկարատեւ կաթողիկոսութեան ժամանակ (1221—1267), Լատիններու նպաստաւոր ուղղութեան հետեւեցաւ: Մէկ կողմէն Լատիններուն հետզհետէ զերակշռութիւն ստանալը, մանաւանդ Գերմանիոյ Փրեզերիկոս Բ. կայսեր (1228) և Գաղղիոյ սուրբ Լուդովիկոս Թ. թագաւորին (1248) անձամբ Խաչա-

կիրներու գլուխը գտնուիլը, միւս կողմէն ալ Հայոց մէջ միութենական ձգտումներուն զօրանալը, և Արեւմտեաններուն օգնութեամբ իրենց պետական և կենցաղական գործերը զօրացնելու ճիգերը, և ս.բանզեւս քաջալերեցին քաղաքական կառավարութիւնը իրեն լատինատէր ընթացքին մէջ: Այդ միջոցին է որ Իտալացի գաղթականութիւններ շատցան Կիլիկիոյ մէջ, և փոխադարձաբար Հայ գաղթականներ ալ բազմացան Իտալիոյ մէջ: Երկու երկիրներուն և երկու ազգերուն մէջ յարաբերութեանց յաճախելն ալ նպաստեց այդ մտերմութիւնն առջեւ բերելու: Լեւոն թագաւոր մեռաւ առանց ժառանգ թողլու (1210), որով իւր Զապէլ գուսարը թագուհի պսակուեցաւ տասնութեց տարեկան հասակին մէջ: Անոր առաջին ամուսնութիւնը, Փիլիպպոս Անաթոքի կոմսին հետ (1222), յաջող չեղաւ, և երկրորդ պսակով ամուսնացաւ Հեթումի հետ, որ թագուհւոյն ինամակալ՝ Կոստանդին Կոստիկոսի իշխանին որդին էր: Հեթում թագաւոր հռչակուեցաւ (1226), և իւր գաղափարները ժամանակին ձգտումներուն հետ կատարելապէս համապատասխան գտնուեցան, այնպէս որ Կոստանդին կաթողիկոս և Հեթում թագաւոր կրնան իրաւամբ նկատուիլ, իրր հայալատին մերձեցման գլխաւոր գործիչները, թէ քաղաքական և թէ եկեղեցական տեսակէտէն: Սակայն պէտք է յայտարարել, իրր իրենց գովեստ, թէ մերձեցումը հպատակութեան չհասուցին, և միութեան ձգտումներուն պատճառով ազգային արժանապատուութենէ և եկեղեցական սկզբունքներէ իսկապէս բան մը չզոհեցին, ինչ որ տեղի ունեցաւ իրենց յաջորդներուն օրով: Նկատողութեան արժանի կէտ մըն ալ է, որ երբ Կոստանդին ու Հեթում Լատիններուն հետ լաւ յարաբերութիւններ կը մշակէին, չէին դադրած Յոյներուն հետ ալ բանակցութիւններ շարունակել, Յակոբ Գիւրանական եպիսկոպոսին ձեռքով:

Սոյն այս Յակոբ Ա. Գիւրանական (1267—1286) և Կոստանդին Բ. Պրօնագործ (1286—1289) կաթողիկոսներ,



որք Կոստանդին Ա. Բարձրերդցիին յաջորդեցին, Լեւոն Գ. Թաղաւորի (1270—1287) գործակցութեամբ, ամուր մնացին իրենց անկախութիւնը պահելու Լատիններուն հանդէպ: Բայց Հեթում Բ. Թաղաւոր (1289—1307) ընդհակառակն Լատիններուն հանդէպ ստրկական համակերպութեան ուղղութիւն մը սկսաւ: Կոստանդին Բ. կաթողիկոսը, որ իրեն կը դիմադրէր, գահընկէց ընել տուաւ, և անոր յաջորդ նշանակեց պարզամիտ ճգնաւոր մը, Ստեփանոս Գ. Հռոմկլայեցին (1289), որ քիչ ետքը եգիպտացիներէ գերի տարուեցաւ Հռոմկլայ գղեակին ստաման ասեն (1293): Անկէ ետքը Հեթում Բ. և լատինասէր կուսակցութիւնը յաջողեցան կաթողիկոսական աթոռ բարձրացնել Գրիգոր Է. Անաւարդեցին, լատինամիտ ուղղութեան եռանդուն գործիչը:

Նոր կաթողիկոսը սկսաւ ճշգրել այն փոփոխութեան կէտերը, զորս կ'ուզէր Հռոմի եկեղեցւոյն նմանողութեամբ Հայոց եկեղեցւոյն մէջ մտցնել: Հազիւ թէ գործադրութեան պիտի սկսէր, ներքին խռովութիւններ իւր ձեռնարկը խափանեցին: Երբոր նորէն խաղաղութիւնը վերահաստատուեցաւ, Սիսի մէջ ժողով մը հրաւիրեց, որպէս զի իւր մտադրած փոփոխութիւնները հաստատել տայ. բայց ժողովը չցուցարուած ինքն մեռաւ (1307): Հեթում Բ. Թաղաւոր յաջողեցաւ կաթողիկոսութեան բարձրացնել Կոստանդին Գ. Կեսարացին, իրեն համափառ մը, և Սիսի ժողովին հաստատել տալ այն փոփոխութեանց ծրագիրը, որ իբր թէ Գրիգոր Է. Անաւարդեցիէ պատրաստուած էր: Գրուածը այնպիսի ռամիկ լեզու մը ունի, որ բնաւ չյարմարիր Անաւարդեցիին ուսումնականութեան և հմտութեան, այսուհանդերձ իբր անոր վաւերական գրուածը ներկայացուեցաւ Հեթումէ, և ընդունել արուեցաւ ժողովին:

Այս ժողովէ ետքը, մինչև կաթողիկոսական աթոռին Սիսի Էջմիածին փոխադրուիլը (1441), չարունակ յարածուն լատինամիտ ուղղութիւն մը կը անսնուի Կիլիկիոյ մէջ, և միութենական ձգտումները կը զօրանան: Կողիկոսեան գերդաստանին

լատինասէր թագաւորներուն կը յաջորդեն Լուսինեան գերդաստանին լատինացիի և հռովմէազաւան թագաւորները . իսկ երկրին քաղաքական կացութիւնը ներքին և արտաքին տազնապնեցում հետեւանօք, օրէօր քայքայման կը դիմէ և խռովարարներու ձեռք խաղալիք կը դառնայ : Հայալատին համերաշխութիւնը թաթարներու և թուրքերու և եգիպտացիներու անխտահոթութիւնը զրդուած էր, շարունակ ալ կը սաստկացնէր : Իսկ Հայեր չէին դադարիր Եւրոպոյ քրիտոնեայ պետութիւններուն վրայ դնել իրենց յոյսը և անոնցմէ սպասել իրենց փրկութիւնը : Ընդհակառակն Եւրոպա տկարացած և պարտասած՝ Ասիոյ մէջ իւր ազդեցութիւնը կը կորսնցնէր, և իւր հաստատած իշխանութիւնները հետզհետէ կը դադարէին : Կրօնական խնդիրներ քաղաքական խնդիրներու հետ կապուած կը մնային, և կրօնականներ քաղաքականներու յաջողութեան անհրաժեշտ պայմաններ կը ցուցուէին . մինչ յայտնի էր, որ եթէ կրօնականներ կատարելապէս իրականանային ալ, չէին կրնար ակրնկալուած քաղաքական արդիւնքին հասցնել : Կաթողիկոսներ փոփոխակի իրարու կը յաջորդէին, երբեմն կատարելապէս լատինամիտներ, երբեմն ազգային եկեղեցւոյ զգացում կրողներ : Բայց ամէն առթի մէջ չէին կրնար մրցիլ Լուսինեան գերդաստանի հռովմէազաւան կաթողիկ թագաւորներուն հետ, և ոչ ալ անոնց ուղղութիւնը խախտնել : Միայն թէ Հայ եկեղեցին հաստատապէս և պաշտօնապէս իւր կացութիւնը չկորսնցուց, և վերջնապէս հռովմէական կաթողիկ սկզբունքներուն չհամակերպեցաւ, և Հռոմի եկեղեցիէն չվաստկուեցաւ : Հայ եկեղեցին կրցաւ պահել և պահեց իւր ինքնուրոյն կառավարութիւնը, և իւր յատուկ դաւանութիւնները, թէ և չկրցաւ բոլորովին արդելել բարեկարգութեան թուլութիւնները և կարգապահութեան զեղծումները : Տասնութինգ կաթողիկոսներ եւս նստեցան Սիսի մէջ Գրիգոր Է. Անաւարդեցիէ մինչև Գրիգոր Թ. Մուսարէգեանց, մէկուկէս դարու տեւողութեան միջոցին (1294—1441) : Յիշատակուած եղև-

լուծիւններն ու պարագաները նկատի առնելէ ետքը, պէտք է խոստովանիլ թէ Հայրապետանոցին Սիսի մէջ եղած ժամանակամիջոցը, Հայոց կաթողիկոսութեան համար բարեյաջող և բարերաստիկ շրջան մը չեղաւ :

## ԺԶ.

### ԷԶՄԻԱՆՏԻՆ ՎԵՐԱԳԱՐՁԸ

Հայոց Եկեղեցին ամենամեծ տաղնապի և դժուարահընճիւ շիրթութեանց մէջ կը գտնուէր հնգեւտասաներոց դարուն առաջին կէտին : Կիլիկիոյ թագաւորութիւնը վերջնապէս ջնջուած էր (1375), Սիս քաղաքը Եգիպտացոց իշխանութեան ներքեւ ինկած էր, Լեւոն Զ. թագաւոր զերի տարուած էր, միայն քանի մը Հայ իշխաններ զեռ գիմադրութիւն կ'ընէին Ամանոսի բարձունքներուն և Տարոսի կիրճերուն ապաւինած : Հայոց կաթողիկոսական աթոռին զօրութենէ և սրայծառութենէ ինկած բլլալուն աստիճանը բացատրելու համար, բաւական բլլայ յիշել որ կաթողիկոսներէն վեց վերջինները (1377 — 1432), աթոռը իրարմէ յափըշտակած էին նախորդինն ապանել տալով և յաջորդութիւնը դրամով գնելով : Միւս կողմէ վճարած գումարնին փոխանակելու համար, ոչ մի զեղծումի և ոչ մի կեղեքումի առջև կանգ չէին առներ : Ոչ վարդապետութիւնը ուղիղ և ուղղափառ պահելու նախանձայն գութիւն ունէին, և ոչ ալ ծանր զիջողութիւններէ կը զգուշանային . բաւական էր որ անձնական օգուտի կողմը ապահովէին : Հռոմէացաւան կաթողիկոսութեան քարոզչութիւնը անարգել կը տարածուէր Կիլիկիոյ մէջ Փրանկիական միաբանութեան լատին կրօնաւորներու ձեռքով : Միևնոյն աստե՛ն Գոմինիկեան միաբանութեան լատին կրօնաւորներն ալ Մեծ Հայքի մէջ կ'ալխա-

տէին հետեւողներ շատցնել, և Ռնիթօր Եղբարց հայաւա-  
տին միաբանութիւն մըն ալ կը կազմէին, որոնց վարիչն  
էր Բարթողիմէոս Բոննտիացի լատին եպիսկոպոսը: Խրիմի  
մէջ զանուոյ չայ գաղթականութիւնն ալ, իրեն Գենուացի  
տիրապետողներու քաջալերութեամբ Հոռմի հետ ուղղակի  
յարարերութեանց կը մտնար: Մինչև իսկ պատգամաւորու-  
թիւն մըն ալ կը զրկէր Փլորենտիոյ ժողովին (1439), Հոռ-  
մի հետ միութեան խնդիրին վրայ բանակցելու համար:

Ազմամարի ակտոսը, որ կանուխ բաժնուած էր Գրի-  
գոր Պահլաունիի ընտրութեան ատիւ (1114), Մայր ակտո-  
սի հետ հաշտուած էր Յակոբ Գ. Սսեցի կաթողիկոսին օրով  
(1409), և օրինաւոր հաղորդակցութեան մտած էր Ս. Գրի-  
գոր Տաթևացի վարդապետին միջնորդութեամբ, որ բա-  
ժանման հետքերը ջնջելու իմաստուն նախաձեռնութիւնը  
ունեցած էր: Այս հաշտութեան հետեւանքն եղաւ, որ Ազ-  
մամարայ կաթողիկոսները, Սոսյ ակտոսին հետզհետէ յա-  
ռաջացող քայքայումը տեսնելով, և Հայաստանեայց Եկե-  
ղեցոյ ուղղափառութիւնը պաշտպանել ուղերով, Սիսի մէջ  
տիրապետել սկսող աթոթարմայութեան դէմ սկսան զինուիլ,  
թէպէտեւ միանգամայն իրենց ակտոսը բարձրացնելու նպա-  
տակն ալ ուրանալ չենք ուղեր: Սիւնեաց մեծ դպրոցը, որ  
դարերէ իսկը ուսումնականութեան և ուղղափառութեան  
հռչակը արժանապէս կը վայելէր, վերջին ատեններ նոր  
ոգևորութիւն և նոր զարգացում ստացած էր երեք սուրբ,  
Յովհաննէս Արտանեցի († 1388) և Մաղաքիա Ղրիմեցի († 1384)  
և Գրիգոր Տաթևացի († 1410), վարդապետներուն ջանքին  
և խնամքին շնորհիւ: Ասոնց աշակերտներուն բազմութիւնը ազ-  
գային եկեղեցւոյն տղետայի և օղբայի վիճակը տեսնելով,  
որոշեցին դարման մը ընել: Այս եղաւ բուն շարժառիթը,  
որ ստիպեց վերահաս վտանգին դիմաց հիմնական միջոցներ  
և արժատական հօդածութիւններ ձեռք առնել: Յայանի  
տեսնուեցաւ որ այլեւս ոչ մի քաղաքական պատճառ կամ  
օգտակար փաստ մը չկար, որ հայրապետական ակտոսը իւր

նախնական և նուիրական տեղէն հեռու մնար, և որոշեցին նորէն զան Էջմիածին դարձնել, որ համեմատարար աւելի խաղաղ վիճակ մը ունէր Պարսկական թագաւորութեան ներքեւ, քան Սիւր եղիպտական տիրապետութեան ներքեւ Գրիգոր Թ. Մուսաբէգեանց, որ կաթողիկոսական աթոռը գրաւած էր, տեղափոխուելու հրաւիրուեցաւ. ինքն ընդդիմացաւ, բայց գործին համակերպեցաւ Էջմիածնի մէջ դուրսուած ազգային ընդհանուր ժողով մը, ուր եօթն հարիւրէ աւելի ժողովականներ հաւաքուած էին, եպիսկոպոսներ, վանահայրեր, վարդապետներ, աւագ երէցներ, իշխանազուններ և գլխաւորներ (1441 մայիս), սլաւոնապէս և հանդիսապէս աթոռին տեղափոխութիւնը որոշեց, հաստատեց ու հռչակեց, երբոր նոր կաթողիկոս ընտրելու կարգը հաստ, զանազան թեկնածուներու մէջ եղած մրցումը վերջացնելու համար, բոլորովին դուրսէն մէկու մը վրայ միացան, և կիրակոս Վիրապեցի, սրբակրօն և ճգնազգեաց եկեղեցականը, որ բնաւ նախընտաց գործողութեանց մասնակցութիւն ունեցած չէր, կաթողիկոս ընտրուեցաւ: Այդ կերպով կը լուր երեք զօրաւոր թեկնածուներու բուռն մրցակցութիւնը, որոնք էին Չաքարիա Աղթամարայ կաթողիկոսը, Չաքարիա Հաուցեթաւեցի Սիւնեաց զպրոցին առաջնորդը, և Գրիգոր Չաքարեցեան Աքաւոյու արքեպիսկոպոսը:

Նոր և բարեյաջող շրջան մը բացուած կ'երեւէր Հայոց եկեղեցւոյն առջեւ: Նոր կարգադրութեան զօրութեամբ, կիլիկիոյ մէջ տիրել սկսող միութենական զիջողամիտ ճշդատուները կը դադրէին, Աղթամարի աթոռը վերջնապէս և կատարելապէս Մայր աթոռի հետ կը միանար, կարող եւ ուսեսալ անձեր գործին գլուխը անցած էին, որոնց գործունէութիւնը բարեգուշակ էր եկեղեցւոյն սպազային համար: Դժբախտարար այդ գեղեցիկ և մխիթարական հեռապատկերներ իրականութիւն պիտի չգտնէին. բուռն կիրքեր ամէն բան պիտի վտանգէին, անհաստական շահը հանրային շահին պիտի նախադասուէր, և Հայաստանեայց եկեղեցին պիտի

չվայելէր անկալած խաղաղութիւնն ու սլայժառութիւնը: Կիրակոս կաթողիկոս կարող չեղաւ կացութեան տիրապետել, և երկու տարի ետքը հրաժարեցաւ և գործէ քաշուեցաւ (1443), և իրեն յաջորդեց Գրիգոր Ժ. Ջալալբէգեան: Ջաքարիա Աղթամարայ կաթողիկոսը, որ Կիրակոսի հրաժարելէն ետքը ինքզինք Ամենայն Հայոց Կաթողիկոս հռչակած էր, Էջմիածին եկաւ, Գրիգորը հալածեց և աթոռը գրաւեց (1461), բայց տարին չըացուցած պարտաւորուեցաւ ետ դառնալ: Գրիգոր Ջալալբէգեան նորէն իւր տեղը եկաւ, և անոնք որ իրեն օգնական ու գործակից եղած էին, աթոռակցութեան բարձրացուց, կաթողիկոսական օծում և անուն և լիազօր իշխանութիւն տալով անոնց: Այս շնորհին արժանացան Արիստակէս Բ. Աթոռակալ և Սարգիս Բ. Աջատար, և այս ժամանակէն սկսան տեսնուիլ շարունակ Էջմիածնի մէջ, մէկէ աւելի կաթողիկոսներ, որոնք միեւնոյն ատեն կատարեալ իշխանութիւն կը վարէին, թէպէտ եւ օրէնքին աչքին, մէկէն զատ միւսները լիազօր տեղակալներ կամ օգնական աթոռակիցներ էին: Այդ կացութեան բուն նպատակն էր զանազան ազգեցիկ եկեղեցականներու փառասիրութիւնը յազեցնել, և տարբեր կուսակցութեանց զլիսաւորները շահիլ. իսկ օգտակար կողմը եղաւ, աթոռոյ յաջորդութիւնը ապահովել, երբոր օրինական ընտրութիւններ կատարելու դիւրութիւն ու միջոց կը պակսէին: Կաթողիկոսի մը մահուան առիթին, անմիջապէս աթոռակիցը կամ աթոռակիցներուն երիցադոյնը անոր կը յաջորդէր, առանց ընդմիջումի և աթոռոյ պարապութեան վտանդի: Իրօք ալ, նկատելով երկրին մէջ տիրող խռովութիւնները և անկարգութիւնները, և Հայերուն ցրուած ու անջատուած կացութիւնը, շատ դժուար, գրեթէ անհնար պիտի ըլլար կանոնաւորապէս ընտրողական ժողովներ գումարել և աթոռի շարունակութիւնը ապահովել:

Առաջին դարերէն սկսելով Ս. Գրիգոր Լուսաւորչի աջ բազուկին մասունքը իբրեւ կաթողիկոսական աստիճա-

նին յատկանիչն ու անոր իշխանութեան երաշխաւորութիւնը նկատուած էր, և Սուրբ Աջոյ անունով և զօրութեամբ կը տրուէին օրհնութիւնները և կը կատարուէին նուիրագործութիւնները, և նոյն իսկ սուրբ միւռնի տեսանագրութիւնը: Սուրբ Աջը կաթողիկոսներուն հետ մէկտեղ թափառած էր իրենց երկարժամանակեայ պանդխտութեանց ատեն, և նոյն իսկ աթոռին Սիսէ Էջմիածին փոխադրութիւնը Սուրբ Աջին ներկայութեամբ հաստատուած ու վաւերացած էր: Չաքարիա Աղթամարցին, իւր կարծեցեալ կաթողիկոսութեան իրաւունքը պահպանելու դիտմամբ, Սուրբ Աջը մէկտեղ Աղթամար տարաւ, երբոր ստիպուեցաւ Էջմիածինէ հեռանալ (1462): Նուիրական մատուցը Աղթամար մնաց, մինչև որ Վրթանէս Օծոպեցի եպիսկոպոսը յաջողեցաւ զայն Աղթամարէ վերցնել և Էջմիածին գարձնել (1477), բոլորովին հետաքրքրական գարձուածով մը:

Բայց ասկէ առաջ Էջմիածինի մէջ տեղի ունեցած շփոթութիւնները քաջալերեցին Կարապետ եւ դոկիացի եպիսկոպոսը, Սոսյ մէջ կաթողիկոսական աթոռը վերանորոգելու (1447), իբր փաստ և իբր հաստատութեան նշանակ Աջ մը երեւան հանելով: Այդ պարագայէն կը սկսի Սոսյ մէջ մասնաւոր կաթողիկոսութեան մը գոյութիւնը, որ առաջ իբր հակառակաթոռ սկսաւ, բայց ետքը Մայր աթոռին հետ հաշտուեցաւ և հաղորդակցութեան մտաւ, և այնպէս ալ մինչև այսօր կը շարունակէ:

Գրիգոր Չալայրէզեանցի օրէն սկսելով (1443) Էջմիածնայ աթոռը շարունակ ներքին խռովութեանց և արտաքին շփոթութեանց մէջ մնաց մինչև Մովսէս Գ. Տաթեւացի կաթողիկոսին ընտրութիւնը (1629): Երեսունէ աւելի կաթողիկոսներու անուններ կը յիշուին աթոռին վրայ, ոմանք իբր բուն կաթողիկոս և ուրիշներ իբր պարզ կաթողիկոսակից, և այդ բազմութեան մէջէն շենք կրնար յիշատակել այնպէս կարող և արդիւնաւոր մէկ մը որ ժամանակին կացութեան վրայ տիրապետած ըլլայ Էջմիածինը

պարսկական տիրապետութեան ներքեւ էր, և Նրեւանի խաները գրեթէ ինքնիշխան կը կառավարէին այդ երկիրը, և Էջմիածինի ներքին շտաբանութեանց մէջ միայն կեդեքելու և գրամ կորզելու կողմը կը մշակէին: Միշտ աւելի տուողին կողմը կը բռնէին, և երբօր յօժարակամ տուողներ չէին գտներ, բռնութեամբ կորզելու ճանպան կը գործածէին, մինչև իսկ կաթողիկոսները մարմնական խոչանդանքներու կ'ենթարկէին, փրկանքի առիթ ստեղծելու համար: Այդ կացութեան ներքեւ անհնար էր լուրջ և կանոնաւոր գործողութեան ձեռնարկներ կատարել, կատարեալ անկման նկարագիրն է, որ ամբողջ այդ միջոցը կ'ուրուագծէ: Միակ անձը, զոր կաթողիկոսներուն մէջէն կրնանք գոյութեամբ յիշել Միքայէլ Աերաստացին է (1542—1564—1570), որ մէկ կողմէն Աղթամարի և Այուանից կաթողիկոսներուն յաւակնութիւնները կրցու զսպել, և միւս կողմէն Հայ տպագրութեան սկզբնապատճառն եղաւ: Նա Իտալիա զրկեց Արզար Եւզովիացին (1562), որպէսզի նորագիւտ տպագրութեան արհեստը ուսումնասիրէ, և այդ նպատակով Պիոս Գ. պապին ուղղուած յանձնարարականներ ալ տուաւ անոր ձեռքը: Արզարի յաջողուցած առաջին տպագրութիւնները կատարուեցան Վենետիկ քաղաքը 1565 տարին: Թէպէտ անկէ առաջ ալ մինչև 1512 տարին տպուած հայերէն գիրքեր կը գտնուին, սակայն անոնք Եւրոպացի տպագրիչներու ձեռքով և Հայ վաճառականներու քաջաբերութեամբ յառաջ եկած պատահական արդիւնքներ են: Բուն Հայկական կանոնաւոր և շարունակեալ տպագրութիւնը Միքայէլ կաթողիկոսի օրէն կը սկսի, որուն ձեռնարկը բարեյաջող եղաւ, և հետզհետէ Հայ տպարաններ շատցան Վենետիկ, Հռոմ, Կոստանդնուպոլիս, Էջմիածին, Սպահան և Ամսդերտամ քաղաքներու մէջ: Ատնց արտադրած գործերուն ամէնէն կարեւորը և ամէնէն ալ ընտիրը, 1666'ին Ամսդերտամի մէջ, Ռսկան վարդապետի ձեռքով տպուած պատկերազարդ աստուածաշունչն է:



## ԺԷ.

## ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ ՊԱՏՐԻԱՐԺՈՒԹԻՒՆԸ

Կաթողիկոսական աթոռին Սիսէ Էջմիածին փոխադրուելուն գրեթէ ժամանակակից է, Կոստանդնուպոլսոյ մէջ պատրիարքական աթոռի մը սկզբնաւորութիւնը Մէհէմմէտ Բ. Փաթիհ, Օսմանեանց թագաւորը, կայսերութեան մայրաքաղաքը գրաւելէն ետքը պէտք ունեցաւ արմատական կարգադրութիւն մը ընել Յոյներուն հպատակութիւնը ապահովելու համար Օսմանեանց օրէնադրութիւնը ամբողջապէս կրօնական կամ իրաւական էր, և բոլոր անհատական և ընտանեկան և կենցաղական իրաւունքները, բացառապէս մահմետական կրօնքին սկզբունքներէն ներշնչուած էին։ Ասկէ առաջ իսլամ պետութիւնները քրիստոնէական երկիրներ նուաճած ատենին, երկու պայմաններէն մէկուն հետեւելու պարտաւորուած էին. կամ իրենց կրօնքը բռնի ընդունել տալ իրենց նուաճած ժողովուրդներուն, և կամ անոնց ինքնուրոյն կառավարութիւն և յատուկ կենցաղական կացութիւն մը շնորհել։ Արդ այս երկու պայմաններէն ոչ մէկը հնար էր հաստատել Կոստանդնուպոլսոյ մէջ, որ նորահաստատ իրաւական կայսերութեան մայրաքաղաքը կը հռչակուէր։ Մէհէմմէտ Փաթիհ այդ գոտարութիւնը լուծեց, Յոյներուն կրօնական պետին, այսինքն է պատրիարքին թողլով այն ամէն կենցաղական և քաղաքական իշխանութիւնները, որոնք ներքին և սերտ կապակցութիւն ունէին քրիստոնէական կրօնքին վերաբերեալ կէտերուն հետ։ Այս կերպով կրօնական պետին իրաւասութեան ներքեւ անցան այն ամէն խնդիրներ և գործեր, որոնք կը պատկանէին քրիստոնէաներու ընդհանուր կեանքին, ամուսնական

խնդիրներուն, ընդհանուր դատարարակութեան, բարեգործական հաստատութեանց, կրօնական պահանջից, եկեղեցական պաշտօնէից, կրօնապատկան գործոց, և այլն: Այսպէս ծագում առաւ Կոստանդնուպոլսոյ պատրիարքներուն քաղաքական իշխանութեան, կամ՝ կայսերական պատրիարխութեան նման կերպարան մը ստանալը (1453):

Աշխարհակալ թագաւորը, այս կերպով Յոյներուն կայսրութիւնը ճշդելէն ետքը, մտածեց անոնց դիմացը ուրիշ քրիստոնէական տարր մըն ալ կազմակերպել, տարր մը որ աւելի կայրած էր իրեն տէրութեան շահերուն: Բաղմութիւն Հայ գաղթականութիւն մը փոխադրեց Կոստանդնուպոլիս քաղաքը, և զայն ղետեղեց քաղաքին շուրջանակի թաղերուն մէջ, պարիսպներուն ներքեւ ու դիտար դուռներուն մօտ: Միեւնոյն առիթով, իրբեւ առաւել վստահութեան միջոց, Յոյները հաւաքուեցան քաղաքին մէջ տեղերը, աշտարակներէն և ամրութիւններէն հեռու: Արդէն ալ Հայերը՝ Օսման Ա. Դաղի թագաւորին օրէն թուրքերուն կատարեալ վստահութիւնը կը վայելէին: Այս առիթու նոր Հայ գաղթականութիւնը Յոյներուն համար կազմակերպուած ձեւին և զիրքին վերածուեցաւ: Յովակիմ՝ եպիսկոպոս, որ Փոքր-Ասիոյ մէջ գտնուող Հայ գաղթականներուն առաջնորդն էր, և Կուսինայէ Պրուսա անցած էր, Պրուսայէ Կոստանդնուպոլիս փոխադրուեցաւ, և ստացաւ միեւնոյն աստիճանն ու պատուանունը, իշխանութիւնն ու իրաւասութիւնը (1561), որոնք Յոյներուն պատրիարքին տրուած էին:

Այս կերպով կառավարութեան ճանչցած, Յոյն և Հայ, երկու պատրիարքները՝ նկատուեցան արեւելեան քրիստոնէութեան երկու մեծ հատուածներուն գլխաւոր պետերը: Այդ բաժանումը հիմնուեցաւ պարզապէս հաւատոյ դաւանութեան տարբերութեանց վրայ, տնօրէնի և ազգային տարբերութեանց տեսակէտէն անկախաբար: Որչափ երկարակ Որթոզգոքներ կային, Յոյն, Պոլիար, Արրպ, Առնաուտ, Ուլահ, Պուղտան, Ռութէն, Խրուսթ, Գարամանցի,

Ասորի, Մեկքիդ, Արարացի, ամէնքն ալ իրենց ժողովուրդներով ու պետերով Յոյն պատրիարքին ներքեւ դրբուեցան: Միւս կողմէն ալ որչափ Միարնակ Ազգափառներ կային, Հայ, Վլացի, Ագուան, Ասորի, Քաղղէացի, Ղպտի, Հապէշ, ամէնքն ալ իրենց ժողովուրդներով եւ պետերով ենթարկուեցան Հայ պատրիարքարանի իրաւասութեան:

Հրէաներ այն ատեն օրինաորապէս և պաշտօնապէս ճանչցուած մարմին մը չէին կազմեր, իսկ հռովմէադաւան կաթողիկոսներ, որք են Լէվանթիցո կոչուող Արեւելցի Լատիններ, պարզապէս իբր օտարազգիներ կը նկատուէին: Իսկ բնիկ Արեւելցիներէն անոնք որ հռովմական կաթողիկոսեան կ'անցնէին, իրենց դասանախօսութեամբ տարբեր հասարակութեան կերպարան կամ կազմիւն չէին ստանար, և նոյն իսկ կրօնքի արտաքին գործողութեանց համար, ինչպէս են, կնուսք, պսակ, թաղում, և այլն, իրենց պատկանած պատրիարքութեան պաշտօնեաներուն գիմելու ստիպուած էին: Այդ կազմակերպութիւնը անփոփոխ մնաց յաջորդ դարերու մէջ, և միայն նոր վերջացող դարուն կէսին մօտերը Քարթլի միլլէք մը կազմուեցաւ ինքնուրոյն պատրիարքութեամբ (1830), և անկէ ետքը սկսան հասարակութիւններ հետզհետէ բաժնուիլ ու շատնալ դասանութիւններու և ծէսերու տարբերութեանց համեմատ:

Կոստանդնուպոլսոյ Հայ պատրիարքները սկսան հետզհետէ իրենց իշխանութիւնը կազմակերպել և իրաւասութիւնները կեդրոնացնել, և հնարաւորութեան սահմանին մէջ, իրենց ձեռքը ամփոփել ազգային ներքին վարչութիւնը: Իրենց վարչական գործունէութիւնը հետզհետէ տարածուեցաւ կայսերութեան բոլոր գաւառներուն վրայ, նոյն իսկ հոգեւորապէս Սույ և Աղթամարայ կաթողիկոսութեանց և Երուսաղէմի պատրիարքութեան պատկանեալ թեմերուն վրայ: Հայոց պատրիարքութեան առաջին ատեններուն պատմութիւնը, ակնհայտ և թեմերու փոխադարձ խնդիրներ-

բու շարք մըն է, շարունակ քաղաքական խռովութիւններու և պատերազմական շփոթութիւններու հետ խառնուած։ Այդ մանրամասնութիւնները մենք զանց կ'ընենք, եւ չենք ուզեր մեր պատմական ամփոփումը եւ ընդհանուր տեսութիւնները ծանրաբեռնել այնպիսի պարագաներով, որ մեզ մեր բուն նպատակակէտէն կը հեռացնեն։

## ԺԸ.

### ՉԱՐԹՆՈՒՄԻ ԴԱՐԸ

Ճշմարտութիւնը խօսելու խղճահարութիւննիս մինչեւ անխորհրդատրտութեան ծայրայեղութիւնը մղելէ չքաշուեցանք, և համարձակ յայտնեցինք այն աղետալի կացութիւնը, որուն հասած էին Հայ եկեղեցին և Ազգութիւնը միջին դարուն տսե՛նները։ Բայց արդարութե՛նէ չչեղելու համար պէտք է նաև յայտարարել, թէ հնար չէ բնաւ Հայ եկեղեցին մեղադրել իրր քաղաքական և կենցաղական անկումին պատճառ, և իրր պատասխանատու ազգին գլուխը եկած ազէտներուն, ինչպէս որ հռոմէականութեան ջատագովներէն ոմանք յանդդնած են ըսել։ Միջնադարեան Արեւմտաքին անկեալ և ողբալի վիճակը, և Հռոմէական եկեղեցւոյ կողմէն յանուն կրօնի դործածած մեծեղեուն զեղծումները, բաւական են Հայոց եկեղեցին մեղադրանքէ զերժ պահելու և իրեն գէ՛մ խօսող սեղուուն բերանները կարկելու։

Արեւելեան քրիստոնէութեան մասին խոտոտրահանջ գատատտան մը ընելէ առաջ, պէտք է միտքի առջեւ բերել այն սարսափելի կործանումը և այն աղետալի աւերաները, որք Արեւելքէն և Հարաւէն իրեն վրայ հասած էին. և այն խիստ հարածանքները զորս նա կը կրէր յազմական

բռնապետներու կողմէն: Պէտք է յիշել այն մտաւորական խաւարը, որուն ներքեւ կը ճնշուէր քրիստոնեայ ժողովուրդը իւր տիրապետողներուն կամքով: Պէտք է կշռել այն զրկումը ամէն միջոցներէ և դիւրութիւններէ, որոնք թէ նիւթապէս և թէ բարոյապէս խաւարը փարատելու պիտի ծառայէին: Վերջապէս պէտք չէ մոռնալ այն ահագին զոհոթութիւնները զորս Արեւելեան քրիստոնեաներ պարտաւոր էին յանձն առնուլ, մինչև իսկ իրենց նիւթական գոյութիւնը պահելու համար:

Այս ամէն դժուարութեանց հակառակ, նորէն Հայ ազգն եղաւ, որ առաջին անգամ՝ Արեւելքի մէջ, արթնութեան և յարութեան նախաքայլը առած ըլլալու պարծանքն ունեցաւ, և հաստատամիտ ճիշդերով աշխատեցաւ այդ աղետալի կացութենէն դուրս ելլել: Այ մի քաղաքական փոփոխութիւն չէր քաջալերեր զինքը, ոչ մի պատրաստական դիւրութիւն՝ ողբերութիւն չէր ընծայեր: Բայց նա, յուսահատ ըլլալու չափ ծանր պարագաներու ներքեւ ալ, ետ չկեցաւ իւր ճիշդերէն, և շարունակեց ձեռք կարկառել ամէն կողմ, ուսկից որ զարգացման և լոյսի և փրկութեան յոյսի ամենափոքր նշոյլն ալ կը տեսնէր:

Հազիւ թէ վերածնութեան առաջին նշանները կը սկսէին ճառագայթներ արել Արեւմուտքի վրայ, Հայեր անմիջապէս կը փութային Եւրոպիոյ կողմերը հասնիլ, որ մտաւորական վերակենդանութեան քաղցերնին յազեցնեն: Միքայէլ կաթողիկոսէն զրկուած պատգամաւորութիւնը, որ Աօրոյ խորերէն մեկնելով Կոթէնպէրկի գիւտին ետեւէն կ'երթար, Հայուն փութաճանութեան ամէնէն նշանաւոր յայտարարութիւնն է: Գծրախտարար Արեւմուտք, բուն կրօնական մղեւանդութեան ներքեւ կը գտնուէր, և ամէնէն սաստիկ և աններողամիտ քաղաքականութեան հետեւող էր: Արեւմուտք ոչ մէկու կը նպաստէր, ոչ մէկուն կ'ուզէր օգնել, եթէ նա նախապէս հոռովազատան կաթուրիկութեան լուծին ներքեւ չմտնէր: Արեւմուտքէն որեւէ

պաշտպանութիւն և օժանդակութիւն ստանալու անհրաժեշտ պայմանը՝ պապութեան հպատակութիւնն էր, որ այն ատեն գերազոյն իշխեցողն էր Եւրոպայի մէջ։ Իրօք այ երբ անոր կրօնական սկզբունքներուն համաժող շեղողներ խարոյկներու վրայ անողօքարար կ'այրուէին, հնար է՞ր միթէ որ դիւրութիւն և օժանդակութիւն ընծայուէր Արեւելեան եկեղեցիներու հաւատացեալներուն, եթէ Հռոմի հետ միութեան չը խոնարհէին։ Կրնա՞նք արդեօք մոռնալ, որ Փրանկիսկոս Աստիղեանի, Դոմինիկոս Կոմմանի և Իգնատիոս Լոյոլայի աշակերտները բոլոր իրենց քարոզչական եռանդն ու նախանձայուղութիւնը կը գործածէին Արեւելքին հին քրիստոնեաները, Արեւմուտքին նոր քրիստոնէութեան դարձնելու, եւ բոլոր իրենց ոյժը կը գործածէին, որպէսզի նախնական եկեղեցւոյ աւանդապահ հաւատացեալները, լատին դպրոցականութեան նորահնար վարդապետութիւններուն ընդունելութեան բռնադատեն։

Այդ ցաւալի պարագաներու մէջ էր, որ Հայեր երբևրուն ընթացքի կը բռնադատուէին, երբեմն զիջողական եւ հաշտարար, և երբեմն հաստատամիտ և անհաշտ Զիջողական էր ընթացքին, ցորչալի պահանջուած կէտերը խոհական ներողամտութեան սահմանին մէջ կը մնային. հաստատամիտ էր, երբոր խոհականութեան թոյլ տուած չափէն աւելին կը պահանջուէր Զիջողական էր, մինչեւ որ տանելի զոհողութեան համապատասխան օգուտ մը կը յուսացուէր. հաստատամիտ էր, երբոր օգուտը պէտք կ'ըլլար չափազանց և աններելի զոհողութեանց փոխանակութեամբ գնել։ Երբոր այս էր ընդհանրութեան ընթացքը, եղան ոմանք՝ որոնք զիջողութեան հոգին մինչեւ ծայրագոյն աստիճանը տանիլ չվարանեցան, յառաջադիմական փափաքներու ծայրայեղ աննդէն մղուելով, մինչ ուրիշ շատեր, բացարձակապէս կը մերժէին իրենց սկզբունքներէն հրաժարիլ, նոյն խակ արտաքին եւ կեղծուրաց երեւոյթով։ Այդ բացատրութիւնները պէտք է միշտ միտքի առջեւ ունենալ, եթէ կ'ուզուի լաւ ճշդել այն

եղելութեանց նշանակութիւնը, որոնք տեղի ունեցան Հայոց մէջ, Արեւմուտքի մէջ սկսած յառաջագիմական շարժումին մասնակցելու անյազ բաղձանքով:

Յառաջագիմասէր ուղղամիտ գործիչներուն գլուխը պիտի յիշենք Մովսէս Գ. Տաթեւացի կաթողիկոսին անունը, որ հայրապետութեան բարձրանալէ շատ առաջ նուիրուած էր բարեկարգութեան և նոր կազմակերպութեան գործին: Էջմիածնայ աթոռը անոր նախանձայրոյլ գործունէութեան կը պարտի այն ամէն նորոգութիւնները, որոնք զինքն կատարեալ կործանման վտանգէն պահեցին: Նա Պարսից տէրութենէն ալ ստացաւ կեղեքումներուն վերջաւորութիւնը, որոնց ներքեւ երկար ատենէ իրեր աթոռը կը հեծէր. հարկերու թեթեւացման և ապահարկութեան շնորհներ ալ ձեռք ձգեց, բարոյական կենցաղին բարենորոգման և եկեղեցական վարդապետութեանց ուղղութեան մասին ալ նշանաւոր արդիւնքներ ունեցաւ: Իւր կաթողիկոսական ընտրութիւնը նոր գործունէութենէ աւելի, կատարուած գործունէութեան վարձատրութիւնն եղաւ, վասն զի շատ համառօտ եղաւ կաթողիկոսական պաշտօնավարութեան տեւօղութիւնը, երեք տարի միայն (1629—1632): Անոր յաջորդը, Փիլիպպոս Ազրակեցի (1633—1655), իւր նախորդին սկզբնաւորած բարեկարգական ձեռնարկները առջեւ տարաւ: Թուրքիա ալ ճանապարհորդեց, և Կոստանդնուպոլսոյ ու Երուսաղէմի պատրիարքութեանց խառնակ գործերը իւր ազգեցութեամբ կարգադրեց: Ժողով մըն ալ գումարեց Երուսաղէմի մէջ (1651), և Էջմիածնի ու Սոոյ աթոռներուն մէջ սիրող հակառակութիւնները վերջացուց, և Սոոյ աթոռը Մայր աթոռոյ հետ կանոնական հաղորդակցութեան մէջ գրաւ, ինչպէս որ կանուխէն այդ բանը կատարուած էր Աղթամարի աթոռին նկատմամբ: Աշխատեցաւ նաև հայրապետական աթոռին նիւթական վիճակը բարւոքել, և երեսմտական միջոցները շատցնել, և այդ նպատակով ջրանցքներ բացաւ, և ջրաբաշխական ճարտար կերպերով Էջմիածնի ընդարձակ հողերը ուղղուելու վիճակի մէջ մտցուց:

Յակոբ Դ. Զուղայեցի (1655—1680), մինչոյն ուղ-  
ղութեամբ գործեց: Գժրախառար ծանր գժտութիւններ  
ժաղեցան Կոստանդնուպոլսոյ մէջ, և սարտաօրոնեցաւ այն  
կողմ գարձնել իւր ուշադրութիւնը: Հռոմէ զրկուած քարո-  
ղիչներ, Կղեմէս Կալանոս, Թէադօրինեան միտրան՝ լատին կրօ-  
նաւորին գլխաւորութեամբ, սկսած էին հետեւողներ զըս-  
նել Հայերուն մէջ: Անոնցմէ Թովմաս Բերիացի փարզա-  
պետը, մինչեւ իսկ պատրիարքական աթոռը զբաւելու կը  
յաջողէր. թէպէտեւ անմիջապէս ժողովուրդին կողմէն աթո-  
ռէ կը վտարուէր: Միեւնոյն ատեն Եղիազար Այնթապցի  
եպիսկոպոսը, որ հետզհետէ Կոստանդնուպոլսոյ և Երուսա-  
ղէմի պատրիարք եղած էր, ինքզինքը Թուրքիոյ Հայոց  
կաթողիկոս կը հռչակէր, իբր Էջմիածնի հակաթոռ: Յա-  
կոբ կաթողիկոս սարտաօրոնեցաւ անձամբ Կոստանդնու-  
պոլիս գալ (1664), և գործերը կարգադրելէն ետքը նորէն  
իւր աթոռը վերադարձաւ (1667): Բայց շփոթութիւններ և  
երկպառակութիւններ նորէն զօրացան Կոստանդնուպոլսոյ  
մէջ, որոնց վրայ աւելցան Լեհաստանի գաղթական Հայերը  
հռոմէական կաթողիկոսեան բռնադատող նիկոլ եպիս-  
կոպոսին ջանքերը: Պէտք եղաւ որ Յակոբ կաթողիկոս ան-  
գամ մըն ալ անձամբ Կոստանդնուպոլիս գայ (1679), ինչ որ  
ձերունին կատարեց հակառակ իւր անցած տարիքին, բայց  
չկրցաւ ծանր հոգերու և աշխատութեանց ատկալ, և այն-  
տեղ վախճանեցաւ 82 տարեկան հասակին մէջ (1680):  
Մարմինը թաղուեցաւ Բերայի ազգային գերեզմաննոցին  
մէջ, ուր չիբիմը մինչեւ այսօր հաստատեցելոց ընդհանոր  
յարգանաց առարկայ է և բարեպաշտական ուխտատեղի:

Կաթողիկոսական աթոռը երկու տարի գատարիկ քնաց  
հակաթոռ Եղիազարի յարուցած շփոթներուն պատճառով,  
և խառնակ կացութիւնը չկրցաւ կարգի մտնել, բայց եթէ  
երբոր նոյն ինքն հակաթոռը կանոնապէս կաթողիկոս ընտ-  
րուեցաւ Եղիազար Այնթապցիի կաթողիկոսութիւնը ինը  
տարի տեւեց (1682—1691), և արդիւնաւոր և օգտակար



սրտչտօնաւարութիւն մը եղաւ: Իրեն չէին պակսեր ոչ լաւ մտադրութիւններ և ոչ յաջող ձիրքեր, և անգամ մը որ իւր փառասէր ձգտումները իրենց յազուրդը դասն, բոլոր իւր կարողութիւնն ու աշխատութիւնը եկեղեցւոյն և ազգին օգտակար ըլլալու գործածեց: Այս կերպով իւր ետեւէն պատուաւ որ յիշատակ թողուց, և Հայոց եկեղեցւոյ հայրապետական շարքին մէջ ընտիրներէն մին նկատուեցաւ:

### ԺԹ.

#### ՈՒԹԵՆԻՏԱՄՆԵՐՈՐԳ ԴԱՐԸ

Զարգացման և յառաջագիմութեան և ուսման սէրը, որ բոլոր Հայերուն սիրտերուն մէջ բորբոքած էր, և որ շատերուն վրայ միջոյններու խտրութեան զգուշութիւնն ալ կը մտցնէր, մեծապէս ձեռնտու եղաւ հռոմէացւոսն քարոզիչներուն, իրենց հաւատքն ու վարդապետութիւնը Հայոց մէջ տարածելու:

Ութեւտաներորդ դարուն սկիզբները հռոմէացւան կաթողիկոսներու խմբակ մը կազմուած էր արդէն Կոստանդնուպոլսոյ մէջ: Բերայի մէջ գտնուող Լատին կրօնաւորներ ամէն տեսակ հրապոյցներ կ'առատացնէին, և Գաղղիոյ Ամենաքրիստոնեայ թագաւորներուն գետպաններն ալ իրենց զօրութեամբը կը պաշտպանէին և նոյն գործունէութեան կ'առաջնորդէին: Թէպէտեւ նորադարձ կաթողիկոսները կը շարունակէին սրտչտօնապէս Հայոց պատրիարքարանին իշխանութեան ներքեւ մնալ, սակայն գործօն կուսակցութիւն մը կազմած էին և կը ձգտէին մինչեւ իսկ ազգային վարչութիւնը ձեռք անցնել և պատրիարքարանին տիրապետել: Ասոնց դէմ, իրենց ազգային եկեղեցւոյն հաւատարիմ

և անոր գաւանտութեան վրայ հաստատուն եղողներն ալ, որոնք թէ՛ թուով զօրաւոր էին, և թէ՛ Օսմանեան կառավարութեան առջև ազդեցութիւն կը վայելէին, կ'աշխատէին ամէն հնարաւոր միջոցներով իրենց հնաւանդ եկեղեցին պաշտպանել, և այդ նորադարձներուն գործածած հնարքներուն առջեւն առնել, և քաջալերութիւն տուող ազդեցութեանց ոյժը կոտրել: Քանի որ այդ նորադարձ կաթողիկէները՝ օտարներու հետ սերտ և գաղտնի յարաբերութեանց մէջ կը գտնուէին, բնական էր որ այս երեսէն կառավարութեան աչքին կասկածաւոր երեւային: Այս է իրենց դէմ գործածուած միջոցներուն սկզբնական ծագումը, և այս իսկական նշանակութիւնը այն կարգադրութեանց՝ զորս կառավարութիւնը հրամայած է նոր կաթողիկէ եզող Հայերուն դէմ: Կաթողիկէներ աշխատած են իբր կրօնական հալածանքներ ներկայել անոնք, սակայն իսկապէս ներհակընդդէմ մրցումներու պատահական զէնքեր են: Արովհետև նորադարձ կաթողիկէներն ալ միեւնոյն կերպով մաքառած են Հայոց պատրիարքարանին դէմ, և շեն խղճած զայն ամբաստանել, իբր թէ Ռուսական կառավարութեան գիտումներուն ծառայելու հակումներ ունենայ:

Կոստանդնուպոլսէ դուրս հռոմէադաւան կաթողիկոսութիւնը յաջողութիւն գտաւ աւելի Մամպուտի և Բերիայի մէջ: Մեկքոն Թասպասեան և Աբրահամ Արծիւեան եպիսկոպոսներ յայսնապէս հռոմէականութեան յարեցան, ինչ որ իրենց վրայ հրաւիրեց պատրիարքարանի խտտութիւնները: Հռոմէադաւաններն ալ իրենց կողմէն յօգուտ կը գործածէին Վաղղիոյ դեսպաններուն ազդեցութիւնը, և անով հաւատարիմ հայադաւաններու վրայ կը բռնանային: Աշխարհածանօթ իրողութիւններ են Եւզոկիացի Աւետիք պատրիարքի արկածները, որ Վաղղիոյ դեսպանին պահանջմամբ առաջին անգամ մը Եէսօքուլէի աշտարակին մէջ բանտարկուեցաւ (1703), և վերջէն Թենեսոս աքսորուելու առիթով նենգութեամբ յափշտակուեցաւ, և բռնի Վաղղիա տարուեցաւ:

(1705), ուր հաւատքնական ատենի վճռով խիստ բանտարկութեան դատապարտուեցաւ, և բռնադատեալ դաւանափոխութեան մէջ վախճանեցաւ (1711):

Այստեղ առանձինն պէտք է յիշենք Մխիթար Աբաստացի վարդապետը, ուսման փափաքով սաստիկ վառած և դաւանական մասին լայնախոհ դաղափարներ տածող եկեղեցական մը, որ առաջ ձեռնարկեց Վենետիկի հանրապետութեան Պեղոպոննէս (Մօրա) թերակղզոյն վրայ տիրապետութենէն օգտուելով, ուսումնական վանականութիւն մը հաստատել այն տեղ (1712), քրիստոնեայ պետութեան հովանաւորութեան ներքեւ: Բայց իւր ձեռնարկը խանդարեցաւ, երբոր Վենետիկի հանրապետութիւնը Օսմանցիներէ յաղթուելով պարտաւորուեցաւ Պեղոպոննէսը թողուլ: Այն ատեն Մխիթար վարդապետ որոշեց նոյն իսկ Վենետիկի հանրապետութեան կեդրոնը դիմել, և այն տեղ հաստատել իւր գաղափարած վանականութիւնը, և յաջողեցաւ ալ այդ նպատակին համար Վենետիկ քաղաքին մօտերը Սուրբ-Ղազար կղզեակին ստացութեան շնորհն ընդունիլ (1717): Մխիթար վարդապետ Խապիոյ մէջ ստիպուեցաւ հռոմէական պապութեան պայմաններուն համակերպիլ, որպէս զի կարենայ անարգել իւր ծրագրած նպատակին հետեիլ և մտաւորական զարգացման գործը յաջողցնել: Բայց խոհական խորհրդով հեռու մնաց քարոզչական և մարդորական գործունէութիւններէն: Այդ ուղղութիւնը, որ աւելի համապատասխան էր իւր ազգօգուտ գործունէութեան, առանդարար պահուեցաւ իւր միարանութեան կողմէ ութեւտաներորդ դարու մէջ, ուրկէ ետքը ուրիշ ուղղութիւններ մտաքդանել սկսան: Բայց ստիկայ պատճառ մը չէ որ գոլութեամբ չյիշատակենք այն գրական ծառայութիւններն և օգուտները՝ զորս ազգին ընծայած է Մխիթարեան միարանութիւնը, իւր կրկին Վենետիկեան ու Վիեննական ճիւղերովը, և չայոյց լեզուն և չայ գրականութիւնը ճոխացուցած է բազմաթիւ և զնահասակի երկասիրութիւններով:

Ուրիշ վանական հաստատութիւն մըն ալ հիմնուեցաւ միեւնոյն ժամանակ Լիբանանի լեռներուն վրայ, Մարոնի ժողովուրդին հովանաւորութեամբ, Արբաճամ Աթմարեան վարդապետի ձեռքով, և Անտոնեան միաբանութիւն անունով: Այս միաբանութեան ալ նպատակը միեւնոյնն էր, ինչ որ էր Լատին աշխարհին մէջ հաստատուող միւս միաբանութեան նպատակը. միայն Լիբանանի գիրքը աւելի պիտի նպաստէր իրեն Հայ ազգութեան հետ մօտէն շփման առաւելութիւնը պահպանելու: Թուրքիոյ հարաւակողման դաւաճները, տակաւին կը պահէին Կիլիկիոյ թագաւորութեան վերջին ժամանակներուն լատինամետ յիշատակները, որով այս կողմի Հայերը աւելի մօտ էին լատինական կաթողիկոսութեան համաձայնելու: Այդ զգացումներն էին թերեւս, որ ասոնց համարձակութիւն տուին երկու եպիսկոպոսով և քանի մը քահանայով Կիլիկիոյ հռոմէացւոսան կաթողիկոսութիւն մը կազմակերպել, երկու եպիսկոպոսներէն մին, Արբաճամ Արծիւեանը, կաթողիկոս հռչակելով (1740): Արբաճամ փութաց անձամբ Հռոմ երթալ և Բենեդիկտոս ԺԳ. պապին ներկայանալ իրր թէ Ամենայն Հայոց կաթողիկոս եղած ըլլար: Բենեդիկտոս պապ, հարկաւ պիտի զիանար, թէ ինչ արժէք կրնար ունենալ ներկայացող անձին յաւակնատ յայտարարութիւնը. բայց անհիմն գործին իսկութիւնը պարզելով իրեն հպատակողներուն քաջաբերութիւնը կտորել չուզեց, և Հռոմի աթոռին Արեւելքին վրայ ունեցած նպատակին նպաստաւոր առիթ մը նկատեց: Ուստի իւր կողմէն Հայ կաթողիկ նոր պատրիարքութիւն կամ կաթողիկոսութիւն մը ստեղծեց (1742), պաշտօնապէս և ըստ ամենայնի Հռոմի աթոռին ենթարկեալ ըլլալու պայմանով:

Հռոմէական կաթողիկ հաստատութիւնները, Հռոմի Բրորականային միջոցները, և Փաղղիոյ տէրութեան պաշտպանութիւնը, ազգուսպէս նպաստեցին կաթողիկոսութեան Հայոց մէջ տարածուելուն, ինչպիսի որ ալ արդիւնքները համապատասխան չեղան գործածուած միջոցներուն

մեծութեան և ձեռք առնուած միջնորդներու զօրութեան։ Եւրոպական շիումները, որ մարդորսական ճիգերու բնական հետեւանքն էին, նպաստեցին իրաւ՝ ազգին մէջ մտաւորական մակերեւոյթը աստիճան մը բարձրացնելու, բայց մեկնոյն արդիւնքը ձեռք ձգուած կ'ըլլար նաև առանց դաւանափոխութեան պայմանին, քանի որ զգացումներու հետքը հետէ զարգացումը և ժամանակին հորվումը և յարաբերութեանց յաճախութիւնը, բտական պիտի ըլլային անշուշտ միևնոյն նպաստաւոր արդիւնքն արտադրելու։ Ասոր մէկ փաստն ունինք Վարդան Բաղիշեցի վարդապետին ձեռնարկին մէջ, որ նոյն իսկ Ամյորդույ վանքին մէջէն գիտցաւ ուժղին զարկ մը տալ մտաւորական զարգացման ներքին գաւառներու մէջ։ Իւր աչակերտութենէն, Յովհաննէս Կոլտ և Յակոբ Նալեան Կոստանդնուպոլսոյ պատրիարքներ եւ Գրիգոր Շղթայակիր Երուսաղէմի պատրիարք, կրցան նշանաւոր ծառայութիւններ ընել և արդիւնքներ ցուցնել մեկնոյն նպաստակով, առանց իրենց ազգային եկեղեցւոյն անհաւատարիմ գանուելու։ Այս երախտաւոր անձերու շնորհիւն է, որ ութեւտաներորդ դարուն մէջ զգալի զարգացման արդասիքներ սկսան յառաջ գալ ազգային կեանքին և եկեղեցական բարեկարգութեան շրջանակներուն մէջ։

Վերջին էջերուն մէջ սկսանք առաջին տեղը տուած ըլլալ Կոստանդնուպոլսոյ պատրիարքութեան։ Այդ մասին մեր արդարացումը կը գանենք Թուրքիոյ պատրիարքութեան շարունակաբար ստացած կարեւորութեան, և Ամենայն Հայոց հայրապետութեան ակթոսին հետզհետէ նուազած կարեւորութեան մէջ։ Այն օրէն որ բազմակիւ և զօրաւոր գաղթականութիւն մը զեւեղուեցաւ Թուրքիոյ մայրաքաղաքին մէջ, և իրեն գլուխն ալ պատրիարքական ակթոս մը հաստատուեցաւ, Կոստանդնուպոլիս սկսաւ հայրութեան և ազգային շահերուն կեդրոն ըլլալ։ Մինչ միւս կողմէն տասն կաթողիկոսներ, որ Եղիազար Այնթապցիին յաջորդեցին, նահապետ Եդեսացիէն սկսելով (1691—1705)

մինչեւ Յակոբ Ե. Շամախեցի (1759—1763), յիշատակութեան արժանի նոր ձեռնարկ մը շունեցան, թէպէտ ամէնքն ալ Մայր աթոռին պայծառութեան փափաքողներ և դատակացութիւնին պահողներ եղան։ Սիմէոն Երեւանցի կաթողիկոսը (1763—1780) որ տասներէն ետքը նստաւ, դարուս մէջ Մայր աթոռին վրայ դանուող ամէնէն նշանաւոր դէմքն է։ Իւր անխոնջ աշխատասիրութիւնը արգասաւոր և օգտակար արդիւնքներ ունեցաւ, Էջմիածնի ստացութիւնները օրինաւոր կալուածագիրերով կարգադրուեցան, Մայր աթոռին սեփական իրաւունքները պաշտպանուեցան, ժառանգաւորաց վարժարանը բարեկարգուեցաւ, տպարան մը բացուեցաւ, և թղթաշինութեան գործարան մը հիմնուեցաւ։ Նոյն ինքն Սիմէոն եղաւ որ Ռուսական կառավարութեան հովանաւորութիւնն ստանալու համար առաջին յարաբերութիւնները հաստատեց, կաթողիկոսական դիւանատուն մը կազմեց օրինաւոր դիւանագրութիւններով, և ազգային եկեղեցւոյ տօնացոյցին մէջ ալ փոփոխութիւններ կատարեց, աւելի կանոնաւոր և հաստատուն ձեւ մը տալով անոր. որ թէպէտ սկիզբները դիտողութեանց տեղի տուաւ, բայց հետզհետէ տարածուեցաւ և ընդհանուր Հայ եկեղեցւոյ մէջ գործածական դարձաւ։

Ղուկաս Կարնեցի կաթողիկոսը (1780 - 1799) որ Սիմէոնի յաջորդեց, ջանաց անոր ձեռնարկները լրացնել և հաստատուն գործել։ Վեց եպիսկոպոսներէ բաղկացած մնայուն ժողով մըն ալ կազմեց Մայր աթոռոյ մէջ, իրեն կաթողիկոսական խորհրդակից, եկեղեցական գործերու միօրինակ և կանոնական ընթացք տալու նպատակով։ Նա ինքըն եղաւ որ Էջմիածնի մայր տաճարին ներքինն ալ զարդերով և նկարներով ճոխացուց։

Անգին Կոստանդնուպոլսոյ մէջ, Զաքարիա Փոպուզեան պատրիարքը (1773—1799), որ դարուս պատրիարքներուն շարքը կը փակէ, Սիմէոնի արժանաւոր մրցակիցն եղաւ իրեն բարեկարգիչ գործունէութեամբ։ Իւր ամէնէն

մեծ արժանիքն եղաւ եկեղեցականաց դաստիարակութեան  
և զարգացման զօրաւոր զարկ մը տուած ըլլալը: Ինքն ան-  
ձամբ ուսուցչութեան ալ կը զբաղէր կարող և յաջողակ  
աշակերտներ հասցնելու համար, որոնք պատրաստելէն ետ-  
քը թեմական վարչութեանց և ուսումնական հաստատու-  
թեանց գլուխը կը դնէր: Արմաշի վանական վարժարանը,  
որ այնչափ նշանաւոր պատրիարքներ և եպիսկոպոսներ  
տուած է Կոստանդնուպոլսոյ աթոռին, Զաքարիայի աշա-  
կերտներէն Բարթողիմէոս Կապուտիկեան և Պօղոս Վարա-  
զօշեան եպիսկոպոսներուն աշխատութեամբ յառաջ եկած  
հաստատութիւն մըն է:

## Ի.

## ԻՆՆԵՒՏԱՄՆԵՐՈՐԳ ԴԱՐԸ

Ղուկաս կաթողիկոս և Զաքարիա պատրիարք միեւ-  
նոյն տարին մեռած էին (1799), և իննեւտասներորդ դարը  
երկու աթոռներուն ալ պարապութեամբ և ընտրողական  
բուռն պայքարներով սկսաւ: Թէ Էջմիածնի և թէ Կոս-  
տանդնուպոլսոյ համար ընտրելիներ պէտք էին, և կարծես  
թէ Արեւմուտքը տակնուվրայ ընող խռովութիւնը Արեւել-  
քի վրայ ալ ազդեցութիւն կը ներգործէր, և հայերն ալ  
չիօթութեանց կը զբզգէր: Յովսէփ Արղւութեան, Գառիթ  
Ղօրզանեան և Գանիէլ Սուրմառեցի եպիսկոպոսներ Էջմիած-  
նի աթոռին համար կը մրցէին, և ամէն մէկն ալ  
իրեն կուսակցութիւնն ունէր: Թէպէտեւ առաջինը յաղթա-  
կան եղաւ և ընտրութիւնը յաջողցուց, բայց աթոռոյ ստա-  
ցութեան շանցած մեռաւ: Երկրորդը թէպէտ յաջողեցաւ  
աթոռը գրաւել, և քանի մը տարի ալ պահել, բայց վեր-

Հապէս մերժուեցաւ, և երրորդն եղաւ, որ օրինաւորապէս կաթողիկոսական աթոռ բարձրացաւ, թէպէտ ան ալ շատ երկար չապրեցաւ (1804—1809), բայց իւր օրով կրցաւ էջմիածինի մէջ խաղաղութիւն և հաշտութիւն հաստատել, և կանոնաւոր վարչութիւն սկզբնաւորել :

Կոստանդնուպոլսոյ մէջ ալ, անհաւատալի արագութեամբ պատրիարքներ իրարու տեղ կ'անցնէին: Գանիէլ Սուրմաուեցի, Գաւիթ Ղօրղանեան, Յովհաննէս Չամաչքրճեան, Գրիգոր Խամսեցի, և գարձեալ Յովհաննէս Չամաչքրճեան, իրարու յաջորդեցին, երեք տարիէ պակաս ժամանակի մէջ (1799—1802). բայց այս վերջինը կրցաւ աթոռի վրայ մնալ բաւական տարիներ (1802—1813), և այդ պարագայէն օգտուեցաւ պատրիարքարանի գործերուն մէջ կանոնաւորութիւն և օրինաւորութիւն մտցնել :

Իննեւտասներորդ գարունն էական և առանձնայատուկ նկարագիրն եղած է, ժողովրդական տարրին արուած՝ պատրիարքարանի գործերուն աւելի ընդարձակ մասնակցութիւնը, և աշխարհականներուն եկեղեցական գործերուն միջամտութեան կանոնաւորումը, յասկապէս ընտրուած և քուէի գրութեամբ կազմուած ժողովներու ձեւքով: Այդ բանին առաջին փորձը կատարուեցաւ, երբ փափաք կար հոռմէական կաթողիկոսութեան յարողներու կողմէ յուզուած վէճերուն վերջ տալ, հնարաւոր եղած կերպով մը Փնտտուածը երկու կողմին համար ընդունելի միջակ գրութիւն մը գտնայն էր, որով հնար ըլլար առաջն առնել այն գժտութեանց և հակառակութեանց, որք կը սպառնային վտանգաւոր ձև մը առնել: Գաղղիոյ կառավարութիւնը ձեռնարկէր գիրք մը առած էր, և կ'աշխատէր այս միջոցով ընդարձակել իւր ազդեցութիւնը Արեւելքի մէջ: Առաջին անգամ խառն յանձնաժողով մը կազմուեցաւ, որ պատրիարքարանի մէջ գումարումներ ունեցաւ (1810): Առաջինին ապարդիւն ելքէն ետքը՝ երկրորդ յանձնաժողով մը եւս կազմուեցաւ (1816), նպատակ ունենալով երկու կողմին աստուածարան-



ները գէժ՝ գէժի բանակցելու բերել, որ տարածայնութիւնները պարզուին։ Երեք տարի ամբողջ՝ վիճարանութիւնները շարունակեցին (1817—1820), առանց արդիւնք մը յառաջ թելելու, թերևս անհամաձայնութիւններ և հակառակութիւններ աւելի ալ զօրացան։ Երբոր կաթողիկոսութեան յարածներուն կողմը բաժնուելու ձգտումներով կը գործէր, ազգային եկեղեցւոյն հաւատարիմ եղողներ միութիւն պահել կը պահանջէին, բայց իրենց սկզբունքին վրայ զիջողութիւն չէին ընդուններ։ Այդ տարածայնութիւնները շարունակեցին սինչև որ, ռուսութուրք պատերազմէն ետքը (1829) Եւրոպական տէրութիւններու միջամտութեամբ, Օսմանեան կառավարութիւնը՝ Հայոց մէջ տիրող երկպառակութիւնը արմատաբի վերջացնելու համար, որոշեց բոլորովին անջատ ու անկախ հասարակութիւն կամ ազգութիւն (միլլէթ) մը կազմել Քարսովի անունի ներքև (1830), և այդ հասարակութեան մէջ անխտրարար համախմբել բոլոր հոռմէադաւան կաթողիկոսութեան հետեւող օսմանեան հպատակները, ինչցեղէ և ինչ ծէսէ ալ ըլլան։

Այդ առաջին անջատումը բողոքական տէրութիւններն ալ քաջալերեց, նոյն օրինակին հետապնդել իրենց դատանութեան յարողներուն համար։ Առաջին բողոքական քարոզիչը Կոստանդնուպոլիս հասած էր, կաթողիկ հասարակութեան կազմուելէն տարի մը ետքը (1831), և անմիջապէս կը սկսէր իւր քարոզութեամբ իրեն հետեւողները կազմակերպել։ Բողոքական քարոզութեան ձեռնարկը, շուտով կ'ընդարձակուէր գաղղոցական հաստատութիւններու և նիւթական նրպասաւորումներու շնորհիւ, որոնք խիղճեր գնելու միջոցներ կը գտնային. և այնչափ յաջողութիւն ու ընդարձակութիւն կը գտնէր, որ նոր անջատում մըն ալ իրականացաւ Հայկութեան մէջ, և նոր հասարակութիւն կամ ազգութիւն (միլլէթ) մըն ալ կազմուեցաւ պաշտօնապէս Բօքէսիան անունի ներքև (1847), որ կաթողիկ հասարակութեան նմանութեամբ, իւր մէջ կ'ամփոփէր ամէն բրօթէսփանթութեան

կամ բողոքականութեան յարողները, առանց ցեղի կամ ակզի խտրութեան, և առանց զանազան յարանուանութիւններու տարբերութեան: Այս երկու անջատուած մասերը, կաթողիկէ և Բրոթէսթան հասարակութիւնները, թէպէտ հիմնապէս հաւատոյ դասնութեան տեսակէտէն կազմուած էին առանց ցեղի կամ՝ ակզի տարբերութեան, բայց երկուքն ալ մեծամասնութեամբ Հայերէ կազմուած եղան, անջատուած Հայ հասարակութիւններ ըլլալու չափ: Մենք չենք վարանիր յայտարարել, որ եթէ այդ անջատումները մէկ կողմէն Հայութիւնը տկարացուցին, անոր մէջ ներհակ շահեր ստեղծելով և միութեան ոյժը կտրելով, միւս կողմէն անուղղակի կերպով արեւմտեան աշխարհի հետ յարաբերութիւնները ընդարձակելու առիթ ընծայեցին, երբ տակաւին այդ յարաբերութիւնները շատցնելու միջոցները նուազ էին:

Երբոր այդ բաժանումները կը կատարուէին Կոստանդնուպոլսոյ պատրիարքարանին շրջանակին մէջ, Էջմիածնայ կաթողիկոսութեան շուրջն ալ քաղաքական փոփոխութիւններ տեղի կ'ունենային: Պարսկական տիրապետութեան ներքեւ էր Հայաստանի այդ մասը և կը կառավարուէր խաներու ինքնազուխ իշխեցողութեամբ, որ երթալով բռնաւորական և անտանելի կը դառնար, և Հայերը իբրև կացութեան դարման սկսեր էին աչուրնին Ռուսոյ կայսրներուն դարձնել և անոնց պաշտպանութեան դիմել: Իբրև առաջին քայլ մը սկսեր էին հարստահարութիւններէ ազատելու համար խումբ խումբ Ռուսական տէրութեան կողմերը գաղթել: Բայց վերջէն աւելի արմատական դարման կարծեցին, նոյն իսկ Ռուսական տէրութիւնը հրախրել հիւսիսային Հայաստանի կողմերը, որք իբրև Կովկասեան երկիրներու յարակից՝ նոյն անունին ներքև կուտիլ սկսան: Յոյսէփ Արղութեան արքեպիսկոպոսը այդ գաղափարին սկզբնապատճառն ու մշակողն եղաւ, և այդ երեսէն Կասարինէ Բ. կայսրահայն (1762—1796) և Պողոս կայսեր (1796—1801) սիրելին

եղաւ, և մինչ իսկ իւր ազգատոհմին համար իշխանի պատուանունն ու արտօնութիւններն ստացաւ: Ռուսական տիրապետութիւնը հետզհետէ իւր յառաջխաղացումը շարունակեց, և իւր արչաւանքներն Հայաստան ալ հասան, և Երեւան ու Էջմիածին Ռուսական տէրութեան ներքեւ մտան (1828), և Հայ կամաւորներու գունդ մըն ալ այդ գործին օժանդակեց, ներսէս Աշտարակեցի արքեպիսկոպոսին հրամանատարութեամբ: Այդ առթիւ Նիկողայոս Ա. կայսրը (1825—1855) իւր խոստումները առատապէս ընդարձակեց, մինչեւ իսկ Հայերուն աչքին ինքնուրոյն իշխանութեան ակնկալութիւնը փափկեցուց, և այդ խոստումները երաշխաւորելու դիտմամբ, պահ մը Հայկական նահանգ սեռուն ալ տուաւ նոր տիրապետած գաւառներուն: Բայց այդ ամէնը քաղաքագիտական ճարտարութիւններ եղան և տիրապետութիւնը գիւրացնելու առաջնորդեցին: Երբոր տիրապետութիւնը լրացաւ ու հաստատուն ձեւ առաւ, Ռուսական կառավարութիւնը մինչև իսկ Հայոց կրօնական կամ հոգեւորական գործերու վրայ ալ ազդեցութիւն ունենալու ձեռք զբրկաւ: Այս նպատակով հրատարակուեցաւ Պալամէնիա կոչուած կանոնադրութիւնը (1836), յատկապէս Հայոց համար, որ կաթողիկոսական վարչութիւնն ու իրաւունքները պետականներու հետ յարաբերութեան մէջ դնելու ձեւին ներքեւ, բաւական ընդարձակ դուռներ կը բանայ քաղաքական իշխանութեան առջև, Թէպէտև այդ կանոնադրութեան մասին դիտողութիւններ եղան Ռուսիոյ, Թուրքիոյ, և Հնդկաստանի Հայերուն կողմէն, սակայն ազդեցութիւն չունեցան: Պալամէնիան մինչև այսօր իւր կատարեալ ազդեցութեան և կազմակերպութեան մէջ կը մնայ:

Նորէն Կոստանդնուպոլսոյ պատրիարքութեան գաւառաւոր, պէտք է գիտել տանք, թէ որչափ ալ պաշտօնապէս բացարձակ էր Կոստանդնուպոլսոյ պատրիարքներուն իշխանութիւնը, սակայն իրենք ալ գործնականապէս ենթարկուած էին Ամիրա կոչուած ազգային գլխաւորներուն

ազգեցութեան, որք սարգապէս դրամական աղնուապետութիւն մը կը կազմէին, և գլխաւորներ նկատուելու համար անկէ զատ ուրիշ փաստ կամ առաւելութիւն չունէին: Այդ գրութեան բնական հետեւանք եւ անբաժանելի արդիւնք եղող զեղծումները, զգացումներու զարգացումն եւ ժամանակին փոփոխութիւններն ալ վրայ գալով, եւ եւրոպիոյ՝ գլխաւորապէս Գաղղիոյ մէջ կրթութեամբ ուսումնական նոր սերունդ մըն ալ մէջտեղ ելլելով, նոր շարժում մը սկսաւ ազգային գործերուն ընթացքին մէջ, եւ հասարակութեան զանազան գասակարգներուն մէջ: Տնտեսական գործերու մասնակցութեան եւանդ մը երեւան եկաւ: Ասանց հետեւեցան պատրիարքարանի գործերուն համար յատուկ ժողովներու կազմութիւնը, եւ ժողովներուն ընտրողական գրութեամբ կազմուիլը աւանց գասակարգային տարբերութեանց: Ամենէն առաջ կազմուածն եղաւ սարգապէս ելեւմտական յանձնաժողով մը (1841): Աեկի ուշ կազմուեցան ընդհանուր վարչութեան համար կրօնական ժողով մը տասնուչորս եւ Գաղաքական ժողով մը քսան անդամներով (1847), որոնցմէ բղխեցաւ գաստիարակութեան գործերու յատկացումը: Աւսումնական խորհուրդ մը (1853), ժողովներու եւ խորհուրդներու կազմութիւնը ստիպողական գործուց կանոնադրութեան մը պէտքը, փոխադարձ ձեռնհասութիւնները ճշգրտելու եւ պաշտօնավարութեան կերպերը որոշելու համար, եւ այս նպատակով յորինուեցաւ Սահմանադրութիւնը (1860), իրը սզգային վարչութեան հիմնական օրէնք: Սահմանադրութիւնը Օսմանեան կառավարութեան պետական հաստատութեան ներկայացուեցաւ, բայց հաստատութիւնը աւանց գոտարութեան ձեռք չանցաւ: Երեք տարի տեղ բանակցութիւններէ եւ զանազան ժողովրդական ցոյցերէ ետքը միայն Բարձրագոյն Գուռը հաստատութիւնը սպառնալով յանգեցաւ եւ պաշտօնականութիւնը լրացուց (1863):

Այդ կանոնադրութիւններն ու կազմակերպութիւնները, որոնք մտաւորական յարաձուռ զարգացման արտա-

դրութիւններ են, եւ հասարակութեան մէջ տեղի ունեցած յաստիջակութեան արդիւնքը կը կազմեն, իրենք ալ իրենց կողմէ նոր շարժումներու եւ առաւելութիւններու սկզբնապատճառ եղանաւ Մտաւորական եւ կենցաղական կեանքին մէջ՝ ինքնարեւարար կատարուած հողմման օրէնք է, որ նոյն իսկ արդիւնքներ վտխաղարձարար ուրիշ արդիւնքներու պատճառ կը դառնան, եւ այսպէս զարգացման ասպարէզը կ'ընդարձակեն՝ Հայոց մէջ ալ տեղի ունեցած երեւոյթը՝ միեւնոյն օրէնքին դորձադրութիւնն էր։ Ինչպէս ամէն մարդկային ընկերութիւններ, Հայկականն ալ իւր մէջ բնական օրէնքին յարածուն եւ զարգացուն հորիւմները պէտք էր ունենար։ Այդ բնական ընկացքին համեմատ, իննեւտաներորդ դարը Հայոց կենցաղական շրջանակին մէջ զգալի բարեփոխման արտադրեց. վարժարաններ բազմապատկուեցան, եւրոպական համալսարաններու եւ բարձրագոյն ուսումնարաններու մէջ կրթուած Հայ երիտասարդութեան թիւը ընդարձակուեցաւ, նախնական կրթութիւնը ամէն կողմ տարածուեցաւ, առեւտրական եւ սեղանաւորական տուներ շատցան թէ Թուրքիոյ եւ թէ Ռուսիոյ մէջ, եւ Հայազգի անհատներ, իւրաքանչիւրը իւր գտնուած երկրին կամ որդեգրական հայրենիքին մէջ, կառավարական եւ գիււանագիտական եւ զինուորական մեծամեծ պաշտօններու հասան եւ բարձր գիրքերու տիրացան։

Հայ ազգին եւ Հայ եկեղեցւոյն մէջ եղած եւ շարունակ պահուած սերու յարաբերութիւնը կամ կապակցութիւնը, ազգեց եկեղեցւոյն վրայ ալ, որ իւր կողմէն մեծապէս օգտուեցաւ զգացումներու անկաշկանդ եւ լայնախոհ սկզբունքին մէջ։ Եկեղեցական վարչութիւնը աւելի կանոնաւոր եւ աւելի դորձունեայ եղաւ, կղերը հետզհետէ աւելի դաստիարակուեցաւ, կրօնական շինութիւններ բարեզարդուեցան, նախաատու թիւններ առատացան, արարողութիւններ աւելի շինիչ եւ ազգեցիկ եղան, քարոզութիւններ աւելի կանոնաւոր եւ աւելի օգտակար ոճ ստացան, եւ ամէն

ճիւղերու մէջ եկեղեցական գործողութիւնները խակական բարւոքումներ և զարգացումներ երեւան բերին: Այդ զգացումներու աստիճանաբար բարձրացումը, պէտք էր որ բնական կերպով Հայոց ձգտումները շարունակ դէպի լաւագոյնը մղէր, կենցաղական բարօրութեան կատարելագոյն վայելքին բաղձանքները աճեցնէր, և համարձակութիւն ազդէր քաղաքակիրթ աշխարհին լսեցնել տալու, թէ իրենք ալ օրինաւոր փափաք մը կը տածեն, որպէսզի արդեամբ և ճշմարտութեամբ մասնակցին այն բարւոքմանց և բարօրութեանց, զորս զարգացեալ քաղաքակիրթութիւնը մարդկութեան կը պատրաստէ և անոր կ'ընծայէ:

Խօսքի բնական ընթացքով այդ կէտին հասած ատեննիս, պէտք էր որ մենք անցնէինք բացատրել Հայ տարրին ընտիր ձիրքերը, թուէինք այն յաջողակութիւնները որոնց լուսաւոր փաստերը ցուցած է մարդկային գործունէութեան ամէն ճիւղերուն մէջ, և ճշդէինք այն դերն ու դիրքը զորս ունեցաւ ամէն ազգերուն հանդէպ որոց հետ ապրեցաւ, և զորս կրնայ ունենալ սպագային մէջ: Բայց այս պահուս մենք տակաւին կը զգուշանանք այդ տեսութիւններուն չըջանակին մտնել, և կը շարունակենք նախապէս ուրիշ կարեւոր կէտեր ալ բացատրել:

Միայն իրրեւ այս գլխուն կնիք, և իրրեւ մեր գաղափարներուն և տեսութեանց ամփոփում, պէտք է աւելցնենք, թէ քաղաքակիրթութեան և յառաջդիմութեան և ազատութեան այն մեծ շարժումը, որ բովանդակ Հայութեան, այսինքն Ռուսիոյ ու Թուրքիոյ ու Պարսկաստանի Հայերուն վրայ կը տեսնուի, արդիւնք է մեծաւ մասամբ իւր եկեղեցական դասակարգին ձեռքով սկզբնաւորուած գործունէութեան եւ ազդեցութեան:

# Վ.Ա.ՐԴԱՊԵՏՈՒԹԻԻՒՆԸ

ԻՍ.

ԳԱՒԱՆԱԿԱՆ ՍԿԶԻՈՒՆՔՆԵՐ

Եթէ մէկ կողմէն ստոյգ է, որ քրիստոնէութեան ամէն ճիւղերը և ամէն յարանուանութիւնները, իրենց արմատ կը ճանչնան Աւետարանը, նոր կտակարանի առաքելական թուղթերով իրացած և Հին կտակարանի գիրքերով ամբողջացած, միւս կողմէն ալ յայտնի է որ քրիստոնէութեան անունի ներքեւ եզոզ բոլոր հասարակութիւնները, ոչ միայն իրարմէ կը տարբերին նոյնիսկ էական սկզբունքներու մէջ, այլեւ վարդապետական խնդիրներու մասին յաճախ իրարու հանդէպ բացարձակ հակասութեան մէջ կը գտնուին: Բայց հակառակ այդ անհամաձայնութեանց և հակասութեանց, իրենցմէ ոչ մէկը կը դադարի միեւնոյն աւետարանը իրեն հիմնակէտ ընդունելէ, եւ ամէնքն ալ հաւատարապէս միեւնոյն ազբուրէն կը քաղեն ու կը հաստատեն զիրար հակասող վարդապետութիւնները: Երեւոյթը որչափ տարօրինակ, նոյնչափ ալ իրական է: Անոր պատճառն ալ պէտք է որոնել աւետարանին գրութեան կերպին ու ոճին մէջ: Աւետարանը պարզապէս սկզբնական կամ սաղմնական վիճակի մէջ կը ներկայէ իւր վարդապետութիւնը, և եթէ ներեալ է սովորական բացատրութիւն մը գործածել, աւետարանին պարունակած վար-

գապետութիւնը, նման է նախնական նիւթին, անզարդ եւ անհարթ նիւթին, որ ընդունակ է առնուլ այն ձևն ու կերպը զոր արհեստաւորը անոր կու տայ :

Ասով մէկտեղ հնար չէ, որ վարդապետութեան վերայ խօսուած ատեն, անհատական կամքին կամ հաւաքական քմահաճոյքին ազատութիւն տրուի, աւետարանին նախնական նիւթէն քաղել ու հռչակել վարդապետական նախադասութիւն մը, անձնական տեսութեան կամ մասնաւոր իմացողութեան համեմատ : Այս տեսակ ազատութիւն մը ներքի կարծեցին բողբաղականութեան վերջին բարեկարգիչները, սակայն անոնց բռնած ուղղութիւնը անզգայի կերպով զիրենք բացարձակ բանայնականութեան (rationalisme) տարաւ, այնպէս որ այսօրուան օրը հազիւ թէ հնար կ'ըլլայ իրենց վարդապետութեան մէջ յայտնեալ քրիստոնէութեան հետքերը նշմարել, կամ աւելի ճիշդը խօսիլ ուղերւով, իրենց վարդապետական դրութիւնը պարզապէս իմաստասիրական կրօնքի մը գաղափարին սկսաւ վերածուիլ :

Իսոյց մենք, Հայաստանեայց Ուղղափառ Եկեղեցւոյն հաւատարիմ հետեւողութեամբ, և նոյն եկեղեցւոյ հնաւանդ սկզբունքներուն անխախտ պահպանութեամբ, չենք կրնար այդ ազատական կարծուած ճանպուհ մէջ մտնել և անոր ուղղութիւնը ընդունիլ. և հաստատուն կը մնանք աւանդական և դրական գեանին վրայ. և չենք ուղեր հիմնուիլ՝ բայց եթէ օրինաւորապէս հաստատեալ իշխանութենէ ընդունուած սկզբունքներու վրայ, և անոնց համեմատ յառաջել մեր պատճառարանութեանց մէջ :

Ի՞նչո՞ր քրիստոնէութեան ճիւղերը և տարբեր յարանուանութիւնները երկու մեծ բաժիններու կը վերածուին : Ասոնցմէ մէկը կը կազմեն այն եկեղեցիները, որոնք նուիրապետութեան և ճիւղականութեան վրայ հիմնուած են, և ասոնք են բոլոր հին եկեղեցիները, այսինքն անոնք որ նախնական դարերու մէջ սկսած և հնագոյն ժամանակներու մէջ իրարմէ զատուած են : Ասոնցմէ գուրս եղողները



երկրորդ բաժինը կը կազմեն, որոնք նուիրապետութիւն չունին և ծիսականութիւն չեն բնդունիր. և ստոնք են վեչտասաներորդ դարու արեւմտեան կամ բողոքական բարեկարգութենէ ետքը կազմուած եկեղեցիները կամ քրիստոնէական յարանուանութիւնները: Այս խումբին մէջէն միայն Անգղիական կամ Եպիսկոպոսական եկեղեցին է, որ նուիրապետութիւն և ծիսականութիւն ունի, և պէտք է առաջին բաժինին պատկանող հնաւանդ եկեղեցիներուն շարքին մէջ դասակարգուի:

Արդ, այդ առաջին բաժինին պատկանող հնաւանդ եկեղեցիներուն սկզբունքին համեմատ, միայն տիեզերական ժողովներն են որ իշխանութիւն և իրաւունք ունին, աւետարանին կամ աստուածաշունչին սկզբնական սղորիւքէն քաղել, կամ նոյն նախնական նիւթէն կազմել, վարդապետութեան հիմնական կէտերը, և դանոնք դաւանական որոշ և ճիշտ բանաձեւերու վերածել: Ասկէ զատ, տիեզերական ժողովներու ալ ազատութիւն չէ տրուած աւանդութեան ցուցած զիժերէն շեղել, ոչ ալ կը ներուի որ իրենց աղիկամի ձգտումներուն հետեւին, կամ պարզապէս և բացարձակապէս իրենց անձնական հասկացողութեամբ կամ պատճառարանութեամբ եզրակացութիւններ կազմեն:

Մեր կարծիքը աւելի յստակ կերպով իմացնելու համար, պէտք կը զգանք յիշեցնել, թէ հարկ է տարբերութիւն մը հաստատել և իրարմէ որոշակի զատել դաւանութիւն և վարդապետութիւն կոչուած կէտերը: Փառանորթիւն սուրբ գիրքէն քաղուած եզրակացութիւն և ճշդութեամբ բացատրուած նախադասութիւն մըն է, յստակ և որոշ բաւերով: Եկեղեցիի կողմէն այս կերպով հռչակուած սկզբունք մը, պէտք է որ նոյն եկեղեցւոյ ամէն հաստացեալներուն կողմէ բացարձակ կերպով բնդունուի, չբնդունած պարագային նոյն եկեղեցւոյ ծոյէն դուրս մնալու պայմանով: Վարդապետութիւն ալ նմանապէս սուրբ գիրքէն քաղուած և ճշդութեամբ բացատրուած նախադասութիւն

մին է, որ պէտք է միշտ յստակ ըլլայ և աւանդութեան մը հետեւողութեամբ հաստատուի, որով իբր ողջամիտ և ճշմարիտ կամ ճշմարտանման սկզբունք կրնայ ընդունելի ըլլալ, բայց երբեք բացարձակ կերպով հաւատացուելու հարկ չպարունակեր, և շնորհունուած ատեն եկեղեցւոյ ծայէն մերժուած ըլլալու հետեւանքը շարտադրեր: Ուրիշ բացատրութեամբ, պաւսնութիւնը եկեղեցւոյ հեղինակութեամբ զօրացած ճշմարտութիւն է, վարդապետութիւնը դպրոցներու հեղինակութեամբ հաստատուած կէտն է: Դաւանութիւնը կը պատկանի հաւատքին և կրօնքին, վարդապետութիւնը կը պատկանի ուսման և աստուածաբանութեան:

Հնագոյն և հնաւանդ եկեղեցիներ միշտ տիեզերական ժողովներու հեղինակութեան գիմեցին, քանի անգամ որ պէտք ունեցան հաւատալիքի վերաբերեալ կէտի մը շուրջը ծագած գժուարութիւնը լուծելու և ճշմարտութիւնը հաստատելու: Սոյն առ կանոնը խղճամիտ կերպով ընդունուեցաւ և առանց բացառութեան պահուեցաւ դարերու ընթացքին մէջ, ամէն հնաւանդ եկեղեցիներէ:

Միայն Հռոմէական եկեղեցին համարձակեցաւ, իննև տասներորդ դարուն երկրորդ կէտին մէջ, տիեզերական ժողովներէն կապտել այդ բացառիկ իրաւունքը ու հեղինակութիւնը, և անոնք իւր պապին սեփականութիւնը դարձնել: Բայց այդ յափշտակութիւնը իրականացնելու և արդարացնելու համար ալ, պարտաւորուեցաւ նոյն այն ժողովական հեղինակութեան գիմել, զոր կը կապտէր և կը ջնջէր, որ է ըսել, թէ կերպով մը զայն բարոյական անձնասպանութեան բռնադատեց: Բայց այդ տարօրինակ գործին վրայ աւելի երկարելու պէտք չենք տեսներ:

Ընդհանրապէս ընդունուած է, թէ տիեզերական ժողովին վերագրուած և դաւանական հաւատալիքներ հաստատելու հեղինակութիւնը, կը բղիթի գլխաւորապէս այն աստուածային հովանաւորութենէն, որ անոր խոստացուած է. կամ ուրիշ բացատրութեամբ, այդ հեղինակութիւնը

Տիմուած է այն հոգեկան օժանդակութեան վրայ՝ որ Քրիստոսէ իւր եկեղեցւոյն ապահովուած է: Սակայն ուրիշ կողմէ, նոյն իսկ տրամաբանական տեսութեամբ ալ, կրնայ հաստատուիլ այդ հեղինակութեան ոյժը, Տիմուեղով աւանդութեան ընդհանուր տարածականութեան և ժամանակով մերձաւորութեան վրայ: Այդ պատճառով տիեզերական ժողովներու մէջ իբր հեղինակութեան փաստ, աւելի ներկայացուած եկեղեցիներու թիւն է որ նկատի կ'առնուի, քան թէ ներկայ անհատներու թիւը: Ասկէ կը հետեւի, որ երբ ժողովին ներկայ անդամները միեւնոյն եկեղեցւոյ կը պատկանին, եթէ հազարներով ալ ըլլան, միայն մէկ եկեղեցւոյ, և ոչ ընդհանուր եկեղեցւոյ աւանդութիւնը կը ներկայեն, և տիեզերական ժողովոյ հեղինակութիւն չեն կազմեր: Մինչ եթէ զանազան եկեղեցիներու ներկայացուցիչներ հաւաքուած ըլլան, եթէ թուով քիչ ալ ըլլան, ընդհանուր եկեղեցւոյ զանազան մասերուն կարծիքները կամ աւանդութիւնները կը ներկայեն, և տիեզերականութեան հեղինակութիւն կը կազմեն:

Միեւնոյն կերպով, եթէ ժամանակի մերձաւորութիւն կայ աւանդութեան սկզբնաւորութեան և անոր վրկայուելուն մէջ, վկայութիւնը կրնայ ոյժ մը ունենալ: Թէ ոչ, հնար է միթէ՞ որ տրամաբանօրէն և բանականօրէն մտածելով՝ իբրեւ վտահեյի և արժանահատատ վկայութիւն ճանչցուի, հազարինըհարիւր տարի առաջ տեղի ունեցած եղելութեան կամ տեսութեան վրայ, այնչափ ժամանակ ետքը ապրողներէ տրուած յայտարարութիւն մը:

ԻՒ:

### ՀԱՅ ԵԿԵՂԵՑՒՈՅ ԴԱՒԱՆՈՒԹԻՒՆԸ

Ըսինք արդէն, թէ տիեզերական ժողովներն են, որ հնաւանդ եկեղեցիներու ընդունած սկզբունքով, հաւատոյ

դասանութիւններ արտասանելու և վճռելու հեղինակութիւնը կը վայելեն Այդ սկզբունքէն ամէնէն աւելի օգուտ քաղել փորձած է Լատին-Կաթոլիկ կամ Հռոմէական եկեղեցին: Անոր կազմած եւ ընդունած տիեզերական ժողովները՝ թուով քսանի կը հասնին, սկսելով Նիկիոյ Առաջին ժողովէն, մինչեւ Վատիկանի ժողովը, իննեւտասներորդ դարուն վերջերը: Յոյն-Արթողոքս կամ Բիզանդական եկեղեցին միայն եօթը ժողովներ կ'ընդունի, և նոյն տեղէն սկսելով կը վերջանայ Նիկիոյ երկրորդ ժողովով, որ ութերորդ դարուն մէջ գումարուած է: Իսկ Հայոց եկեղեցին աւելի արմատական է այս մասին, և կ'ընդունի միայն առաջին երեք, այսինքն Նիկիոյ (325), Կոստանդնուպոլսոյ (381) և Եփեսոսի (431) ժողովները, որոնք հաւատարապէս ընդունուած են թէ Յոյներէն և թէ Լատիններէն: Հայ եկեղեցին ընտ տիեզերականութեան ոյժ և հեղինակութիւն չտար միւս չորս ժողովներուն, զորս Յոյներ և Լատիններ համաձայնութեամբ կ'ընդունին, և են Քաղկեդոնի (451), Կոստանդնուպոլսոյ Բ. (553), Կոստանդնուպոլսոյ Գ. (681), և Նիկիոյ Բ. (787) ժողովները: Նմանապէս չընդունիր ուրիշ տասուիրեք ժողովներն ալ, զորս միայն Լատիններ իրր տիեզերական կը ճանչնան, և են, Կոստանդնուպոլսոյ Գ. (889), Լատերանու Ա. (1123), Լատերանու Բ. (1139), Լատերանու Գ. (1179), Լատերանու Գ. (1215), Լուզդոնի Ա. (1245), Լուզդոնի Բ. (1274), Վիէննիոյ (1311), Կոստանդիոյ (1414), Փրորենտիոյ (1434), Լատերանու Ե. (1512), Տրիտենդոնի (1563) և Վատիկանի (1870) ժողովները: Պատմական յօդուածներուն մէջ յառաջ բերած ենք Քաղկեդոնի ժողովին շուրջը դարձած խնդիրները, և քանի որ Հայեր երեքէն անդին չեն անցած, միւս ժողովներուն նկատմամբ յատուկ խնդիրներ յազուած չեն:

Պէտք է խոստովանիլ թէ ամէն մի հաւատալիք իրեն անխափանցելի դաղանիքներովը կամ խորհուրդներովը, մարդկային իմացականութեան համար մտաւորական ծան-

բութիւն մըն է: Բայց քանի որ քրիստոնէական հաւատքը, զոր կը գաւանինք, այդպիսի զոհողութիւն մը կը գնէ մարդկային միաքին վրայ, պէտք է իրր մեծ խնամութիւն ճանչնալ, եթէ այդ զոհողութիւններ տարապարտ չեն բարդուիր և զեղծումներու դուռ չեն բանար: Հետեւաբար իրաւունք կ'ունենանք համարձակ հռչակել, թէ խոհական գործ մը չեն ըներ անոնք, որ առանց ստիպման եւ առանց օգտակարութեան գաւանական գաղտնիքներու բեռը կը ծանրացնեն, հաւատալիքներու թիւը կը բարդեն, և տիեզերական ժողովներու շարքը կ'երկարեն: Հարկաւ մէկ մը պիտի չգանուի, որ ուզենայ մեր այդ յայտարարութեան հակառակիլ, մանաւանդ ներկայ ժամանակիս մէջ, երբ հաւատք ու հաւատալիք գժուարին աագնապի շրջան մը կ'անցնեն:

Եթէ պէտք ըլլար Հայ և Յոյն և Լատին եկեղեցիներու ճանչցած տիեզերական ժողովներու, և հետեւաբար գաւանական և պարտաւորիչ հաւատալիքներու քանակները իրարու բաղդատել, և թուարանական տարազի կամ ձեխներքեւ ցուցնել, հնար էր հետեւեալ համեմատութիւնը կազմել.

ՀԱՅ: ՅՈՅՆ: ԼԱՏ: : 3: 7: 20

այս ձեւը յայտնապէս նպաստաւոր է Հայոց եկեղեցւոյն: Կը յուսանք որ մեծապէս ալ գնահատուած կ'ըլլար ամէն հիմնապէս և անկեղծ քրիստոնէականերէ, եթէ կատարելապէս ճանչցուած և ժառէն ուսումնասիրուած ըլլար եկեղեցաւէր անձերէ և եկեղեցական խնդիրներով զրազող մատենագիրներէ: Առիթ ունեցած ենք այդ մասին խօսակցութեան մտնել, գիտնական անձերու և դիւանագէտ եւրոպացիներու հետ, և անոնց կարծիքը ուզել Հայադաւանութեան, այսինքն է Հայոց եկեղեցւոյ հաւատքին չափաւորութեան վրայ: Ամէնքն ալ համամիտ գանուած են խոստովանելու, թէ գաւանական գաղտնիքներու և անթափանցելի հաւատալիքներու մէջ՝ լրագոյն է հնարաւոր չափաւորութեան կողմը երթալ: Այս վկայութիւնները բաւական են վստահացնելու Հայադաւան հաւատացեալը, թէ ամէն խղճամիտ և անկեղծ

մարդ պիտի գնահատէ Հայ եկեղեցւոյ ընդգրկած ուղղութիւնը:

Եթէ երբեք, անակնունեցի յաջողութեամբ մը հնար ըլլար, որ գլխաւոր հնաւանդ եկեղեցիներ իրարու հետ, թէ ոչ միաւորութեամբ և ձուլմամբ կատարեալ միութեան հասնէին, գոնէ մէջերնին փոխադարձ և համերայն հաշտութեան մը յանդէին, հարկաւ Հայ եկեղեցւոյ դրութենէն տարբեր գետին մը պիտի չկարենային գտնել, ցանկացեալ խաղաղութիւնը իրականացնելու համար: Մերձեցումներ ուրիշ կերպով չեն կրնար կատարուիլ, բայց թէ ամէնուն կողմէն ընդունուած և ինզորոյ նիւթ չեղած կէտերուն վրայ հիմնուելով, և համաձայնութեան համար հարկ եղած պայմաններուն մասին ամենանուազ թիւը ընդունելով: Այս կերպով միայն հնար կը լինի տարաձայնութեանց առիթ տուող կէտերը մէջտեղէն վերցնել:

Հայ եկեղեցւոյն ընդունած գաւանական հատտալիքներուն քիչութիւնը, պէտք չէ որ պատահական պարագայի, ոչ ալ անխորհուրդ պատահարի մը վերագրուի: Այդ բանը վարդապետական ուղղութեան մասին ընդունուած խոհական սկզբունքի մը հետեւանք է: Արդէն բացատրեցինք թէ տիեզերական ժողովներուն վերագրուած հեղինակութեան գլխաւոր հիմը, զանազան եկեղեցիներու համամիտ մերձաւորութեան վրայ հաստատուած է. և թէ այդ միաձայնութեամբ կը բացատրուի, ընդհանուր եկեղեցւոյ զանազան մասերուն իսկապէս և իրապէս համամիտ և համակարծիք ըլլալը: Իսկ այս համամտութիւնը գործնականապէս յայտնուեցաւ առաջին երեք ժողովներուն մէջ, որոնք 325՝ և 431 տարիներու միջոցին գումարուեցան, որ է ըսել քրիստոնէական եկեղեցւոյն յաղթական կացութեան յաջորդող դարուն ընթացքին մէջ: Այդ միջոցին բոլոր մեծ եկեղեցիները համամիտ էին իրենց տեսութեան մէջ, և համաձայն էին գաւանական կէտերը ըմբռնելու մասին: Հակառակ կարծիք ունեցողներ, թէպէտ բազմաթիւ ալ եղած

ըլլան, ինչ որ Արիանոսաց պարագային տեսնուեցաւ, անհատական տարածայնութիւններ ըլլալէ անդին չանցան, և երբեք ամբողջ եկեղեցւոյ մը մէջ տիրապետող եւ անկէ պաշտօնապէս ընդունուած դաւանութիւն չեղան: Պէտք է ևս նկատի առնել, որ այդ առաջին ժամանակամիջոցին ատեն, զանազան աթոռներու մէջ յառաջնութեան կամ փոխադարձ յարաբերութեան, կամ գերազոյն ազդեցութեան խնդիրներ չյուզուեցան: Այդ կացութիւնը հիմնապէս փոխուեցաւ երրորդ՝ այսինքն Եփեսոսի ժողովէն ետքը, երբ աթոռներ իրարու հանդէպ ներհակընդդէմ պահանջներ, և իրարու վրայ յաւակնոտութիւններ սկսան հանել. զի և նոյն իսկ դաւանական կերպարանի ներքև յուզուած խնդիրներու իսկական հիմը ասոնք կը կազմէին: Իւրաքանչիւր պատրիարքութիւն սկսաւ փոփոխակի իւր կողմէն ընդհանուր ժողովներ գումարել, միւս պատրիարքութեանց դէմ վճիռներ արձակել, և անոնց որոշումները մերժել: Այս եղաւ Քրիստոսի բնութեանց մասին յարուցուած խնդիրին ալ ընթացքը: Աղեքսանդրիոյ պատրիարքութեան ընդհանրութեամբ և պաշտօնապէս պաշտպանած վարդապետութիւնը, Հռոմէական և Բիզանդական պատրիարքութեանց կողմէ մերժուեցաւ. և ուր որ հոգեւոր ոյժը չբաւեց, Մարկիանոս կայսեր քաղաքական զօրութիւնը եկաւ խնդիրը լուծել: Կէս դար ամբողջ իրարու հակասական յայտարարութիւններ շարունակեցին Քաղկեդոնի ժողովին որոշումներուն և հեղինակութեան մասին, որ վերջիվերջոյ Յոյներուն և Լատիններուն չորրորդ տիեզերական ժողովը եղաւ: Առանց հիմնական պատճառի չէ՝ որ Հայոց եկեղեցին իրաւունք ունեցաւ Եփեսոսի ժողովը (431) իբր վերջին տիեզերական նկատել և առջեւ չանցնիլ, որովհետեւ անով վերջացաւ բոլոր գլխաւոր եկեղեցիներու համակարծիք համամտութեան շրջանը: Ասով կ'արդարանայ այն համոզումն ալ, թէ ընդհանուր եկեղեցւոյ համաձայնութիւնը, որ ճշմարիտ աւանդութեան հիմնակէտը կը կազմէ, Եփեսոսի ժողովէն ետքը

խանդարուեցաւ և ժողովներ իրենց հեղինակութիւնը կորսնցուցին :

Ուրիշ պատճառ մըն ալ, որ Քաղկեդոնի ժողովին որոշումը մերժելու առաջնորդեց, պիտի նկատուի նոյն իսկ որոշման առարկայ եզոզ խնդիրը: Ժողովական և դաւանական որոշումի մը առարկան պէտք է ըլլայ հաւատալիքի մը վճիռը, և ոչ թէ բացատրութիւնը: Երեք նախընթաց ժողովներ այդ կանոնին համեմատ գործեցին և վճռեցին Յիսուսի Քրիստոսի աստուածութիւնը, Հոգւոյն Սրբոյ աստուածութիւնը եւ Մարդեղութեան իսկութիւնը, որ է աստուածութեան և մարդկութեան միաօրութիւնը: Երեք ժողովներու վճիռներով լրացած էին հիմնական հաւատալիքները, որ քրիստոնէական կրօնքին իսկութիւնը եւ իւր էական խորհուրդները կը կազմեն, այսինքն, է Երրորդութիւն, Մարդեղութիւն եւ Փրկագործութիւն: Քաղկեդոնի ժողովը այդ ուղղութենէն չեղեցաւ, վճռական կէտերէն դուրս ելաւ, եւ ուզեց մարդեղութեան խորհուրդին կերպն ու սլայմանները բացատրել, եւ աստուածութեան ու մարդկութեան միաօրութեան եղանակը մեկնել: Արդ, ոչ մի պարագայի մէջ, դաւանական կէտի կամ հաւատալիքի մը բացատրութիւնը, նոր դաւանական որոշման մը առարկայ և նոր հաւատալիքի մը նիւթ չկազմեր: Բացատրութիւնները կրնան ուսումնասիրութեանց նիւթ դառնալ, և ոչ թէ դաւանական վճիռներու վերածուիլ: Վարդապետներ և դպրոցական դաստիարակներ և մեկնաբաններ պէտք է դրաղին անոնցմով, և ոչ թէ տիեզերական ժողովներ: Ասոնք կը վճռեն, անոնք կը բացատրեն: Երբեք պէտք չէ որ տիեզերական ժողով մը, դպրոցական մարմինի մը գերը վարելու զիջանէր: Քաղկեդոնի ժողովը՝ տիեզերական ժողովի որոշման յարմար առարկայ ալ չունեցաւ :



## ԻԳ.

## ՀԱՒԱՏՈՅ ՀԱՆԳԱՆԱԿԸ

Քրիստոնէութեան առաջին դարերէն սկսելով իրաքանչիւր եկեղեցի սովորութիւն ունեցաւ իւր դասանութիւնը պաշտօնական բանաձեւով մը բացատրել, որ Հանգանակ կամ Հաւատամք անունը ստացաւ : Լատին կաթողիկէ եկեղեցին իւր ծիսական պաշտամանց մէջ կը սրահէ համառօտ հանգանակ մը, որ Հանգանակ Առաքելաց անունով կը ճանչցուի սովորաբար . բայց ինքն ալ, իրր իւր դասանութեան ամբողջական ու պաշտօնական արտայայտութիւն չընդունիր զայն, և այդ կարեւորութիւնը չտար անոր Արեւմուտքի ժողովներ և պապեր ստէպ իրենց հանգանակին ձեռք զարկին, որպէս զի զայն համաձայնեցնեն այն նորանոր դասանութեանց, զորս հետզհետէ բարդեցին հաւատքին վրայ, իրենց պահանջկոտութեանց կամ յաւանութեանց պէտքին համեմատ : Մինչև իսկ ասկէ քանի մը տարի առաջ, 1870 ՚ին գումարուած Վատիկանի ժողովը, նոր բացատրութիւններ աւելցուց իւր հանգանակին վրայ : Բայց ամէնէն աւելի 1563 տարին վախուած Տրիտենդեան ժողովն եղաւ՝ որ աճեցուց ու ծանրաբեռնեց հաւատալիքներու կամ դասանական կանոններու ընդարձակութիւնը : Ինչչափ որ Հռոմայ եկեղեցւոյն մէջ աստուածարանական կամ դրպրոցական կարծիքներ կային, ամենքն ալ խստիւ հաւատալիքներու վերածեց, և նոյնչափ դասանական կանոններ կազմեց նշովքի սպառնալիքի ներքեւ հաւատալու բռնադատելով : Այնպէս որ Հռոմէագաւան անձ մը ամէն կողմէն պարզապէս կուտայ, չկրնար այսօր բաց կողմ մը գտնել՝ ուսկից կարենայ իւր անձնական կարծիքներուն անցք տալ, և ոչ ալ

ասպարէզ մը՝ որուն մէջ կարենայ իւր ուսումնասիրութիւնները կատարել, Բայց ինչ կ'ըսեմ: Այլ թէ ուսումնասիրութիւնը, այլ նոյն իսկ մտածումն ալ Հռոմէադաւանին արգելուած է այլևս: Նա պէտք է պատճառարանելէ հրաժարի, մինչև իսկ իւր իմացականութեան կիրառութենէն ալ զգուշանայ, որովհետև անհնար է իրեն որևիցէ կրօնական կէտի մը վրայ խորհրդածել, առանց իւր ճանպօն վրայ դաւանական կանոնի մը հանդիպելու, որ վերջնականաբար կը փակէ ուսումնասիրութեանց ասպարէզը: Պապական իշխանութեամբ դատապարտուած նախագասութիւններու վերջին ցուցակը (Syllabus), որ նպատակ ունի Արդիականներու (Modernistes) տեսութիւնները խափանել, այդ մասին ձեռք առած միջոցներուն գաղափրական է: Արդիականներու անունին ներքեւ կը դատապարտուին Հռոմէադաւան եկեղեցականութեան մէջ դանուոյ լուսագոյն անդամները և զիտնական անհատները, որոնք կը ջանան կերպով մը պատուել ժողովական կանոններով և պապական վճիռներով սեղմուած նեղ շրջանակը: Հնար է համարձակ յայտարարել, թէ պապական վերջին կոնգակը վճռականապէս հռչակած է եկեղեցւոյ և զիտութեան ապահարզանը:

Արդ, այդ երեւոյթներէն և ոչ մին չէր կրնար տեղի ունենալ Հայոց եկեղեցւոյն մէջ: Ստոյգ է, որ ան ալ ունեցած է ազգային ժողովներ, որոնց մէջ վարդապետական որոշումներ ալ տրուած են: Բայց Հայ եկեղեցին երբեք յաւակնութիւն չէ ունեցած՝ իւր որոշումներուն դաւանական հաստատիքի ոյժը տալ, և ոչ ալ իրր հերետիկոսներ և հերձուածողներ դատապարտած է այն եկեղեցիները՝ որ իրեն ընդունած վարդապետութեան չեն համակերպիր: Ամէն վարդապետական կէտեր, որոնք բաժանման գիծ մը կը դնեն Հայ եկեղեցւոյ և ուրիշ եկեղեցիներու մէջտեղ, մեր յայտարարութիւնը հաստատելու միմի փաստեր են, քանի որ երբեք ուրիշ եկեղեցիներու վրայ բռնանալու կամ յաւակնելու կերպեր գործածուած չեն:

Հայոց Եկեղեցին խեղապէս և տիրապէս տիեզերական ժողովներէն զատ, ուրիշ որեւէ մարմինի կամ՝ աստիճանաւորի վրայ իրաւունք չձանձնար դաւանական վճիռներ արձակելու, որ է ըսել թէ այդ իրաւունքը կը վերագրէ միայն այն մարմինին, որուն մէջ քրիստոնէութեան ամէն ճիւղերը կը միանան, և համամիտ ու համոձայն կը գտնուին յայտնեալ ճշմարտութեան մէկ՝ կէտին վրայ: Այդ համամիտ համոձայնութիւնը, այլեւս ճշմարտած չէ հինգերորդ դարուն մէջ սկսած պատահումէն այս կողմը. և պէտք է յայտնապէս ըսենք, թէ հնար ալ պիտի չըլլայ որ ասկէ ետքն ալ ճշմարտուի, քանի որ կը շարունակեն այն հակառակութիւնները՝ որոնց համար եկեղեցիները իրարմէ բաժնուած են:

Հայ Եկեղեցւոյ ընդունած հանգանակը, որ ծիսական պաշտամանց մէջ ալ կը դորձածուի, Աթանասեան խմբագրութիւնն է, որ Նիկիոյ ժողովին ժամանակ պատրաստուած է, և գրեթէ բացառապէս Մարդեգութեան խորհուրդին շուրջը կը դառնայ: Անիկայ է որ առանց փոփոխութեան և առանց յաւելածոյ նոյնութեամբ պահուած է մինչեւ հիմայ: Ասկէ զատ երկրորդ հանգանակ մըն ալ կայ, որ աւելի ուշ պատրաստուած է, և կը դորձածուի գլխաւորապէս ձեռնադրութեանց ատեն, և ընծայացուներ զայն պիտի արտասանեն բարձր աստիճաններ առնելէ առաջ: Այս երկրորդը առաջին հանգանակէն ուրիշ տարբերութիւն չունի, բայց եթէ որ միեւնոյն նախադասութիւնները, աւելի յստակ դարձուածով բացատրուած են, և գլխաւորապէս Յիսուսի Քրիստոսի բնութեանց պատկանող կէտին մէջ:

Այդ բացատրական բանաձեւը հարկ եղաւ՝ հերքելու համար եւտիքականութեան զրպարտութիւնը, որ կանուխէն Հայոց Եկեղեցւոյն գէժ՝ յորինուեցաւ անխորհուրդ պարզամտութեամբ, եթէ կամս որ շարամտութեամբ չէ: Գործածուած բացատրութեամբ Քրիստոսի վրայ կը խոստովանուի Միաւորեալ մի բնութիւն: Եւտիքէսի վարդապետութեամբ Քրիստոսի կը վերագրուէր երկու բնութեանց

չխոթուած թիւն և խառնակութիւն, որպէս զի Քրիստոսի վրայ անհատական միութիւն մը ճշմարտութիւն Ասոր հակառակ է Հայոց Եկեղեցւոյն դատանած միութիւնը կամ միասնակութիւնը, և կատարելապէս նոյն է Կիրեղեան կամ Եփեսոսեան բանաձեւին հետ, Մի բնութիւն Բանին Մարմնացելով: Եթէ Մարդեղութեան խորհուրդին մէջ երկու բնութիւնները, այսինքն աստուածութիւնն ու մարդկութիւնն, երկուութեան որևէ ձեւ մը պահած ըլլային, նոյն իսկ Յիսուսի շարչարանքն ու մահը, իրենց աստուածամարդկային կերպարանը կորուսած կ'ըլլային, և փրկիչ ործութեան խորհուրդին կը պակսէր իւր հիմնական զորութիւնը, լոկ մարդկութեան գործը դառնալով: Այս կերպով երեւան եկած կ'ըլլար Նեստորի վարդապետած երկուութիւնը, որ իրը մղբրութիւն մերժուեցաւ: Միութեան, կամ լաւ ևս միաւորութեան զանազան տեսակներուն մէջէն, անիկայ որ աւելի մերձաւոր կրնանք նկատել Քրիստոսի գերբնական միաւորութեան, անոր հետ բազդատելու և անիկայ բացատրելու համար, մարդուն վրայ տեսնուած հոգիի ու մարմնի միաւորութիւնն է: Արտճետեւ հակառակ հոգիի և մարմնի տարրերութեան, հնար չէ ուրանալ մարդկային բնութեան միութիւնը: Ըստ այսմ՝ Հայ Եկեղեցւոյ ընդունած և պաշտպանած Միաբնակութիւնը, Եփեսոսի ժողովին հաստատած միութիւնն է, և ոչ Եւտիքէսի վարդապետածը, որոնք էապէս կը տարրերին Եւտիքէսի անունն ալ պաշտօնապէս և հանդիսապէս կը նշուի Հայաստանեայց Ազգաբաժնի Եկեղեցւոյ կողմէն, Արիոսի, Մակեդոնի և Նեստորի անուններուն կարգին, և հնար չէ զայն իրր Եւտիքական ամբաստանել, առանց տգիտութեան մեղադրանքի ներքեւ իյնալու, եթէ շարամտութիւն ալ բսել չուզենք:

Հայ Ազգաբաժնի Եկեղեցւոյ, և Յոյն Արթողոքս Եկեղեցւոյ մէջ՝ երկուքը իրարմէ բաժնող տարրերութիւն ըլլալով, պիտի նշանակենք միայն Հայոց կողմէն Քաղկեդոնի ժողովին մերժումը, և հետեւաբար անկէ ետքը եկող ժո-

ղովներն ալ չճանչնայր : Մնացեալ դասնական կէտերու նկատմամբ երկու եկեղեցիներ կատարելապէս համաձայն են : Որովհետեւ պէտք է գիտնալ, որ եթէ Հայոց եկեղեցին Քաղկեդոնէ ետքը Յոյներու կողմէ դամարուած ժողովները չճանչնար, ոչ թէ նովին իսկ նոյն ժողովներու մէջ ընդունուած կէտերը մերժած կ'ըլլայ : Այսպէս երեք-Գլուխներու դատապարտութիւնը, որ հինգերորդ ժողովին մէջ որոշուեցաւ, և որ պարզ և յստակ վերադարձ մըն էր եփեսոսական վճիռներուն, յայտնապէս Հայ եկեղեցւոյ վարդապետութեան հաստատութիւնն եղաւ : Իսկ վեցերորդ ժողովին մէջ յուզուած Միակամեայց խնդիրը, նորէն յետագարձ մըն էր գէպի Քաղկեդոնական գրութիւնը : Եօթներորդ ժողովին մէջ որոշուած պատկերներու խնդիրը, աւելի ծիսական բնութիւն ունէր քան վարդապետական Հայոց եկեղեցին ալ, առանց մերժելու պատկերներու յարգութիւնը, զայն շատ սեղմ և ամփոփ շափի վերածած է : Արձաններ, այսինքն մարդակերպ անդրիններ, բոլորովին իսկ արգելուած են, հին կապալաչտութեան երեսոյթին ալ չճանչնալու համար : Նկարէն պատկերներուն և հարթաքանդակ պատկերներուն դալով, կը հրամայէ նախապէս զանոնք յատուկ օրհնութեան և միւսոնի օժման ենթարկել, որպէսզի որևէ արուեստակերտ և սովորական առարկաներէ զատուին, եւ այդ տեսանալը թե՛նէ ետքը միայն կ'արտօնէ եկեղեցիներու մէջ և խորաններու վրայ զետեղել : Հակառակ ուրիշ եկեղեցիներու հաստատեցանքներուն սովորական դարձած բարեպաշտութեան, Հայ եկեղեցւոյ հաստատեցելոց ներեալ չէ տուններու և ուրիշ բնակարաններու կամ հասարակաց տեղերու մէջ հոգեւոր յարգանաց առարկայ եզրղ պատկերներ զետեղել : որով որոշակի կերպով իրարմէ կը զատուին հոգեւոր յարգանքի և արուեստական զարդի առարկաները :

Գաւանական բացատրութեանց կամ բանաձեւերու վրայ ալ խօսելով, Հայոց եկեղեցին խղճաբար ճշդութեամբ անփոփոխ կը սրահէ նախկին և աւանդական ձեւերը : Այդ

պատճառով նա շնորհունիր Եւ յՈրդւոյ յաւելուածը, առանձնական դատաստանը, մաքրարանի (purgatoire) պատիժները, մահուանէ ետքը անմիջապէս երանաւէտ տեսութիւնը, զոյժացատիօսութեան դրութիւնը, ներողութիւններու ձեւակերպութիւնը, և պապական կոչուած իշխանութեան վարդապետութիւնը: Այդ ամէն նորութիւնները, որոնք Լատին կաթոլիկ եկեղեցին հետզհետէ աւելցուցած է, հետեւանք են ինչ ինչ նախին սովորութեանց կամ իրողութեանց արքուած քմահաճ և անտեղի մեկնութիւններուն:

Հայոց եկեղեցին, դաւանական կէտերու նկատմամբ իրրեւ կանոն կ'ընդունի՝ նուազագոյն չափին և անհրաժեշտ պահանջին սահմաններէն անդին չանցնիլ, և կը սիրէ խրատագոյն պահպանողութեան հաւատարիմ մնալ: Այն մեծ սկզբունքը, որ Արեւմտեան եկեղեցւոյ վարդապետներէն մէկը հռչակած է, բայց որ նոյն եկեղեցւոյ հետեւողներէն մուսցութեան տրուած է, Հայոց եկեղեցւոյն մէջ անխախտ և գործածական օրէնք եղած է: Միութիւն ի կարեւորս կանոնը անհրաժեշտ կարեւորին մէջ ամփոփուած է. Ազատութիւն յերկրայականս՝ իմաստին ամէնէն ընդարձակ առումով գործածուած է. և այդ երկու հիմնական կանոններով միայն հնարաւոր կը կարծէ ապահովել ընդհանուր եկեղեցւոյ մէջ և մասնաւոր եկեղեցիներու միջեւ քրիստոնէական սէրը, որ է Սիրելութիւն յամենայնի:

## ԻԳ.

### ՆԵՐՈՂԱՄՏՈՒԹԵԱՆ ՀՈԳԻՆ

Լատին կաթոլիկ եկեղեցին, որուն տարամերժիկ առանձնականութեան հոգին աշխարհաքարոզ է, իրեն իբր սկզբունք հռչակած է՝ աններողամիտ դրութեան յայտարար

բանաձեւը, թէ Արսաբոյ Հռովմէական Եկեղեցւոյ չիք յաւիտեանական վարկութիւն: Յոյն որթողօքս եկեղեցին ալ միւս կողմէն, մինչեւ իսկ կը մերժէ վաւերական ճանչնալ իրեն ընդունած ձեւերէն տարրեր կերպով մատակարարուած խորհուրդները, և այս պատճառով կրկնամկրտութեան եւ կրկնաձեռնադրութեան ծայրայեղութիւններու ալ կը դիմէ: Այնպէս որ այս երկու եկեղեցիները, որ իրենց սեփականած են ընդհանրական (catholique) եւ սիեզերական (œcuménique) մեծահնչիւն անունները, իրենց անկողար ընդարձակութիւնը ցուցնելու համար, իրենց սկզբունքով ալ անհատական սարսիակեալ չըջանակին մէջ ամփոփուած մնալու կը ստիպուին, երբոր իրենցմէ դուրս եղող բազմութեան հետ անհաղորդ կը մնան:

Հայոց եկեղեցին բնաւ այս տեսակ աններողամիտ հոգի մը չունի, և չընդունիր որ որեւիցէ մասնաւոր կամ ազգային եկեղեցի, որչափ ալ ընդարձակ ըլլայ, իրաւունք ունենայ իրեն սեփականեւ ընդհանրական կամ տիեզերական եկեղեցւոյ նկարագիրը: Հայոց եկեղեցին կը պնդէ ու կը պաշտպանէ, որ ճշմարիտ ընդհանրականութիւնը կը ճշմարտութի բոլոր այն եկեղեցիներու համախմբութեան մէջ, որոնք կը համաձայնին Միութիւն ի կարեւորս մեծ կանոնին չուրջը, և հաւատարապէս կ'ընդունին և կը դաւանին այն ճշմարտութիւնները որոնք քրիստոնէութեան հիմնակետերը կը կազմեն: Իսկ այս հիմնական ճշմարտութիւններն ալ Հայոց եկեղեցին ամէնէն նեղ չափին կը վերածէ, եւ իրրեւ կարեւոր չընդունիր, բայց եթէ առաջին երեք տիեզերական ժողովներու կողմէ արձակուած դաւանական վճիռները, որոնք արուած են այն միջոցին, երբ բոլոր գլխաւոր եկեղեցիներ իրարու հետ փոխադարձ սէր և հաղորդակցութիւն կը պահէին և քրիստոնէական միութիւն ունէին: Այս սկզբունքին զօրութեամբ և Հայոց եկեղեցւոյ դրութեամբ, այն ամէն եկեղեցիներ որ երբորդութեան և Մարդեղութեան և Փրկագործութեան էական դաւանութիւնները կ'ըն-

դռնին, ընդհանրական եկեղեցւոյ մէջն են, կամ որ նոյն է, տիեզերական եկեղեցւոյ մաս կը կազմեն, և հետեւաբար իրենց հաւատացեալները յախտե՛նական փրկութեան առաջնորդելու առաւելութենէն զրկուած չեն: Միեւնոյն տեսութեամբ այդ եկեղեցիները պէտք է իրարու մէջ անխափան պահպանեն և գործադրեն հաղորդակցութիւն ի նոզեւորակաւս դրութեան պահանջած յարաբերութիւնները, որով հոչակամ կ'ըլլան հաւատոյ և սիրոյ միութիւնը որ է նոյն իսկ Քրիստոսնէական միութիւն:

Ասոնցմէ դուրս մնացող վարդապետութեան կէտեր կրնան ընդունուիլ կամ մերժուիլ, թէ՛ մասնաւոր ժողովներու որոշմամբ, և թէ՛ եկեղեցւոյ վարդապետներու հեղինակութեամբ, առանց երբեք ընդհանուր միութեան՝ և բրիտաննէական հաղորդակցութեան փնաս մը պատճառելու: Արտհետեւ էական դատանութիւններէ դուրս եղող վարդապետական կէտեր, պարզապէս երկրորդական նկարագիր ունին, ինչպէս յաճախ ըսինք ու կրկնեցինք: Պարզ վարդապետական կէտեր չունին էական դատանութեանց ծանրակշռութիւնը, և կրնան առարկայ ըլլալ գոյրոցական դրութեանց և ազատ ուսումնասիրութեանց: Բաւական է որ հետազոտութիւններէ քաղուած եզրակացութիւններ, երեք առաջին սուրբ ժողովներէ վճռուած դատանութեանց հանդէպ հակառակեան մէջ չգտնուին: Միեւնոյն պատճառով մասնաւոր եկեղեցիներն ալ, որ տարբեր դրութիւններու կը հետեւին, այս պատճառով ընդհանրական եկեղեցւոյ միութեան շրջանակէն դուրս մնացած չեն ըլլար, ինչպէս որ իրաւունք ալ ունեցած չեն ըլլար, իրենց մասնաւոր տեսութիւնը կամ դրութիւնը կամ վարդապետութիւնը, հրամայական ու բռնադատիչ կերպով ուրիշներուն պարտաստիչ հաշակել:

Մենք կը կարծենք, թէ այս կէտերը բացատրելով և այս սողերը գրելով, որով Հայոց եկեղեցւոյն աստուածաբանական դրութիւնը և լայնախոհ ազատամտութիւնը կը



պարզենք, ճանապոյ մը բացած կ'ըլլանք քրիստոնէութեան ապագային համար: Թերեւս սուջի բերան յաւակնութիւն կարծուի մեր այս մտածմունքը, սակայն հարկաւ մեղադրելի չենք ըլլար, երբոր դիտուի թէ այդ գրութիւնը լիովին կը համապատասխանէ դարուս հոգիին և ժամանակին զգացումներուն: Այս դիտողութիւնն ալ շատ դիւրին է ամէն ուղղամիտ խորհողի, որ նախապաշարեալ կամ շահագիտական մտածումներ չունի: Ով որ անկաշկանդ կերպով կը դատէ, պէտք է խոստովանի, թէ այդ սկզբունքները կը կազմեն միակ եղանակը, որով հնար է Գրիստոսի աւետարանին յախտենական ժառանգութիւնը հաշտեցնել ներկայ դարուս ձգտումներուն հետ:

Չենք քաշուիր յայտարարել, թէ թոյլատու ներդամութեան և լայնախոհ ազատամտութեան հոգին, որ Հայոց եկեղեցւոյն ընդունած գրութեան հիմնակէտը կը կազմէ, յաճախ իրեն դէմ ելած և իրեն ֆնասակար եղած է: Որովհետեւ այդ գրութեան հետեւանքն եղած է այն յաջողութիւնը, զոր օտար եկեղեցիներու քարոզիչները զըտած են իւր հաւատացեալներուն մէջ, և որով մարդորսութիւնը ընդարձակուած է: Այսպէս եղած է ոչ միայն միջին դարուն ատենները, այլ և նոյն իսկ մեր օրերը: Պէտք չունինք կրկնել ինչ որ պատմական յօդուածներու մէջ գրեցինք, այսինքն է կաթողիկէ և բրոթէսթան քարոզիչներուն վերջին դարուն մէջ գտած յաջողութիւնը, և այդ յարանուանութիւններով անջատ հասարակութիւններ կազմակերպելը: Հայ եկեղեցւոյ հաւատացեալներուն ուրիշ գաւանդութեան անցնելուն դիւրութիւն տուողը եղաւ, նոյն իսկ իրենց ստացած կրօնական գաստիարակութիւնը. որով միշտ յարգ ու վարկ զգացած ու մշակած են ուրիշ եկեղեցիներու վարդապետութեանց հանդէպ: Հայադատանը իւր մանկութենէն սկսելով չէ լսած երբեք, որ իւր եկեղեցւոյն ծոցէն դուրս ապրող քրիստոնեան՝ հարկաւ յախտենական վրկութենէ զուրկ ըլլալու սահմանուած է. և ոչ ալ իրեն

ըսուած է թէ հանդերձեալ աշխարհի յաւիտենական պատիժներու դատապարտուած պիտի ըլլայ, եթէ իւր ազգային եկեղեցւոյն ծոցէն հեռանայ: Հայադատանը համոզուած է, որ իւր փրկութիւնը ապահովելու համար, բաւական է որ քրիստոնէութեան էական դատանութիւնը պահէ, և իւր գործերը բարի ըլլան, և իւր կեանքը համաձայն ըլլայ աւետարանին բարոյական պատուէրներուն: Քրիստոնէութեան գաղափարին այդ լայնախոհ ըմբռնումը, դիւրաւ համոզեց հայադատան հաւատացեալը, օտար դատանութեան եկեղեցիներուն անցնիլ, երրոր տեսաւ որ կրնար իւր արտաքին և նիւթական շահերը ապահովել կամ ընդարձակել, առանց իւր ներքին և հոգեւորական շահերը վտանգելու: Այդ ազատամիտ ըմբռնումն է, որ կը բացատրէ օտար եկեղեցիներու քարոզիչներուն ունեցած յաջողութեան գաղտնիքը, որ Հայ եկեղեցւոյ ծոցը շարունակ երկպառակութիւններ և անջատումներ դիւրացուց, և որ Հայուն միութեան և ամբողջութեան շինուածը վտանգեց: Չը կարծուի թէ Հայ եկեղեցին չգիտցաւ կամ չիմացաւ թէ օտարներու առջեւ դիւրութեանց դուռ բացած կ'ըլլայ: Նա լաւ գիտէր թէ ինչ հետեւանքներ, ինչ անախորժ և աղետալի հետեւանքներ, կրնային յառաջ գալ իւր թոյլատու ներողամտութեան սկզբունքներէն. այդ հետեւանքներուն փորձառութիւնն ալ ունեցաւ, բայց հակառակ գիտակցութեան և փորձառութեան, սիրեց հաստատուն մնալ աստուածաբանական լայնախոհութեան ու եկեղեցական ազատամտութեան սկզբունքներուն վրայ, զոր անխախտ և անփոփոխ պահեց, և պիտի պահէ ասկէ ետքն ալ: Իրեն համար արժանաւոր փառքի փայլուն անուն մը պիտի ըլլայ, եթէ երբեք իւր օրինակով և իւր սկզբունքով քրիստոնէական եկեղեցիներուն հաշտութեան ու մերձաւորութեան հնարաւոր միջոցը ցուցնէ, ինչ որ բողձալի էր իրր հաւանական նկատել:

## ԻԻ.

## ԵԿԵՂԵՑԻՈՅ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

Եկեղեցական պատմութեան մէջ ստուգուած կէտ մըն է, թէ եկեղեցւոյ խորհուրդներու թիւը եօթնի վրայ հաստատելը, շատ ոչ կատարուած իրողութիւն մըն է, երկատասաներորդ դարուն կէսին, և այս ալ Արեւմուտքի Իպրոցականներու (Scholastiques) ձեռքով, որ ամէն ճիգ թափեցին եօթն խորհուրդներու թիւը ամէնուն ընդունել տալու համար: Բայց ոչ նախնի սուրբ հայրեր և ոչ հին վարդապետներ եօթն թիւի մասին յիշատակութիւն ըրած չեն: Ամէնէն հիները՝ միայն երկու խորհուրդներու վրայ խօսած են, որոնք հետզհետէ աճած և մինչև տասներկու հասած են: Եօթը թիւը հաստատող ամէնէն հին պաշտօնական որչումը տրուած է Փլորենտիոյ ժողովէն, հնդեաստաններորդ դարուն մէջ: Հայերը այդ մասին առաջին տեղեկութիւնը ստացան Լատին քարոզիչներէն: Այս ծանօթութիւններ բաւական են հաստատել, թէ եօթը խորհուրդներու դրութիւնը պարզ վարդապետական կէտ մըն է, և ոչ դաւանական վճիռ: Հայերուն մէջ ալ կը գործածուի եօթն խորհուրդներու խօսքը, բայց անորոշ կերպով մը, որովհետև շատ դժուարութիւն կը զգացուի եօթը խորհուրդներ որոշակի համբել ուղուած ատենը: Վերջին օծում կոչուածը, Հայոց մէջ գործածական չէ եղած, և զայն Հայ եկեղեցւոյ մէջ ընդունիլ տարու համար եղած պատահական ջանքերն ալ, յաջող արդիւնք ունեցած չեն: Ամանց կարծիքը, որ հոգեվարքի աղօթքը իբր վերջին օծումին համար պատասխանող խորհուրդ մը կ'ուզեն ցոյց տալ, արժէք մը չկրնար ունենալ, քանի որ չկրնար խորհուրդի մը անհրա-

ժեշտ եղող պայմաններուն համապատասխանել, Այսչափն ալ բաւական է հաստատելու թէ եօթը խորհուրդներու դրութիւնը չկրնար Հայ եկեղեցւոյ կողմէն ընդունուած դաւանութիւն ըսուիլ: Ասով մեկտեղ, Լատիններու ընդունած եօթը խորհուրդներէն, վերջին օժումէն զատ, միւս վեցերը, Հայոց եկեղեցւոյ մէջ ալ դորձածուած արարողութիւններ են: Ասոնց մասին կարեւորագոյն տեղեկութիւնները կ'ամփոփենք հետեւեալ կերպով:

Մկրտութիւնը կը տրուի մանուկներուն, կատարելապէս և հորիզոնական դիրքով ջուրի մէջ ընկղմելով, բայց բռնադատիչ (force majeure) պարագաներու հանդէպ հեզմամբ տրուած մկրտութիւնն ալ վաւերական կ'ընդունուի: Գրոշմի կամ միւսոնի խորհուրդը կը մատակարարուի մկրտութեան հետ կից, նոյն ինքն մկրտիչ քահանային ձեռքով, և մկրտուած մանուկին անմիջապէս հաղորդութիւն ալ կը տրուի չրթնահաղորդ ձեւով, այսինքն է սրբազորձեալ մասը լեզուին դպցնելով: Ըստ այսմ երեք խորհուրդներ միասին կը մատակարարուին, և անոնց յարակցութեանց վրայ հաստատուած կը նկատուի մկրտուած ըլլալու լրումը: Այս պատճառով Հայ եկեղեցւոյ մէջ տեղի չունին, ոչ մեծնալէն ետքը առաջին հաղորդութիւն տալու, և ոչ ալ դրոշմը յապաղելով եպիսկոպոսներու կողմէ տրուելու արարողութիւնները:

Հաղորդութիւնը կը տրուի ամէն հաւատացեալի առանց տարիքի խտրութեան, և երկու տեսակներու ներքեւ, այսինքն է նշխարքին տեսակը գինիի տեսակին մէջ թաթախելով: Նշխարքը բազարջ հաց է, անխմոր հայտէ շինուած, բաւականաչափ թանձր, որ նոյն իսկ պատարագի օրը պիտի պատրաստուի քահանայի ձեռքով: Չեւր բոլորչի է, և վրան ախպ մը զարնուած է, խաչին նշանով և ինչ ինչ զարդերով: Գինին պիտի ըլլայ անապակ, այսինքն առանց ջուր խառնելու: Սրբազորձուած նշխարքը մէկ հատ միայն պիտի ըլլայ, և այս պատճառով պէտք է որ հաւանակա-

նարար հաղորդուելիք եղողներուն բաւելու չափ մեծ պատ-  
րաստուած ըլլայ : Հաղորդութեան մտեցողները , ուրի վը-  
րայ կանգուն կը ներկայանան բեմին առջև , և պատարա-  
ղիչ քահանայն անոնց լեզուին վրայ կը դնէ թաթախեալ  
նշխարքէն բաժնուած մասնիկ մը : Սովորութիւն է , այդ  
թաթախեալ մասնիկներէն քիչ մը պահել եկեղեցիներուն  
մէջ՝ հիւանդներուն և պատահար պատարագի ատենէն  
դուրս հաղորդուելու պէտք զգացողներուն համար : Այդ  
մասնիկները վայելուչ կերպով կը պահուին , խորանին ներ-  
սը կողմնակի դանուոյ խորհրդանոցին մէջ , աւանց յատուկ  
տապանակի և աւանց յատուկ վառած կանթեղի :

Ապաշխարութեան կամ խոստովանութեան խորհուր-  
դը կը կատարուի՝ ընդհանուր կերպով պատրաստուած բա-  
նաձեւի մը հետեւողութեամբ , որուն մէջ կարգու նշանա-  
կուած են հաւանական մեղքերը . խոստովանահայր քահա-  
նաները կը զգուշանան շատ մը աւելորդ մանրամասնու-  
թիւններ պրպտելէ , և մանաւանդ հարցաքննիչներու ոճով  
հարցուփորձներ ընելէ : Սովորաբար քանի մը օրերու միջոց  
կը արուի խոստովանութեան և արձակումի մէջտեղ , որ-  
պէսզի խոստովանողները այդ օրերուն մէջ ապաշխարու-  
թեամբ և պատշաճ հոգեւորութեամբ պատրաստուին հա-  
ղորդութեան մտենալու , ինչ որ տեղի կ'ունենայ արձա-  
կումէն անմիջապէս ետքը :

Կարգի կամ ձեռնադրութեան խորհուրդը կը կա-  
տարուի աջ ձեռքը վրան դնելով և իւրաքանչիւր աստիճա-  
նին յատուկ դորժիքները ձեռքը տալով : Քահանայական  
աստիճանները նախապէս չորս էին Արեւելեան եկեղեցիներու  
աւանդութեան համաձայն , բայց Խաչակիրներու ժամանա-  
կէն սոցին եօթնի բարձրացան Արեւմտեան սովորութիւննե-  
րու ազդեցութեան ներքեւ . միայն թէ կիսաարկաւազու-  
թիւնը Հայոց մէջ շարունակեց իրրեւ փոքր աստիճան նկատ-  
ուիլ , թէպէտեւ Լատիններու մէջ մեծ կամ սուրբ աստիճան  
կը նկատուի : Եօթն աստիճաններն ալ եպիսկոպոսներու կող-

մէն կը տրուին . եպիսկոպոսութեան աստիճանը կը տրուի կաթողիկոսէն՝ երկու եպիսկոպոսներու ընկերակցութեամբ . իսկ կաթողիկոսական աստիճանը կը տրուի տասուերկու եպիսկոպոսներէ : Միւռոնի օծումը կը տրուի քահանայութեան և եպիսկոպոսութեան և կաթողիկոսութեան աստիճաններուն , ճակատէն դէպի զպաթը բարձրացնելով օծուած աեղը : Վարդապետութեան աստիճանը , որ աստուածարանական մագիստրոսութեան համապատասխանող աստիճան մըն է , տուչութեան ատեն ձեռնադրութեանց կերպարանը կ'առնէ : Երկու աստիճաններու կը բաժնուի , փոքր ու մեծ , կամ մասնաւոր ու ծայրագոյն : Այս վերջինը եպիսկոպոսական աստիճանի համանման պատիւներ և առանձնաշնորհումներ կը վայելէր : Վարդապետութեան երկու աստիճաններն ալ կը տրուին ծայրագոյն աստիճան ունեցող եպիսկոպոսի ձեռքով : Տուչութեան արարողութիւնը բաւական երկար է և տասնուչորս ստորաբաժանեալ աստիճաններէ կը բաղկանայ , չորսը մասնաւոր և տասը ծայրագոյն վարդապետութեան համար : Իւրաքանչիւր՝ բաժանմունքն ալ մարդարէութիւններէ ու առաքելներէ ու աւետարաններէ ընթերցուածներ ունի , և շատ մըն ալ շարականներ :

Ամուսնութեան խորհուրդը Պուսկ անունով կը կոչուի , քահանայն է պաշտօնեայն , որ պակը կ'օրհնէ առաջնորդարանէ հրամանագիր ստանալով : Ամուսնարկածու մը կանոնապէս ընդունուած է , և կը վճռուի կաթողիկոսական եւ պատրիարքական իշխանութեանց կողմէ : Ամուսնութեան մը անվաւեր եղած ըլլալը կ'որոշուի՝ ընդհանրապէս ամէն գործողութեանց հասարակ եզրղ վաւերականութեան և օրինաւորութեան սկզբունքներով , աւանց պայմանադրական կամ կամայական պարողաններէ կախում ունենալու : Արդելիչ պատճառները կը մնան նոյն , ինչպէս որ հին ժամանակի ժողովներով տրուած են :

Ատոնք են խորհուրդներու նկատմամբ ընդունուած վարդապետական կէտերը : Իսկ նոյն խորհուրդներու նկատ-

մամբ պահուած բարեկարգական և ծխական կանոնները, կը թողունք յառաջ բերել անոնց յատուկ գլուխներու մէջ:

## ԻԶ.

### ՎԱՐԿԱՊԵՏՈՒԹԵԱՆ, ՃՇԴԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ոմանք ուզած են Հայ Եկեղեցին մեղադրել բնելով, թէ իւր վարդապետութիւնը բայտարելու համար հաստատ և որոշ բանաձևեր կամ պաշտօնական ճշգրտանութիւններ չունի, և թէ իւր վարդապետներն ալ և իւր վարդապետութեան գիրքերն ալ յաճախ իրարու անհամաձայն կը գանուին: Մենք պէտք չենք զգար հետազօտել, թէ մինչև ո՞ր աստիճան ստոյգ են այդ մեղադրանքները, և պահ մը կ'ընդունինք իսկ թէ ճշմարիտ ըլլան խօսուած առարկութիւնները: Բայց մեր այդ զիջողութիւնը, ոչ միայն Հայոց Եկեղեցւոյն վայելած և ներչնած յարգը չնուազեր, այլ ընդհակառակն փաստ մը կ'ստեղծէ հաստատելու այն լայնախոհ հոգին և աստուածարանական ազատամտութիւնը՝ զոր մենք պաշտպանեցինք: Քանիցս կրկնած ենք թէ իւր գաւանական հաւատալիքները բազմաթիւ չեն, թէ իւր վարդապետութեան ասպարէզը շատ ընդարձակ է, և թէ վարդապետական կէտերու շուրջը դարձող անհամաձայնութիւնները՝ չեն կրնար երբեք ճշմարիտ և իսկական միութեան փնտսել:

Փորձով գիտենք որ իւրաքանչիւր դարու հոգին եւ պատահական ձգտումները և ժամանակի պարագաները՝ որչափ ազդեցութիւն կը ներգործեն կարծիքներու և գրութիւններու, և առհասարակ հետազօտութեանց առարկայ եղող կէտերու վրայ: Եկեղեցական կարծիքներն ու վար-

դասպետական ուսումներն ալ, այդ ընդհանուր կանոնէն դուրս մնալ չէին կրնար: Ուզելով ալ չուզելով ալ, բոլոր եկեղեցիներու վերաբերող անձեր, հովիւներ, վարդապետներ, պաշտօնեաներ և հաւատացեալներ, ամէնքն ալ պատահականութեանց ազդեցութիւնը կրեցին, և եկեղեցւոյ վարդապետութիւնն ալ իրենց հետ մէկտեղ նոյն ազդեցութեան ենթարկուեցաւ: Անգամ՝ մը որ այդ սկզբունքը կ'ընդունուի, ալ զիւրին կ'ըլլայ եզրակացնել, թէ վարդապետական կէտերն ալ, որոնք ժամանակի ազդեցութեան ներքեւ նոր բարդութիւններով ծանրացան ու այլայլեցան, նոյնպէս ժամանակի ազդեցութեան ներքեւ կրնան ալ պատահական բարդութիւնները կորսնցնել ու թեթեւնալ ու զտուելով մաքրուիլ: Հետեւապէս իմաստուն և խոհական ուղղութիւն մըն է, ամեն կողմէն անցքերը չփակել, եւ բաց դուռներ թողուլ, ուսկից իրաց բնական ընթացքով պատահական յաւելումները դուրս ելլան: Այս է ահա Հայոց եկեղեցւոյ բռնած ընթացքը, և այս ընթացքը, մեր կարծիքով, պէտք է ողջունուի իբրև կրօնից փրկութեան գերագոյն միջոցը:

Կաւանութեան և վարդապետութեան մէջ տարբերութեան սկզբունքը՝ զոր հաստատեցինք, առաջինին անփոփոխութիւնը և երկրորդին փոփոխելիութիւնը՝ զոր բացատրեցինք, սրամարմնական եզրակացութեամբ մեզ կը յորդորեն բարձրարարաւ հռչակելու բաց դուռի դրութիւնը, որ է ըսել, մէկ կողմէն ամփոփել և նուազել դաւանութեան աւարկայ եղող կէտերը, և միւս կողմէն ընդարձակել վարդապետութեան կէտերուն նկատմամբ եղած ազատութիւնը: Այդ դրութեան զօրութեամբ եկեղեցին կրնայ պահպանել իրեն պէտք եղած անասան հաստատութիւնը, և չհարկադրուի հակառակորդ կանգնիլ մտաւորական զարգացման ձգտումներուն և անոր արդիւնքներուն: Կ'ազատի ևս զիտութեան թշնամի ըլլալու ամբաստանութենէն, և կը պարտաւորուին լռել անոնք, որ կը ջանան



եկեղեցին իրրեւ յետադէմ՝ դադափարներու պաշտպան կերպարանել :

Ստորոգը խօսելով, իրօք ալ այս ամբաստանութիւններուն պատճառ արուած է, շնորհիւ այն սխալ իմացուած նախանձայուղութեան, որով ուզուած է ամէն վարդապետական խնդիր դաւանութեան վերածել, ամէն կարծիք պարտաւորիչ որոշումներու ենթարկել, ամէն ուսումնասիրութիւն և հետազոտութիւն և փիճարանութիւն վճարար արդելու : Բայց ասիկայ Հռոմէական եկեղեցւոյ բռնած ճանպսն է, զիստորապէս Տրիտենդեան ժողովէն ասդին, որուն մէջ ամէն եկեղեցական խնդիրներ և վարդապետական կարծիքներ վճարար որոշուեցան, հաստատուեցան և հրամայուեցան նշովքի կապերով : Տրիտենդեան ժողովին սկսածը ամբողջացոյցին պապերը իրենց հրատարակած դաւանական ցուցակներով (syllabus), եւ Վատիկանի ժողովին անբացատրելի վճիռներով : Այնպէս որ այլեւս Հռոմէական եկեղեցւոյ վարդապետներն ալ հաստացեալներն ալ, պէտք է խորհրդածելու կարողութենէն իսկ հրատարին, և կուրօրէն հետեւին այն մտածումներուն զոր ունեցան վեշտասաներորդ դարու եպիսկոպոսներն ու աստուածաբանները :

Այս ըսելով մենք չենք ուղեր այդ եպիսկոպոսներն ու աստուածաբանները իրենց ունեցած կարծիքներնուն համար մեղադրել . անոնք իրենց երկրին և ժամանակին տիրող կարծիքներուն ու տեսութիւններուն արձագանդն եղան : Իրենց յանցանքը եղաւ միայն, իրենց կարծիքներուն եւ դադափարներուն դաւանական ձեւեր տալ, եւ իրենց ետեւէն եկողներուն դէմ մտածելու և խորհրդածելու եւ ուսումնասիրելու դուռները փակել : Անտեղի և յանդուզն չէր ըլլար կարծել, որ եթէ վեշտասաներորդ դարու մարդիկը դաւնային եւ մեր ժամանակին մէջ ապրէին, շատ տարբեր պիտի մտածէին, քան ինչ որ այն ատեն մտածեցին : Սակայն ձգենք այդ կէտը, եւ Հայ եկեղեցւոյ վրայ դառնանք :

Այն տարբերութիւններ որ Հայ վարդապետներու

գիրքերուն և հրատարակուած քրիստոնէական վարդապետութիւններուն մէջ աչքի կը զարնեն, ճիշդուճիշդ պարագաներու ազդեցութենէն և ժամանակներու փոփոխութենէն առաջ եկող բաներ են ։ Հայ եկեղեցին ալ, որչափ նախնական աւանդութեանց յարած ըլլար, չէր կրնար բոլորովին զերծ մնալ ժամանակներու պատահական ազդեցութենէն ։ Մինչև իսկ դժուարութիւն չենք զգար խոստովանելու՝ թէ Հայոց եկեղեցին ուրիշ եկեղեցիներէն շատ աւելի պատճառ ունէր ժամանակներու ազդեցութենէն այլայլութիւններ կրելու ։ Որովհետև նա, շատ դարերէ ի վեր, մէկ կողմէն իւր մեկուսացած գիրքին մէջ զուրկ էր այն նպատակով միջոցներէն՝ զորս յառաջագիտութիւնը մարդկային ընկերութեան կ'ընծայէր. և միւս կողմէն Արեւելքին մէջ տեղի ունեցած հարուածներուն և արկածներուն խաղալիք դարձած, ներհակընդդէմ՝ ազդեցութեանց ձեռք մնացած, և հակառակ ակնկալութիւններով օրօրուած, չուզելով ալ կը կրէր այդ ազդեցութեանց ներգործութիւնները ։ Իրօք ալ երբեմն յունական ազդեցութեան ետեւէն գնաց, երբեմն ալ լատինական ազդեցութեան հետեւեցաւ. երբեմն բռնութեամբ և զօրութեամբ ստիպուեցաւ, երբեմն ալ ակնկալութեամբ և յուսադրութեամբ հրապուրուեցաւ. և այս պատճառներով պարտաւորուեցաւ ընդգրկել կարծիքներ, ընդունիլ տեսութիւններ, գործադրել կերպեր, և որդեգրել սովորութիւններ, որոնք իրեն օտար էին ։ Շատ մը մանրամասնութիւններ, ոչ միայն օտար այլ և օտարախորթ, գրեթէ անզգայի կերպով սպրդեցան Հայ եկեղեցւոյ ծիսական սովորութեանց և վարդապետական տեսութեանց մէջ ։ Համարձակ կը յայտարարենք եւս, թէ վարդապետներ և եպիսկոպոսներ, և մինչև իսկ կաթողիկոսներ ալ գանուեցան, որ Հայ եկեղեցւոյ նախնական աւանդութեանց և սկզբանց հակառակ խօսեցան կամ գրեցին ։ Բայց ասանկներուն տեսութիւնները իրենց անձնականէն անդին չէին կրնար անցնիլ, և իրենց տարածայնութիւնը չէր կրնար

խախտել կամ փոփոխել Հայ Եկեղեցւոյ հիմնական դատաւորութիւնը, որ փոփոխելի կէտ մը չէ :

Հետեւաբար ինչ ինչ կարծիքներ, որ պահ մը ումանց կողմէ ընդունելի դատուեցան, կրնային ուրիշ աստիճաններէն ելլելու կողմէ հերքուիլ, առանց եկեղեցւոյ իսկութեան և դատանութեան դաշխու. քանի որ պարզապէս վարդապետութեան պատկանող կէտերէն անդին չէին անցնիր, որոնք ոչ էական են և ոչ անփոփոխելի : Շատ բնական է, որ անցած ժամանակներու ազդեցութեամբ դէպ առաջ փոփոխուած կէտեր, յետագայ ժամանակներու ազդեցութեամբ ալ դէպ ետեւ փոփոխուին : Այդ անսակ փոփոխութիւններ չեն արգելուր, որ եկեղեցւոյ էական իսկութիւնը միշտ միեւնոյն, և հիմնական գոյութիւնը միշտ անսասան մնայ և այնպէս ճանչցուի :

Այս է Հայ Եկեղեցւոյ նախընտրած կացութիւնը : Եթէ մօտէն հետազօտել ուզենք, պիտի տեսնենք որ ուրիշ եկեղեցիներ ալ իսկապէս հեռու չեն այդ ընթացքէն, ինչ ալ ըլլան իրենց պաշտօնական յայտարարութիւնները : որովհետեւ անոնք ալ բաւական փոփոխութիւններ ունեցած են իրենց ընթացքին մէջ : Սխալ կ'ըլլար կարծել որ Հռոմէական եկեղեցին ալ այսօր միեւնոյն ըլլայ, ինչ որ էր պաշտօնարայութեանց (investitures) և հաւատաքնութեանց (inquisitions) դարերուն մէջ : Իրաւ է որ ինքն հակառակը կուզէ պնդել, սակայն տիրապէս կրած է ժամանակին ազդեցութիւնը, և չափաւորած է իւր գործունէութիւնը, որով իւր խօսքը իւր գործին հետ հակասութեան մէջ կը դառնուի : Բայց յայտնի իրողութիւն մը՝ յայտարարութեամբ ուրանալու յամառութիւնը, իրականութիւնը չ'ենք, այլ միայն խիղճի դէմ գործողութիւն մը կ'ըլլայ, և հետեւաբար նոյն իսկ պաշտպանուած դատին ալ ֆրասակար կը դառնայ :

Անոնք են մեր բացատրութիւնները՝ Հայոց Եկեղեցւոյն և իւր վարդապետական բացատրութեանց դէմ յարուցուած մեղադրանքներուն ճատին : Մեր ջատագովութիւնը

լուսաւոր կերպով կը հաստատէ իւր քրիստոնէականել ազատամտութիւնը : Ասիկայ ալ այնպիսի սկզբունք մըն է, որ ցանկայի էր, որպէսզի ընդունուէր և գործադրուէր Քրիստոսի եկեղեցին ճշմարտապէս սիրողներուն կողմէն : Հայ եկեղեցւոյն մեկուսացած դիրքը՝ որուն մէջ դարերէ ի վեր կը գտնուի, և իւր խոնարհ ու համեստ կացութիւնը՝ որ պատահականութեանց հետեւանք է, չեն կրնար երբեք անոր դէմ իբր անկման փաստ գործածուիլ :

Ճշմարտութիւնը երբեք թիւի փաստով չհաստատուիր, և աւետարանն ալ կը վկայէ թէ հօս փոքրիկ է, որուն Հայրն երկնաւոր ճշմարտութեան յառանգութիւնը խոստացաւ և իւր արքայութիւնը տալ հաճեցաւ :

# ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

ԻԷ.

ՆՈՒԻՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

Հայոց Եկեղեցւոյ ընդունած ու պաշտպանած սկրզ-  
րունքներուն համաձայն, եկեղեցական զերազոյն իշխանու-  
թիւնը կը պատկանի տիեզերական ժողովներուն, ուր հա-  
ւաքուած ըլլան մասնաւոր եկեղեցիներու նախապետական  
մարմինները: Այդ իշխանութիւնը բացարձակ է գաւանդական  
խնդիրներուն համար. իսկ բարեկարգական խնդիրներ երկ-  
րորդական կարգի մէջ կը գտնուին: Հայ Եկեղեցին կ'ըն-  
դունի թէ ճշմարիտ տիեզերական ժողովներուն գաւանդ-  
ական վճիռները խստիւ պարտաւորիչ են մասնաւոր եկեղե-  
ցիներու համար, մինչ բարեկարգական կանոնները, որոնք  
զանազան եկեղեցիներու հաղորդակցութեանց, կամ եթէ  
ներեալ է այսպէս ըսել, միջեկեղեցակաւ յարաբերու-  
թեանց իբր հիմ կը ծառայեն, ընդունակ են իրենց գոր-  
ծադրութեան մէջ տարբերութիւններ կրել, տեղական եւ  
պատահական հանգամանաց համեմատ: Հայ Եկեղեցին կ'ըն-  
դունի եւ, որ մասնաւոր եկեղեցիներ կրնան տարբերիլ՝  
վարդապետական խնդիրներու մասին և գաւանդական կէտերը  
բացատրելու կերպին մէջ: Գործնականին գալով կը ճանչնայ  
թէ տիեզերական ժողովներու բարձր հեղինակութիւնը գոր-

ծագրուեցաւ միայն առաջին երեք սուրբ ժողովներու մէջ, և թէ անկէ ետքը առիթ չեղաւ նմանօրինակ հեղինակութիւն մը գործածելու, զանազան եկեղեցիներու միջև սկսած հակառակութեանց և բաժանմանց պատճառով: Չկարծեր որ այսուհետեւ ալ կարենայ այդ հեղինակութիւնը գործագրուիլ, քանի որ հաւանական շտեմներ տիրող անհաշտ հակառակութեանց վերջանալը:

Վատիկանի ժողովը հաւաքելու առիթը՝ Հռոմի եկեղեցին ընդհանուր հրաւերի ձեւակերպութիւնը ուղեց կատարել, անուշտ երեսօյթները փրկելու գիտումով. որովհետեւ հրաւերը օրինաւոր և կանոնական ըլլալու համար, պէտք էր որ ուրիշ եկեղեցիներու հետ բանակցէր, փիճաբանելի գլուխներու վրայ համաձայնէր, եւ համերաշխութեան գալու համար գետինը պատրաստած ըլլար: Ընդհակառակն, ճիշդն ըսել ուղելով, իւր հրատարակած հրաւերագիրը ուրիշ բան չէր, բայց եթէ ուրիշ եկեղեցիները բռնադատել իւր պահանջմանց առջեւ գլուխ ձռելու և իւր պայմաններուն առջեւ խոնարհելու: Հարկաւ այդ բռնուած ոճը՝ անկեղծ և խղճամիտ հաշտութիւն և համերաշխութիւն պատրաստելու նպատակ չունէր, և ոչ ալ այդ նպատակին կրնար ծառայել:

Պատմական յօդուածներու մէջ՝ փիճակներու կազմութեան և իրաւաստութիւններու ծագման վրայ ըսածն իսլաացնելու համար, պէտք է գիտել տանք, որ զանազան գաւառներու եկեղեցիներ իրարու մօտենալով ազգային կամ պատրիարքական աթոռներ կազմեցին. և թէ այդ մերձեցումները արդիւնք եղան պարզապէս երկիրներու քաղաքական կազմակերպութեան: Յունահռոմէական աշխարհին մէջ կազմուած երեք պատրիարքութիւնները, կը համապատասխանէին ճշդիւ Հռոմէական կայսերութեան մէջ տիրող մեծ բաժանմունքներուն: Հռոմ, կայսերութեան մայրաքաղաքը, վարչական տեսակէտէն կեդրոն էր բոլոր Արեւմուտքի նահանգներուն: Պտղոմեանց և Ալեքսիեանց թա-

դատութիւնները, որ քրիստոնէութեան սկզբնաորութենէն շրջ առաջ Հռոմի կայսերութեան միացած էին, իրենց նախնական կազմակերպութիւնը պահած, և մեծ բղէխութեանց վերածուած էին, իրենց կեդրոն ունենալով Աղեքսանդրիա և Անտիօք՝ դադարեալ թագաւորութեանց մայրաքաղաքները: Այս երեք մասերու բաշխումն էր որ ծագում տուաւ երեք պատրիարքութիւններ հաստատելու յիշեալ երեք քաղաքներու մէջ, որք են Հռոմ, Աղեքսանդրիա և Անտիօք, մին միւսէն բախուած, ինքնուրոյն և անկախ:

Երեք մեծ բաժանումներէն զատ, երեք ալ փոքր բղէխութիւններ կային, նոյնպէս դադարեալ թագաւորութեանց սահմաններով կազմուած, որք են Պոնտոս, Ասիա և Թրակիա, որոնց կեդրոններն էին Կեսարիա, Եփեսոս եւ Հերակլիա: Այդ բաժանումքներուն հետեւողութեամբ ալ՝ երեք եքսարքական կամ արքեպիսկոպոսական աթոռներ կազմուեցան յիշեալ երեք քաղաքներուն մէջ, որք իրաւաստութիւն ունէին նոյն փոքր բղէխութեանց սահմաններուն մէջ գտնուող մետրապոլտութեանց վրայ: Բայց այս երեք աթոռները, իրենց անկախ և ինքնուրոյն զիրքը կորսնցուցին երբոր Բիզանդիա՝ Կոստանդնուպոլիս եղաւ, և կայսերութեան կեդրոնը հոն փոխադրուեցաւ, և այս պատճառով նոր պատրիարքութիւն մը ստեղծուեցաւ այն տեղ, երեք եքսարքութեանց մետրապոլտութիւնները միացնելով և եքսարքական իրաւաստութիւնները ջնջելով:

Չորրորդ պատրիարքութիւն մըն ալ հաստատուած էր արդէն Երուսաղէմի մէջ, բայց ասիկայ պարզապէս Սուրբ Բաղաքին պատուոյն համար եղած էր Նիկիոյ ժողովին որոշմամբ, որ այս նպատակով Անտիօքի պատրիարքութեան տասնուչորս մետրապոլտութիւններէն երկուքը, Առաջին Պաղեստինը և Երկրորդ Պաղեստինը, զատած ու Երուսաղէմի պատրիարքութեան սահման կազմած էր:

Ընդհանրապէս կը կարծուի թէ Արեւելեան չորս

պատրիարքութիւններ հաստատուեալս Յունական եկեղեցւոյ մասեր ըլլան, սակայն ողիղ տեսութիւն մը չէ։ Կոստանդնուպոլսոյ պատրիարքութիւնն է միայն որ Յոյներուն ազգային եկեղեցին կը կազմէ։ Անտիօքի պատրիարքութիւնը Ասորոց ազգային եկեղեցին է, ինչպէս Աղեքսանդրիոյ աթոռն ալ Եգիպտացոց ազգային եկեղեցին է։ Նոյն կերպով Երուսաղէմի պատրիարքութիւնն ալ Պաղեստինացոց յատուկ ազգային եկեղեցի պէտք է ըսել։ Մակեդոնական տիրապետութիւնը մեծ ազդեցութիւն ունեցած էր իրեն նուաճած երկիրներուն կերպարանը այլապէս, և Ասորիք ու Եգիպտացիք հելլենական կերպարան մը զգեցած էին. բայց եղածը միայն արտաքին, լեզուի եւ զարդացման եւ սովորութեանց փոփոխութիւն էր միայն, բնիկ տարրը իւր ինքնութիւնը չէր փոխած, և ազգային զգացումները միշտ կատարեալ ու կենդանի կը մնային թէ Ասորոց և թէ Եգիպտացոց մէջ։

Այն քաղաքական պարագաները, որոնք Յունահռոմէական աշխարհին մէջ պատրիարքական աթոռներու կազմակերպութեան առաջնորդեցին, միւս կողմէն պատճառեղան ինքնուրոյն և անկախ աթոռներ կամ պատրիարքութիւններ ստեղծելու կայսերութեան սահմաններէն դուրս ելող երկիրներուն մէջ, որոնք առաքելական քարոզութիւն ստացած էին, և որ քրիստոնեայ հասարակութիւններ կազմուած էին։ Այսպէս եղան Հայաստան, Պարսկաստան և Եթովպիա։

Պարսկաստանի եկեղեցին, որ Ա. Շմառն կամ Սիմոն առաքելային քարոզութեամբ սկստ, իրեն յատուկ աթոռը ունեցտ, որ Պարսից կամ Տիգրանի կամ Սելեուկիոյ անուններով յիշուած է։ Այդ աթոռին յաջորդութիւնը պահուած է այժմ Քաղզէացոց կաթողիկոսներուն մէջ, որ Բարեւոնի պատրիարք ալ կոչուած են իսկ Եթովպացոց աթոռը, որուն սկզբնաւորութիւնը Ս. Մատթէոս աւետարանիչին կը վերագրուի, այժմ ընդհատած կը գանուի, և Աղեքսանդրիոյ



պատրիարքութեան ենթարկուած է : Հայոց աթոռին վրայ նոր ըսելիք չմնար, պատմական յօդուածներուն մէջ բաւական բացատրութիւն տուինք : Միայն աւելցնենք, որ աթոռներու իրաւասութեան մասին հասանդ տեղագրական կանոնը պահուած ատեն, Հայոց աթոռին իրաւասութիւնը կը սահմանափակուէր Մեծ Հայքի նահանգներով, որոնք այն ատեն Հայոց թագաւորութեան ալ սահմանները կը կազմէին Իսկ այն նահանգները որ Փոքր Հայք անունով ալ ճանչցուած են, այն ատեն Պոնտոսի բղեչխութեան մաս կը կազմէին և այս պատճառով Կեսարիոյ և քսարքութեան ենթարկուած էին, և յետոյ անցան Կոստանդնուպոլսոյ պատրիարքութեան : Իսկ միւս կողմէն Վիրք եւ Աղուանք, որ քրիստոնէութիւն ընդունած ատեննին Հայոց թագաւորութեան ներքեւ կը գտնուէին, Հայոց պատրիարքական աթոռին ալ ենթարկուած մնացին, իրենց համար յատուկ ազգային և քսարքական կամ փոքր կաթողիկոսական աթոռ մը անենալով, Հայոց պատրիարքին կամ մեծ կաթողիկոսին գերիշխանութեան ներքեւ :

Տեղագրական իրաւասութեան սկզբունքը, խափապահուած էր բոլոր եկեղեցիներու նուիրապետութեանց կողմէն, քրիստոնէութեան առաջին դարերուն մէջ, Այդ սկզբունքով իւրաքանչիւր վիճակի մէջ մէկէ աւելի եպիսկոպոս չէր կրնար գտնուիլ, և ամէն հաստատեալ քրիստոնեայ, ինչ ազգէ կամ ծէսէ ալ ըլլար, պէտք էր հնազանդէր տեղական եպիսկոպոսին, և անկէ ընդունէր բոլոր իւր հոգեւորական պէտքերը : Բայց այդ հնաւանդ կանոնը խախտեցաւ, երբոր մասնաւոր եկեղեցիներ իրարմէ բաժնուեցան, հաւատոյ և սիրոյ միութիւնը վերջացուցին, և սկսան զլանալ այն ամէն գործողութիւնները որ նախորդակցութիւն ի նոյնուրեւ անունի ներքեւ կը պարունակուին : Այս պատճառով իւրաքանչիւր եկեղեցի պարտաւորուեցաւ հոգ տանիլ, իւր սահմաններէն դուրս գտնուող իւր հաստակիցներուն համար եկեղեցական պաշտօնեաներ, քահա-

նաներ և եպիսկոպոսներ յատկացնել՝ անոնց գտնուած տեղերը, և այսպէս միեւնոյն վիճակի մէջ ոչ միայն անջատ քահանայութիւններ, այլ և տարբեր եպիսկոպոսական ավտուներ սկսան գտնուիլ՝ իւրաքանչիւր խումբի հաստարին ու ձէսին տարբերութեան համեմատ : Այդ սովորութիւնը աւելի մեծ ընդարձակութիւն ստացաւ Խաչակիրներու ատեն . երբոր Լատին կաթողիկէներ սկսան Արեւելքի մէջ ավտուիլ, և իրենց նուաճած քաղաքներուն մէջ Յոյն կամ Ասորի եպիսկոպոսներու քով, մէկմէկ ալ Լատին եպիսկոպոսներ հաստատեցին : Այնուհետեւ հնասանդ կանտներ, որ տեղագրական իրաւասութեան սկզբունքը իշր նուիրական կը յարգէր, բոլորովին իսկ մտացութեան տրուեցաւ . և ամէն մասնաւոր եկեղեցի, որ վարդապետութեամբ կամ ձէսով կը տարբերէր, սկսաւ իրեն համար զատ եպիսկոպոսարան և զատ պաշտօնէութիւն հաստատել . և ասկէ առաջ եկաւ մեր օրերը տեսնուած տարօրինակ երեւոյթը, որ միեւնոյն թեմի մէջ մինչև եօթը կամ ութը եպիսկոպոսներ կը գրանուին, որ միեւնոյն ավտուը կը գրաւեն և միեւնոյն ավտուի անունը կը կրեն :

Քաղաքական ազդեցութենէ զատ ուրիշ պարագայ մըն ալ, որ առիթ տուած է եկեղեցական իրաւասութեանց կազմուելուն կամ նոր ձեւեր ստանալուն, հոգեւորական աշխարհակարութիւնն է : Այն երկիրները, որոնք առաքելական դարուն մէջ քրիստոնէութեան դարձած չէին, եւ յետագայ դարերու մէջ զայն ընդունեցան՝ արդէն գոյութիւն ունեցող եկեղեցւոյ մը ձեռքով, սոյն այս եկեղեցւոյն իրաւասութեան ներքեւ մասն, իբրեւ հոգեւորապէս նուաճեալ երկիր : Այս սկզբունքով Կոստանդնուպոլսոյ եկեղեցին իւր իրաւասութեան ներքեւ առաւ Պարթանեան երկիրները եւ Ռուսաստանը : Նոյն սկզբունքով Հռոմի եկեղեցին իւր իրաւասութիւնը տարածեց Փերմանիոյ, Բրիտանիոյ և Սկանդինավիոյ վրայ, և աւելի ետքն ալ Ամերիկայի և Ծալլադոյն Արեւելքի վրայ : Ասկէ յառաջ

եկաւ Հոռոմի պատրիարքութեան կամ Լատին եկեղեցւոյ ընդարձակ ծաւարումը և իւր իրաւաստութեան տարազայինն տարածումը աշխարհի մէջ, որ զոչոք քայեց իւր պատրիարքութեան ներքեւ եղող Արեւմտեան ազգերուն կենցաղական զարգացման և քաղաքական ազդեցութեան յառաջանալուն և ընդարձակուելուն հետ: Բայց միւս կողմէն իշխանութեան և յաջողութեան ընդարձակուիլը, քմահաճոյքներու ու զեղծումներու ալ շատնալուն պատճառ եղաւ, որուն հետեւանօք ծագեցաւ միջին դարու բարեկարգական շարժումը, որ է նորաշանդ բողոքականութիւնը, որ Լատին եկեղեցւոյ մի լաւ բաժինը անկէ անջատեց և Հոռոմի աթոռին իրաւաստութենէն դուրս հանեց: Նոյն պատճառով նոր բաժանումներ ալ խիթալի են տակաւին նորանոր ճնշումներ, որք վերջին ատեն սկսան գործուիլ Արդիական կոչուածներուն վրայ, ամենայն հաւանականութեամբ Հոռոմի եկեղեցիէն նշանակելի անջատումներ պիտի արտադրեն:

Անցեալին տուած փորձառութեան հակառակ, պապութիւնը ետ չկենար մտաւորական շրջանակի և քաղաքական և կառավարական ասպարէզի մէջ ալ իւր միջամտութիւնները շարունակել, և զայն գործածել իրմէ կախում ունեցող հասարակութեանց վրայ: Առանց արգիւնքին խոհական կառաջատուութեան՝ կը ջանայ շարունակ սեղմումներ գնել իրեն ենթարկեալ հողերոյ իշխանութեանց վրայ, և հետզհետէ կը ջնջէ, Գազդիական, Հունգարական, Ամբրոսեան, Մոզարարական և Արեւելեան եկեղեցիներու հաւանդ իրաւունքներէն և առանձնաշնորհութիւններէն պահուած մնացորդները, այնպէս որ թեմակալները իրենց կանոնական իրաւունքներէն մերկացնելով՝ պարզ փոխանորդներու փոճակին կ'ենթարկէ:

Որչա՛փ հեռի են իրարմէ, այս ընթացքը և Յոյն որթողութիւնը եկեղեցւոյ սկզբունքը, որ կ'ընդունի և կը սորվեցընէ, թէ որեւէ ազգ կամ ժողովուրդ՝ որ քաղաքական անկախութիւն կը վայելէ, նովին իսկ կը վայելէ ինքնուրոյն

եկեղեցւոյ յատուկ իրաւունքները եւ արտօնութիւնները, որք են, ազատորէն վարել իւր ներքին կառավարութիւնը ու մատակարարութիւնը, և ձայն ունենալ զաւանական խնդիրներու մասին արուելիք սրոյմանց մէջ:

Հին ժամանակներու մէջ իւրաքանչիւր ինքնուրոյն եկեղեցի՝ կը կառավարուէր պատրիարքի կամ եքսարքի մը գերագոյն իշխանութեամբ: Առաջին անգամ Ռուսիա, Պետրոս Մեծ կայսեր օրով, գերագոյն պետի իշխանութիւնը փոխանակեց մնայուն սինոդի մը իշխանութեամբ, կերպով մը աթոռոյ պարագլուխէն ձեռք մշտատեւ ընելով: Այլ օրինակին հետեւեցան ուրիշ որթողքս կամ յունադասան պետութիւններն ալ որք հետզհետէ հաստատուեցան, եւ այսօր Յունաստան, Ռումանիա, Սերպիա, Չինականիա և Պուլկարիա, ամէնքն ալ ձգմայուն սինոդով կը կառավարուին:

Այս մասին նոր բեկիք չունինք Հայոց եկեղեցւոյն վրայ, բայց եթէ որ հակառակ իւր հաւատացեալներուն աշխարհի ամէն կողմերը զրուած ու սխուած ըլլալուն, եւ հակառակ երկու կաթողիկոսական և երկու պատրիարքական մեծ աթոռներ ալ հաստատուած ըլլալուն, ամէնքն ալ մէկ կեդրոնի ենթարկուած կը մնան, և Էջմիածին նստող Ամենայն Հայոց կաթողիկոսին իրաւասութիւնը կը տարածուի բովանդակ Հայաստանեայց Ուղղափառ եկեղեցւոյ վրայ:

## Ի՞՞՞՞

### ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՆՈՒՒՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Նուիրապետական դասակարգութիւնը, ընդհանրապէս չորս աստիճաններ կը սքարունակէ, 1. Մեծ կամ ծայրագոյն պատրիարք, կամ կաթողիկոս. 2. Փոքր պատրիարք, կամ մասնաւոր կաթողիկոս, կամ եքսարք, կամ պրիմաս. 3. Մետրապոլիտ կամ արքեպիսկոպոս. 4. Եպիս-

կուպու: Իսկ քորեպիսկոպոսներ այս դասակարգութենէ գուրս կը մնան, որովհետեւ պարզապէս թեմակալի փոխանորդներ են:

Արգէն ըսինք թէ մեծ պատրիարքներ կամ կաթողիկոսներ՝ մասնաւոր ազգային անկախ եկեղեցիներու գլուխներ են: Երբոր նոյն եկեղեցւոյ մէջ ամբողջացուցիչ մասեր կը գտնուին, որոնք սրեւ առիթով կամ պատճառով ինքնուրոյն կացութիւն մը ունենալու արտօնութիւնը կը վայելեն. անոնք առաջիններուն նման, բայց անոնցմէ փոքր ու անոնց ենթարկեալ պետ մը կ'ունենան իրենց գլուխը, ինչպէս երկրորդ աստիճանին մէջ յիշեցինք: Այսպիսիներուն գիրքն ու դերը, հնար է նմանցնել հարկատու իշխանապետի մը գիրքին՝ գերիշխան վեհապետին հանդէպ: Այս աստիճանին վրայ եղողներուն մէջ, կոչու մէ զատ իրաւասութեանց կամ անձնաշնորհութեանց կամ պատուազրութեանց ալ տարբերութիւններ կը նշմարուին սակայն, էական կերպով աստիճանի տարբերութիւն չեն պատճառեր: Միևնոյն նահանգի մէջ գտնուող եպիսկոպոսներ իրենց գլուխը կ'ունենան մետրապոլիտներ, որ է մայրաքաղաքին աւագ եպիսկոպոսը, որ իրաւունք ունի նահանգին եպիսկոպոսները գումարել, և ձեռք առնել այն գործերը, որոնք նահանգին բոլոր թեմերուն հաւասարապէս կը պատկանին: Եպիսկոպոսներ, մետրապոլիտութեան մը ներքեւ եղած ատենին ալ, լիովին կը վայելեն ամէն իրաւունքները և իրաւասութիւնները զորս թեմակալութիւնը կանոնապէս իրենց վրայ կը ճանչնայ: Այս բնդհանուր տեսութիւնները պատշաճեցնենք Հայոց Եկեղեցւոյ նուիրապետութեան:

Հայաստանեայց Եկեղեցւոյ ծայրագոյն պատրիարքը կամ Ամենայն Հայոց կաթողիկոսը, ինչպէս ըսինք, կը նրստի Էջմիածնի Մայր աթոռը, որ է հին Վաղարշապատը, Երևանի քաղաքին մօտ, Կովկասի ռուսական փոխարքայութեան մէջ: Հոն եղաւ Հայոց կաթողիկոսութեան նախնական աթոռը, և հոն գարձաւ երկարատեւ տեղափոխութիւններէ ետքը, ինչպէս պատմական յօդուածներուն կարգին տեսանք: Այս

պահուստ ամբողջ գատարկ է և տեղապահով կը կառավարուի :

Իբր երկրորդական ամբողջ Ամենայն Հայոց կաթողիկոսութեան ենթարկեալ էին երբեմն Վրաց և Աղուանից մասնաւոր կաթողիկոսութիւնները : Ասոնցմէ առաջինը բաժնուեցաւ եօթներորդ դարուն մէջ, ինչպէս պատմեցինք իսկ երկրորդը ջնջուեցաւ իննետասներորդ դարուն սկիզբը, Աղուան տոհմին կամ ազգութեան Հայոց հետ ձուլուելով դադարելուն պատճառով : Բայց ժամանակին պատահարները ուրիշ երկրորդական ամբողջներ ստեղծեցին Հայ եկեղեցւոյ մէջ : Հայրապետանոցին Աղթամարէ Անի և Սիսէ Լճմիսմին փոխադրուելուն պատճառով, հին տեղերը կաթողիկոսներ հաստատուեցան, որոնք ժամանակ անցնելէ ետքը Մայր ամբողջն ճանչցուեցան և հաշտութիւն գոյացաւ, աստիճանին առանձնաշնորհութիւնները պահելով, բայց Մայր ամբողջ գերիշխանութիւնը ճանչնալով՝ և Հայ եկեղեցւոյ միութիւնը յարգելով : Աղթամարի իրաւասութիւնը կը տարածուի Կաւաչի և Շատախի գաւառներուն վրայ Վանայ կուսակալութեան մէջ, և Խիզանի գաւառին վրայ Բաղէշի կուսակալութեան մէջ : Ամբողջ պարապ է 1895'է ի վեր, և վարդապետ մը կը վարէ կաթողիկոսական տեղապահութիւնը : Իսկ Սոյ ամբողջն իրաւասութիւնը կը տարածուի Ատանայի կուսակալութեան բովանդակին, և Բերիոյ, Աբրատիոյ, Անկիւրիոյ և Խարբերդի կուսակալութեանց որոշ մասերուն վրայ : Ամբողջ ութը տարի գատարկ մնայլէ ետքը, իւր կաթողիկոսն ունեցաւ 1902'ին : Իսկ Երուսաղէմի պատարիարքական ամբողջը ծաղում առած է սուրբ տեղեաց հանդէպ բոլոր քրիստոնէութեան՝ և յատկապէս Հայ ազգին տաճած բարեպաշտութենէն : Անոր իրաւասութիւնը կը տարածուի, Երուսաղէմի և Լիբանանի նահանգներուն և Դամասկոսի և Վերիտոնի կուսակալութեանց վրայ : Եզիպտոս և Կիպրոս, որ ատեն մը իւր իրաւասութեան ներքեւ էին, այժմ՝ Կոստանդնուպոլսոյ պատրիարքութեան անցած են : Այս ամբողջն ալ այս պահուստ պարապ կը մնայ և տեղապահի յանձնուած է :

Պատմութիւնը քաղած ստեղծիս առանձին յօդուածով բացատրեցինք Կոստանդնուպոլսոյ պատրիարքութեան ծագումը, որուն հոգեւորական իրաւասութեան մէջ կը մտնեն թուրքիոյ բոլոր դաւառները, վերոյիշեալ Աղթամարայ և Սոյ և Երուսաղէմի աթոռներուն ենթարկեալներէն դուրս: Բայց եթէ իւր հոգեւորական իրաւասութիւնը սահմանափակուած է, իւր ազգային վարչական իշխանութիւնը կը տարածուի բոլոր Օսմանեան կայսերութեան մէջ գտնուող Հայերու վրայ: Պաքանեան թերակղզիի մէջ նոր հաստատուած պետութեանց, այսինքն Յունաստանի, Ռումանիոյ, Սերպիոյ, Չերնակորայի և Պուլկարիոյ սահմաններն ալ, որոնք երբեմն Օսմանեան կայսերութեան ենթարկեալ էին, տակաւին հոգեւորապէս Կոստանդնուպոլսոյ աթոռին իրաւասութեան ներքեւ կը մնան: Կոստանդնուպոլսոյ աթոռն ալ այս պահուս պարագ է և սեղապահով կը կառավարուի

Ատոնք են այն չորս աթոռները, որոնք Հայ Եկեղեցւոյ նախապետութեան երկրորդ աստիճանը կը կազմեն, թէպէտ աթոռակալներուն անունները տարբեր են: Աղթամար ու Սիս կաթողիկոս կը կոչուին, իսկ Երուսաղէմ եւ Կոստանդնուպոլիս՝ պարզապէս պատրիարք: Կաթողիկոսութեան աստիճանը իրաւունք կու տայ միւռոն օրհնելու եւ եպիսկոպոս ձեռնադրելու: Գիտելի է ևս որ այս աթոռներէն երեքը Յունահռոմէական աշխարհին մէջ հաստատուած պատրիարքութեանց սահմաններուն կը պատշաճին: Երուսաղէմ եւ Կոստանդնուպոլիս՝ համանուն պատրիարքութեանց, իսկ Սիս կամ Կիլիկիա՝ Անտիօքի պատրիարքութեան: Աղթամարի կաթողիկոսութեան սահմանը Ամենայն Հայոց կաթողիկոսութեան ընդ սահման եզոյ Մեծ Հայքին մէջն է, և թերեւս անյարմար չէր ըլլար զայն ալ Պարսից պատրիարքութեան սահմանին պատշաճեցնել:

Նախապետական երրորդ աստիճանին՝ մետրապոլիտներուն անցած ստեղծիս, ճիշդ խօսելով, օրինաւորապէս որոշուած և կոչուած մետրապոլիտներ չունինք: Թուրքիոյ

մէջ մեծ առաջնորդարաններ արքեպիսկոպոսութեան պատուանունը կը գործածեն: Սակայն Կովկասի առաջնորդարաններ, որ շատ ընդարձակ վիճակներ են, և իրենց ներքեայնպիսի յաջորդութիւններ ունին՝ որ տիրապէս եպիսկոպոսարաններ են, ամենայն իրաւամբ կրնան մետրոպոլիտութեան աստիճանին վրայ դրուիլ, և նուիրապետութեան երրորդ աստիճանը լրացնել:

Նուիրապետութեան չորրորդ աստիճանը կը կազմեն եպիսկոպոսներ, որոնք մէկմէկ վիճակ կամ թեմ կը հովուեն կամ կը կառավարեն: Վիճակներուն բաշխումը, կանոնաորեալ և ծրարեալ կերպով եղած չէ, այլ առիթներու և պարագաներու համեմատ կազմուած է: Թուրքիոյ մէջ Կոստանդնուպոլսոյ աթոռը սրաշտոնապէս ունի 44 վիճակ, Սիս 13, Երուսաղէմ 4, և Ալլթամար 2. բայց եթէ անջատուած թեմերն ալ հաշուենք, Կոստանդնուպոլիս կ'ըլլայ 51 և Սիս 15, և քովանդակ Թուրքիա կ'ըլլայ 72: Իսկ բովանդակ Ռուսիա 6 մեծ վիճակներու բաժնուած է, և Պարսկաստան 2, Հնդկաստանն ու Չաւան ալ միասին: Բայց եթէ յաջորդութիւնները իբր եպիսկոպոսարան նկատենք և անջատ թեմերն ալ հաշուենք, այս կողմն ալ կ'ունենանք 28 վիճակ, ընդ ամէնն 100 Հայ վիճակներ: Գաղթականութեանց երկիրներէն Եւրոպա և Ամերիկա նոր վիճակներ եղած են Էջմիածնի աթոռին ներքեւ. իսկ Եգիպտոս, Ռումանիա և Պուլկարիա Կոստանդնուպոլսոյ վիճակներուն պաշտօնական բաշխման մէջ կը գտնուին:

Իբրեւ վիճակներու մասին տեղեկութեանց լրումն յիշենք ևս, թէ Հայ վիճակներու թեմակալները, միշտ ձեռնադրեալ եպիսկոպոսներ չեն, հակառակ բոլոր եկեղեցիներու հաստատուն սովորութեան: Այլ ծայրագոյն վարդապետներ, երբեմն մասնաւոր վարդապետներ ալ, լիակատար իրաւասութեամբ թեմակալութեան պաշտօն կը վարեն, ընդհանրապէս գործածուած առաջնորդ անունի ներքեւ:



## ԻՓ.

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ՝

Հայ եկեղեցւոյ նուիրապետութեան դասակարգներուն և եկեղեցական աստիճաններէն իւրաքանչիւրին յատկացուած պաշտօնները, ընդհանրապէս կեդրոնացուցման ձեւով չեն. որովհետև իւրաքանչիւրը ազատ և սեփական իրաւունքներ կը վայելէ, իրեն բնական կամ կանոնական պաշտօնները կատարելու, առանց բարձրագոյն աստիճանի վերապահութեան կամ արգելքին ենթարկուելու: Իսկ վերագոյն աստիճանին հսկողութեան իրաւունքը կը դորձադրուի, ամէն անգամ որ ենթարկեալը պէտք կ'ունենայ վարանմանց լուծում կամ դժուարութեանց խորհուրդ փնտռելու. կամ երբոր արտաքին սոսնձութեան պատճառաւ միջամտութիւնը անհրաժեշտ կը դառնայ, և վերջապէս երբ մեծաւոր գանուոյր կը հարկադրուի զեղծում մը ուղղել և ընդհանուր շահ մը պաշտպանել: Բողոքելու իրաւունքը համարձակ է ամէն աստիճանի դէմ բարձրագոյնին դիմելով:

Եպիսկոպոսը իւր վիճակին թեմական կառավարութեան գլուխն է, կատարեալ իրաւասութեամբ ամէն գործերու և ամէն պաշտօնավարութեանց վրայ, որք նոյն թեմին չըջանակին մէջ կը պարփակուին: Երբոր թեմակալ առաջնորդը լոկ վարդապետ է առանց եպիսկոպոսական աստիճանի, կրնայ ձեռնադրութիւններ արտօնել, այլ ոչ ինքն ձեռնադրել: Թեմակալ վարիչներուն արուած արաջնորդ անունը, ինչպէս յիշեցինք, հասարակ է եպիսկոպոսական աստիճան ունեցողներուն ու չունեցողներուն ալ: Ամէնուն ալ իրաւասութիւնը յիակատար է իւր վիճակին եկեղե-

ցիներուն վրայ, թէ արտօնութիւններ տալու, և թէ դատելու ու պատժելու մէջ: Ամուսնական գատերն ալ կը տեսնէ և կը վճռէ, դատաստանական խորհրդոյ հետ մէկտեղ միայն ամուսնալուծման վճիռները իւր իրաւասութենէն վերեն: Բացառիկ արտօնութիւններ կու տայ հասի Հասի և ուրիշ արգելքներու առիթներուն, հիմնուելով պարագայից պահանջին վրայ, և առաջնորդուելով իւր խիղճին ուղղութենէն:

Երուսաղէմի պատրիարքը պահապանն է սուրբ տեղեաց, կամ աւելի ճիշդ բացատրութեամբ, Հայոց պատկանող սրբալայրերուն. և միանգամայն գլուխն ու մեծաորն է Սուրբ Յակոբեանց միաբանութեան, որ այդ սրբալայրերուն պաշտպանութիւնը ու հոգեւորական պաշտամունքը կը կատարէ, Հայեր բազմութիւն չեն Երուսաղէմի պատրիարքութեան սահմանին մէջ, և պզտիկ հասարակութիւններ կը կազմեն Երուսաղէմի, Յոպպէի, Դամասկոսի և Վերիտոնի թեմերուն մէջ, թէպէտև թեմական կամ առաջնորդական կազմակերպութիւն չունին:

Կոստանդնուպոլսոյ պատրիարքը իրր ազգապետ կամ բոլոր Թուրքիոյ Հայ ազգութեան գլուխ, վարչական վերին հսկողութիւն ունի բոլոր Թուրքիոյ մէջ գտնուող վիճակներուն վրայ: Ասոնցմէ մէկ մասին վրայ ուղղակի հոգեւորական իրաւասութիւն ալ կը գործածէ վերև յիշուած վիճակներու թիւին համեմատ: Իսկ Կոստանդնուպոլսոյ մայրաքաղաքի կուսակալութեան սահմաններով, ուղղակի պատրիարքին առաջնորդական վիճակը կը կազմէ:

Նոյիրապետական ամէն աստիճանէ կամ ամէն դասակարգէ եղող պետեր կամ առաջնորդներ, իրենց պաշտօնը կը վարեն կրօնական կամ հոգեւորական, և քաղաքական կամ աշխարհական ժողովներու կամ խորհուրդներու աջակցութեամբ: Անոնք են, որ ժողովական որոշմանց գործադիր իշխանութիւնը կը վարեն, իրր իշխանութիւն և ոչ իրր պարզ պաշտօնեայ. և պահանջին համեմատ ընդհանուր կանոնները և որոշումները կը պատշաճեցնեն, և

հարկաւոր ու կարեւոր պարագաներու մէջ կրնան ալ անձնական զգօնութեան իշխանութեամբ գործել :

Աւագ երէցներ եկեղեցիներու մէջ հոգեւորական կարգապահութեանց կը հսկեն, իսկ ինչ որ կաթողիկոսներու մէջ ժողովրդապետական իրաւունք կամ իրաւասութիւն կը կոչուի, Հայ Եկեղեցւոյ մէջ հասարակ է ամէն քահանայի :

Իւրաքանչիւր ընտանիք ունի իւր յատուկ ծխատէր կամ տաներէց քահանայն, որուն ընտրութիւնը այժմ տունին կամ ծուխին թողուած է, և այդ քահանայն է, որ նոյն տունին թէ խոստովանահայրն է, և թէ կը կատարէ ամէն պաշտօնները, որոնք կաթողիկոսներու մէջ ժողովրդապետութեան կը վերադրուին : Նշանի և սրակի հրամանները առաջնորդարանէն կը տրուին, և ծխատէրէն կը գործադրուին : Եկեղեցիներու մէջ կատարուելիք արարողութիւններ և հանդիսութիւններ կ'որոշուին համաձայնութեամբ աւագերէցի և թաղական խորհրդոյ, որ կը կազմուի թաղեցիներու քուէով ընտրուած աշխարհականներէ : Նոյն թաղական խորհուրդն է՝ որ թաղին և եկեղեցիին և վարժարանին մատակարարութիւնն ալ կը կատարէ, թաղին վերաբերեալ ուրիշ հանրային գործերուն հետ : Քահանաներու համար խոստովանութիւն ըսելու յատուկ արտօնութիւնը, և կամ արձակումի համար վերապահեալ մեղքերու գրութիւնը, Հայ Եկեղեցւոյ մէջ տեղի չունին :

Հին սովորութեան համեմատ, թաղի մը ամբողջ հասարակութեան հոգեւոր պէտքերը՝ խմբովին կը հոգացուէին թաղին եկեղեցւոյն քահանաներէն ընկերովի շահակցութեամբ : Ինչ հասոյթ որ այս աւթիւ կը գոյանար նուէրներէ և իրաւունքներէ՝ հասարակ սնտուկի մը մէջ կը հաւաքուէր և յետոյ ըստ պատշաճի կը բաժնուէր, աւագերէցին մէկուկէս, քահանայից մէկ, սարկուազներու կէս, և զպիւրներու քառորդ համեմատութեամբ : Բայց այդ սովորութիւնը շատոնց իլիկ խափանուած է, գլխաւորապէս քաղաքներու մէջ, և այլեւս իւրաքանչիւր քահանայ իւր ծու-

խերէն և իւր վարած պաշտօններէն ստացած նուէրներն ու իրաւունքները իրեն կը սեփականէ, միայն հասարակաց պնակի մը արդիւնքը կայ, զոր քահանայք մէջերնին կը բաժնեն հաւասարապէս :

Կաթողիկոսներու յատուկ և սեփական պաշտօններն են եպիսկոպոսներու ձեռնադրութիւնը և միւռոնի օրհնութիւնը : Ձեռնադրութիւնը կը կատարուի ամէն անգամ որ առիթը կը ներկայանայ. իսկ օրհնութիւնը իւրաքանչիւր երեք կամ հինգ տարի : Միւռոնը մեծ քանակութեամբ կը պատրաստուի սրպէսզի բոլոր վիճակներու պէտքին բաւական ըլլայ : Հայ Եկեղեցւոյ միւռոնին նիւթը՝ գլխաւորապէս զտուած և եռացած ձէթ է, որուն կը խառնուին բաւական չափով բարասան, և քառասուն տեսակ հոտաւէտ բոյսերէ և խունկերէ՝ իւզեփեցաց արհեստով քամուած հիւթ մը : Սոփորութիւն է նաև մէկ երկու լիար հին միւռոն խառնել նոր պատրաստուած միւռոնին, սրպէսզի սոյն կերպով միշտ հինը նորին կապուած մնայ : Ժողովրդական աւանդութիւն է, թէ այս խառնուրդի շարունակութեամբ այժմեան միւռոնը կը կցուի Յիսուսէ օրհնուած ձէթին հետ, զոր առաքեալներ Հայաստան բերին իրենց հետ : Եթէ աւանդութիւնը պատմական ստուգութիւն չունի, դոնէ գեղեցիկ և խորհրդատու նշանակութիւն մը կը պարունակէ :

Եպիսկոպոս ձեռնադրելու և միւռոն օրհնելու իշխանութիւնը Ազիւսումարի և Սիսի կաթողիկոսներն ալ կը վայելեն, բայց միայն իրենց թեմերուն սահմանին մէջ, և ոչ երբեք անկէ դուրս գործածուելու համար : Երուսաղէմի և Կոստանդնուպոլսոյ պատրիարքները այդ արտօնութիւնը չունին, և իրենց թեմերուն պէտքին համար կը դիմեն Էջմիածին Ամենայն Հայոց կաթողիկոսին : Միայն թէ եպիսկոպոս ձեռնադրուելիք ընծայացուները, պէտք է իրենց պատրիարքներուն կողմէն ներկայացուին :

# ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՒՆԸ

## I.

### ԿՂԵՐՆ ՈՒ ԿՈՒՍԱԿՐՕՆՈՒԹԻՒՆ

Հայ եկեղեցւոյ եկեղեցականութիւնը երկու մեծ խումբերու կը բաժնուի, վանական կուսակրօնը և աշխարհական ամուսնացեալը։ Այդ երկրորդ խումբը կը կազմուի այն անձերէ, որ իրօք աշխարհական են, ամուսնացած, ընտանիքի տէր և աշխարհի մէջ ապրող։ Սրէնք է որ ամուսնութիւնը ձեռնադրութենէն առաջ կատարուած ըլլայ։ Եթէ այրիանան, թէ սարկաւազ և թէ քահանայ, երկրորդ ամուսնութիւն չեն կրնար ընել, բայց եթէ սքեմէ և եկեղեցականութենէ հրաժարելով, երրորդ այդպիսի բան մը ընեն, ընաւ մեղադրելի դորձ մը ըրած չեն ըլլար, և իրենց անձին պատին ալ ֆրաս չկրեր։ Նոյնպէս է կուսակրօններուն ամուսնութեան համար ալ։ Երկրորդ ամուսնութիւն կատարած՝ կամ այրիի հետ ամուսնացած աշխարհականներն ալ ձեռնադրութեան չեն ընդունուիր։ Սովորութիւն է տարւոյ մը միջոց անցնել ամուսնութենէ ետքը ու ձեռնադրութենէն առաջ։ Ամուսնացեալ ընծայացուններուն համար երեսունէ յիսուն տարեկան հասակ կը պահանջուի. բացառութիւնները շատ ցանցառ են։

Ամուսնացեալ կղերին պաշտօնները կը դառնան հա-

ւատացելոց հոգեւոր պէտքերուն և մխիթարութիւններուն շուրջը, որ է հոգ հոգւոց ըսուածը : Ամուսնացեալ քահանայք խորհուրդներ կը մատակարարեն, օրական ժամերգութիւնները կը կատարեն եկեղեցւոյ մէջ, հիւանդներուն կ'այցելեն, աղքատները կը յանձանձեն, մեռնողները կը թաղեն, ամուսնութիւններու կը հսկեն և կ'օրհնեն, և այլն : Արեւելեան եկեղեցիներու մէջ՝ ժամերգութեանց պատշաճները առանձինն կարգաւ և ամենօրեայ պատարագ մատուցանելու հարկ չկայ . թի պատարագ ըսուածն ալ գոյութիւն չունի :

Ամուսնացեալ քահանաներու առջեւ բաց եղող պաշտօններն են աւագերէցութիւն, առաջնորդական փոխանորդութիւն, կրօնական ժողովականութիւն, և ուրիշ ժողովներու և խորհուրդներու անդամակցութիւն՝ որ որ եկեղեցականներ ալ ընտրելի են : Առաջնորդութիւններու պարագութեան ատեն ալ տեղապահութեան կը կոչուին, բայց ոչ վարդապետական և ոչ եպիսկոպոսական տախտակներու կը բարձրանան, բայց եթէ այլի մտալէ ետքը կուսակրօն կղերին դատակարար անցնելով : Ինչչափ ալ այդ սեղմեալ դրութիւնը մեր օրով օրէնքի կարգ անցածի շափ բնդհանրացած բլլայ, սակայն ո՛չ հին օրէնք է և ո՛չ կանոնական պահանջ : Մանաւանդ թէ երբ եպիսկոպոսութեան բնութիւնը լաւ ուսումնասիրուի, պիտի տեսնուի թէ անիկայ քահանայական պաշտօններու և հոգ հոգւոց կաշուած ծառայութեանց բովանդակութիւնն է, և տիրապէս ամուսնացեալ քահանայութեան յատուկ և սեփական պաշտօններուն լրումն է : Հին ատեն եպիսկոպոսներ երկցադայն քահանաներուն մէջէն կ'առնուէին, և այս կերպով քահանայապետ անունը կ'առնէին, որ է լսել ամբողջ վիճակի մը քահանաներուն պետը, ինչպէս որ իւրաքանչիւր եկեղեցւոյ քահանաներուն ղլխաւորն ալ աւագերէց կը կոչուի : Այսօր ալ բնաւ կանոնական արդելք մը չկայ, որ նորամուտ ստիրութիւնը, որչափ ալ տարածուած բլլայ, հնաւանդ եկեղեցական կանոններուն տեղի չտայ, և

ամուսնացեալ կղերին առջեւ բայ ըլլան եկեղեցականութեան բարձրագոյն աստիճանները : Այս պարագային ազգը մեծամեծ օգուտներ ալ կ'ունենար, որովհետեւ այս կերպով ամուսնացեալ կղերը կ'ազատէր ստորնութեան վիճակէ մը, որ ոչ մի կերպով չարդարանար, և որուն բուն պատճառները իրեն վրայ դրուած պատահական զրկումներն են : Ներկայ դրութեան հետեւանքով, անոնք որ քիչ մը զարգացում ստացած են, ընդհանրապէս կը խուսափին սասնանել կենցաղական ընթացք մը, որ թէ՛ շատ դժուարութիւններ կան, և թէ՛ բարոյական իղձեր գոհունակութիւն չեն գտներ, նիւթական օգուտներն ալ նուազ են : Հետեւապէս միայն համեստ եւ միջակ կարողութեան անձեր, որոնք բարձր ձգտումներ չունին, անոնք միայն քահանայական աստիճանին հետամուտ կ'ըլլան : Ահա խիստական իրականութիւնը, որուն պատճառաւ ամուսնացեալ քահանայութիւնը Արեւելքի մէջ ստորնութեան մէջ կը մնայ, եւ ըսելու իսկ պէտք չկայ, թէ հաւատացեալներն են որ այդ կացութեան վնասները կը կրեն : Արպէս զի այդ բանին դարման մը մատուցուի, մենք կը կարծենք, թէ բաւական է որ եպիսկոպոսական ընտրելիներու մասին եկեղեցւոյ հնաւանդ և կանոնական ձեւը նորէն ձեռք առնուի : Երբոր քահանայական դասակարգին առջեւ յառաջագիմելու սպարէզը կ'ընդարձակուի, ազգայիններուն զարգացեալ դասակարգն ալ դժուարութիւն չզգար այլեւս ամուսնադր քահանայութեան շարքին մէջ մտնել, և ստով դասակարգին պատիրը ազգայնոց աչքին առջեւ կը բարձրանայ, եւ քահանաներն ալ արժանաւորագոյն կերպով կը լրացնեն իրենց կոչումին պարտաւորութիւնները, և կը համապատասխանեն դարուս զարգացման աստիճանին :

Կուսակրօն եկեղեցականութիւնը գլխաւորապէս վանքերու մէջ կը պատրաստուի : Հայ եկեղեցւոյ վանականութիւնը բնաւ նմանութիւն չունի Արեւմտեան եկեղեցւոյ կրօնաւորական միաբանութիւններուն հետ : Հայոց մէջ իրա-

քանչիւր վանք ինքնուրոյն միաբանութիւն մը կը կազմէ : Անոր անդամակիցները կամովին յանձնառու եղած են վանական կանոններուն հպատակիլ, և յատկապէս կրօնաւորական ուխտագրութիւն չունին : Ճգնաւորներու և աղօթատանց միայնակեացներու դարը վերջնականապէս դադարած է . այժմեան վանքերը ուրիշ նպատակ չունին, բայց եթէ եկեղեցւոյ ծառայութեան համար կուսակրօն կղեր պատրաստել : Նոյն իսկ Սեւանի վանքը Գեղամայ ծովին մէջ, եւ Լիմի ու Կոտցի վանքերը Վանայ ծովին մէջ, որոնք անապատ անունը կը կրեն, անոնք ալ պարզապէս աղօթատանց մենաստաններ ըլլալէ դադարած, և եկեղեցական դպրոցներու վերածուած են : Կուսակրօն կղերին յատուկ կոչումն է քարոզիչ վարդապետութիւն և վարչական պաշտօնավարութիւն ընել : Խորհուրդներու մատակարարութիւնը, խոստովանութիւնն և պատկի օրհնութիւնն իրեն չեն պատկանիր . միայն եկեղեցական արարողութեանց մէջ իւր ներկայութիւնը կը գործածուի իբրև հանդիսութեանց շուք ու չքեղութիւն տուող պարագայ : Կուսակրօն եկեղեցականութեան զանազան աստիճաններուն վրայ գտնուողները՝ կը կոչուին սարկաւազ, արեղայ որ է կուսակրօն քահանայ, մասնաւոր վարդապետ, ծայրագոյն վարդապետ, եպիսկոպոս, և նուիրապետական բարձրագոյն աստիճաններուն հասնողներ, այսինքն արքեպիսկոպոս, պատրիարք եւ կաթողիկոս : Սովորութիւն չէ եղած ամուսնացեալ սարկաւազներ պահել, թէ անոնց ապրուստը ճարելու դժուարութեանց պատճառով, և թէ պատահական այրիութեան պարագային՝ անտեղութեան տեղի չտարու համար : Սակայն վանքերու մէջ կուսակրօն սարկաւազներ միշտ կը գտնուին, և ընդհանրապէս երեք տարի նոյն աստիճանին մէջ կը մնան քահանայութեան ձեռնադրութենէ առաջ : Այդ ձեռնադրութեան համար ալ գոնէ քսանուերկու տարեկան ըլլալ կը պահանջուի սովորաբար, և անկէ ետքը իրենց վեղաբ կը տրուի, որ կուսակրօն եկեղեցականութեան յատկանիչն է :



Վարդապետութեան աստիճանները իրաւունք կուտան քարոզելու՝ վարդապետական գաւազանի տուռչութեամբ, որուն զլուխը կազմուած է երկու կամ չորս իրարու փաթթուած օձերէ, որոնց գլուխները դէմ՝ դէմի կը նային: Վարդապետութեան երկու աստիճանները նորէն ստորաբաժանեալ աստիճաններ՝ ունին, մասնաւորը չորս և ծայրագոյնը տասը, որոնք արարողական ձեւէ աւելի նշանակութիւն չունին, և ծառայած են միայն տուռչութեան ատեն ընթերցուածներ և շարականներ շատցնելու: Թեմակալ առաջնորդներէ արտօնութիւն ստանալը պայման է վարդապետներուն՝ քարոզել կարենալու համար: Քարոզները կը տրուին օտքի կայնած՝ եկեղեցւոյ բեմին վրայ: Եպիսկոպոսներ միայն ակնուրի վրայ նստած քարոզելու առանձնաշնորհութիւնը կը վայելեն: Նոյնը ունէին երբեմն ամէն ծայրագոյն վարդապետներ, երբոր ծայրագոյն աստիճանը շատ քիչերու կը տրուէր, և այն ատեն եպիսկոպոսութենէ իսկ վեր առաւելութիւն ունէր:

Թեմակալութեան նուիրապետական պաշտօնները, թէ հաստատուն անուանմամբ և թէ առժամեայ տեղակալութեամբ, կուսակրօն կղերին յատուկ են: Այդ դասակարգին մէջ կրնան մտնել, ոչ միայն ամուրիներ, այլ և քահանայական ձեռնադրութենէ առաջ կամ ետքը այրիացեալներ: Եպիսկոպոսական աստիճանն ալ, ինչպէս առիթ ունեցանք բնելու, կուսակրօն դասակարգին մէջ եղողներուն պահուած է այսօր, առանց բացառութեան: Վեզար կրելու և գաւազան բռնելու արտօնութիւններն ալ, նոյնպէս ամուսանցեալ կղերին չեն տրուիր: Թէպէտեւ եկեղեցին կանոնական արգելք մը դրած չէ, որ ամուսնացեալ քահանաներն ալ, երբոր պահանջուած ուսումն ունին քարոզ խօսելու իյխանութիւն ստանան վարդապետութեան աստիճանով և գաւազանի տուռչութեամբ. բայց այժմեան սովորութեամբ, քահանաներ միայն խրատ կը խօսին առանց գաւազանի:

Հայ եկեղեցւոյն մէջ հաստատուած վարդապետութեան երկու աստիճանները, ճշդիւ կը համապատասխանեն եւրոպական համալսարաններու մէջ տրուած՝ աստուածաբանական գիտութեան արտօնաւորի (licencié) և մագիստրոսի (docteur) աստիճաններուն: Միայն թէ Հայ եկեղեցին այդ աստիճաններուն բոլորովին եկեղեցական նշանակութիւն և կրօնական կերպարան տուած է: Ասկէ յառաջ եկաւ որ վարդապետական ընծայացունքու վրայ՝ ոչ այնչափ ուսումնական արժանիքը կը փնտռուի, որչափ եկեղեցական պաշտօնին և կայսութեան պարագայն: Կուսակրօն եկեղեցականներուն պաշտօններու վրայ դանուելնին ալ՝ պատճառ եղաւ, որ վանական կեանքի պահանջներն խափա չնայուին, և նոյն իսկ ժամատուններու մէջ ապրելու պարտաւորութիւնն ալ զանցառութեան տրուի:

## ԼԱ.

### ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՍՈՅԹՆԵՐ

Իւրաքանչիւր եկեղեցականի անձին յատուկ ժառանգաւորական կամ կանոնիկոսական թոշակներ վայելելու գրութիւնը՝ Հայոց եկեղեցին երբեք ունեցած չէ: Ամէն եկեղեցականներ միմիայն հաւատացեալներու կամաւ որ նուէրներով կ'ապրին: Այդ բանը աւելի հաստատուն է ամուսնացեալ կզերին մասին, որովհետեւ երբեմն կուսակրօն եկեղեցականներ իրենց վարած պաշտօններուն համար՝ համեռու ամուսականներ կը ստանան:

Եկեղեցիներ և վանքեր անշարժ կալուածներ ունին, արաւեր կամ շէնքեր, բայց ստացութիւննին և քաղած արդիւնքնին թուրքիոյ մէջ շատ դժուարութեանց և վտանգ-

ներու ներքեւ կը գտնուին, կալուածատիրութեան օրէնքին անկատար վիճակին և աղիկամի դորժադրութեան երեսէն Քրիստոնէից եկեղեցիներ և վանքեր և վարժարաններ, խաւովական օրէնքին առջեւ, իբրեւ բարոյական անձնաորութիւններ կամ իբրեւ ծանուցեալ մարմիններ չեն նկատուիր, որուն հետեւանքն է, որ ստացութեան և կալուածատիրութեան իրաւունք ալ չեն վայելէր: Այդ գժուարութեան հանդէպ իբր գարման, պէտք կ'ըլլայ որ այդ հաստատութեանց սեփականութիւնները, փոխառեալ կամ պայմանաւորեալ անունի մը վրայ գրուին և անուանական անհաստատ կացութեան ենթարկուին: Սակայն այս եղանակն ալ իրեն անտեղութիւններն ունի, որովհետեւ վտանգ կայ որ ստացութեան իրաւունքը կորսուի, երբոր այն անձը՝ որուն անունին գրուած է, առանց ուղղակի ժառանգ թողու մեռնի: Բաց աստի պէտք չէ մտնալ, որ վատագի ժառանգի մըն ալ հնար է հանդիպիլ, որ ստացութիւնը իբր իւրը սեփականէ և հասարակութիւնը զրկէ: Կրնայ ևս հանդիպիլ որ այն անձը, որուն անունին գրուած է ստացութիւնը, գատապարտութեան ներքեւ ինչալով իւր վրայ եղող ինչքերը գրաւուին, ըլլայ ալ ապօրինի կերպով, վասն զի տեղական օրէնքը անուանականութեան ենթադրութիւնը չընդունիր: Այդ անտեղութիւնները յաճախ յառաջ կուգան վախճան կոչուած ստացութիւններու մէջ, որոնք զաւակէն զատ ուրիշի մը իբր ժառանգութիւն չեն փոխանցուիր: Նոր կարգադրութեամբ մը կրնան առաջին և երկրորդ աստիճանի ազգակիցներուն անցնիլ, եթէ բէմալի լիմիտալ գրութեան պայմանները լրացած են, վճարուելիք տարեկանները աճեցնելով, և իրաւունքի տուրքը հատուցանելով, և պետութենէ արտօնուելով:

Ուրիշ կերպ մըն ալ, որ ձեռք առնուած է եկեղեցիներու ու վանքերու ու վարժարաններու կալուածներուն համար, նոյն իսկ հաստատութեանց անունները՝ կենդանի անձեր կերպարանելով, անանց անունով ստացութիւններ

արձանագրերն եղած է : Այս ձեւին համեմատ, Ս. Աստուածածնայ եկեղեցիի մը կալուածները արձանագրուած են Մարիամ զուսր Յովակիմայ անունին, Ս. Կարապետ եկեղեցիի մը կալուածները՝ Յովհաննէս որդի Զաւարեայ անունին, Երուսաղէմի վանքին կալուածները՝ Յակոբոս որդի Զերեդեայ անունին, և այսպէս ուրիշ հանրային հաստատութիւններն ալ : Այս կերպը տարածուած ու պահուած էր և է ամէն քրիստոնեայ հասարակութեանց մէջ, նոյն իսկ կալուածագրութեան պետական պաշտօնատունին դիտակցութեամբ . բայց անակնկալ բժախնդրութիւններ և ձեւական դարձուածներ, այդ կողմէն ալ կալուածական կորուստներու սպառնալիքներ ցոյց կու տան : Առհասարակ իտալական դրութեամբ կազմուած կալուածական օրէնքները, քրիստոնեայ հասարակութեանց կալուածատիրութեան գէմ ծանրածանր դժուարութիւններ ունին, և վտանգներու բաց դուռ թողած են : Այն կառավարութիւնը, որ մինչեւ հիմայ աչք գոցելով գործը դիւրացնելու, և խոտապահանջ չըլլալով վտանգները հեռացնելու բարեմտութիւնն ունեցած էր, յանկարծական որոշմամբ իւր ընթացքը փոխած կը տեսնուի : Չեռնարկներ սկսած են քրիստոնեայ հաստատութեանց կալուածները դրսեւելու, և այդչափ դարերէ ի վեր, նոյն իսկ հին վարչութեան ներքեւ թոյլատրեալ կացութիւն մը, նոր վարչութեան օրով քրիստոնեայ հասարակութեանց յայտնի մնասներ և անակնուռեկի գրկումներ կը սպառնայ : Բայց կը սիրենք յուսալ, որ այդ վիճակին առջեւն առնուի, և նոր օրէնագրութիւնը կերպ մը գտնէ այդ տղեղ ձեռնարկը խտփաննելու :

Պէտք եղած տեղեկութիւնները լրացնելու համար, քանի մը խօսք աւերցնենք վախճ. կոչուած կալուածոց բնութեան վրայ : Այդ տեսակ ստացութիւնները հնար է համեմատել, ժամանակով եւրոպոյ մէջ ալ տեղի ունեցող կերպին, որով միեւնոյն կալուածին վրայ երկու տեսակ ստացութիւն միանգամայն կ'ըմբռնուէր . մէկը ուղղակի սի-

բուքիւն (dominium directum), և միւսը շահեկան սիրութիւն (dominium utile): Այդ գրութեամբ կալուածները ուղղակի տիրութեամբ մշտնջանաւորապէս կը մնան բարեպաշտական կամ բարեգործական հաստատութեան՝ որուն նուիրուած են, իսկ շահեկան տիրութեամբ կը յանձնուին մասնաւորներու, որոնք իրաւունք կ'ունենան զանոնք գործածելու ու անոնցմէ օգտուելու, որոշ պայմաններու ներքեւ: Ասոնցմէ մէկն է տարեկան դոյզն տուրքի մը վճարումը, մէկն ալ փոխանցմանց և ժառանգութեանց իրաւունքներուն հաստատութեան պատկանիլը. իսկ գլխաւորն է ժառանգներու գիծին ու չափին սեղմուիլը, և երբ անոնք դադարին, կալուածին ամբողջապէս և ձրիապէս հաստատութեան վերադառնալը: Այդ կալուածներ գրեթէ բոլորն ալ կուտանդնուպոլոյ մզկիթներուն կը պատկանին, բայց քրիստոնեայ հաստատութեանց ալ ներեալ է վախճմաննայ, և իրօք այ քանի եկեղեցիներ և վանքեր այդ տեսակ ստացութիւններ ունին:

Եկեղեցական հասոյթներուն մէկն ալ եկեղեցիներու մէջ ժամերգութեանց և պատարագի ատեն պնակ չրջեցնելով հաւաքուած դրամն է: Թաղական խորհրդոց կը պատկանի ժողովուրդին մէջ պնակ չրջեցնելու կամ չրջեցնել տալու հողը: Եկեղեցիներու դուռերը և դաւիթներու մէջ ալ զանաւանակ դնելու սովորութիւնը ընդունուած է: Այդ հաւաքումները ժամանակով շատ արդիւնաւոր էին և եկեղեցիներուն հասոյթին նշանաւոր ճիւղը կը կազմէին, բայց այժմ այլևս շատ բան չեն արտադրեր:

Այդ կարգին յիշենք եւս բանկայլը, որ է մոմավաճառութենէ դոյացած արդիւնքը, քանի որ մոմավաճառութիւնը արեւելեան եկեղեցիներու մէջ տարածուած բարեպաշտութիւն մըն է. և մոմերը կը վաճառուին եկեղեցւոյ օգուտ թողու պայմանով, և հաւատացեալներ այդ առթիւ յօժարակամ աւատածեանութիւններ ալ կ'ընեն:

Եկեղեցիներ սովորութիւն ունին մասնաւոր նուէր

ստանալ, զանազան ծխակատարութեանց առիթներուն, ինչպէս են, կնունքը, պսակը, յուզարկաւորութիւնը, հոգեհանգիստը, յիշատակի պատարագը, և այլն :

Թաղական խորհուրդներու կողմէ կատարուած դիւանակաւ գործողութիւններուն համար ալ, ինչպէս են վկայ իրներ, վաւերացումներ, ծանուցադիրներ և այլն, յատուկ իրաւունքներ կը գանձուին, որոնք եկեղեցւոյ հասոյթին մէջ կը մտնեն :

Վերջապէս բարեպաշտական ընծախեր կամ յօժարակամ առատաձեռնութիւններ՝ եկեղեցական հասոյթներու մէջ նշանաւոր տեղ մը կը գրաւեն, որոնց մանրամասնութեանց մասնել դժուար է : Ասոնք երբեմն գրամական գումարներ են, երբեմն ալ նիւթական պէտքեր, սպասներ, զարդեր, և նոյն իսկ եկեղեցիներու և վանքերու և վարժարաններու կարուածները մեծաւ մասամբ մասնաւորներէ նուիրուած են :

Վանքերուն յատուկ հասոյթ մըն է պսոյլ կոչուածը, որ է իրենց շրջանակին մէջ գանուող գիւղերէն, հողագործական և անասնաբուժական արդիւնքներու վրայ տարեկան նուէրներ հաւաքել : Ասոնք որչափ որ իրենց բնութեամբ կամուար են, սակայն սովորութեամբ իւրաքանչիւր գիւղի վրայ, տեսակի և չափի որոշմամբ ճշդուած սակերու վերածուած են : Բայց վերջին ժամանակներու արկածներն ու աւերածներն, որ Հայարնակ գաւառները շարունակարար աղէտներու մասնեցին, վանքերուն պողիներուն ալ մեծ հարուածներ հասուցին :

Հասոյթներու կիրառութեան վրայ ալ ուղերով տեղեկութիւն տալ, նախ ըսենք, թէ ամէն եկեղեցի պարտաւոր է իւր սեփական հասոյթներով իւր ծախքերը գոցել : անոր համար պարտաւոր է ամէն ջանք բնել, որպէս զի հնարաւորութեան չափին մէջ իւր հասոյթներուն արդիւնաւորութիւնը ընդարձակէ : Իւրաքանչիւր եկեղեցւոյ մատակարարութեան վրայ ծանրացող ծախքերն ալ հետեւեալներն

են : 1. Եկեղեցւոյ շինուածներուն և անշարժ կալուածներուն պահպանութիւնը : 2. Եկեղեցւոյ պէտք եղած զարդերուն և սպաններուն և նիւթերուն պահպանութիւնը, նորոգութիւնը և սաւցոյթիւնը : 3. Թաղական վարժարանին մատակարարութիւնը : 4. Եկեղեցւոյ և վարժարանի պաշտօնեաներուն ամնականները : 5. Թաղին ազգասնէրուն և հիւանդներուն նպաստը : Գալրոցին կրթութիւնը ձրի է կարօտներուն համար, իսկ կարողներէ չափաւոր վճարում մը կը պահանջուի :

Հաստացելոց բարեպաշտութեան թողուած է ամուսնացեալ կղերին պահպանութիւնը : Այդ նպատակին պէտք եղած հասոյթին գլխաւոր մասը կը քաղուի տուներէն կամ ծուխերէն, որոնց խրաքանչիւրը պարտաւոր է նկատի առնել իւր ծխատէրին պէտքը : Մնացածը կը հասնի քահանաներուն պատգովից անուով, աշինքն իրենց կատարած հոգեւոր պաշտամունքներէն, ինչպէս են, կնունք, նշանատուք, պսակ, թաղում, ծնունդի և զատկի տնօրհնէք, պատարագի յիշելիք և այլն : Իսկ եկեղեցիներու մէջ պլուկով հաւաքուած դրամը և քահանայական դատուն անուով եղած նուէրները, զանձապետի մետ ամփոփուելով ամէնուն հաստարտուէս կը բաշխուին : Այս ըսածներէն կը հետեւի որ ամուսնացեալ կղերը բացարձակ կերպով կամուօր նուէրներէ կը սպասէ իւր ապրուստը, և իւր հասոյթը կախում ունի իւր պաշտօնավարութեան մէջ ցուցուցած փութաջանութենէն և բարոյական արժանիքէն, և իւր ծուխերուն բարեպաշտական զգացումէն :

Իսկ կուսակրօն կղերին անդամները, երբոր վարչութեան մը գլուխը կը դանտին, և կամ մեծաորի մը օգնականութիւն կ'ընեն, ստիպարար համեստ ամուսական մըն ալ կը ստանան վիճակէն կամ թեմէն կամ թաղէն : Այդ պղտիկ թոշակին կը միանան մասնաւոր նուէրներ, զորս զանազան ծխակատարութեանց կամ հանգիստագրութեանց առթիւ հաստացեալներ ստիպ են ընծայել :

Մէկ խօսքով պէտք է եղբակացնել թէ Հայ եկեղեցականութեան ապրուստի կամ արհապանութեան վիճակը բոլորովին անհաստատ և անապահով է: Այդ կացութիւնը չներէր իրեն, ոչ ազատութիւն և ոչ անկախութիւն ունենալ իրեն ենթարկեալներուն հանդէպ: Առաջին տեսութեամբ մը, թերեւս այդ վիճակը փաստակար և վտանգաւոր երեւնայ: Բայց եթէ լաւ զննուի, պէտք է մեծապէս օգտակար նկատուի, քանի որ այս կերպով կը խափանուի եկեղեցականներուն յատուկ մարմին մը կազմելը, և ազգին մէջ կղերական զօրութիւն մը ստեղծելը: Այդ կերպը կը նպաստէ եւս եկեղեցականներուն և աշխարհականներուն մէջ համերաշխութիւն և համաձայնութիւն պահելու, քանի որ կղերը այդ համաձայնութեանէն պիտի օգտուի իւր կենցաղական շահերուն համար: Նա կը պարտաւորուի իւր պարտաւորութեանց մտադիր և իւր կոչումին նախանձայնը ըլլալ, որովհետեւ այդ կերպով միայն կրնայ իւր դիրքը պահել ու բարւոքել: Եթէ Հայութեան մէջ՝ եկեղեցի և ազգ, կղեր և ժողովուրդ համերաշխ եղած են, եթէ միեւնոյն տեսութեամբ քալած են, եթէ ազգային շահերը համաձայն կերպով նկատած և իրարու աջակցութեամբ աշխատած են, այդ արդիւնքը հետեւանք է եկեղեցականութեան ունեցած կենցաղական վիճակին և իւր միջոցներուն հայթայթման եղանակին: Եւրոպական երկիրներու մէջ երեւցած՝ եկեղեցական և ազգային շահերուն մասին ընդդիմամարտ մրցումը, որ է կղերականութիւն կոչուածը, Հայոց մէջ սկիզբէն իվեր տեղի ունեցած չէ և տեղի չունի:

## ԼԲ.

### ԱՇԽԱՐՀԱԿԱՆՆԵՐՈՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Հայեր իրենց կղերը, իրրեւ եկեղեցւոյ բացարձակ տէրն ու տիրողը չեն նկատեր: Եկեղեցին իրրեւ հաստա-



տուժիւն առնուած ատեն, նոյնչափ եկեղեցւոյ հաստացեալներուն կը պատկանի, որչափ եկեղեցւոյ պաշտօնեաներուն։ Այդ սկզբունքին զօրութեամբ, հաստաց պահանջներէն և խորհրդոց մատակարարութենէն դուրս, որոնց համար ձեռնադրութիւն և աստիճան անհրաժեշտ է, եկեղեցւոյ վարչութեան և մատակարարութեան վերաբերեալ գործերը աշխարհական տարրին մասնակցութեամբ կամ գործակցութեամբ կը կառավարուին։

Աշխարհական տարրին եկեղեցւոյ գործերուն մասնակցութիւնը, կը տեսնուի նախ և առաջ եկեղեցւոյ պաշտօնեաներուն ընտրութեան մէջ։ Ամուսնացեալ քահանայն թաղին հասարակութենէն կ'ընտրուի վկայութեան կամ ընծայութեան գիրով, և երբեմն կանոնադրութեամբ կը քրօնական ժողովը առաջնորդին նախագահութեամբ կը քրօնէ ընծայելոյն կարողութիւնը և յարմարութիւնը, և ժողովին որոշումը տրուելէն ետքը, եպիսկոպոսը կը կատարէ ձեռնադրութիւնը։ Եպիսկոպոսը չկրնար իւր նախաձեռնութեամբ քահանայ մը ընտրել և ձեռնադրել, բայց կրնայ ընծայեալը ձեռնադրել, երբոր ընծայեալին կանոնական թերութիւններ ունենալը կը ցուցնէ։

Կուսակրօն քահանաները վանքերու մէջ կը ձեռնադրուին, այնտեղ կրթուած ու պատրաստուած աշակերտներուն մէջէն։ Իրենց ընտրութիւնն ու ձեռնադրութիւնը կ'որոշուի վանահօր և վանական ժողովին կողմէ, բայց սարկաւադութեան կամ քահանայութեան կողմելու համար՝ պէտք է սեփական պատրիարքարանին հաւանութիւնն ալ ստանալ։ Այդ կէտին մէջ աշխարհականներու միջամտութիւն չը փնտռուիր։

Թեմակալ առաջնորդներու ընտրութիւնը Թուրքիոյ մէջ կը կատարուին վիճակային կամ գաւառական ժողովներու կողմէն, որոնց անդամներուն վեց եօթներորդը աշխարհական է և միայն մէկ եօթներորդը եկեղեցական։ Եկեղեցւոյ հնաւանդ և ընդհանուր կանոնին հոգին ալ այսպէս է։

Այսու հանդերձ Ռուսիոյ մէջ հաստատուած յատուկ կանոնադրութիւնը կամ պալամէնիան, առանց յայտնապէս աշխարհականներու միջամտութիւնը մերժելու, կայսեր կը վերապահէ առաջնորդներու վերջնական անուանումը, կաթողիկոսին կողմէ ներկայացուած երկու ընտրելիներուն մէջէն: Եթէ առաջնորդներու ընտրութիւնը կաթողիկոսի ընտրութեան հետ յարարերութեան և համեմատութեան դնենք, կրնանք հետևյալն թէ առաջնորդական ընտրելիները նշանակելուն մէջ ալ վիճակին ներկայացուցիչներուն մասնակցութիւնը մերժուած չէ: Իրօք ալ կաթողիկոսական ընտրելիները նշանակելու իրաւունքը թողուած է ընտրողական ընդհանուր ժողովի մը, որ կը բաղկանայ մէնմի վիճակի եկեղեցական առաջնորդներէն և աշխարհական պատգամաւորներէն: Կաթողիկոսութեան ընտրողական ժողովին կը մասնակցին ևս Եջմիածնի միարանութենէն ու թը սինոդականներ և եօթը երիցագոյն անդամներ: Ընտրողական ժողովը քուէով երկու ընտրելի կը նշանակէ, իսկ այս երկուքէն մէկուն վերջնապէս անուանումը կայսեր վերապահուած է:

Կոստանդնուպոլսոյ և Երուսաղէմի պատրիարքները կ'ընտրուին՝ Կոստանդնուպոլսոյ ազգային Ընդհանուր ժողովէն, որուն վեց եօթներորդը աշխարհականներէ և միայն մէկ եօթներորդը եկեղեցականներէ կը կազմուի կիլիկիոյ և Աղթամարոյ կաթողիկոսները կ'ընտրուին իրենց վիճակային ընդհանուր ժողովներէն, որոնց կէսը եկեղեցականներէ և կէսը աշխարհականներէ կազմուած է: Այդ մանրամասնութիւնք բաւական են ցուցնել, թէ ինչչափ դերակալու ձայն ունին աշխարհականները ամէն աստիճանէ եկեղեցական պաշտօնեաներու ընտրութեանց մէջ:

Եկեղեցական մատակարարութեանց մէջ աշխարհականներուն ձայնը՝ աւելի ալ է թերեւս: Թէպէտև անոնց միջամտութեան կերպն ու չափը՝ տարբեր է տարբեր տեղերու մէջ, իւրաքանչիւր տէրութեան ակրող օրէնքներուն և սովորութիւններուն համեմատութեամբ, բայց միշտ ու

ամէն տեղ աշխարհական տարրին մասնակցութեան սկզբունքը յարգուած է: Թուրքիոյ մէջ ամէն եկեղեցի կը մաստակարարուի Թաղական խորհուրդ կոչուած ժողովի մը կողմէ, որ ամբողջապէս թաղին աշխարհականներէն կազմուած է, և նոյն թաղեցիներու քուէներով կ'ընտրուի: Թաղականին կը պատկանին եկեղեցւոյն և վարժարանին և թաղին ներքին գործերուն հոգւածութիւնը: Թաղական մաստակարարութիւնը կը գտնուի վարչութեան հսկողութեան ներքեւ՝ Տնտեսական խորհուրդ կոչուած ժողովի մը ձեռքով, որ նոյնպէս բովանդակ աշխարհականներէ բաղկացած է: Ռուսիոյ մէջ ալ տէրութիւնը ճանչցած է իւրաքանչիւր եկեղեցւոյ համար Հոգաբարձու խորհուրդներ աշխարհականներէ կազմուած, միայն վիճակներու վարչութեան մէջ աշխարհականները դուրս է թողած, և զայն փոխանցած է միայն եկեղեցականներէ բաղկացած մարմիններու, որք են Սինոդը, Կոնսիստորիաները և Հոգեւոր կառավարութիւնները:

Հիմայ անցնինք ընդհանուր վարչութեան մէջ աշխարհականներու ունեցած մասնակցութեան, յատկապէս Թուրքիոյ մէջ: Այդ մասնակցութիւնը հնաւանդ է, ոչ միայն պատրիարքութեան այլ նոյն իսկ եկեղեցւոյ սկիզբէն. սակայն 1860 թուականէ ասդին տեղի կանոնաւոր և որոշ ձեւ մը առաւ Սահմանադրութեան կազմուելէն ետքը, որ 1863'ին կառավարութենէն ալ հաստատուեցաւ: Այդ Սահմանադրութեան զօրութեամբ, ազգային վարչութեան բարձրագոյն իշխանութիւնը յանձնուած է Ընդհանուր ժողովի մը՝ որ օրէնսդրութեան և հսկողութեան իրաւունքներն ունի. և Կրօնական ու Քաղաքական երկու ժողովներու, որոնք վարչական իշխանութիւնը կը ներկայացնեն, և կը գործակցին պատրիարքին՝ գործադիր իշխանութեան մէջ: Այդ ժողովներ ալ իրենց օժանդակ խորհուրդներն ունին, որոնք զատ զատ կը զբաղին, Գասաւստանական, Ռուսմական, Տնտեսական, Կապալային, Վանական և Ելեւմական գործերով,

և բարեգործական կեդրոնական հաստատութեան հոգածութեամբ՝ որ Ազգային հիւանդանոց կը կոչուի Ընդհանուր ժողովը հարիւր քառասուն անդամներ ունի, որոնց հարիւր քսանը, այսինքն վեց եօթներորդը աշխարհականներ են: Քաղաքական ժողովը աասուչորս աշխարհականներէ կը բաղկանայ, նոյնչափ են Կրօնական ժողովոյ եկեղեցական անդամները ամէն աստիճանէ, կուսակրօն կամ ամուսնացեալ անխտիր: Երկու վարչական ժողովները ուղղակի Ընդհանուր ժողովէն կ'ընտրուին, և միանալով Խառն ժողով կը կազմեն և ազգային վարչութեան գերագոյն մարմինը կը ներկայեն: Հոգեւորական գործերը Կրօնական ժողովին ձեռնահաստութեան կը պատկանին, իսկ մատակարարական և կրթական գործեր Քաղաքական ժողովին, և երկուքն ալ զատ զատ կը գործեն: Օժանդակ խորհուրդներ եօթնական անդամներէ բաղկացած են: Աստուծական, Տնտեսական, Ելեւմտական և բարեգործական կամ Հիւանդանոցի խորհուրդները ամբողջարար աշխարհականներէ կը կազմուին: Աշխարհականները մեծամասնութիւն ունին Կտակային և Վանական խորհուրդներու մէջ: Իսկ Գատաստանականին մէջ կէսուակէս են՝ անդամներուն թիւը ութը ըլլալուն: Ընդհանուր ժողովին ձեռնահաստութիւններն են, պատրիարքներու և վարչական ժողովներու ընտրութիւն, նախատեսեալ և լրացեալ հաշուեցոյցներու քննութիւն եւ որոշում, մասնաւոր կանոնադիրներու կազմութիւն, և ժողովներու անհամաձայնութեանց և ծանր գոյաբարութեանց լուծում տալ: Սահմանադրութիւնը ազգային ուղղակի տուրք մըն ալ հաստատած է, որուն կ'ենթարկուի ամէն արու անհատ՝ որ վաստակի տէր եղած է. և քուէարկութեան իրաւունքը այդ տուրքի վճարման հետ կապուած է: Տուրքերուն արդիւնքը պատրիարքարանի սնտուկին հասոյթը կը կազմէ:

Թուրքիոյ մէջ վիճակային կամ դատաւական վարչութիւնը, պատրիարքարանի կեդրոնական վարչութեան կաղապարին համաձայն է, միայն ժողովականներու թիւերը նուազ են,

և իւրաքանչիւր վիճակի ընդարձակութեան համեմատ տարբեր: Գառառական ընդհանուր ժողովներու անդամները եօթանասունէ մինչև քսանութեկ կը տարբերին, միշտ վեց եօթներորդը աշխարհական բլլալու պայմանով: Նոյն համեմատութիւնները կը պահուին վարչական ժողովներու և օժանդակ խորհուրդներու համար ալ, որոց մանրամասնութեան մանել աւելորդ կը սեպենք:

Ռուսոյ մէջ աշխարհականներ մասնակցութիւն չունին վիճակային կամ գառառական վարչութեանց մէջ: Կոթողիկոսական Սինոդ, և վիճակային Կոնսիստորիա, և թեմական Շոգեւոր կառավարութիւն ըստած վարչական մարմիններու անդամները բացառապէս եկեղեցականներ են, և զուտ հոգեւորական գործերու ձեռնհասութիւն ունին: Կայսերական կառավարութիւնը չէ հաճած այդ մասին աշխարհականներու մասնակցութիւնը ներել, և յարգել այն արտօնութիւնները, որոնք Օսմանեան կառավարութեան ներքեւ պահպանուած են:

Եզիպատի, Ռումանիոյ և Պուլբարիոյ վիճակները, որոնք Կոստանդնուպոլսոյ պատրիարքութեան ենթարկեալ են, անոր վարչական դրութեանը կը հետեւին, մինչև որ որ սեղական օրէնքները չեն ընդգիծանար: Իսկ Պարսկաստանի, Եւրոպոյի և Ամերիկայի վիճակները, որոնք Էջմիածնի աթոռին ուղղակի ենթարկեալ են, անոր վարչական դրութեան ալ կը հետեւին:

Այդ ամէն ծանօթութիւնները տալէն ետքը իրաւունք կ'ունենանք եզրակացնել, որ բոլոր քրիստոնեայ եկեղեցիներու մէջէն, Հայ Եկեղեցին է, որուն մէջ ժողովրդական հոգին աւելի ճշմարտութեամբ և աւելի ընդարձակութեամբ կը փայլի: Նա բոլորովին օտար է՝ եկեղեցւոյ մէջ կղերական կամ քահանայական բացառիկ տիրապետութիւն հաստատելու դրութենէն, որ այնչափ փաստակար եղած է կաթոլիկ Եւրոպոյի, և եղծած է այն համերաշխութիւնը որ պէտք էր տիրել եկեղեցւոյ պաշտօնեաներուն և հաստատ-

ցեալներուն, հոգեւոր հովիւներուն և հօտերուն միջեւ : Աշխարհականներուն եկեղեցական վարչութեան մասնակցելու իրաւունքը՝ Հայոց եկեղեցւոյ առաջին դարերէն սկսելով կը տեսնուի պատմութեան մէջ, և իւր արմատներն հաստատուած են քրիստոնէութեան ճշմարիտ և նոյնիսկ աւանդութեանց մէջ : Ազգային ժողովներու գործերուն մէջ կը տեսնանք, որ առաջները իշխեցող վեհապետներ և իշխան նախարարներ, աւելի ետքերը գլխաւոր և նշանաւոր ազգայիններ, վերջէն ընտրեալ պատգամաւորներ, մէկ խօսքով ամէն ժամանակի դրութեան համեմատ ժողովուրդի ներկայացուցիչ եղողներ, եկեղեցական ժողովներու մէջ նստած են եպիսկոպոսներու և վարդապետներու հետ, մասնակցած են նոյն խոսք վարդապետական և բարեկարգական խնդիրներու վիճարանութեանց և որոշմանց, և իրենց ստորագրութիւնները գրած են ժողովական գործերու ներքեւ, իրրեւ ժողովի իսկական անդամներ : Այդ հնաւանդ սկզբունքը կը տիրէ տակաւին ազգային սովորութեանց մէջ, և ատով է որ կ'արդարանայ աշխարհականներու մասնակցութիւնը եկեղեցական գործերու մէջ, և անոնց անդամակցութիւնը պատրարքական ժողովներու մէջ : Հայաստանեայց Ազգային եկեղեցին ժողովրդական կամ աշխարհական տարրին իրեն հետ գործակցութիւնը ապահովելով, առջեւն առաւ այն երկու մեծ վնասներուն, որոնք եկեղեցւոյ կացութիւնը կը վտանգեն Արեւմուտքի մէջ . ասոնցմէ մէկն է կղերականութիւնը ազգային գործոց մէջ, և միւսը անարբերականութիւնը կրօնական գործոց հանդէպ :

## 19.

### ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՆՈՒՆԸ

Ընդհանրապէս տարածուած սովորութիւն է կրկին անուանելով բացառել իւրաքանչիւր մասնաւոր եկեղեցին,

մէկը ազգագրական և միւսը վարդապետական . մէկը առնուած է իւրաքանչիւրին տոհմային սերունդէն, միւսը կազմուած է հետեւած սկզբունքներուն նշանակութենէն : Այսպէս են զանազան եկեղեցիներու սովորական կոչումները, զորօրինակ, Յունական Արթուրոս եկեղեցի, Ռուսական Պրատուլա եկեղեցի, Լատինական Կաթողիկ եկեղեցի, Անգղիական Եպիսկոպոսական եկեղեցի, Սկոտլանդական Երիցական եկեղեցի, Ամերիկեան Աւետարանական եկեղեցի, և այլն : Հայոց եկեղեցւոյ դաշով սովորաբար ազգագրական անունն է որ կը գործածուի, և վարդապետական անունի ժառին ընկալեալ սովորութիւն մը չկայ : Ինքն ալ կը գոհանայ միշտ Հայաստանեայց կամ Հայոց կամ Հայ կոչումները տալ իրեն պարզապէս : Իսկ սուրբ եւ առաքելական եւ ուղղափառ և արիւ նմանօրինակ կոչումներ, իբր լոկ պատուանուն կը գործածուին, և ոչ իբր յատուկ անուն :

Վարդապետական կոչում մըն ալ աւելցնելու պէտքը ծագեցաւ, երբ Էջմիածին Ռուսական պետութեան ներքեւ ինկաւ, և կայսերական կառավարութիւնը պահանջեց վարդապետական կոչում ալ տալ, ընդհանուր և ընկալեալ սովորութեան համաձայնեցնելու համար . որովհետեւ նոր կանոնադրութիւնը կազմած ատեն՝ բաւական չսեպեց ազգագրական անունով միայն յատկանշել Հայոց եկեղեցին : Այդ առթիւ կազմուեցաւ Լուսաւորչական հայերէն կոչումը, Ս. Գրիգոր Լուսաւորիչի անունէն առնելով, իսկ Ռուսերէնի վերածուած ատեն գիւրագոյն սեպուեցաւ սուրբին մակդիր անունէն աւելի՝ բուն անունէն առնել, և թարգմանուեցաւ Գրիգորեան : Այս կերպով Հայ Գրիգորեան անունը առաջին անգամ գործածուեցաւ 1836 թ պալատէնիայի ռուսերէնին մէջ, և Հայ-Լուսաւորչական անունը անոր հայերէն թարգմանութեան մէջ : Մինչև այսօր ալ այդ կոչումները կը գործածուին Էջմիածնի գիւսանական գրութեանց մէջ :

Բայց Հայոց ազգին մէջ լատնականութիւն գտած

չէ այդ կոչումը, որովհետեւ անուղղակի կերպով հեռացուցած կ'ըլլայ Հայ Եկեղեցիէն առաքելականութեան նկարագիրը, և այնպէս իմն կը ցուցնէ իբր թէ, չորրորդ դարուն Գրիգոր Լուսաորիչով սկսած եկեղեցի մը եղած ըլլայ, Հռոմէական կաթողիկոսներն ալ որ Ս. Գրիգոր Լուսաորիչը հռոմէացիացի մը ցուցնել կը ճգնին, չեն սիրեր անոր անունը սեփականել Հայոց Եկեղեցոյն, և կը խղճեն Ս. Գրիգոր Լուսաորիչի անունով կոչել Հայ Եկեղեցին՝ որ Հռոմի հետ միացած չէ, և իրենց տեսութեամբ հերձուածով և հերետիկոս է: Այդ պատճառով Հայ կաթողիկոսներ իրենց գործածութեան համար չինեցին էջմիածնական կոչումը, Էջմիածնի ակառօն առնելով, բայց իրենց յորինած այս անունը, ոչ Հայ Եկեղեցին կրնայ ընդունիլ, և ոչ օտարազգիներ գործածած են, նոյն իսկ Լատին կաթողիկոսներ ալ ընդունած չեն:

Բայց վերջապէս, եթէ հարկաւ կը պահանջուի որ Հայաստանեայց Եկեղեցին ալ երկրորդական կամ վարդապետական անուն մը ունենայ, մեր տեսութեամբ յարմարագոյն է Ուղղափառ կոչումը նախընտրել, հայերէն բնիկ հնչումով, որ իւր իմաստով՝ Արեւելեան եկեղեցիներու կոչումին համապատասխանելու առաւելութիւնն ունեցած կ'ըլլայ, այսինքն է Յոյներուն Ուրոլոս և Ռուսներուն Պրաւոսլաւ կոչումներուն: Այդ առաջարկութիւննիս բոլորովին նորութիւն մը չէ, արդէն ալ հրատարակուած է Գոթական Տարեցոյցին (Almanach de Gotha) 1890 տարուոյ (էջ 949) և 1891 տարուոյ (էջ 1012) հատորներուն մէջ: Մեր առաջարկած Ուղղափառ կոչումը Հայ կաթողիկոսները ուզած են իրենց պահել իբրեւ թէ Լատին եկեղեցոյ սեփականած Կաթողիկ կոչման թարգմանութիւնն ըլլար, ինչ որ բոլորովին սխալ է: Վասն զի կաթողիկ կոչումը յունարէն արմատէն բառացի իմաստով ընդհանրական կը նշանակէ. մինչ Ուղղափառ բառը նոյնպէս յունարէն արմատէն Ուրոլոս բառին կը համապատասխանէ: Հետեւաբար Հայ կաթողիկոսները առանց



զգալու իրենց հռոմէագաւանութենէն հեռացած և յունա-  
դաւանութեան յարած կ'ըլլան: Իսկ եթէ հայերէն հնչու-  
մին վրայ պնդեն, նոյն ատեն ալ Հայագաւաններ կ'ըլլան,  
և ոչ երբեք հռոմէագաւաններ, հակառակ իրենց բուռն  
փափաքին և նախանձայոյց ձգտումներուն:

Հայաստանեայց Եկեղեցւոյ Ուղղափառ կոչումը իրեն  
վարդապետական յատուկ անուն ընելու առաջարկին դա-  
նալով, կը կրկնենք թէ ազգային սովորութիւնը այդպիսի  
պահանջ մը չունի երբեք, իսկ օտարներու իմացողութեան  
օգնելու համար ալ՝ յարմարագոյն է կոչումները իւրաքան-  
չիւր ազգի համար իրեն սեփական հնչումով պահել, և ոչ  
իմաստին թարգմանութեամբ: Այս ալ է յատուկ անուննե-  
րու համար գործածուած հաստատուն օրէնքը: Ընդհանրա-  
պէս գործածական եղած են շատ մը անուններ, որոնք եր-  
բայական, արիական, յունական կամ լատինական ար-  
մատներէ ծագած են. այլ ոչ երբեք կը թարգմանուին, և  
իրենց բնիկ հնչումով կը մնան, թէպէտ պզտիկ այլայլու-  
թիւն մըն ալ կրած ըլլան: Ուստի ընկալեալ օրէնքին ալ  
համաձայն եղած կ'ըլլար՝ եթէ Հայ Ուղղափառ Եկեղեցի  
կոչումը, իւր բնիկ (Oughapar) հնչումով օտար լեզուներու  
մէջ գործածական դառնար: Մէկ կողմէն իւր իմաստով  
Արեւելեան եկեղեցիներու հետ սերտ կապակցութիւնը կը  
ցուցուէր, միւս կողմէն ալ իւր հնչումով՝ յատուկ ազգային  
եկեղեցի մը ըլլալը կը հաստատուէր:

# ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ

ԼԳ.

ԿՐԹՆԱԿԱՆ ՇԷՆՔԵՐ

Կրօնական պաշտամանց յատկացեալ շէնքերու փառաւորութիւնը կախում ունի՝ ժողովուրդին նիւթական կարողութենէն և կարեւորութենէն, և նուիրատուներու առատաձեռնութենէն. հետեւաբար հնար չէ Հայոց կողմէն շատ մեծագործ և հոյակապ արդիւնքներու սպասել: Ասիկայ զարմանալի պիտի չըլլայ, երբոր մտածուի թէ ինչ աղետալի և ծանր պարագաներու, և ինչ կենցաղական տագնապներու ներքեւ անցուցած է Հայը իւր կեանքը, գրեթէ սկիզբէն մինչև մեր օրերը: Սուտի մեր նպատակն ալ չկրնար ըլլալ մեծագործ շէնքերու և հոյակապ եկեղեցիներու նկարագիրն ընել այս տեղ, այլ միայն այդ շէնքերուն նկատմամբ սահմանուած կանոնական պահանջները և ծխական պարագաները բացատրել:

Հոգեւոր պաշտամունքներու սահմանուած շէնքերուն, այսինքն նիւթական եկեղեցիներու ձեւը քառակողմանի է սովորաբար: Աւագ սեղանը անհրաժեշտաբար արեւելեան կողմը պիտի ըլլայ, հնաւանդ արարողութեան համեմատ, որով կը հրամայուէր հաւատացեալին աղօթք ըրած ստներ երեսը դարձնել արեւին ելած կողմը: Եկեղեցիին ներսը

չորս մասերու կը բաժնուի իւր երկարութեան վրայ : Առաջին մասը Գաւիլին է , որ առաջ պատու մը բաժնուած էր միւս մասերէն , իսկ այժմ՝ ցանցառ վանդակապատով մը կը գատուի : Այդ ւասին մէջ կը մնային նախկին դարերու մէջ ապաշխարողները ու երեխաները , պատարապի մատուցման ատեն : Լուր օրեր ժամերգութիւններն ալ այդ մասին մէջ կը կատարուէին , և ասկէ ելած է ժամաճառն կոչուի : Գաւիլիը այլեւս իւր հին նշանակութիւնը չունի , և ոչ ալ անարժաններու յատկացեալ բաժին մըն է , միայն վանդակով զատելու սովորութիւնը մնացած է , իրը հին կանոնական պահանջներու յիշատակ մը :

Գաւիլիէն ետքը կուգայ բուն եկեղեցին , որ Ասեմնի ալ կը կոչուի , և Արեւմտեանը Նաւ կ'անուանեն՝ և է ժողովուրդին խմբուելու և կենայու տեղը : Հին ատեն մինակ այրերու սահմանուած էր այդ մասը , իսկ կիները խիտ և բարձր վանդակներով փակուած վերնատունները կը մնային : Հետզհետէ վանդակները ցածցան և խտութիւնը կորսնցուցին և այժմ՝ կիներն ալ եկեղեցւոյ մէջ ընդունուեցան , բայց միշտ երկու կողմերու վրայ զատուած կը մնան , և Եւրոպացիներու նման խառն կենայլը ընդունուած չէ : Արարողութեանց զանազան առիթներուն մէջ , զորքինակ հանդիսական ատեններու և յուզարկաւորութիւններու և հոգեհանգիստներու ատեն , կրկին ու գպիրներն ալ բուն եկեղեցւոյ մէջ կու գան , և այնտեղ կ'երգեն ու կարգ կը կատարեն ժողովուրդին մէջտեղը :

Ասկէ ետքը կու գայ Գասը , ոտք մը բարձր , և եկեղեցւոյ լայնքին վրայ՝ ցած վանդակով մը զատուած : Կրկին ու երգեցիկ գպիրները այդ մասին մէջ կը մնան երկու կողմերու վրայ բաժնուած , որք են աջակողմեան դասը և ձախակողմեան դասը , սաղմոսներն ու չարականները փոխ առ փոխ կամ՝ փոփոխակի երգելու համար :

Վերջին և չորրորդ մասը կը կազմէ Բեմը , որուն վրայ կ'ելլուի երկու ծայրերէն չորս հինգ ոտք սանդուխ-

ներով : Բեմին մէջտեղը կայ կամարածն կողակը , կամ վրանածն ԽՈՐԱՆԸ , անոր ներքե հաստատուած է Սեղանը կամ աւագ-սեղանը , որ կը բաղկանայ քարէ սիւնէ մը և վրան մարմարեայ սեղանէ մը , երկու քն ալ միւսոնով նուիրազործուած : Սեղանը ամէն կողմէն կղզիացած է՝ չորս կողմը դառնալու միջոց թողլով : Սեղանին վրայ աստիճաններ յարմարցուած են , մտի աշտանակներ և զանազան զարդեր գետեղելու համար : Անոնցմէ վեր ալ կը գտնուին խաչ մը և սեղանին պատկերը , որ պէտք է ըլլայ Աստուածամոր պատկեր մը Յիսուս Մանուկ գիրկը : Իրեն բացառութիւն կը դորձածուին երբեմն Յարութեան կամ Խաչելութեան պատկերներ , յատուկ տօներու առիթով : Սեղանին վրայ եղած յաւելումական մասերը Խաչկալ անունը կը կրեն , վասնզի սկիզբէն միայն խաչ մը կը դրուէր վրան : Խաչկալի ձեւին մէջն ալ նշանակելի տարբերութիւններ կան հինին և նորին մէջ . առաջինը կը պահուի տակաւին Կովկասի մէջ ընդ հանրապէս՝ և Հայաստանի հին եկեղեցիներէն ոմանց մէջ :

Հայոց եկեղեցիները հնաւանդ սովորութեան համեմատ , պէտք է ունենային գմբէթ և զանգակատուն , այսինքն կաթողիկէներով զարդարուած ըլլային , սակայն վերջէն իսլամական իշխանութեանց ներքե այդ աչքի զարնոզ յաւելումները արգիլուեցան , և դեռ նոր է որ սկսան ներուիլ յատուկ կայսերական արտօնութեամբ : Գմբէթներու հայկական ձեւը նեղ և սրածայր է , և կերպով մը կը նմանի կուսակրօն եկեղեցականներու վեղարին : Հայ եկեղեցիներու մէջ նշանակելի և օտարներու աչքին զարնոզ պարագայն՝ անոնց ներքին պարզութիւնն է , սուանց այն ոսկեճամուկ և նկարէն զարդերու և շքարներու և իկոններու որ յունադասան որթողօքս եկեղեցիներու յատուկ են : Պատկերներն ալ շատ ցանցաւ են , և աւագ-սեղանի և խորհրդանոցի սեղաններէ դուրս հազիւ թէ կը տեսնուին :

Պատարագի սեղանը մէկ հաս է միայն , պատարագն ալ օրը մէկէն աւելի չըլլար : Երկու պղտիկ սեղաններ , որք

չափ անդամ առաջ սեղանին երկու կողմերը կը տեսնուին, իբր զարդ կամ իբր խորհրդանոց գործածուելու սահմանուած են: Երբեմն մեծ եկեղեցիներու մէջ օծեալ են և որոշեալ տօներուն պատարագ մատուցանելու ալ կը ծառայեն, բայց այդ առթիւն առաջ սեղանի վրայ պատարագ շմատուցութիւն: Մէկէ աւելի պատարագ ունենալու համար, եկեղեցիին յարակից մատուռներ կը շինուին, իբրև զատուած փոքրիկ եկեղեցիներ. բայց միշտ հոգ կը տարուի որ միեւնոյն օր պատարագները չչատնան, և մատուռներ գործածուին միայն յատուկ տօներու և յատուկ սուրբերու յիշատակութիւնը փառաւորելու, որոնց անունին նուիրուած են մատուռները: Կոստանդնուպոլսոյ Ղալաթիա և Քուսքարու թաղերուն մէջ երեք նման եկեղեցիներ քով քովի շինուած են: Այդ ձեւը ընդունուած էր հաստացելոց բազմութեան բաւելու համար, որ այդ թաղերուն մէջ կը գրտնուէր: Բայց որովհետեւ այլևս նոյն թաղերու հայաբնակութիւնը նուազած է, անոնց մէջ ալ այժմ միակ պատարագի գրութիւնը կը տիրէ:

Ամենօրեայ պատարագի մատուցման սովորութիւնն ալ շատոնց Հայ եկեղեցիներուն մէջ դադարած է: Ընդհանրապէս պահանջմամբ պատարագը կը լռէ միայն Առաջնօրաց շաբթուն և Մեծպահքին վեց շաբթներուն մէջ՝ երկուշաբթիէ ուրբաթ, և առաջ շաբթուն չորս օրերը: Փորձնականապէս ուրիշ օրեր ալ կրնայ լռել, և այժմ պատարագի մատուցումները կը կատարուին շաբաթ և կիրակի և տօն օրերը, մեծ եկեղեցիներու մէջ՝ շաբթուն ուրիշ մէկ օրն ալ: Իսկ զիւղական եկեղեցիներու մէջ աւելի ալ նուազ, տեղական յարմարութիւններուն համեմատ: Բայց ամենօրեայ ժամերգութիւնը առատ և երեկոյ անխափան է ամէն եկեղեցիներու մէջ:

Եկեղեցիները երկու ալ պահարաններ կամ աւանդատուներ պիտի ունենան, աջակողմեանին մէջ կը դանտի մկրտութեան առաջանը, և մկրտարան ալ կը կոչուի. իսկ ձախակողմանը կը ծառայէ սպաններու և զգեստներու պահ-

պանութեան և սարկաւազասուն ալ կը կոչուի: Մեծ եկեղեցիներ երրորդ պահարան մըն ալ կ'ունենան Գամձասուն անունով, ամուր շինուած և լաւ փակուած, ուր թանկագին և արժէքաւոր սպասներ կը պահպանուին: Եպիսկոպոսական կամ առաջնորդական աթուրը հաստատուն կը մնայ միայն աթոռանիստ մայր եկեղեցւոյ մէջ, և ղեակուած է, դասին գումանէն ներս մտած ատեն ձախ կողմը, որ խորանէն նայուելով աջակողմ է: Աթուրը դրուած է երեսը դէպի խորան, և համեստ կազմած ունի, մէկ կամ երկու աստիճանով ամփոփ պատուանդանի վրայ: Աթուին վրայ հովանին կամ սրններու վրայ հաստատուած ամպհովանին, գործածական է կաթողիկոսական և պատրիարքական և արքեպիսկոպոսական աթոռներուն վրայ: Մնացեալ եկեղեցականներուն համար ոչ աթոռ կայ և ոչ նստարան, այլ գետիներ բարձերու կամ գորգերու վրայ կը նստին: Ժողովուրդին ալ աթոռ կամ նստարան պատրաստելու սովորութիւն չկար, այլ կամ միշտ կանգուն պիտի կենային սաքի վրայ, և կամ գորգերու և սփռոցներու վրայ պիտի նստէին: Սակայն վերջին տարիներ, կոստանդնուպոլիսէ սկսելով եկեղեցիներու մէջ նստարաններ գնելու սովորութիւնը մտաւ, և հաւանական է որ տարածուիլ սկսած սովորութիւնը՝ շուտով ալ կ'ընդհանրանայ:

Եկեղեցիներու առջեւը, և ստէպ ալ շուրջը, վրան բաց բակ մը կը գտնուի, որուն վրայ կը բացուին եկեղեցւոյ պէտք եղած շինութիւնները, ինչպէս են բանկայլը ուր մամուլաճառութիւն կը կատարուի և նուէրներ կամ նպաստներ կ'ընդունուին. թաղական խորհրդարանը, թաղական դիւանը, քահանայից ընդհանուր սենեակը, ժամաւարին սենեակը պառկելու համար, և եկեղեցւոյ սպասաւորներուն բնակարանները: Թաղական վարժարաններ ստորաբար եկեղեցիներու բակին վրայ կը բացուին, ուր սպրիւր մը միշտ կը գտնուի, և կարեաց գործարաններ ալ կը ղեակուին պատշաճ անկիւն մը: Այդ ամէն շինուածներ որմա-

փակի մը մէջ ամփոփուած կ'ըլլան, և վերապահեալ շրջափակ մը կը կազմեն, որ հասարակ կայրածններէ տարբեր առանձնաշնորհեալ բնութիւն ունի տեղական օրէնքին առջեւն ալ, իրրեւ բացարձակապէս ազգային նուիրական ստացութիւն :

## ԼԵ.

### ԿՐԾՆԱԿՄՆ ՊԱՇՏՈՆԵԱՆԵՐ

Առիթ ունեցանք եկեղեցականներու վրայ գրել՝ նախ խորհուրդներու և յետոյ նուիրապետութեան աստիճաններու վրայ խօսած ատեննիս : Սակայն այն տեղեր վարդապետական և բարեկարգական տեսակէտէն խօսեցանք, իսկ այստեղ պիտի աւելցնենք ծիսական տեսակէտով նկատուելիք կէտերը :

Եկեղեցականութեան մէջ՝ ներկայ դրութեան համեմատ զսնուած աստիճաններն են . 1. դպիր, 2. սարկաւազ, 3. քահանայ, 4. աւագերէց, 5. վարդապետ, 6. եպիսկոպոս, 7. պատրիարք, 8. կաթողիկոս :

Դպիրներ են, որոնք չորս փոքր աստիճաններու ձեռնադրութիւնը ընդունած են, այսինքն դռնապանութիւն, բնիթեքցողութիւն, երգմնեցուցչութիւն և ջահընկայութիւն : Լուսարարներ և երգեցողներ այդ աստիճանները կ'ընդունին, երբ հաստատապէս եկեղեցւոյ ծառայութեան հետ կը կապուին : Փոքր աստիճաններու ձեռնադրութիւնը չարգիւլեր աշխարհիկ տարազ գործածել, և աշխարհիկ կենցաղ վարել : Եկեղեցւոյ մէջ, դպիրներուն յատուկ ծիսական զգեստն է ռապիկ, երկար պծցնտօր մը մինչև ոտունները, առջևէն գոց, անխտիր ամէն կտուէ կամ կերպասէ

չինուած՝ նոյն խակ թաւիչէ : Վրայի կողմը ազուցուած է ուսանոց մը , որ թիկունքը և ուսերը և կուրծքը կը դոցէ . ընտիր կտորէ կը շինուի , և յաճախ ասեղնագործուած է : Երեք խաչեր պիտի ունենայ , մէկը ետեւը և երկուքը կուրծքին երկու կողմերը : Թէպէտև ուսանոցը պէտք է չապիկին վրայ հաստատուած ըլլայ , սակայն նորաձեւութեամբ մը սկսած է զատաբար գործածուիլ իրր թիկնոց : Ժառանգաւորաց վարժարաններու կամ գպրեւմանքներու աշակերտները չորս աստիճանները կ'ընդունին , և եկեղեցիէ դուրս ալ եկեղեցական սքեմ՝ կը գործածեն , այսինքն է սև ասուիէ կապայ մը , և վրայէն նոյն ասուիէ վերարկու :

Սարկաւագներ , ինչպէս արդէն ըսինք , միայն վանքերու մէջ կը գտնուին կուսակրօն գասակարգէն : Հազիւ թէ քառասուն հաս կը գտնուին բոլոր վանական հաստատութեանց մէջ միանգամայն : Կիտասարկաւագութիւնը սարկաւագութեան հետ մէկտեղ կ'ընդունին , և արտաքին տարազին ուրիշ եկեղեցականներէ չտարբերիր : Գլուխին վաւիւղ կը դնեն , արեւելեան կղերին գործածած քամիլաճճա գլխանոցին մէկ տեսակը , աւելի ցած և սրածայր , որուն սկզբնաւորութիւնը եղած է 1845՝ին , և ձեւն ալ վեղարի ներքին մասէն առնուած կ'երեւի : Եկեղեցւոյ մէջ գործածածնին գպիրի չապիկն է , որուն վրայէն կը կրեն ուրար մը : Երեք մետրի չափ երկայն և տասնէ տասնըհինգ հարիւրդամետրի չափ լայն՝ երկար կտոր մըն է . երեք խաչերով զարդարուած , որ ձախ ուսին վրայ կը ձգուի , և առջեւէն ու ետեւէն մինչև ոտուրները կը կախուի : Կրնայ աւելի երկար ալ շինուիլ , այլ միեւնոյն ձեւը կառնէ , կուրծքին վրայէն և աջ անութին ներքեւէն անցնելով : Սարկաւագին պաշտօնները և պաշտամանց մէջ ըսելիքները ծիարարաններուն մէջ ցուցուած են . գլխաւորներն են խրնկարկել , պատարագին աւետարան կարդալ , վերարերում՝ ընել , և Ժողովուրդին աղօթքին առաջնորդել քարոզներով : Ուր որ սարկաւագներ չեն գտնուիր , քահանաներ անոնց



պաշտօնները կը կատարեն սարկաւազի տարազը հազնելով : Ամուսնացեալ քահանայութեան ընծայացուները ժողովուրդին ամէն դասակարգէն կ'առնուին , այլ կը նախադասուին եկեղեցւոյ երաժիշտները և դպրոցներու վարժապետները : Բաւական ընդհանրացած է յորդուոյ յորդի քահանայանալու սովորութիւնը , և մինչև քսան ու երեսուն սերունդ շարունակած քահանայական տուներ կը գտնուին : Ընտրելութեան պայմաններն են , թաղեցոյ կողմանէ ընտրութիւն , եկեղեցական և ծիսական գործողութեանց հմտութիւն , օրինակելի կամ գէթ կանոնաւոր բարոյական կենցաղ , և իրենց կիներուն հաւանութիւնը : Գաստիարակութեան և ուսման աստիճաննին՝ իրենց ծառայելիք ժողովուրդին կենցաղական և կրթական աստիճանին հետ համեմատութեան մէջ կը նայուի : Ամէն քահանայ իւր ձեռնադրութեամբը եկեղեցւոյ կամ թաղի մը հետ կապուած է , և տեղ փոփոխելը նոր ընտրութեան մը ձեւը կ'առնէ թեմական իշխանութեան հաստատութեամբ : Ընտրելիներուն համար կը պահանջուի եւս որ նոյն թաղին մէջ հաստատուն բնակութիւն ունենան .

Չեռնադրուելէն անմիջապէս ետքը Բաղասունի մը մը պիտի պահեն , քառսուն օր ծոմապահութեամբ և եկեղեցւոյ մէջ աղօթքի պարապելով , և անկէ ետքը առաջին պատարագը կը մատուցանեն : Նոյն միջոցին կը վարժուին իրենց կոչման ծիսական և գործնական պարտաւորութեանց : Նորընծայ ձեռնադրուածներուն երէցկիներն ալ իրենց առնին մէջ քառսունքը պարզ պահեցողութեամբ կ'անցնեն : Երէցկիները ընտանեկան շրջանակներու մէջ յատուկ յարգանքի և առաջնութեան պատիւներ կը վայելեն : Քահանաներուն կենցաղը կատարելապէս ընտանեկան կեանքն է , այն պայմանով՝ որ իրենց կոչման պարտաւորութիւններուն անթերի և ճշգրտապէս ըլլան . և ոչ մի պատճառով չյետաձգեն ու զանց չընեն՝ եկեղեցւոյ և ժողովրդեան պէտք եղած քահանայական պաշտօնները : Անոնք լրացնելէ ետքը , կրնան նոյնիսկ

պարագ պատենինն արհեստի կամ արուեստի գործով մը զբաղիլ պատշաճից և վայելչութեան պահանջները յարգելով : Պատարագելու օրէն շարաթ մը , դոնէ կէս շարաթ առաջ , ընտանեկան յարկէն պիտի հեռանան , և զիչերները եկեղեցւոյ սենեակներուն մէջ պիտի անցնեն : Հին աստեններ վերարկուէ զսա՝ աշխարհականներէ տարբեր տարազ չունէին եկեղեցիէ դուրս , բայց հետզհետէ ամբողջ եկեղեցական սքեմի գործածութիւնը ընդհանրացաւ , որ քաղաքներէ սկսելով՝ զիւղերն ալ տարածուեցաւ : Աքեմիկն կը բողկանայ կապայէ , վերարկուէ , և փակեղէ , ամէնն ալ սե զոյնով . թէպէտև դատուներու մէջ կը տեսնուին տարբեր գոյներով կապայ գործածողներ : Ընդհանուր առմամբ սե զոյնը սրտատարիչ է վանականներուն և ոչ թէ ամուսնացեալներու , որոնք աշխարհական կենցաղ ունին , և ժողովրդական ձևեր կրնան պահել :

Եկեղեցւոյ մէջ ժամերգութեանց ատեն՝ սե փիլրոն կը կրեն , հասարակ աստիէ : Ծագկեայ կամ գունաւոր փիլրոնի արածնութիւնը կը չնորհուի իբր վարձատրութիւն և իբր պատուոյ նշանակ : Վարձատրութեան կամ պատուոյ նշան մըն է նաև լանջախաչ կրելու արածնութիւնը , որ քահանայից համար ոսկեջրած պղնձէ է : Իսկ քահանայից ծխական զգեստներն են , ամէնէն առաջ շապիկ սպիտակ կտաւէ , փորուբար վիզէն մինչև սաքը , գօժի մէջքին , բազպան երկու թեւերուն , անոնց վրայէն շուրջաւ , որուն իբր օձիք կը կցուի վակաս՝ պինդ և ուղիղ բարձրացած : Գլուխին կը դնեն սաղաւարտ , որուն շուրջը կը պատէ պլասկ մը , և գազաթը կը բարձրանայ խաչ մը : Հանդիսաւոր արարողութեանց ատեն շուրջաւոր փիլրոնի տեղ կը գործածուի :

Հայ եկեղեցւոյ ամուսնացեալ քահանաներուն թիւը դոնէ չորս հազար պէտք է հաշուել :

Աւագերէցիներ , քահանաներէ տարբեր ձև չունին , և իրենց առաւելութիւնն է եկեղեցիներու մէջ հոգեւոր կարգադրութեանց և պաշտամանց կանոնաւորութեան հսկել :

Կուսակրօն եկեղեցականութիւնը խմբաբաժին յառաջնութիւն ունի ամուսնաւոր եկեղեցականութեան վրայ, այնպէս որ կուսակրօններուն ամէնէն փոքրը և ամէնէն նորընծայն՝ նախաթուօթիւն կը վայելէ ամուսնաւորներուն ամէնէն հինին և ամէնէն յառաջագէտին վրայ: Կուսակրօն խումբը երեք աստիճաններու կը բաժնուի, ինչպէս ըսինք: Վարդապետներուն իրարու մէջ առաջնութիւններն վեղար առնելու կարգով է, և ոչ աստիճանի տարբերութեամբ: Արտաքին տարագով ուրիշ եկեղեցականներէ չեն տարբերի, միայն փակեղին վերի մասը մանուշակագոյն կրնայ ըլլալ, բայց արգիլեալ չէ ամբողջ սեւագոյն ալ գործածել: Զգեստներն ալ սև է ամբողջովին: Եկեղեցւոյ մէջ փերձներն սև ծաղկեայ մետաքսէ կ'ըլլայ մասնաւորներու համար, և ծայրագոյններու համար ծաղկեայ մանուշակագոյն՝ հանդիսութեանց պարագաներուն, իսկ սովորաբար աւելի պարզ: Ընտանիքի զգեստներն ալ քահանայից հաւասար է, միայն վարդապետական գաւազանի առաւելութիւնն ունին: Իբր պատուոյ կամ վարձատրութեան նշան տրուած լանջախաչեր, վարդապետներու համար ականակուռ են երեւոյթով: Հայ եկեղեցւոյ մէջ կը գործածուի ձեռաց խաչք, չորս հաւասար թեւերով, միջոցները ճառագայթներով և առանց խաչելեալ պատկերի: Խաչին կցուած է կոթ մը, ուսկից կը բռնուի պզտիկ և դարդարուն գաստառակով կամ բռնիչով մը: Խաչք օծուած է և մէջտեղը ակին մէջ յաճախ մատունք մըն ալ կը զետեղուի: Այդ խաչք կը բռնեն վարդապետներ և աւագերէցներ ամէն հանդիսութեանց առան, իսկ քահանաներ պաշտօնակատարութեանց առան: Օրհնութիւններ միշտ այս խաչով կը տրուին: Միւսոնով կ'օծուին եկեղեցւոյ մէջ գործածուելիք ամէն խաչերը: Վարդապետներուն ալ զրուիք դրածք սաղաւարտ է. բայց կրնան եպիսկոպոսական խոյր գործածել երբ թեմակալ առաջնորդ են, այլ միայն թեմին մէջ: Վարդապետներու աստիճաններուն և պաշտօններուն վրայ արդէն խօսած ենք:

Կուսակրօններու թիւը հազիւ չորս հարիւր է Հայ եկեղեցւոյ մէջ, եպիսկոպոսներն ալ միասին առնելով:

Եպիսկոպոսներուն ալ արտաքին տարազը, ուրիշ եկեղեցականներէ շատրեւրի, միայն մատանի մը կը կրեն աջ ձկոյթին, իսկ կաթողիկոսներ աջ մատանեմատին: Խոյրն ու գաւազանը նման են լատինականներուն, այլ միշտ ճօխ ու զարդարուն: Եմփորօնը աւելի երկայն եւ աւելի լայն է քան ուրիշ ծէսերու մէջ. չորս մետրի չափ երկար, քսանէ երեսուն հարիւրորդամետր լայն, և լաւ ասեղնադործուած: Եմփորօնը գործածուած ատեն կուրծքն, ու թիկունքը պատելով և ուսերուն վրայէն անցնելով, առջեւէն ու ետեւէն մինչեւ ոտուքները կը հասնի: Եպիսկոպոսներուն յատուկ լանջազարդը, պլնակի կամ պանակի կը կոչուի, յունարէն Պանակիա կամ Պանակիա (Աստուածածին) անունէն առնուելով, ինչպէս առնուած է սովորութիւնն ալ. և է ականակուռ զարդարուած չիզդ մը, Աստուածածնայ կամ Յիսուսի պատկերով, և վիղէն կը կախուի իբր լանջախաչ: Պնակէի կիրառութիւնը Ռուսական տիրապետութենէ ետքը ընդունուած է: Եպիսկոպոսներուն համար, վիճակին մայր եկեղեցւոյ մէջ հաստատուն ակոռէն զատ, չարժական ակոռ ալ կը դրուի բեմի վրայ՝ քարոզած ատեննին, կամ ատեննի մէջ՝ հանդիսութեանց առթիւ: Իրենց թեմէն դուրս, միայն չարժական ակոռի արօծութիւնը կը պահեն: Հայեր եպիսկոպոսներուն ձեռքը պողած ատեննին ոչ Լատիններու ծնրագրութիւնն ունին և ոչ Յոյներուն երկրպագութիւնը. պարզութիւնը տիրող է Հայ եկեղեցւոյ արարողական և պաշտօնական ձեւերուն մէջ: Արքեպիսկոպոսութիւնը այժմեան սովորութեամբ պատուանուն մը միայն մնացած է, որ յաստիճանութեան իրաւունք իսկ չտար. և եպիսկոպոսներ իրենց մէջ ձեռնադրութեան երիցութիւնը կը պահեն անխարաբար:

Երուսաղէմի և Կոստանդնուպոլսոյ պատրիարքներուն բոլոր առաւելութիւնը կ'ամփոփուի ուրիշ եպիսկոպոսներուն

վրայ նախաթուութեան մէջ, զոր կը պահեն հրաժարելէն ետքն ալ: Ասկէ զատ միայն պաշտօնին յարակից պատուազիր ձեւերը կը պահուին:

Կաթողիկոսական աստիճանը զանազան առաւելութիւններ ունի՝ յատուկ օժմամբ աստիճաննին ընդունելէն սկսելով. մինչ թէ Հռոմէական եկեղեցւոյ ընդհանրական պապը և թէ Յունական եկեղեցւոյ տիեզերական պատրիարքը՝ օծում չեն ընդունիր, և լոկ ընտրուելով և պաշտօնը ստանձնելով գործերնուն գլուխը կ'անցնին: Իբրև զգետտի առաւելութիւն Հայ կաթողիկոսներ ունին կոնկլա, իբրև հովուական մողաթի նշանակ, զոր ձախ կողմէն գօտիէն կը կախեն: Օծումի ատեն գլուխնուն վրայ կը գրուի ֆող մը, որ է թանձր և ասեղնագործ ծածկոյթ մը, որ անկէ ետքը հանդիսաւոր առիթներուն առջեւէն կը տարուի: Էջմիածնի կաթողիկոսներուն վեզարին վրայ երեւցող ադամանգեայ պղտիկ խաչը, շքանշան մըն է Ռուսոյ կայսրներէ շնորհուած, և ոչ ծիսական զարդ: Էջմիածնի տիրապետութեանէն առաջ նոյնը կը շնորհուէր Ռուսոյ Հայ առաջնորդներուն: Կաթողիկոսներուն աստիճանին և պաշտօններուն վրայ՝ խորհուրդներու եւ նախարարութեան գլուխներու մէջ խտուեցաւ:

## 12.

### ԿՐԹՆԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Կրօնական բարեպաշտութեանց մասին Հայ հաւատացեալին վրայ բնաւ պարտաւորութիւն մը գրուած չկայ մահացու կամ ներելի մեղքի սպառնալիքով: Հայ եկեղեցին կը ցուցնէ ինչ որ օգտակար է, կը պատուիրէ ինչ որ կարեւոր է, իւր հրամանները հեզութեան և քաղցրութեան

հոգւով կը զօրայնէ, և արտաքին արարողութիւններով և հրապոյրներով ալ կ'աշխատի յորդորել և գրեթէ ստիպել. բայց կը զգուշանայ ինքն նոր մեղք մը ստեղծել, իւր պատուիրաններուն զանցառութեան մեղքի ձեւը տալով:

Կիրակիներու ծառայական գործերէ գաղարկելով պահպանութիւնը՝ պատուիրան մըն է աստուածային: Հին սովորութեան համեմատ կիրակին կը սկսի շարաթ երեկոյն արեւ մտնելէն, և կը վերջանայ յաջորդ կիրակի օրուան արեւ մտնելուն: Ընտանայական կը նկատուի շահի կամ վարձու համար կատարուած գործ մը, և ոչ թէ պարզապէս մարմնաւոր աշխատանքը: Այս պատճառով եկեղեցական լոյսանութիւններ միշտ հրաւիրած ու քաջալերած են ժողովուրդը մարմնոյ և բազուկի աշխատութեանց, երբոր անոնք ձրիաբար կը կատարուին բարեպաշտական կամ բարեգործական նպատակի մը համար: Այսպէս ստէպ կիրակի օրեր ձրիապէս կատարուած են եկեղեցիներու եւ վանքերու շինութեանց և նմանօրինակ պէտքերու համար եղած աշխատութիւնները: Նոյն պատճառով եկեղեցին թոյլատու կը դանուի նաև այն աշխատութեանց, որոնք հանրային օգտակարութիւն ունին և ստիպողական են:

Կիրակիէ դուրս հրամայեալ տօներ շատ ցանցաւ են Հայ տօնացոյցին մէջ: Այլակերպութիւնը, Վերափոխումը և Խաչիկերացը մտաւորազոյն կիրակիին կը փոխադրուին: Քանի մը տօներ, որ այսօր ամսաթիւի ճիշդ օրով կը կատարուին, այսինքն Աստուածայայտնութիւնը, Տեառնընդառաջն ու Աւետումը, առաջին ժամանակներ կ'երեւի թէ այսպէս չէին տօնուեր, ինչպէս կրնայ քաղուիլ պաշտամանց պատշաճներու զննութենէն: Աւրիշ քանի մը տօներ ալ, այսինքն Աստուածածնայ Մըտնոյդը, Ընծայումն ու Յղութիւնը, վերջին դարերու մէջ մտծուած տօներ են: Այսպէս կը բաւէ հաստատել, թէ Հայ եկեղեցին յօժարութիւն չէ ունեցած հրամայեալ տօներ կամ անգործութեան օրեր շատցնել:

Կիրակի օրուան աղօթքի պարտաւորութիւնը չստի-

ուամ կամ կշռուամ՝ և նիւթական քանակի կամ ձեւի հետ կապուամ չէ : Պատարազը մէկ հատ միայն ըլլալով իւրաքանչիւր եկեղեցւոյ մէջ, և այն ալ միշտ ձայնաոր՝ այսինքն երկար ըլլալով, հնար չէր որ ամէն հաւատացեալներէ պահանջուէր, նոյն պատարազին ամբողջապէս, կամ անոր որոշուամ ու չափուամ մի մասին ներկայ ըլլալ անպատճառ : Այս պատճառաւ հաւատացեալի մը պատշաճ և օրինաւոր չափով, պատարազին կամ ժամերգութեան ասոն հատարակաց ազօթքին մասնակցիլը, կիրակնօրեայ բարեպաշտական պատուիրանին համար բաւական կը սեպուի : Նոյն իսկ շաբաթ երեկոյի կիրակամուտի ժամերգութեանց ներկայութիւնը, իբր կիրակնօրեայ պարտաորութեանց լրումն կը նկատուի : Ըստ այսմ, որովհետեւ պատարազ ու ժամերգութիւն հաւատար կը նկատուին բարեպաշտական պարտաւորութեան տեսակէտէն, անոր համար Հայ եկեղեցւոյ հաւատացեալներ, սիրով և աւելի յաճախ ժամերգութեանց ներկայ կը գտնուին :

Ժողովրդական սովորական եղած ազօթքը Հայր մեր տէրունական ազօթքն է, գրարար լեզուով, Լատիններուն սովորական եղած Ողջոյն քեր ազօթքը, և Վարդաբան ըսուածը, Հայ եկեղեցւոյ անմանօթ է, թէպէտ և Հայ կաթողիկոսներ Լատիններէն առնելով իւրացուցած են : Ժողովուրդը կը կրկնէ ու կը կրկնէ Տէր ոլորմես հառաչանքը, նոյն իսկ մինչև հարիւր անգամ : Հաւատացեալներ զոչ գիտեն ժամերգութեանց գլխաւոր մասերը, և երգեցողութեանց ու սաղմոսերգութեանց կը ձայնակցին, բռեղեայն կամ դաշն ձայնով, և գլխաւոր ազօթքներուն կը հետեւին ամբի կրկնելով : Ժամերգութեան անկախ ազօթքներով ազօթագիրքեր չկան, այլ ժամերգութեանց գլխաւոր մասերը առանձինն և առձեռն կերպով հրատարակուած են ժողովուրդին գիրութեան համար՝ իրեն բնագրական գրարար լեզուով, երբեմն ալ գիմնացը աշխարհարար թարգմանութիւնը աւելցնելով :

Որչափ ալ մեր օրերը հողեւորական զգացումը եւ բարեպաշտական հողին ակարացած ըլլան, բայց տակաւին անօր արմատները խորունկ կը մնան Հայ հատասացելոց սիրտին մէջ: Արհեստաւոր եւ գործաւոր գասակարգէն շատեր, առտուն գործերնուն գացած ասան, ճանպանուն վրայ գտնուող եկեղեցի մը մտնելը եւ համառօտ աղօթք մը զանց չեն ըներ. եւ կը սիրեն օրերնին համառօտ բարեպաշտութեամբ մը սկսիլ եկեղեցիի մէջ կամ եկեղեցիէ դուրս: Թուրքիոյ մէջ ամէն եկեղեցի շարժուն մէջ որոշ օր մը ունի, խաչնակցիսի արարողութեամբ ջուրի օրհնութիւն կատարելու: Ձուրը կ'օրհնեն մասունքով մը՝ տեառնադրելով եւ մէջը սուղելով: Ընդհանրապէս կը գործածուի Խաչափայտը, իսկ սուրբերէն Գրիգոր Լուսաւորչի, Յովհաննէս Կարապետի, Յակոբ Մծբնայի, եւ Գէորգ զօրավարի մասունքները: Հաստացեալք կը յաճախեն խաչճանգիտին, եւ օրհնուած ջուրը կը գործածեն խմելու կամ քսուելու, ուսկից ժողովրդական եռանդը բժշկական զօրութիւն ալ կը սպասէ: Աղօթքի համար կը գործածուի նաեւ ալ, որ է Ս. Գրիգոր Նարեկացիի եռանդուն եւ հոգեբուղիս աղօթքներուն գիրքը, բարձր եւ զարդարուն ոճով գրուած, եւ ցաւերու եւ վիշտերու գէժ գարման նկատուած:

Խոստովանութեան եւ հաղորդութեան խորհուրդներու մերձեցման մասին, հին սովորութիւնն էր հինգ Տաղաւարներուն զանց չընել, որք են Աստուածայայտնութիւն, Յարութիւն, Այլակերպութիւն, Վերափոխում եւ Խաչվերաց: Ասանցմէ Այլակերպութիւն եւ Խաչվերաց շուտով սկսան զանց ըլլալ իրարու մօտ ըլլալուն համար. բայց բարեպաշտներ միւս երեք Տաղաւարները կը պահեն, իսկ ընդհանրութիւնը գտնէ Զատիկը զանց չընել: Հաղորդուելու համար պէտք եղած ծովք քուն մտնելէն կամ աւելի ճիշդ քունին վերջանալէն կը սկսի, առանց կէս գիշերի կամ որոշեալ ժամի հաչիւ բռնելու:

Սուրբ տեղեաց ուխտաւորութիւնը, թէպէտ քիչցած,



սակայն միշտ բաւական թուով բարեպաշտներ կը կտարեն, այցելելով Սուրբ Գերեզմանը և Փրկչին ներկայութեամբ նախադարձեալ տեղերը: Իսկ ազգային ուխտասեղիններուն գլխաւորներն են, Ս. Լճմիածնի կամօղիկէն, Մշոյ Ս. Կարապետը, Կեսարիոյ Ս. Կարապետը, և Արմուշու Ս. Չարսափանը:

Բարեպաշտական արտայայտութեանց և աղօթական զգացմանց նշաններուն կարգին յիշենք, պատկերներու առջև և սեղաններու վրայ մտմ վառելը, եկեղեցւոյ կանխեղներուն ձէթ թափելը, արտրոպութեանց համար խունկ նուրբելը, եկեղեցւոյ կիրառութեան առարկաներ պատարասելը, և զգեստներ և սպասներ ընծայելը:

Խաչակնքելու ձեւը Լատիններուն նման է, ձեռքը ձախէն աջ տանելով, և խաչակնքելու և երկրպագելու շարժումները առատօրէն կը կրկնուին: Երկրպագութեան ձեւն է, երկու ծունկերը գետին զայցնելով, ծոխը և դետինը համբուրել, երկիրը պագնել: Բայց զգեստներուն ձեւերը փոխուելով, եւրոպական սեղմ տարազներ այլեւս չեն ներեր այդ շարժումները, և բարեպաշտները կը գոհանան զլուինին և մէջքերնին և ծունկերնին ծռելով կամ խոնարհելով, առանց աւանդական երկրպագութեան սկզբունքը խախտելու:

Հայոց տոմարին մէջ պահքի օրերը շատ են: Իւրաքանչիւր եօթնեկին չորեքշաբթին և ուրբաթը պահք են, Մեծպահքը քառասունըութը օր է անընդհատ, Բուն բարեկենդանի երկուշաբթիէն մինչեւ առաջ շաբաթ օրը: Ասանցմէ զատ տարւոյն մէջ տասը շաբաթ պահքեր կան, գրեթէ ամէն ամիսին մէկ. իւրաքանչիւրը հինգ կամ վեց օր է: Պահքի օրերը կը ներուին միայն բուսական սնունդներ: Ինչ որ կենդանական է, կիթն ու կաթն ալ մէջը, ուտիք կը նկատուի, մեղրը միայն բացառութիւն կը կազմէ: Չկնեղէնք ու կաթեղէնք ներեալ են միայն հինգ Տաղաւարներու նաւկատիքներուն, պատարագի ժամէն ետքը: Շաբաթական երկու պահքի օրերը չեն պահուիր Չատ-

կի քառասունքին և Ծննդեան ութօրէքի միջոցին : Մերձաորաբար իւրաքանչիւր տարի, հաւիւր վարսուն օր պահք կը հաշուուի :

Իսկ ծովը, իրր պահքին յաւելուած, կը հրամայուի միայն Մեծպահքի և Առաջաորի շարաթներուն հինգական օրերը, երկուշարթիէ ուրբաթ : Ծովը բռնելու կանոնն է, քունէն արթննալէն սկսելով մինչեւ կէսօր, բացարձակ կերպով օր և է ուտելիքէ և ըմպելիքէ և ծխելիքէ զգուշանալ : Առաջները ծովը կը տեսէր մինչեւ երեկոյեան ժամերգութեան տեսնը, և ասկէ առաջ եկած է ծովի օրեր երեկոյեան ժամերգութիւնը կէսօրին մօտ ընելը : Հայ եկեղեցին առատ է պահքի օրերուն մէջ, և Հայ հաւատացեալներ նախանձախնդիր են եղած պահքի պահպանութեան. իսկ պահքը նկատուած է իրբեւ արտաքին պարտաւորութեան զօրութեամբ հրամայուած կանոն մը :

## II.

### ՏՈՄԱՐԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ

Տոմարի վրայ խօսած ատեննիս նպատակ չունինք Հայերուն գործածած հին քաղաքական տոմարը բացատրել, որ Հայկայ Երջանի անունով ճանչցուած է, և որ 1460 հաւասար տարիներու շրջան մը կը կազմէ, ամբողջ նահանջ տարիի մը յաւելուածով : Այս սլ նպատակ ունինք յիշել թէ Հայոց մէջ տասուերկու ամիսներ հաստարայէս երեսուն օր ունին, և Աւելեաց հինգ օրերով կ'ամբողջանան : Այլեւս գործածական եղածը՝ Յուլեան տոմարի գրութիւնն է, իսկ տարեթիւր կը պահէ Հին տոմար կոչուած հաշիւը, որ կը տիրէ թէ Ռուսիոյ և թէ Թուրքիոյ Հայոց մէջ, պե-

տական սովորութեանց հետեւելով, և Հայ եկեղեցին անոր համեմատ կը կատարէ տօները: Եւրոպայի և Ամերիկայի Հայ դպրոցականութիւններն ալ, թէպէտ եղած տեղերնին կը տիրէ Գրիգորեան կամ Նոր տոմար կոչուած հաշիւը, սակայն եկեղեցական տօները հին տոմարով կը կատարեն: Երկու տոմարներուն տարբերութիւններն ալ բացատրել պէտք չենք զգար, վասն զի այլ ևս ամէն ոք իմացած է, թէ քսաներորդ դարու սկիզբէն տասուրեք օրերու յապաղում է, որ հինը նորէն կը տարբերէ: Մեր բացատրելիքն է Հայ եկեղեցւոյ՝ տօներու կատարման մէջ ունեցած իրեն յատուկ գրութիւնը:

Ամէն քրիստոնեայ եկեղեցիներ իրենց տօներուն օրերը հաստատած են արեգակնային ամիսներու ամսաթիւին վրայ, այնպէս որ այսինչ ամսոյ այսինչ օրը հաստատապէս միեւնոյն տօնը կը կատարուի: Միայն Չատիկը ու անոր հետ կապուած անօրինական յիշատակները լուսնային հաշիւ ունին, բայց անոնց փոփոխութիւններն ալ արեգակնային հաշիւի վերածուելով կարգաւորուած են: Իսկ Հայ եկեղեցին իրեն տօներուն համար հիմ առած է, ոչ թէ ամսաթիւր, այլ եօթնեակի օրերը. և իրեն յատուկ ու սեփական եօթնեակիան տոմար մը ունի: Բոլոր տարւոյ մէջ միայն տասնուչորս օրեր կան որ ամսաթիւով տօներ կը կատարուին. անոնցմէ ոմանք վերջին գարեբու մէջ սկսած տօներ են, ոմանք ալ յետոյ փոխուած են ամենայն հասանականութեամբ: Այս տասնուչորս օրերն են. ինն օր Աստուածայայտնութեան ճրագայոյցն և ութօրէքը (յունուար 5 — 13), և հինգ ալ Աստուածածնայ տօներ, որք են Տեառնդառաջ (փետրուար 14), Աւետում (ապրիլ 7), Ենուեղ (սեպտեմբեր 8), Ընծայումն (նոյեմբեր 21), և Յղութիւն (դեկտեմբեր 9): Տարւոյն բոլոր մնացած օրերը եօթնեակական գրութեամբ կը կարգադրուին:

Այդ հաշիւին զիստօր և հիմնական կէտը Չատիկի օրն է, հին տոմարի հաշուով ճշդուած: Նախապէս Չատի-

կէ դէպ ետեւ հաշուելով տասը եօթնեակներ կ'առնուին ,  
 և տասներորդ կիրակիին էր հաստատուի Առաջաւորաց բա-  
 րեկենդանը : Անկէ ետեւ գալով եօթնեակ մը Առաջաւո-  
 րաց պահքն է , երկու եօթնեակ յատուկ տօներ կան , վեց  
 եօթնեակ Մեծ պահք է , և վերջին երթեակն ալ Աւագ  
 շարաթ է : Յետոյ Զատիկէն դէպ առաջ , կը հաշուուին  
 տասնուչորս եօթնեակներ , որոնց հետեւող կիրակին Վար-  
 դաւառ է : Իսկ Զատիկէ սկսելով , եօթը եօթնեակներ Յի-  
 նունք են մինչեւ Հոգեգալուստ , եօթնեակ մը Հոգեգա-  
 լուստ , հինգ եօթնեակ սուրբերու տօներ , վերջին եօթ-  
 նեակն ալ Վարդաւառի շարաթապահք : Այդ քսանչորս  
 եօթնեակներու , կամ հարիւր եօթանասունումէկ օրերու  
 ամբողջութիւնը կը կոչուի Զատիկական միջոց . և ամէն  
 տարի անսփոփոխ միեւնոյն կերպով կը կատարուի , շար-  
 թուան օրերուն պատշաճին համեմատ :

Այտեղ հարկ կը զգանք աւելցնել թէ Հայերուն  
 զատիկ հաշուելու կերպը նման է Յոյներուն հաշիւին , մէկ  
 տարբերութեամբ միայն , որ իւրաքանչիւր Հինգ հարիւրեակի  
 կամ հինգ հարիւրերսունուերկու տարիներու շրջանին մէջ ,  
 չորս անգամ լուսինի լրման վայրկեանը պզտիկ տարբերու-  
 թեամբ կը հաշուուի կամ ապրիլ 5 շարաթ օրը չլրացած ,  
 կամ ապրիլ 6 կիրակի օրը սկսած , և ըստ այնմ Զատիկը ,  
 կամ անմիջապէս վրայ եկող ապրիլ 6 կիրակի օրը , և կամ  
 միւս կիրակի ապրիլ 13 օրը կը կատարուի , և այսպէս  
 Հայերուն զատիկը Յոյներուն զատիկէն շարաթ մը ետ կը  
 մնայ : Այս է ծնաղապարի ըստածը : Հայերուն հետեւածը  
 էասի կոչուած աղեքսանդրական հաշիւն էր , իսկ Յոյնե-  
 րուն հետեւածը Իրիոնի կոչուած բիզանդական հաշիւն էր :  
 Մտազատիկներ երկու ազգերու մէջ մեծ կախներու առիթ  
 տուած են , մանաւանդ երեսուցէմի մէջ : Վերջին ծագա-  
 տիկը տեղի պիտի ունենար 1824 տարին , բայց թէ՛ աղ-  
 զերու մէջ բարեկամական մերձաւորութիւններ , և թէ՛ էջ-  
 միածնի մէջ Ռուսերու հետ սկսած յարաբերութիւններ ,

տոմարական հայրենեքու վերաքննութեամբ դժուարութիւնը հարթեցին, և Հայերն ալ Յոյներու հետ ապրիլ 6 ին զատիկ ըրին, և այսպէս միանգամ ընդ միշտ ձուարատիկի խնդիրը վերջացաւ, որ մէյմին ալ 2071 ին պիտի հանդիպէր, եթէ հին դրութիւնը պահուէր:

Հայոց եօթնեկական դրութեան գաւնարով, պէտք է գիտնալ որ զատիկական միջոցին քսանուչորս եօթնեակներէն գորս եղող տարւոյն մնացորդը, հինգ մանր միջոցներու կը բաժնուի, որոնք չորս հաստատուն կէտերու մէջ տեղերը կը մնան և անոնց համեմատութեամբ կը բաժնուին. և այս չորսերն են. Վերափոխումն օգոստոս 15 ին մերձաւորագոյն կիրակին թէ առաջ և թէ յետոյ, այսինքն օգոստոս 12 է 18 օրերուն մէջ հանդիպող կիրակին: Խաչվերացը սեպտեմբեր 14 ին մերձաւորագոյն, այսինքն 11 էն 17 օրերուն մէջ հանդիպող կիրակին. Յիսնակաց բարեկենդանը նոյեմբեր 18 ին մերձաւորագոյն, այսինքն 15 էն 21 օրերուն մէջ հանդիպող կիրակին: Աստուածայայտնութիւնը ճիշդ յունուար 6 ին օրը: Այս չորս կէտերէն առաջինը Վարդավառէն առջեւ քալելով, և վերջինը դէպ Առաջաւորաց յառաջելով հինգ փոքր միջոցներ կը կազմեն, որոնց տեւողութիւնը տարբեր է Չատիկի օրուան փոփոխուելուն համեմատ, որ մարտ 22 էն մինչեւ ապրիլ 25, երեսունհինգ օրուան շարժականութիւն ունի: Միջոցներուն կարծութիւնը և երկարութիւնը իրարու հետ փոխադարձաբար կը հասաստակուեն, և Առաջաւորէն առաջ և Վարդավառէն ետքը եղող միջոցները, որ աւելի զգալի տարբերութիւններ կ'ունենան, իրարմով կը լրանան: Վասնզի որչափ Առաջաւորը Աստուածայայտնութեան կը մտենայ, այնչափ Վարդավառը Վերափոխումէն կը հեռանայ, և փոխադարձաբար. և մէկէն աւելցած տօներ միւսին կը փոխադրուին: Նոյնպէս միւս միջոցներուն համար ալ: Այլ փոխադրութիւնները այլեւս հաստատուն կանոնի վերածուած են Սիմէոն Երեւանեցի կաթողիկոսին կազմած տօնացոյցով, որ Չատիկի

երեսունհինգ օրերու փոփոխութիւններուն. կամ երեսունուհինգ տարեգիրներուն համեմատ պատշաճները կարգադրած է :

Եօթնեկական դրութեան էական նկարագիրն է, եօթնեկի իւրաքանչիւր օրերուն իրենց յատուկ բնութիւն ունենալը, և ըստ այնմ՝ տօներու յարմար նկատուիլն է : Կիրակի օրեր բացառաբար տէրունի տօն ունին, յարութիւն կամ ուրիշ մէկ տօն : Չորեքշաբթի և ուրբաթ օրեր ապաշխարութեան սահմանուած են : Իսկ սուրբերու տօներ միայն երկուշաբթի, երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ օրեր կրնան կատարուիլ : Ապաշխարութեան օրեր կրնան տէրունի տօնի փոխանցուիլ : Սուրբերու օրերէն առաջին երեքը կրնան թէ տէրունականի և թէ ապաշխարութեան փոխանցուիլ, շաբաթ օրը միայն տէրունականի կը փոխանցուի : Երբոր սուրբերու օրերուն պատշաճը կը լուէ, և պահքի կամ տէրունիի կը փոխուի, սուրբի տօնը ուրիշ օր կը փոխադրուի, և ասկէ կը հետեւի որ սուրբերու տօներ շարունակ շարժականութիւն կ'ունենան, և երբեմն ալ յարմար օրեր պակաս եղած ատեն իրարու կը կցուին : Հետեւաբար անհրաժեշտ կ'ըլլայ իւրաքանչիւր տարւոյ համար յատուկ կարգադրութիւնը գիտնալ, և այս պատճառով տօնացոյցը չրաւեր, և օրացոյց ալ ունենալ պէտք կ'ըլլայ, որուն մէջ տօներու փոփոխութեանց համեմատ, ընթերցուածներու և շարականներու փոփոխութիւններն ալ կը ցուցուին : Ասկէ աւելի մանրամասնութիւնք տամարագիտութեան կը պատկանին :

## ԼԸ.

### ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ՏՕՆԵՐ

Հայոց եկեղեցին տէրուական տօներու անունին ներքեւ կ'իմանայ այն տօները՝ որք կը կատարուին ի պատիւ

Յիսուսի Քրիստոսի, Հոգւոյն Սրբոյ, Մարիամու Աստուածածնի, Սուրբ Խաչի և Սուրբ Եկեղեցւոյ, Այս տօները կատարուած օրեր բնաւ անոնց հետ սուրբերու յիշատակ չը կցեր, և ոչ ալ սպաշխարութեան պատշաճներ, ալ բոլոր պաշտամանց պատշաճները նոյն անօրէնութիւններուն կամ խորհուրդներուն կը նուիրուին: Ամէնն ալ հաստատուած սէրտանական ըմբռնուելուն պատճառ կրնանք նկատել, ամէնուն ալ փրկագործութեան խորհուրդին շուրջը դառնալը, որովհետեւ անոնց մէջ միշտ կամ Փրկիչը կամ Փրկիչին մայրը կամ Փրկութեան նշանակը կը փառաւորուի:

Փրկչին փառաւորութեան ուղղուած տօներուն դրոշմը կը դանենք Աստուածայայտնութիւնը, որ իւր առաջին կազմակերպութեան մէջ անխորտակ էր Քրիստոսի հրապարակական և աւետարանական կեանքէն առաջ կատարուած անօրէնութիւններուն կամ խորհուրդներուն: Ըստ այսմ Աստուածայայտնութեան տօնին մէջ կը պարունակուէին, Աւետումը, Ծնունդը, Տաճարի ընծայումը, Մողերուն երկրպագութիւնը, Մկրտութիւնը և Յորդանանի յայտնութիւնները: Հին եկեղեցին ամբողջը այսպէս մէկ անգամ կը կատարէր և յետոյ անոնց մէջէն՝ ուղղակի Աստուածածնի պատկանողները, այսինքն Աւետումը և Տաճարի ընծայումը զատուեցան, հասնաբար աստուածամոյրութեան գէտ՝ նեստորի հանած խնդիրին պատճառով: Իսկ մնացեալները աւելի ուշ երկուքի բաժնուեցան Ասորի և Յոյն և Լատին եկեղեցիներուն մէջ, Ծնունդ և Յայտնութիւն անուններու ներքեւ, զեկտեմբեր 25'ին և յունուար 6'ին: Իսկ Հայոց եկեղեցին անխորտակ պահեց հնասնց սովորութիւնը, և տակաւին մէկ տօն կը կատարէ Աստուածայայտնութեան անունին ներքեւ, յունուար 5'ին ճրագալոյցը, և յունուար 6'էն 13 ութօրէքը: Եթէ արարողութեանց պատշաճները լաւ զննենք, կը տեսնենք որ աւելի հին ատեններ Աստուածայայտնութեան տօնն ալ, ուրիշ մեծ տօներուն պէս,

մերձաւոր կիրակիին փոխադրելու սովորութիւնը տեղի ունեցած պիտի ըլլայ :

Աւագ շարաթն ալ տէրունական տօներու ութօրէք մը կը կազմէ , Վալսեսան ընդհանուր անունին ներքեւ , որ Մեծպահֆի քառասունքը լիննայէն ետքը կը սփօի Ղազարու յարութեան յիշատակով , և կը պարունակէ Երուսաղէմ գալուստը , Վերջին օրերը , Ընթրիքը , Մասնութիւնը , Չարչարանքը , Խաչելութիւնը և Թաղումը՝ մինչև աւագ շարաթ օրը , որ փրկադարձ անօրինութիւնները կը լրացնէ :

Ետեւէն կու գայ Յարութեան տօնը , որ է Չատիկը եւ Յինանց միջոցը , որուն երեսունքինը օրերը յոկ Յարութեան են նուիրուած , տասը օրեր Յարութեան եւ Համբարձման , յիններորդ օրը Հոգւոյն Արքայ Փալատեան , որոնց կցուեցան յետոյ վեց ևս օրեր ի պատիւ Հոգւոյն Արքայ . և այսպէս Ղազարու յարութենէն սկսելով վաքսունուչորս օր տէրունական տօներու անընդհատ շարք մը կայ , և այս միջոցին բնաւ սուրբերու յիշատակ չտեսնուիր :

Այլակերպութիւնը , որ զատկական միջոցին փակման կիրակիին հետ կապուած է , յաջորդ երկուշաբթին եւ երեքշաբթին ալ կը տօնուի : Այդ տօնը Վարդալաւս կը կոչուի սովորաբար , որ հեթանոսական տօնախմբութեան մը անունն է , քրիստոնէական տօնի փոխանցուած :

Ի պատիւ Փրկչին տօներուն կը պատկանին հասարակ կիրակիներն ալ , որոնք միշտ Յարութեան յիշատակին նուիրուած են , եթէ ուրիշ տէրունական տօն մը չհանդիպիր : Այդ սովի ալ Յարութեան յիշատակութիւնը բարբոսին շղաղրիր : Մեծպահֆին կիրակիները Յարութեան ակնկալութեան ձեւին վերածուած են , Սիմէոն կաթողիկոսի կարգադրութեան համեմատ :

Աստուածածնի այսինքն Փրկչին մօր նուիրուած տօներուն ալ՝ տէրունական ձեւ , այսինքն Փրկչին նուիրեալ տօներուն ձեւը կը տրուի : Անոնց մէջ գլխաւորն է Վերափոխումը , Աստուածածնայ փոխման կամ՝ ննջման և երա-



նաւէտ տեսութեան վերանայուն յիշատակով: Օգոստոս 15'ին մերձաւոր կիրակին կը տօնուի, և ինն օր կը տեւէ մինչև միւս երկուշարթի: Տեառնընդառաջի եւ Աւետման տօները, որոնք մօտէն Աստուածածնի անձին կը պատկանին, իբր անոր օրինական սրբութեան և աւետիս ընդունելուն յիշատակ, հինգերորդ դարուն սկիզբները Աստուածայայտնութէնէ զատուելով առանձին տօներ եղան, նեսաորի դէմ Մարիամու աստուածամայրութիւնը շեշտելու նպատակով: Ընունդը յունուար 6'էն հաշուելով՝ Տեառնընդառաջը կը տօնուի քառասուն օր ետքը՝ փետրուար 14'ին, և Աւետումը ինը ամիս առաջ՝ ապրիլ 7'ին: Աստուածածնայ Ըննդեան տօնը սեպտեմբեր 8'ին երեքտասաներորդ դարուն սկսած է, իսկ Ընծայումը՝ նոյեմբեր 21'ին, և Յղութիւնը՝ դեկտեմբեր 9'ին եօթնեւտասներորդ դարէ առաջ չեն տօնուած: Աստուածածնայ Տուփին կամ Գօղին և Գօտիին գիւտերը ութեւտասներորդ դարուն վերջերը սկսան տօնուիլ, առաջինը Հոգեգալստեան վեցերորդ կիրակին, և երկրորդը Վերափոխման երրորդ կիրակին:

Փրկագործութեան նուիրեալ տօներ են Խաչի տօները, որոնց գլխաւորն է Խաչվերացը կամ խաչին վերացման այսինքն փառաւորուելուն տօնը, սեպտեմբեր 13'ի մերձաւոր կիրակին, և եօթնօրէքով: Իսկ մէկ մէկ օրով կը տօնուին Գիւտխաչը՝ որ է խաչափայտին 326'ին գտնուիլը, Խաչի եօթներորդ կիրակին, Երեւման խաչը՝ որ է Երուսաղէմի մէջ երկինքի վրայ լուսաւոր խաչին 351'ին երեւնալը, Յինանց հինգերորդ կիրակին, և Վարագայ խաչը՝ որ է Ս. Նշանին Վարագայ լեռան վրայ 653'ին յայտնուիլը, Խաչի երրորդ կիրակին:

Հայ Եկեղեցւոյ յատուկ արարողութիւն մըն է Սուրբ Եկեղեցւոյ տօներ կատարել, միշտ ի պատիւ փրկագործութեանց որուն զգալի նշանակն է Սուրբ Եկեղեցին: Այդ կարգին պիտի յիշատակուին 1. Խաչվերացի եօթնօրէքին երեքշարթի, չորեքշարթի և հինգշարթի օրերը, 2. Նուա-

կատիքը՝ որ է Երուսաղէմի Ս. Յարութեան տաճարին նա-  
ւակատիքը, Խաչվերացին նախընթաց օրը . 3. Շողակաթը՝  
որ է Էջմիածնի մայր տաճարին նաւակատիքը, Վերափոխ-  
ման նախընթաց օրը . 4. Էջմիածինը՝ որ է Ս. Լուսաւորչին  
տեսիլքին յիշատակը, Հոգեգալստեան երրորդ կիրակին,  
5. Տապանակը՝ որ է Հին ուխտի հաստատութիւնը իբր նոր  
ուխտի նախատիպը, Վարդավառի նախընթաց օրը : 6. Նոր  
կիրակին՝ որ է հեթանոսաց կոշումը, Յինանց երկրորդ կի-  
րակին . և 7. Աշխարհամատրան տօնը՝ որ է Վերնատունի  
նախընծայ տաճարին նուիրագործումը, Յինանց երրորդ  
կիրակին :

Տրուած տեղեկութիւններէն կը քաղենք տէրունա-  
կան տօներու հետեւեալ ցուցակը, իւրաքանչիւր տարի հու-  
րիւր երեսուներեք օրեր, որոնց մէջ սուրբերու յիշատա-  
կութիւն չկրնար կատարուիլ : Այդ օրերն են .

- 9 օր Աստուածայայտութիւն
- 8 » Աւագ շաբաթ
- 39 » Յարութիւն
- 10 » Համբարձում
- 7 » Հոգեգալուստ
- 3 » Այլակերպութիւն
- 9 » Վերափոխում
- 7 » Աստուածածնայ միւս տօներ
- 6 » Խաչի զանազան տօներ
- 7 » Եկեղեցւոյ զանազան տօներ
- 30 » Հասարակ կիրակիներ :

Որովհետեւ սուրբերու յիշատակութիւն չկատարուող  
օրերու վրայ կը խօսինք, անոնց հետ կցենք նաև Ապաշխա-  
րութեան կամ ծիսական Պահոց օրերն ալ : Այս ալ Հայոց  
Եկեղեցւոյ սեփական և առանձնայատուկ արարողութիւն  
մին է . այսինքն Եկեղեցական պաշտամանց մէջ թէ տէրու-  
նական և թէ սուրբերու յիշատակները լռեցնել, և միայն  
ապաշխարութեան աղօթքներ ընել, ննջեցելոց յիշատակ

ալ խառնելով: Այսպէս են ընդհանրապէս բոլոր տարւոյն չորեքշաբթիները և ուրբաթները, եթէ տէրունական տօն մը չհանդիպիր: Ասոնց վրայ պիտի տեսցաին Մեծ պահօրի վեց շաբաթները, և հինգ Տաղաւարներու և Առաջաւորի ու Յիննակի շաբաթապահօքերը, միշտ շաբաթ և կիրակի օրերէն դուրս: Սովորաբար Ապաշխարութեան կամ ծխական Պահօրի օրերը միացած են կերակրեղէններու պահօրին հետ ալ: Բացառութիւններ են Յինանց առաջին քառասուն օրերուն եւ Աստուածայայտնութեան ութօրէքին չորեքշաբթիներն եւ ուրբաթները, յորս կերակորի պահօքը կը դադրի: Բայց ուրիշ տէրունականներուն համար պահօքը կը մնայ՝ երբօր չորեքշաբթի և ուրբաթ կը հանդիպին: Հոգեգալստեան շաբթուն մէջ հաստատուն կը մնայ Եղիական կոչուած ամառուան շաբաթապահօք: Աշնան և Զմեռուան շաբաթապահօքերը, որոնք Վարագայ և Սուրբ Յակոբայ պահօքեր կը կոչուին, և Լուսաւորչին շաբաթապահօքը, սուրբերու յիշատակութիւններ ունին կերակորի պահօրին հետ: Իսկ Մեծ պահօրին, Աւագ շաբաթին և Աստուածայայտնութեան շաբաթապահօրին՝ շաբաթ և կիրակի օրերն ալ կերակորի պահօքը կը մնայ՝ սրբոց և տէրունական յիշատակներուն հետ:

Անգամ մը բսինք թէ Հայ եկեղեցւոյ արարողութեան համեմատ իւրաքանչիւր տարի իբր հարիւր վաքսունի օր կերակորի պահօքեր կան, որոնց միայն հարիւր քսանըօր օրերը ծխական պահօքեր են: Երիտական պահօրի օրերը՝ տէրունական տօնի օրերուն հետ գումարելով կ'աննանք տարւոյն մէջ երկուհարիւր յիսուն օրեր, որոնց մէջ սուրբերու յիշատակութիւններ չեն ըլլար, և միայն հարիւր քսանուհինգ օրեր կը մնան սուրբերու յիշատակներուն: Ասկէ յառաջ եկած է շատ սուրբերու տօները իրարու կցել նոյն օրուան մէջ, այնպէս որ ցանցաւ են միայն մէկ սուրբի յիշատակութեան օրերը:

## ԼԹ.

## ՍՈՒՐԲԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ

Երբեք Յայսմուտրքի պատմութիւնները քաղելու միտք չունինք, բայց մեր նպատակին համար օգտակար, մանաւանդ թէ անհրաժեշտ կը նկատենք ցուցնել թէ որ սուրբերն են որ Հայ եկեղեցւոյ կողմէն կը յիշատակուին: Այդ ուսումնասիրութեամբ կը հաստատուին Հայ եկեղեցւոյ կապակցութիւնը ընդհանուր եկեղեցւոյ հետ, և անոր յարեբութիւնները հին մասնաւոր եկեղեցիներու հետ, եւս և կը բացատրուի Հայ եկեղեցւոյ ծիսական կարգադրութեանց ժամանակը, և կը ցուցուի նոր յիշատակութիւններ ընդունելու մասին զգուշատր ընթացքը:

Նպատակնիս աւելի յստակ կերպով յայտնելու համար, Հայ եկեղեցւոյ մէջ տօնուած այսինքն յիշատակուած սուրբերուն անունները ժամանակագրական և տեղագրական ցուցակի կը վերածենք:

ԵՐԿՆԱՅԻՆ, ԶՕՐԱՅ կամ Հրեշտակաց տօնը ժամանակագրական կարգին գլուխը կը գտնուի: Հրեշտակներուն միայն մէկ տօն նուիրուած է, Միքայէլ և Գարրիէլ հրեշտակապետները յանուանէ յիշելով:

Հին ԿՏԱԿԱՐԱՆԻ ժամանակէն սուրբեր շատ են Հայ տօնացոյցին մէջ: Միայն մէկ տօն նուիրուած է Նախահարց. յանուանէ կը յիշուին ջրհեղեղէն առաջ, Ադամ, Արէլ, Ալթ, Ենոխ, Ենոք, և Նոյ: Իսկ ջրհեղեղէն հտքը կը յիշուին, Մելքիսեղեկ, Արրահամ, Իսահակ, Յակոբ, Յովսէփ, Մովսէս, Ահարոն, և Եղիազար: Դատաւորաց ժամանակէն կը յիշուին, Յեսու, Բարակ, Գեղէն, Յեփթայէ, Սամբսոն, և Սամուէլ: Տուցակը կը փակուի եւս այլոց նախահարց յաւելուածով: Յոր արդարը յատուկ տօն ունի: Մարգարէից մէջէն յանուանէ և զատ զատ կը տօնուին, Դաւիթ, Եղի-

սէ, Եսայի, Երեմիա, Դանիէլ, Եզեկիէլ, և Եզր: Երկրտասան փոքր մարգարէներ, Ովսէէ, Ամովա, Միքիա, Յովէլ, Արդիու, Յովնան, Նաուամ, Ամբակում, Սոփոնիա, Անգէոս, Չաքարիա, և Մաղաքիա՝ միասին կը տօնուին: Ասոնցմէ Չաքարիա երկրորդ տօն մը ունի, իւր նշխարաց Հայաստան բերուելուն առթիւ: Եղիա մարգարէի վերացումը միայն պարզ յիշատակ մը ունի: Հին օրէնքի Վկայից տօներ ալ կը կատարուին և են, Բարեկոնի երեք մանկունքը՝ Սեղբաք, Միսաք, և Արեղնագով, Եգիպտոս քահանայ, Շամունէ այրին և իւր եօթը ազաքը որ Մակաբայեցիք կը կոչուին:

ՅԻՍՈՒՍԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ եղողներուն մէջէն կը տօնուին, Բեթղզէմի մանկունք, Յովակիմ և Աննա՝ Աստուածածնայ ծընողքը, Չաքարիա՝ Յովհաննէս Կարապետին հայրը, Յովսէփ Աստուածահայր, և Յովհաննէս Կարապետ՝ որուն չորս տօներ նուիրուած են տարւոյն մէջ:

ԱՌԱՔՆԵԼԱԿԱՆ ԴԱՐՈՒՆ գլուխը կը գտնուին Առաքելոց տօները, այսինքն է Երկրտասանք և Պօղոս, որոնք անգամ մը տասերեքը մէջէն կը տօնուին և ետքէն ալ կրկին անգամ երկու երկու: Առաքիւրաց մէջէն դժուար է Եօթմաստուններէն եղողները ստուգութեամբ որոշել, ուստի այս շարքին մէջ կը նշանակենք միահամուռ՝ Յակոբ և Շամուն տեսանեղբայրները, Մարկոս և Ղուկաս աւետարանիչները, Ստեփանոս և Փիլիպպոս սարկաւազները, և Ղազարոս, Անանիա, Յովհաննէս-Մարկոս, և Բառնարոս աշակերտները: Հետեւոյց խումբ մըն ալ հնար է կազմել և անոր մէջ դասել, Յովսէփ Արեմաթացին, Ղուկիանոս և Կուսնելիոս հարիւրապետները, ինչպէս նաև Պօղոսի աշակերտները՝ որք են, Տիմոթէոս, Տիտոս, Շիդա, Սիդուանոս, Մենսիմոս, Յակեթէոս Աթենացի, և Դիոնիսիոս Արխապագացի: որոնց կը կցուի ևս այլոց առաքիւրաց Պօլոսի յաւելուածը: Վերջապէս Իւլիպեթից տօն մըն ալ կայ ընդհանուր բացատրութեամբ, որոց գլխաւոր ճանչցուած է Մարիամ Մաղդաղեանացին. և այդ գլխուն ներքեւ պէտք է յիշել եւս, Մարթա ու Մարիամ՝ Ղազարու քոյրերը, Թեկղ վկայուհին՝ Պօղոս առաքեալի աշակերտը, և Երմոնէ կոյսը՝ Փիլիպպոս սարկաւազի դուստրը:

Այժմ պիտի յիշենք զանազան եկեղեցիներու պատկանող սուրբեր, որոնց ցուցակը թեպէտ չոր ու ցամաք թուարկութիւն մըն է, բայց մեծապէս կը նպաստէ հաստատելու Հայ Եկեղեցեցւոյ կապակցութիւնը ընդհանուր եկե-

զեցոյ հետ. և զանազան եկեղեցիներու յարարերութիւնները Հայոց Եկեղեցւոյն հետ : Պիտի պահենք լիբեռնութեամբ տեղագրական և ժամանակագրական կարգը :

**ԱՆՏԻՌՈՒՔԱՅ ԵԿԵՂԵՑԻ.** Բ. դար. Իզնափոս Աստուածազգեաց հայրապետ, և Քրիստինէ կոյս : — Գ. դար, Բարազամ ծերունի, և Բարեկաս եպիսկոպոս ու աշակերանները. — Դ. դար. Մելիտոս հայրապետ, Ղուկիանոս, Թէոդորեոս, Եւզինէոս ու Մակարիոս քահանաներ, Կիւրեղ սարկաւազ, Ռոմանոս Եմեսացի երգեցող, Աբաեմիոս, Հիւսիքոս, Քրիստափոր, ու եօթը Հիպերիքեան վկաներ, Կալինիկէ ու Ակիւլինէ վկայուհիներ : — Ե. դար, Սիմէոն Սյունակեաց :

**ԿԻԼԻԿԻՈՅ ԵԿԵՂԵՑԻ.** Գ. դար, Կալինիկոս, Դիմիդէս, Կողմաս, Դամիանոս, Տարապոս, Պրորոս ու Անդրոնիկոս վկաներ, և Պեղազիւս վկայուհի :

**ՄԻՋԱԳԵՏԱՅ ԵԿԵՂԵՑԻ.** Գ. դար, Պարսամ Եղեսացի եպիսկոպոս. — Դ. դար, Յակոբ Մճրնայ հայրապետ, Եփրեմ Խուրի վարդապետ, Մարուզէ ճգնաոր, Սարգիս, Բագոս, Գուրիաս, Սամնաս ու Արիբաս վկաներ, և Փերրոնէ կոյս. — Ե. Դար, Մարութա եպիսկոպոս :

**ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԵԿԵՂԵՑԻ.** Գ. դար, Կիւրեղ հայրապետ, Յուզա-Կիւրեղ եպիսկոպոս ու մայրն Աննա, Ռոմանոս միայնակեաց ու Բարուլա մանուկ. — Ե. Դար, Յովհաննէս հայրապետ :

**ԿԻՊՐՈՍԻ ԵԿԵՂԵՑԻ.** Ե. դար, Եպիփան հայրապետ :

**ԱՂԵՔՍԱՆԴՐՈՅ ԵԿԵՂԵՑԻ.** Բ. դար, Եւզինէ կոյս, Փիլիպոս հայրը, Կողզիւս մայրը, Սերգիոս ու Ապիտոն եղբայրները, և Պրոտոս ու Յակինթոս ներքինիները. — Գ. դար, Անտոնինոս վկայ. — Դ. դար, Պետրոս և Աթանաս հայրապետներ, Արիստոզամ սարկաւազ, Վարոս Աղեքսանդրացի, Թէոփիլոս Լիբէացի, Մինաս Եգիպտացի, Մինաս Աղեքսանդրացի, Երմոզինէս Աթինացի, ու Եւզրափոս դպիր վկաներ, և Նեկտարինէ կամ Կատարինէ կոյս : — Ե. դար, Կիւրեղ հայրապետ, Անտոն, Մնոփրիոս, Պօղոս, Պօղ, Մակար, Եւազր, Յովհաննէս Գրեցի, Յովհաննէս Կարճահասակ, Նեղոս, Արսէն, Սիբիանոս, Դանիէլ, Արապիոն, Մակարիոս, և Պիմէն ճգնաորներ, Եւ այլոց սրբոց հարց յաւելուածով :

**ԵԹՈՎՊՈՅ ԵԿԵՂԵՑԻ.** Ե. դար, Խարեթաս, և տանհազար երկուհարիւր վկաներ :

**ԿԵՍՍՐԻՈՅ ԵԿԵՂԵՑԻ.** Բ. դար, Ռամելոս կամ Հոմոլոլոս զօրավար. — Գ. դար, Պօղէքատոս, Մերկիւռիոս, և Մամաս վկա-

ներ. — Գ. դար, Բարսեղ Կեսարացի և Գրիգոր Նիսացի հայրապետներ, Գորգիոս, Եւզոբսոս կամ Մարինոս, Զինոն կամ Զենոն, Մակարիոս, և Անդրէաս զօրավար իւր բանակին հետ՝ վկաներ:

**ԱՅԵԱՍՏԻՈՅ ԵԿԵՂԵՑԻ.** Գ. դար, Գրիգոր Նևոկեսարացի հայրապետ. — Գ. դար, Վլաս և Աթանազիոնէս եպիսկոպոսներ և վերջնոյս ընկերներ, Բառասուն Մանկունք Աբասափոյ, Բառասունեւհինգ Մանկունք Նիկոպոլսոյ, Թէոդորոս Տրուսն, Թէոդորոս ստրատելաս, Աներիանոս, Եւստոնափոս, Օքսենոփոս, Եւզինէոս, Ովրեսաէս և Մարգարիոս վկաներ:

**ԼԻԿԱՅՈՒՆԻՈՅ ԵԿԵՂԵՑԻ.** Գ. դար, Տրիփոն և Փրիլիպոսն վկաներ. — Գ. դար, Թէոդիոս վկայուհի և երեք որդիքք, Եուզիտա վկայուհի և որդին Կիրակոս, և Մարիանէ կամ Մարգարիոս կոյս:

**ՊՈՆՏՈՍԻ ԵԿԵՂԵՑԻ.** Բ. դար, Փոկաս եպիսկոպոս. — Գ. դար, Ակակիոս վկայ. — Գ. դար, Վազերիոս, Կանդիդոս և Ակիլդաս վկաներ:

**ԵՓԵՍՈՍԻ ԵԿԵՂԵՑԻ.** Բ. դար. Պողիկարպոս հայրապետ և Արեւելեան վկաներ. — Գ. դար. Պիոն քահանայ, Իրաւափառ կամ Թեմիստոկղ վկայ, և եօթն նշնոյ մանկունք. — Գ. դար. Նիկիզայոս Միւռացի և Միւռոն Կրետացի եպիսկոպոսներ, և Աղոկոս վկայ:

**ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍՈՅ ԵԿԵՂԵՑԻ.** Գ. դար, Մետրոփանէս, Ազեքսանդրոս, Պողոս Խոստովանոյ և Գրիգոր Աստուածարան՝ հայրապետներ, Մարկիանոս և Մարտիրոն նստարներ, Կոստանդիանոս և Թէոդոս թագաւորներ, Հեղինէ դէսոյ, Եւփիմէ կոյս, և Եովհաննէս կամաւոր ազգաս. — Ն. դար. Եովհան Ոսկերերան հայրապետ, և Եւարթաթէ կոյս:

**ԹԵՍՍԱՂԻՈՅ ԵԿԵՂԵՑԻ.** Գ. դար. Մափկիմաս քահանայ, Դեմետրիոս վկայ, և Երանոս Սիրմիոյ եպիսկոպոս:

**ԳԱՂԱՏԻՈՅ ԵԿԵՂԵՑԻ.** Գ. դար. Ելեւթերիոս կամ Թիւրսոս վկայ. — Գ. դար. Կղեմէս հայրապետ, Բասիլիսկոս քահանայ, Պրատոն և Թէոդիտոն վկաներ, Վասիլաթէ կոյս, և Տեկուս, Ազեքսանդրոս, Կղոզիա, Փեննա, Եւփրասիա, Մատրոնա և Եւզիտա կուսան վկայուհիներ:

**ԲԻԻԹԱՆԻՈՅ ԵԿԵՂԵՑԻ.** Գ. դար. Կողրատիոս վկայ. — Գ. դար. Անթիմոս և Թէոպոմպոս եպիսկոպոսներ, Երմոզայոս և Գղերիկոս քահանաներ, Գէորգ զօրավար, Պանդայէոն բժիշկ, Անիկոս, Փոսինոս, Աղբրանոս, Ղամպէոս, Թէոմիլաս, Ինդոս, Բասոս, Եւսերիոս, Եւսիփէս, և Բասիլիդէս վկաներ, Անատոլիա

կամ նատալիա վկայուհի, Բարեկաս և իւր ութսուններեք մանուկ աշակերտներ. Յուլիանէ, Վասիլուհի, Ղամպէուհի և Գոմնաս կոյսեր, և Նիկոմիդիոյ եկեղեցւոյն մէջ այրած երկու Բիւր վկաներ:

ՀՈՒՎԼՄԱՅ ԵԿԵՂԵՑԻ. Բ. դար. Բազարատ Տոտմենոյ և Երանոս կամ Իրենէոս Լուգղունի եպիսկոպոսներ, Եւստաքքէոս զօրավար, Թէոպիստէ կինը, Ազապիոս ու Թէոպիստոս որդիքը՝ վկաներ, Սոփիա այրի, և դուստրները Ելզիս, Պիստիս ու Ազապի կոյս վկայուհիներ. — Գ. դար. Ստեփանոս հայրապետ և իրեն հետ վկայող եկեղեցականներ ու աշխարհականներ, Վալիստրատոս և ընկերներ՝ վկաներ, Ալէքսիանոս կամաւոր ազքատ. — Գ. դար. Սեղբեասարոս հայրապետ, և Գենարիոս կամ Յանուարիոս եպիսկոպոս:

ԱՓՐԻԿԻՈՅ ԵԿԵՂԵՑԻ. Գ. դար. Կրպրիանոս եպիսկոպոս, և Յուստիանէ կոյս:

ՊԱՐՍԻՅ ԵԿԵՂԵՑԻ. Գ. դար. Մարկոս, Մելէս, և Ակեփսիմաս եպիսկոպոսներ, Յովսէփ և Բուրաս քահանաներ, Այիթալաս և Շէն սարկուազներ, Սարգիս զօրավար և որդին Մարտիրոս և Չորեքասասան զինուոր՝ վկաներ. — Ե. դար. Բենիամին սարկուազ, Որմզդան, Սայէն, և Յակովիկ վկաներ. — Զ. դար. Անաստաս քահանայ, և Աբղլման վկայ:

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻ ամէնէն վերջը թողուցինք, իրեն յատուկ սուրբերով, որոնց մէջէն միայն Ս. Գրիգոր Լուսաւորիչն է, որ Յոյն ու Լատին եկեղեցիներէն ճանչցուած է: Ա. դար. Սանդուխտ կոյս, Աղղէ Եղեւիոյ հայրապետ, և Աբգար թագաւոր: — Բ. դար. Ոսկեանք այսինքն Ոսկի չորս ընկերներով, և Սուքիասանք այսինքն Սուքիաս տասնեւութը ընկերներով, վկաներ. — Գ. դար. Գրիգոր Լուսաւորիչ հայրապետ՝ որ երեք անգամ կը ածնուի. Հոխիսիմեանք այսինքն Հոխիսիմէ երեսուններեք ընկերներով, Գայրանեանք այսինքն Գայրանէ երկու ընկերներով, Նունէ և Մանէ կոյսեր. Արիստակէս, Վրթմանէս, Յուսիկ և Ներսէս հայրապետներ. Գրիգորիս, Դանիէլ և Խաթ եպիսկոպոսներ. Տրդատ թագաւոր, Աշխէն թագուհի, Խոսրովիդուխտ արքայաքոյր, Անտոն և Կրօնիդէս ճգնաւորներ, և Ստեփաննոս Ունեցի ընկերներով՝ վկաներ: — Ե. դար. Սահակ և Յովսէփ հայրապետներ, Մեսրոպ մեծ վարդապետ, Սահակ և Թաթիկ եպիսկոպոսներ, Եղիշէ, Մովսէս և Դաւիթ թարգմանիչներ, Ղեոնդ, Մուշեղ, Արշէն, Սամուէլ, Աբրահամ և Խորէն քահանաներ, Գաջաջ և Աբրահամ սարկուազներ, Ատոմեանք այսինքն Ատոմ և Մանասի՛րճ զօրավարներ իրենց գունդերով՝ վկաներ, Վարդանանք այսինքն Վարդան



Մամիկոնեան սպարապետ, Խորէն, Արտակ, Տաճատ, Հմայեակ, Արսէն, Վահան, Գարեգին և Ներսէ՛հ նախարարներ, և հազար քսանեօթը զօրական՝ վկաներ, Թաթուլ, Վարսո և Թումաս ճգնաւորներ, և Շուշան վկայուհի: — Զ. դար. Եօթն Խոտանձարակներ, Գրիգոր-Ռաժիկ, և Աստուածատուր-Մախոժ վկաներ. — Է. դար. Դաւիթ Դըւնեցի վկայ. — Ը. դար. Վահան Գողթնացի և Սահակ ու Համազասպ Արծրունիք՝ վկաներ. և Յովհաննէս Օձնեցի հայրապետ: — Թ. Գար. Սահակ ու Յովսէփ Կարնեցիք՝ վկաներ. — Ժ. դար. Գրիգոր Նարեկացի վարդապետ. — ԺԲ. դար. Ներսէս Ենորձալի հայրապետ, Գոհարինոս, Մամիզոս և Տուփիկոս վկաներ: — ԺԳ. դար. Յովհաննէս Որտանեցի վարդապետ: — ԺԵ. Գար. Գրիգոր Տաթեւացի վարդապետ:

Տօնական յիշատակութեանց շարքը փակենք յիշելով, որ Հայոց Եկեղեցւոյն յատուկ է նաև զատ զատ տօներ կատարել՝ Նիկիոյ, Կոստանդնուպոլսոյ և Եփեսոսի սուրբ ժողովներուն համար:

Այդ ցուցակը զննելով կը տեսնուի, որ ուրիշ եկեղեցիներու պատկանող սուրբեր որոնք Հայ տօնացոյցին անցած են, ամէնքն ալ հինգերորդ դարու կէսէն առաջ են, և տիեզերական անրաժան եկեղեցւոյն կը պատկանին, ուրով ամէն եկեղեցիներու հաւատարապէս ընդունելի կը ճանչցուին: Իսկ Հայ Եկեղեցւոյ սուրբերէն անոնք որ հինգերորդ դարէն ետքն են, հաղիւ թէ տասնեակ մը կը կազմեն, և ամէնքն ալ այդ պատուոյն բարձրացած են իրենց մեծահռչակ և լուսաւոր արգիւնքներուն համար:

# ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

10

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Պատմական յօդուածներուն մէջ առիթ ունեցանք բացատրել Հայ գրականութեան սկզբնաւորութիւնը, ուստի առանց նոյնը կրկնելու, բաւական կը սեպենք մտադրութիւն հրատարել սոյն գրականութեան գերազանցապէս եկեղեցական կամ կրօնական նկարագիրին վրայ: Եթէ ստոյգ է որ սերտ կապակցութիւն մը կայ ազգի մը կենսականութեան և իւր գաղափարներուն գրական բացատրութեան միջեւ, պէտք է ուրեմն հետեւցնել, թէ եկեղեցական ազդեցութիւնը որ Հայ գրականութեան մէջ թափանցած է, նոյնը Հայութեան ազգային գոյութեան և պահպանութեան մէջ ալ գլխաւոր գեր ունեցած է:

Հայ ազգին քաղաքական կամ պետական կեանքը շատ տարիներէ ի վեր ջնջուած է: Շարունակ և ընդարձակ գաղթականութեանց հետեւանքով, նոյն իսկ որոշ անգույ մը մէջ կեդրոնացած կեանքի առաւելութիւնն ալ կորսուած է: տակաւին ջրուած ու նուազած ըլլալով մէկտեղ, տակաւին կենդանի կը պահէ իւր անունը, իւր լեզուն, իւր աւանդութիւնները: Աւելցնենք նաև, թէ նոյն իսկ ներկայ պարագաներու մէջ ալ, կատարեալ կենսականու-

Թեան յայտնի նշաններ կու տայ : Հակառակ քաղաքական արգելքներու՝ կենսականութիւն պահած ըլլալու դարմանալի երեւոյթը՝ ուրիշ կերպով չենք կրնար մեկնել, բայց եթէ գրական լեզուի և գրաւոր ծիսակատարութեանց գործնական ազդեցութեամբ : Ասիկայ գնահատելի և անընկճելի ազդեցութիւն մը եղաւ, որ կրցաւ դիմադրել ժամանակին աղբարտիչ զօրութեան և ասիական յեղափոխութեանց անտանելի արկածներուն : Լոկ իզձեր և պարզ զգացումներ՝ իրենք իրենց վաղանցուկ են և արդիւնաւորութեան անբաւական, և չեն կրնար որ և է հասարակութեան գործնական և տեւողական կեանքը ապահովել : Անհրաժեշտարար պէտք է արտաքին և գործնական զօրութիւն մը ունենալ, որ կարենայ հասարակութեան անդամները իրարու միացած և իրարու կապուած պահել : Այդ զօրութիւնը Հայեր մի միայն իրենց գրականութեան մէջ գտան : Այն եղաւ որ իրենց համար շիւման և միասնութեան կեդրոն դարձաւ, երբոր անկէ զատ ամէն արտաքին և քաղաքական կեդրոններ իրենց ձեռքէն խլուեցան :

Նախաինամական պարագայ մը եղաւ, որ Հայ գրականութեան ծագումը զուգընթաց և ժամանակակից եղաւ Հայ քաղաքականութեան անկման հետ, և երբ այս կը կորսուէր, այն երեւան եկաւ : Պէտք է ըսել թէ Ս. Սահակ և Ս. Մեսրոպ ազգային վտանգը նախատեսած էին, երբոր այնչափ նախանձայուղութեամբ Հայ այրութէնը կաղձերու հետագնդեցին : Այդ երկու եկեղեցականներն են, երկուքն ալ իրենց հոգեւորական կոչումին հաւատարիմ հետեւողներ, որ այդ հրաշալի գիւտին բազմերախա հեղինակներն եղան, և որուն արդիւնքները այնչափ նշանաւոր և այնչափ արգասաւոր եղան :

Այդ գիւտն եղաւ, որ նախեառաջ ազգային եկեղեցւոյն սեփական լեզու մը ու ազգային ձեռք մը պատրաստել և յատուկ սուրբ գիրքեր ու ծիսարաններ տուաւ, ամէնքն ալ ինքնուրոյն գոյութեան անհրաժեշտ պայմաններ :

Նոյն գիւտն եղաւ որ ազգն ալ իւր ծոցին մէջ ամփոփեց, և անոր ընծայեց իւր տոհմային ու կենցաղական կենսականութիւնը ապահովելու համար՝ պէտք եղած ամէն միջոցները ։ Նոյն գիւտն եղաւ, որ իւրաքանչիւր անհատի առանձնական ինքնութեան զգացումը պահպանեց, ու մտաւորապէս դաստիարակուելու և կենցաղապէս մշակուելու միջոցները առաւ ։ Մէկ խօսքով հեռացուց այն անազին վտանգը, որ Հայ եկեղեցւոյն, Հայ ազգին և նոյն իսկ Հայ անհատին բնաջինջ կորստեանը կը սպառնար ։

Ինչպէս սկզբնաւորութիւնը, նոյնպէս գրականութեան հեազհետէ զարգացումն ալ, միշտ միեւնոյն եկեղեցական նկարագիրը ունեցաւ ։ Հայ մատենագրութիւնը ուսումնասիրողներ, ամէնքն ալ համամիտ կերպով օսեցդար մը և արծաթեղար մը կը զատեն անոր չրջանին մէջ, որչափ ալ համամիտ չըլլան երկու դարերը իրարմէ զատող ժամանակակէտը ճշգրելու մէջ, ու հինգերորդէն մինչեւ երկուտասաներորդ դարերու ընդարձակութեան մէջ տարբերին ։ Արդ նկատողութեան արժանի է որ ութն դարերու երկար տեսողութեան մէջ, յիսունէ աւելի մատենագիրներու մէջէն, եկեղեցական շրջապով միայն Գրիգոր Մագիստրոս իշխան մը և Մխիթար Հերացի բժիշկ մը միայն կը գտնուին ։ Շատրոս Բագրատունի պատմիչ մըն ալ յիշուած է իններորդ դարուն մէջ, բայց իւր գրուածը, որ մեզի հասած չէ, ռամկական սճով շարագրութիւն մը եղած է կ'ըսուի ։

Հայ գրականութեան արտագրութիւններուն մէջ առաջին տեղը կը բռնեն, եկեղեցական մտտեաններ, ինչպէս են Աստուածաշունչի թարգմանութիւնը և Մաշտոցին պարունակած ծիսարանները, որոնք ընտիր և վճիտ հայկարանութեամբ գրուած են, հակառակ Յոյն ու Լատին եկեղեցիներու մէջ հանդիպածին, որոնց եկեղեցական գիրքերը անկեաղ լեզուով ու սճով են գրուած ։ Եկեղեցական գիրքերէ ետքը պիտի յիշենք սուրբ հայրերու գրութեանց

ընտիր թարգմանութիւնները, որոնք գրեթէ ամբողջական հաւաքածոյ մը կը կազմեն : Բիշ ու շատ տարբերութեամբ գլխաւոր հայերէրու գրեթէ բովանդակ գործերը թարգմանուած են . ինչպէս են, Իգնատիոս Անտիոքացի, Երանոս Լուզդունացի, Գրիգոր Նէոկեսարացի, Աթանաս Աղեքսանդրացի, Եպիփան Կիպրացի, Եփրեմ Ասորի, Եւսեբիոս Կեսարացի, Պրոկղ Կոստանդնուպոլսեցի, Կիւրեղ Երուսաղեմացի, Բարսեղ Կեսարացի, Գրիգոր Նազիանզացի, Սեւերիանոս Եմեսացի, Գրիգոր Նիսացի, Յովհան Ոսկեբերան : Ասոնց ամէնուն թարգմանութիւնները ընտիր և դասական հայկաբանութեան օրինակներ են : Եկեղեցական անձեր եղան նոյնպէս, որ իմաստասէրներու գրուածները հայերէնի վերածեցին, եւ ըստ այսմ հայերէնով ալ կը գտնուին այսօր, Արիստատէլ, Պլատոն, Գիոնեսիոս, Յուստինոս, Պորփիր, Փիլոն, Արիստիտէս, Պիտիդէս : Եկեղեցին իւր պաշտօնեաներուն միջնորդութեամբ, ոչ միայն կրօնական նպատակներու կը ծառայէր, այլեւ մտաւորական ընդհանուր զարգացման կը նպաստէր, նոյն իսկ հեթանոս իմաստասէրներու գրուածները Հայութեան ընծայելով :

Պատմութեան գիրքերն ալ, որոնցմէ բաւական թիւ մը կայ, նմանապէս եկեղեցական անձերու հեղինակութիւններ եղած են . ինչպէս, Մովսէս Խորենացի, Ղազար Փարպեցի, Եղիշէ վարդապետ, Կորիւն Սքանչելի, Յովհաննէս Կաթողիկոս, Ղեւոնդ վարդապետ, Ուխտանէս Եպիսկոպոս, Ստեփանոս Աստղիկ, Ստեփանոս Օրբէլեան, և ուրիշներ, որոնց ցանկը բաւական երկար է : Նոյնը պիտի ըսուի՝ Ագաթանգեղոսի, Զենորի, և Բիւզանդի պատմութիւններուն համար ալ, որոնք թարգմանութիւններ կը նկատուին եկեղեցականներէ կատարուած : Յայտնի կը տեսնուի ուրեմն, որ Հայ գրականութեան ընտրեալ ոյն շրջանը, բացառապէս եկեղեցական մատենագիրներու շրջան մը եղած է :

Պատմական յօդուածներու մէջ գրածներնէս տեսնուեցաւ թէ երկուստասներորդէն եօթներուսներորդը անկ-

ման դարեր եղան Հայութեան համար, թէ կենցաղական և թէ քաղաքական տեսակէտէն : Գրականութիւնն ալ այդ անկումին ազդեցութիւնը զգաց, բայց այդ միջոցէն ալ մնացած յիշատակներ և արտագրութիւններ, նորէն եկեղեցականներու գործունէութեան արդիւնք են : Եկեղեցականութիւնն եղաւ, որ քիչուշատ ժողովրդական գաստիարակութեան ալ մտադրութիւն դարձուց, և նուիրական աշխատութիւն մը կատարեց, թէպէտ համեստ ու չափաւոր, բայց միշտ հնարաւորութեան պայմաններուն հաւատար աշխատութեամբ : Պէտք չէ աչքէ հեռացնել, թէ այսչափն ալ ընելու համար ինչպիսի բազմազիմի ու ծանր, և գրեթէ անգիմազբելի դժուարութեանց դէմ մաքառիլ կը պարտաւորուէր : Այդ միջոցին եկեղեցական շեղող մասենագիրներու կարգէն, միայն Ամիր Տորլաթ բիշկին և Երեմիա Քէօմլիբճեան պաշտօնակալին անունները կրնանք տալ : Մեզի հասնող գրուածները, որչափ ալ ստորին և ինկած ոճով, բայց միշտ կարեւոր են՝ կենցաղական եղելութիւններն ու կացութիւնը, և ժամանակին ողին ու զգացումները պատկերացնելու տեսակէտէն : Գնահատելի յիշատակներ ալ կը պարունակեն, յիշեալ դարերուն պատմական պատահարներուն և արկածներուն վրայ, որոնց մասին ուրիշ կողմէն չառ քիչ տեղեկութիւններ կան, և մեծաւ մասամբ մտիւն մէջ կը մնան :

Եկեղեցականութեան արդիւնք մը պէտք է սեպել ևս հնագոյն մատենագրութիւնները պահպանած ըլլալու ջանքը : Այդ դարերուն մէջ ապրող ընդօրինակիչները, գրեթէ առանց բացառութեան եկեղեցականներ են եղած, և մեր ձեռքը հասած գրչագիրները, գրեթէ բոլորն ալ, այդ անկեալ դարերու գրութիւններ են : Լաւագոյն դարերէն մնացող գրչագիրներ չառ հազուադիւրս են :

## ԽԱ.

## ՎԵՐՁԻՆ ԵՐԵՒՈՅԹՆԵՐ

Ութ եւ տասներորդ դարուն սկիզբէն գրականութիւնը նոր կերպարան մը կը սկսի առնել, բայց միշտ եկեղեցականութիւնն է որ մտաւորական շարժումին գլուխը կը գրտնուի, և զարգացման ջանքերն ու կենցաղական բարւոքման ճիգերն ալ եկեղեցականներու նախաձեռնութեամբ կը սկսին Վարդան և Կոլոտ և Նալեան՝ Արեւելքի մէջ, Մխիթար և Խաչատուր՝ Արեւմտեքի մէջ, ամէն ճիգ կը թափեն, ոչ միայն ազգային գրականութեան նոր կեանք մը տալու, այլ և ժողովուրդին մէջ դաստիարակութիւնը տարածելու, և կղերին մէջ ուսումը զարգացնելու: Անհամեմատ և անակնկալ կերպով գիրքերը կը շատնան՝ տպագրութեան հետըղհեալ Արեւելքին մէջ տարածուելով: Ժողովուրդը խրճրովին ուսման և դաստիարակութեան պտուղները վայելելու կը հրապուրուի, և իւր կացութիւնը բարւոքելու կ'աշխատի: Նոր մատենագիրներ և հեղինակներ կը սկսին երեւան գալ ազգային ամէն գասակարգերէն անխտիր: Ինչ որ մինչեւ այն ատեն տեսնուած չէր, կը սկսի իրականանալ, և աշխարհականներուն մէջէն ալ դաստիարակութեան և ուսուցչութեան պարագոյններ մէջտեղ կ'ըլլան, ինչ որ մինչեւ այն ատեն միայն եկեղեցականներու վերապահեալ գործ կը կարծուէր: Ժողովրդական դասակարգէն առաջ կու գայ առաջին վարժապետներու յատուկ խումբ մը, Պասուելի անունի վառաւոր կոչումի ներքեւ: Սկսուած շարժումը այլեւս չթուլնար, և դէպի յառաջգիւմութիւն կը շարունակէ, զգացումներու բարձրացումը շարունակաբար և աստիճանաբար կը յառաջէ, ինչպէս որ ժամանակին ընդհանուր հոգին ալ ամէն կողմէ նոյնը կը թելադրէր:

Արտիճեաւու մենք միայն եկեղեցական կամ կրօնական գրականութեամբ պիտի դրաղինք, պէտք է անկեղծաբար ըսենք, որ եթէ այդ ճիւղին պատկանող գիրքեր և երկատիրութիւններ բաւականաչափ եղան, սակայն իրենց պարունակութեամբ՝ կատարեալ և գոհացուցիչ եղած չեն։ Հայր Միքայէլ Չամչեան, Վենետիկի Մխիթարեաններէն, նախաձեռնարկը եղաւ ազգային պատմութիւնը ուսումնասիրելու մէջ, բայց իւր աշխատութիւնը պատմական քննադատութեան և ընդհանուր պատմութեան հետ կապակցութեան կողմէն՝ թերի կողմեր կը ներկայէ, ինչ որ մասամբ ժամանակին վերադրելի է։ Հայ ազգին ծագման մասին ուսումնասիրութիւնները տակաւին շատ անկատար վիճակի մէջ են։ Հայ եկեղեցւոյ պատմութիւնն ալ նշանակելի դատարկներ և թերիներ ունի իւր հետազօտութեանց մէջ, այնպէս որ պատմական ուսումն ալ դեռ իւր նախաքայլերուն մէջ պէտք է նկատուի։ Միւս կողմէն Վենետիկի եւ և Վիէննայի Մխիթարեան միարանութիւններն ալ, որոնց գրական արդիւնաւորութիւնը անուրանալի է, չկրցան խուսափել այն նախազժուած մեկուսացումէն և բռնադատեալ ուղղութեանէն, որ զիրենք հեռու կը պահէ Հայոց եկեղեցիէն։ Էջմիածնի ձեմարանի և Արմաշու Գպրեվանքի աշակերտութիւնները սկսան քննադատական լուրջ հետազօտութիւններով դրաղիլ, և Հայ եկեղեցւոյ իսկական և վաւերական նկարագիրը լուսարանել, մինչ ուրիշ եկեղեցիներու հետեւող օտարազգի կամ հայազգի հեղինակները՝ զայն իրեն ճշգրիտ և իսկատիպ նկարագիրէն ջանացին հեռացնել, գրեթէ բոլորովին անձանաչ դարձնելու շտապ։

Եւրոպական յարաբերութեանց գիւրութիւնները սկըսան Հայերն ալ շփման մէջ գնել հետզհետէ երեւան եկող նոր տեսութեանց և նոր դրութեանց հետ, որոնք աւելի հետեւողներ ունին Լատինական ազգերուն մէջ։ Ասկէ սկսան ծագիլ հակակրօնական գաղափարներ և հակեկեղեցական կարծիքներ, որոնք արձագանգ ունեցան եկեղեցւոյ դէմ



հրատարակութեանց մէջ, որչափ ալ բազմաթիւ և տարածուած չ'ըլլան: Եկեղեցին, իւր դիրքն ու ազդեցութիւնը պահպանելու հարկադրուած, պարտաւոր էր ջատագովական ուղղութիւն մը բռնել, և եկեղեցականներուն ուսման եւ զարգացման մակարդակը բարձրացնել, որպէս զի անոնք ալ կարենան կրօնական ու բարոյական ու ազգային կէտերուն մասին յայտնուած յարուան մրցումներու դէմ գնել: Բայց մեր կարծիքով պէտք է այդ կացութիւնը թիրախացութեան արդիւնք մը նկատել, Որովհետեւ Հայոց եկեղեցին շատ յստակ ու հաստատուն գեանի վրայ կը գտնուի, և իւր թողաւոր ներողամտութեան սկզբունքը բաւական է զինքն պաշտպանել այն յարձակումներէն՝ որոնք որիչ տեղեր կը մղուին, քանի որ ինքը երբէք չափազանցութիւններով այդպիսի դիմադրութեան առիթ տուած չէ: Հայերուն մէջէն այն քիչերը, որոնք իրենց ծայրայեղ կարծիքներով մտաւորական ազատութեան դատը պաշտպանել կը կարծեն, կ'երեւի թէ լաւ չեն թափանցած և իմացած իրենց եկեղեցւոյն լայնախոհ հոգին և ազատամիտ վարդապետութիւնը: Կ'երեւի թէ չեն մտածեր որ հակակրօնական և հակակղերական ձգտումները հռոմէացւոյն կաթոլիկ երկիրներու մէջ ծագում առած են, և թէ նոյն ինքն հռոմէացւոյն կաթոլիկութիւնը իւր անխորհուրդ և չափազանցեալ սեղմումներով գրգռած է Եւրոպիոյ մէջ երեւցած չափազանցեալ ձգտումները: Դիտելի է որ բողոքական երկիրներ ընդհանուր կերպով ազատ են հակակրօնական եւ հակակղերական պայքարներէն, ինչ որ անշուշտ հետեւանք է տիրող կրօնքին կողմէ բռնուած ազատամիտ ուղղութեան: Անգղասաքսոնները, որոնք ազատութեան ռահանորդները կը նկատուին, միեւնոյն ատեն անկեղծ հաւատացեալներ եւ ճշմարիտ կրօնասէրներ մնացած են:

Վարդապետութեան գլխուն մէջ տրուած բացաւորութիւնները, մեզի իրաւունք կու տան համարձակարեւան հռչակելու, թէ ազատամիտ վարդապետութեան և կրօնա-

կան ներողամտութեան մասին, Հայոց եկեղեցին բոլոր քրիստոնէութեան ճիւղերէն ոչ մէկուն երկրորդ է, եթէ ամէնուն վրայ առաջին ալ չէ: Հայ հեղինակի մը համար աւելի դիւրին բան չկայ, քան թէ իւր ազգային եկեղեցին պաշտպանել, վերջին դարուն մէջ երեւան եկած և կրօնքի դէմ ուղղուած յարձակումներուն գէմ: Բաւական է որ ճիշդ ու յստակ կերպով բացատրուին իւր վարդապետութիւնն ու սկզբունքները, մէկ կողմ դրուին ինչ որ իրեն մէջ օտարներու ազդեցութեամբ կամ հրապուրանօք մուծուած կէտեր են, և իրրեւ կանոն ընդունուի ինչ որ իրեն նախնի վարդապետներուն կողմէն գծուած դասնութիւն կամ ուղղութիւն է: Ամէն պարագայի մէջ բաւական է իրրեւ որոշիչ փաստ ընդունիլ նախնական և բնիկ աւանդութիւնը, և անխախտ պահել եկեղեցականներու և աշխարհականներու օրինական և բարեբաստիկ գործակցութիւնը. և եկեղեցւոյ կառավարութեան վերաբերեալ խնդիրներու մէջ, կանոն ընդունիլ ազգային եկեղեցւոյ հոգին և անոր ուղղութիւնը: Երբոր այս կէտերը իրր հիմնական առնուին, ինքնին կը հաստատուի հնաւանդ համոզումը, թէ Քրիստոնէութիւնը, որ ազատութեան լոյսը սփռեց աշխարհիս վրայ, չկրնար անոր դէմ ըլլալ, և ոչ ալ մարդկային միտքին զարգացման գէմ հակառակօրոգ կանգնիլ:

---

# ՆԵՐԿԱՅ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

ԽԲ.

ԱՐՏԱՔԻՆ ԿԵՐՊԱՐԱՆԸ

Ինչ որ մինչեւ հիմայ գրուեցաւ, գլխաւորապէս Հայ Եկեղեցւոյ անցեալին կը պատկանէր: Ընթերցողները գոհացուցիչ չափով տեղեկացան թէ ինչ եղած են նոյն եկեղեցւոյ սկզբնաւորութիւնը, առաջին ժամանակները, արկածները և ընթացքը: Հայ Եկեղեցին մինչեւ հիմայ օտարներուն աչքին, եթէ բոլորովին անձանօթ չէր, գոնէ լաւ ճանչցուած չէր. իրեններուն աչքին ալ թերեւս յստակ և որոշ կերպով գծուած չէր, և իւր գիրքն ու յարարերութիւնները ճշդուած չէին: Հիմակ որ չափով մը այդ նպատակներուն գոհացում տալու ախատեցանք, անցնինք համառօտ կերպով մը նկարագրել իւր ներկայ կացութիւնը:

Բաղանդակ քրիստոնէութիւնը չորս մեծ ճիւղերու կը բաժնուի. երկուքը Արեւմուտքի մէջ՝ կաթոլիկ և Բողոքական, երկուք ալ Արեւելքի մէջ՝ Երկարնակ և Միարնակ: Ինչաւ դժուարութիւն չենք զգար յայտարարելու թէ այդ վերջին Միարնակ ճիւղը, չունի այլ ևս այն առաւելութիւնները զորս կը հայթայթեն բաղձութիւնն ու կարողութիւնը. բայց ասոնց նուազութեան դէմ՝ ունի հնութեան մեծագոյն առաւելութիւնը: Հայոց Եկեղեցին, որ այս ճիւղին կը պատ-

կանի, նոյն ճիւղին զանազան մասերուն վրայ առաջնութիւնը կը վայելէ : Հաւատոյ և սիրոյ հողեւոր հաղորդակցութիւնն է, որ այդ ճիւղին մասերը կը միացնէ, որովհետեւ նաւանդ կանոնաց համեմատ, երբեք եկեղեցւոյ միութեան համար վարչական կեդրոնականութիւն չպահանջուիր : Այդ սկզբունքին համաձայն Ասորական, Եգիպտական և Եթովպական եկեղեցիներ իրենց ինքնուրոյն նախարարութիւնները կը պահեն, առանց Հայոց եկեղեցւոյ հետ միութենէ և հաղորդակցութենէ դադարելու : Սոփորութիւնն է այդ ճիւղին մէջ հաշուել Քաղղէական եկեղեցին ալ, թէպէտեւ իւր հաւատոյ դասնութիւնը միւսներուն հետ կատարելապէս համաձայն չէ : Այդ տեսակէտը առաջ եկած է Օսմանեան պետութեան բռնած ընթացքէն, որ սկիզբէն Քաղղէացիներն ալ Հայոց պատրիարքարանէն կախում ունեցող Արեւելեան ժողովուրդներու խումբին մէջ նկատեց :

Հայոց եկեղեցւոյն նկարագիրը իսկապէս և ամբողջապէս ազդային եկեղեցւոյ մը նկարագիրն է, ինչ որ հնաւանդ եկեղեցիներու էական տիպարն է : Իրեն կեդրոնը եւ դերագոյն իշխանութիւն վայելող ակառն է Էջմիածինը, որուն իրաւասութիւնը կը տարածուի բոլոր Հայադասան հաւատացեալներու վրայ : Անոնք ուր ուրեք ալ գրտնուին, բոլոր աշխարհի մէջ սիրուած, ամէնն ալ միեւնոյն հողեւոր հօտի բանաւոր ոչխարներն են : Հարկ չկայ որ նորէն կրկնենք, ինչ որ արդէն զրեցինք պատրիարքութեանց և առաջնորդութեանց բաժանումներուն, և անոնց իրաւասութենէն յառաջ եկած վարչական և բարեկարգական յարարութեանց վրայ : Ռուսիոյ մէջ գանուոյ փիճակներ կը կառավարուին Պալամէնիա կոչուած կանոնադրութեան համեմատ, որ 1836'ին հաստատուած է Յարին ուխտով : Իսկ Թուրքիոյ փիճակներ կը կառավարուին Սահմանագրութիւն անուն կանոնադրութեամբ որ 1863'ին հաստատուած է սուլթանին իրաւտով : Այդ երկու կանոնադրութիւնները, որչափ ալ իրենց էական կէտերուն մէջ Հայ եկեղեցւոյ

նախնական կանոններուն և հնասնոց ստորութեանց վրայ ձեռուած են, սակայն երկուքն ալ երկու տէրութեանց պետական պահանջներուն հետ համաձայնութեան ենթարկուած են: Ամէն առթի մէջ զանազան արտօնութիւններ կը պարունակեն, որոնք աւելի քան պարզ առանձնաշնորհումներ, բացառիկ դիրքերէն պահանջուած փոխադարձ իրաւունքներ կը կազմեն՝ Հայ եկեղեցւոյ եւ Հայ ժողովուրդին ինպատ: Ռուսիոյ և Թուրքիոյ մէջ նորերս հրատարակուած սահմանադրական վարչութիւնները՝ սկսած են դժուարութիւններ հանել այդ բացառիկ կամ՝ առանձնաշնորհեալ իրաւունքներու դէմ, և կը ջանան անոնք չնջել: Ասկէ առաջ եկած է՝ ներհակընդդէմ խուլ մըցում մը երկու երկիրներուն նոր քաղաքական վարչութեանց կողմէ՝ Հայ եկեղեցական իշխանութեանց դէմ, որուն հիմ կ'առնուի սահմանադրական հաստատութեան սկզբունքը: Սակայն Հայ ժողովուրդներ և Հայ եկեղեցական իշխանութիւններ, կրօնապէս ստացուած առանձնաշնորհումներուն վայելքէն չեն կրնար զրկուիլ, ցորչալի Ռուսիոյ և Թուրքիոյ կառավարութիւնները պինդ կը պահեն, առաջինը որթողոքս և երկրորդը իսլամական կրօնքներուն տիրապետող առաւելութիւնները, և անոնց հետեւողներուն բացառիկ դիրքը:

Եթէ պատմական յիշատակներու զննութեամբ Հայ եկեղեցւոյ նախնական ժամանակներու մէջ ունեցած ընդարձակութեան վրայ զաղափար մը ուզենք կազմել, պէտք է եզրակացնել, թէ հին ատեններ առնուազն երեսուն միլիոն հաստացեալներ ունեցած է այդ եկեղեցին, մինչ այժմ չորս միլիոնէ աւելի չէ: Այս թիւը մերձասոր հաշուով նշանակուած է, որովհետեւ սակաւին առաջնորդարաններու կողմէն՝ հաստատուն փոճակադրութիւն մը հրատարակուած չէ: Հայ եկեղեցւոյ հաստացեալներուն նուազելուն պատճառ պէտք է ճանչնալ՝ անրնդհատ կոտորածները և ընդարձակ դաղթակնաութիւնները, բռնադատեալ կամ հրապտրեալ կրօնափոխութիւնները, և իրենց նոր բնակավայ-

բերուն մէջ տեղական տարրին հետ դաւանափոխութեամբ ձուլուիլը ու կորսուիլը Գործիս վերջը առանձինն յաւելուածով մը Հայ Ժողովուրդին հաւանական վիճակազրութիւնը պիտի տանք վիճակներու կամ թեմերու վրայ բաշխելով ։

## ԽԹ .

### ՉԱՆԱՉԱՆ ՏԱՐՐՆԵՐ

Փանիցս ըսինք ու կրկնեցինք, թէ Հայ Եկեղեցւոյ թոյլատու ներողամտութեան հօդին, դիւրութիւն և համարձակութիւնն առած է Հայադաւան հաւատացեալներուն հեշտ կերպով ուրիշ քրիստոնէական դաւանութեանց անցնելու ։ Այս տեղ չենք խօսիր իսլամութեան դարձողներուն վրայ, որոնք իշխող պետութեանց ազդեցութեան ներքեւ կրօնափոխութեան բռնադատուեցան կամ հրապուրուեցան ։ Իսլամութեան դարձողներուն սերունդները, ազդութեան կերպարանն ալ փոխեցին կրօնքին հետ, և այլ ևս Հայ չեն նկատուիր, այլ խառնուած են իսլամութեան հետեւողութեամբ կազմուած մեծ տարրին մէջ, եւ այսօր իրենց սերունդները աճեցուցած են Օսմանեան կայսերութեան մէջ թուրք կամ Գուրգ անունով ճանչցուած ցեղերը ։

Քրիստոնէական շրջանակին մէջ դաւանափոխութեամբ Հայ Եկեղեցիէն բաժնուող հատուածներուն ամէնէն հինն է Հայ-Հոռոմ կոչուածը, որոնք Իիւզանդական ափրապետութեան Ժամանակէն Յունական Եկեղեցին ընդունած են ։ Ասոնք ասեմին բազմութիւ եղած են Իիւզանդական կայսերութեան ընդարձակութեան մէջ, այլ այժմ հազիւ թէ տասըհազար մը կրնան ըլլալ Ակնայ, Նիկամիդիոյ և Կեղւոյ վիճակներուն մէջ ցրուած ։ Իրենց նախնական Հայ ազդութեան յիշատակը կը պահեն տակաւին, և մէջերնէն ծերունի-

ներ հայերէն ալ կը խօսին, բայց հետզհետէ յունական ուսմամբ և խնամութեամբ, բուն ֆոյներուն հետ խառնուելով, Հայութեան կերպարանին հետ յիշատակն ալ կորսնցընելու վրայ են: Արդէն ալ ոչ ծիսական, ոչ ծիսական, և ոչ ուրիշ մէկ արտաքին պայմանով՝ իրենց յատուկ կացութիւն մը չեն վայելեր:

Պահ մը կասկած ծագած էր թէ Ռուսական տիրապետութիւնը Կովկասի մէջ կարենար Հայերը հրապուրել որթողութեան դիմելու, և Հայ-Ռուս տարր մը կազմելու իրր Հայ-Հռոմ տարրին շարունակութիւն: Սակայն կասկածը արդիւնք չունեցաւ, և նոյն իսկ պրատուրա այսինքն Ռուս-որթողութեան քարոզչութիւնն ալ յաջողութիւն չը գտաւ, Կովկասի մէկ պզտիկ գիւղէն և մայրաքաղաքներու քանի մը ազնուապետական գերդաստաններէն դուրս:

Բայց բաւական յաջողութիւն ունեցաւ Հռոմէական կաթողիկէ քարոզչութիւնը, որ կրցաւ մինչև իսկ ինքնուրոյն հասարակութիւն մը կազմել Թուրքիոյ մէջ, և զայն Սամանեան պետութեան պաշտօնապէս ճանչցնել և հաստատել տալ: Այդ յաջողութեան զօրաւոր ազդակները եզան կաթողիկէ պետութեանց քաղաքական ազդեցութիւնները՝ եւ Բրորականտայի կամ կաթողիկէութիւն տարածող հաստատութեանց նիւթական նպատակները: Հռոմի պապութիւնն ալ վերջերք իրր հրապուրելու միջոց ընդունեց իրեն հեանողներուն ներել, որ հայրենական հայկական ծիսակատարութիւնները պահեն մանր փոփոխութիւններով: Կաթողիկէութեան առաջին քարոզիչները ձեռնարկած էին նոյն իսկ Լատին ծիսարանները պարտաւորիչ ընել հայերէնի թարգմանելով, բայց բուն հակառակութեանց և ծանր գծաւորութեանց հանդիպելով այդ միտքէն ետ կեցան: Այն ատեն պապութիւնը միջակային ձեւ մը ուզեց գործածել, Հայ ծիսարանները նշանաւոր փոփոխութիւններով նորէն հրատարակեց, և զայն պարտաւորիչ ըրաւ իրեն հեանողներուն: Այդ փորձն ալ յաջող արդիւնք չտալուն, վերջապէս Հայ

Ճիսակատարութեանց պահպանութիւնը արածնեց շատ քիչ փոփոխութեամբ, և իրեն կասկածելի երեւցած կէտերը կամայական մեկնութեանց ենթարկելով: Այդ միջոցը աւելի օգտակար և աւելի արդիւնաւոր տեսնուեցաւ, թէպէտեւ ձեռքէ թողուած չէ՝ հետեւողութիւնը սմբայնելէն ետքը նոր պայմաններ հրամայելու սովորութիւնը:

Կաթողիկոսութեան հետեւողներու մնացորդները, որոնք մինչեւ վեչտասաներորդ դար կը բարձրանան, ցրուած կը մնային աստ և անդ Կիլիկիոյ և Հայաստանի մէջ, երբ ավելուտաններորդ դարուն սկիզբները Կոստանդնուպոլսոյ մէջ կաթողիկոս քարոզիչներու նոր արշաւանք մը բացուեցաւ, որ ժողովուրդին մէջ երկպառակութիւններ ստեղծեց և զայն հակառակ կողմնակցութիւններու բաժնեց: Մխիթարեան և Անտոնեան միաբանութիւնները, Լիբանանի մէջ հաստատուած ավտօք, որոնք այդ միջոցին կը սկսին, նոր ոյժեր աւելցուցին հասակաւորուած ուղղութեան, և հետզհետէ աճելով՝ թուրքիոյ մէջ Քաթոլիկ միլլէթ մը ըլլալու հասան, Օսմանեան կառավարութեան հաստատութեամբ, և նուիրապետութիւն ալ ստացան Հռոմի տուուչութեամբ: Ռուսիոյ մէջ թէպէտ առանձինն ժողովրդապետութիւններ կը կազմէին, բայց իրը հոգեւոր իշխանութիւն Սարաթովի Լատին եպիսկոպոսին ենթարկեալ էին. ինչ որ կը տեսէ, թէպէտ նորերս իրենց համար յատուկ առաջնորդական փոխանորդ մը ունեցան: Բաւական թուով Հայ-կաթողիկէներ կը գտնուին նաև Լեհաստանի Կալիցիա գաւառը և Մաճառաստանի մէջ, բայց Արեւելքի մէջ եզոզ դաւանակիցներուն հետ վարչական կապակցութիւն չունին: Աշխարհի զանազան կողմերը, կաթողիկոսութեան յարող Հայերուն թիւը, մերձաւորաբար երկու հարիւր հազար կը հաշուուի: Թուրքիոյ մէջ Հայ կաթողիկէներուն աւելի բազմաթիւ եղած քաղաքներն են, Կոստանդնուպոլիս, Անկիրիա, Բերիա, Մամուլու և Խոտորջուր, Կովկասի մէջ Ախալսա, և Կալիցիոյ մէջ Լեմպէրկէ: Հայ-Բողոքական հասարակութիւնը աւելի նոր է:



իրենցմէ ոմանց յայտնած կարծիքը, իրրեւ թէ հին թոն-  
գրակիցոց կամ Հայ Պապիկեանց շարունակութիւնը ըլլան,  
պարզապէս մտացածին բան մըն է: Պատմութենէն յայտնի  
է, որ հին աղանդներու հետքն իսկ ջնջուած է Արեւելքի  
մէջ, և ծանօթ եղելութիւն մըն է, թէ Արեւելքի բո-  
ղոքականութիւնը Ամերիկացի քարոզիչներու ձեռքով բեր-  
ուած ներածութիւն մըն է: Այդ քարոզիչները, Հայ կա-  
թողիկներու յաջողութենէն քաջաբերուած, իրենք ալ իրենց  
համար յատուկ Միլլէթ մը ջանացին կազմել, բառին յա-  
րակից բոլոր իրաւունքներովը Մերձաւորարար ուխտուն հա-  
զարի կը հասնին այժմ, և Օսմանեան կայսրութեան շատ  
կողմերը ցրուած մանր մանր խումբեր կը կազմեն: Գլխաւոր  
կեդրոնները, ուր աւելի համախմբուած կը գտնուին՝ Խար-  
բերդ և Այնթապ և Մէրզիֆուն են, այն տեղերու դպրո-  
ցական հաստատութիւններուն շուրջը, որոնք Ամերիկեան քա-  
րոզչական ընկերութեանց կողմէն հիմնուած են և անոնց մի-  
ջոցներովը կը պահպանուին: Իրենց դաւանական յարան-  
ուանութիւնը Աւետարանական կոչուածն է, և շատ քիչեր  
կը գտնուին Եպիսկոպոսական և Մկրտական յարանուանու-  
թիւններուն հետեւող: Հայ բողոքականներուն ներքին  
վարչութիւնը Ամերիկացի քարոզիչներուն կապուած է, և  
մեծաւ մասամբ անոնց նպատակներով կը մտտակարարուին:  
Կովկասի մէջ ալ Հայ բողոքականներու պզտիկ խումբ մը  
կայ, որ իրենց համար յատուկ կացութիւն մը չունին, և  
օտարազգի բողոքական համայնքին մէջ խառնուած կը մնան:

Աւելցնենք իրրեւ լրում, թէ կաթողիկ և Բողոքա-  
կան հասարակութիւնները Թուրքիոյ մէջ կը կառավարուին  
իրենց յատուկ ներքին կանոնադրութիւններով, որոնք Օս-  
մանեան կառավարութենէ պաշտօնապէս հաստատուած չեն:

## ԽԳ.

## ԱԶԳԱՅԻՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Ամէն ուղեւորներ , որոնք Արեւելքը մտէն ուսումնասիրած են , Հայուն նկարագիրին նկատմամբ ամենանպաստաւոր տեսութիւններ և դատաւորութիւններ յայտնած են : Ամէնքն ալ միաձայնութեամբ կը բարձրացնեն անոր մտաւորական կարողութիւնները և գործնական յաջողակութիւնները : Այս ձիւրքերուն մէջէն , այն որ առանձնապատուկ կերպով Հայուն նկարագիրը կը բնորոշէ , արթուն և ձեռներէջ հոգին է , որ իրեն օգնած է , քայքայիչ և կործանիչ պարագաներուն մէջէն , առանց վերջնական կորստեան անցնելու : Հայոց պատմութիւնը քանի մը նախադասութիւններու վերածել ուզած ատեննիս կրնանք ըսել , որ իւր սկզբնատորութիւնը մի՞թիւն է , իւր բարօրութիւնը վաղանցուկ եղած է , և մնացեալ միջոցը , որ է ըսել գրեթէ միշտ , երբեք դժնդակ և եղբրական արկածներէ ազատ եղած չէ : Արչաւանքներ , աւարառութիւններ , կոտորածներ , հարրատահարութիւններ , իրարու յաջորդելով Հայուն ամբողջ պատմութիւնը մարտիրոսական վկայարանութեան դարձուցած են : Այս ամէն դժբախտութեանց մէջ , Հայը երբեք յուսահատութեամբ ընկճուած չէ , և ոչ ալ իւր վրայ իշխած է՝ արեւելեան թուլամորթութիւն կոչուած անհոգ անգործութիւնը : Նա ամէն ատեն գիտցած է յոգուտ գործածել որևէ պարագայ կամ առիթ որ իրեն առջև ելած է . և այդ գործունէութեամբ օգտակար ըրած է իւր բոլոր թէ բնական և թէ ստացական ընդունակութիւնները :

Արդեւքներու և խոչընդոտներու շարունակարար հանած դժուարութիւնները անարգելով , Հայը գործունեաց

դիրք և օգտակար դեր մը վարած է իւր տիրապետողներուն մօտ, և գաղթականութեամբ գտնուած ցրիւ անդերու մէջ ալ՝ կենցաղական և վարչական բարձրագոյն աստիճաններու հասած է: Նա միօրինակ և հաւասար արդիւնաւորութեամբ կրցած է մշակել մտրդկային գործունէութեան ամէն ճիւղերը: Թէ վաճառականութեանց և ճարտարութեանց, և թէ արուեստից ու գիտութեանց մէջ, միշտ գերազանց կերպով յաջողած է: Ամէնէն հին ժամանակներու մէջ ալ Ասիոյ առեւտուրը Հայոց ձեռքն էր, և անոնց ճարտարութեանց արդիւնքները կը փայլէին Տիւրոսի և Բաբելոնի վաճառներուն և հրապարակներուն վրայ: Միջին դարու մէջ ալ, Լեհաստանի և Մաճառաստանի ազատ Հայաքաղաքները՝ գործունէութեան և յառաջադիմութեան լաւագոյն կեդրոններն են եղած: Պէտք չէ եւս մոռնալ որ Անգղիացոց Հնդկական ընկերութիւնը, պարզապէս շարունակութիւն մըն է Հայերուն կազմած Հնդկական ընկերութեան, որ քաղաքական և զինուորական իշխանութիւններով ալ ճշխացած էր:

Նմանապէս վկայուած և պատմութեամբ հաստատուած կէտ մըն է, թէ այն Հայ գաղթականները, որ զանազան առիթներու մէջ իրենց բնակայրէն հանուելով Թուրքիոյ և Ռուսիոյ զանազան կողմերը փոխադրուեցան՝ երկու կայսրութիւններուն ալ բարօրութեանց և բարեօրմանց զարկ տուողներն եղան: Սամանեան կայսրութեան ամէնէն հոյակապ ճարտարապետական շինութիւնները, և պետութեան ու հանրութեան աւելի օգտակար հաստատութիւնները, ամէնն ալ Հայերու գործեր են: Յիշենք երեսմտական մատակարարութիւնը, փողերանոցի հաստատութիւնը, վառօգի գործարանը, բանակներուն պէտքի նիւթերը պատրաստելու հիմնարկութիւնները: Այն որ ընդհանուր և անորոշ կերպով Արեւելեան աշխարհը կը կոչուի. և նորը ու ճարտար ու հրապուրիչ գործուածներ կ'արտադրէ, գլխաւորապէս Հայ երեսակայութեան ու հանճարի, և Հայ

բազուկներու ու մատերու կը պարտի այդ արդիւնքները :

Շատ են Հայեր, որոնք վարչական ու դիւանագիտական ու զինուորական պաշտօններու մէջ փայլեցան: Ռուսական բանակներու նշանաւորագոյն յաղթութիւնները Հայազգի զորավարներու հրամանատարութեամբ կատարուեցան: Աներկբայապէս՝ Հայազգի դիւանագէտի մըն ալ կը պարտի եղիպտոս իւր վերածնութիւնը: Ազատութեան գաղափարին Արեւելքի մէջ զարթնումը՝ Հայ ազգին յառաջընթացութեամբ սկսաւ, որ մեծամեծ զոհողութիւններու ալ ենթարկուեցաւ այդ նպատակին համար. և համարձակ կրնանք աւելցնել, թէ տակաւին ալ չէ դադարած իւր զոհողութիւններով ազատութեան փրկանքը վճարել :

Շատ երկար մանրամասնութեանց պէտք էր մտնայինք, եթէ ուզէինք ամբողջարար յառաջ բերել Արեւելքին օգտին համար Հայ ազգին բրած աշխատութիւնները և ձեռք ձգած արդիւնաւորութիւնները: Այն ատեն լաւ պիտի տեսնուէր թէ ի՞նչ նախանձայուղութեամբ և ի՞նչ անկաշկանդ անձնուիրութեամբ ջանացած են Հայերը պինդ կառչիլ արդիւնաւորութեան գործերուն, թէև ուղղակի իրենց ազգին համար ալ չըլլան. բաւական սեպելով որ գերազանցապէս յայտնեն իրենց անդրդուելի հաւատարմութիւնը, և միւս կողմէն գոհունակութիւն ընծայեն գործունէութեան և յառաջադիմութեան իղձերուն, որք իրենց բնական զգացումներուն պահանջը կը կազմեն :

Դժբախտարար այդ գեղեցիկ պատկերը կերպարանափոխ կ'ըլլայ, երբոր ուզենք Հայութիւնը նկատել իւր հանրութեան հանդէպ, և սկսինք հետազօտել ինչ որ Հայը ինքն իրեն համար բրած է՝ իբր ազգ և իբր ժողովուրդ նկատուած ատենը: Յաւաքի տպաւորութիւն և ազետայի սրտաբեկութիւն մը պիտի ըլլայ այդ ուսումնասիրութեան հետեւանքը: Անուրանալի է, որ իւր տարաբախտ արկածներուն առաջին և դիտաւոր պատճառը՝ իւր հայրենական երկրին և իւր ազգային բնաշխարհին սեղազրական դիրքն է :

Հայաստան, ծովային դուռերը և գետային ճանապանհները գրկուած, չըջակայ ժողովուրդներու արչաանքներուն ենթակայ, և բուռն ոյժերու դէմ դնելու միջոցներէ զուրկ, միշտ հզորագոյններուն բռնութեանց և տիրապետողներու հարստահարութեանց ներքև մնալու պարտաւորուեցաւ։ Բայց այդ պարագաները բաւական են արդեօք արդարացնել՝ իւր ազգային և հանրային տեսակէտէն ունեցած պակասութիւնները։ Ապարդիւն աշխատանք մըն է, Հայութիւնը իրր ազգ առնուած ատեն անոր վրայ փնտռել այն փայլուն ձիրքերը և անզուգական արդիւնքները, որոնք տեսնուած են նոյն Հայութեան վրայ, իրր անհատ առնուած պտեն։ Անհատին ունեցած անհամեմատ առատելութիւնները՝ չեղօքացած և ջնջուած կ'երեւին, երբ հանրութեան գործերը զննուին։ Վայրկենական կիրքեր, անխորհուրդ նախանձներ եւ փառամոլական ձգտումներ առջև կ'անցնին անոր գործունէութեան առաջնորդելու։ Հայոց պատմութեան մէջ բազմաթիւ և յաճախ են այս բանին օրինակները, իրաւցնէ ցաւալի և յաւէտ ողբալի պատահարներ, որ վատթար իղձերու դուռ բացած եւ փաստակար երկպառակութեանց պատճառ են եղած, ասոնք ալ առաջնորդած են անլրէպ կործանմանց։ Բաւական ըլլայ միտք բերել՝ Արշակունեաց վախճանը, Աւարայրի ճակատամարտը, և Անիի անկումը։

Հոգեկան բուռն ձգտումներ, և գործի մէջ յանդուգն ձեռնարկներ, որոնք բացառաբար կրնան թերեւս յաջողութեանց պատճառ ըլլալ, փաստակար կը դառնան և ամէնէն ընտիր ծրագիրներն ալ վիժել կու տան, երբոր խոհականութեան և խորագիտութեան օրէնքներուն չեն հպատակիր։ Ահա Հայ ազգին գլուխը եկած արկածներուն մեծ մնասին իսկական պատճառը։ Ազգը պարտաւորուած է միշտ, իւր փաստով անոր դժբախտ հետեւանքները կրել։

Հայ ազգին թշուառութիւններուն և փաստներուն պատճառ եղող պարագաներէն՝ յայտնի չէ թէ ո՞րը աւելի

ազգեցութիւն ունեցած է այդ դժպէտի հետեւանքներուն մէջ. իւր տեղագրական գիրքին բնական պատճառք, թէ իւր անխորհուրդ ձգտումներուն բարոյական պատճառք և բնական պատճառք աներկրայարար իւր վատ գերը ունեցած է այդ գործին մէջ. բայց ի՞նչ պէտք էր ընէին Հայերը բնական դժբախտ կացութեան հանդէպ: Պէտք չէր միթէ որ խոհականութեամբ և չափաորութեամբ իրենց կացութիւնը բարոյքէին, և միութեամբ ու համերաշխութեամբ իրենց զօրութիւնը շատցնէին: Անշուշտ պարտաւոր էին, որ ջանքերու գործակցութեամբ և ոյժերու միաորութեամբ՝ իրենց սրամազրեյի ոյժերը ամրացնէին, իրենց կարողութիւնը զօրացնէին, և այս կերպով յաջողէին առջեւն առնել այն ամէն ազետալի արկածներուն, որոնք հազիւ թէ ուրիշ մէկ ազգի մը հանդիպած են, կամ ժողովուրդի մը բախտին վրայ ծանրացած են:

## ԽԵ .

### ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ

Մեր նիւթին տահմանին մէջ մնալու և մեր նպատակին հաստատրիմ ըլլալու համար, պէտք է որ իրր մեր խօսից կնիք, ընդհանուր ակնարկ մը նետենք և բացատրենք թէ Հայ եկեղեցին ինչ ազգեցութիւն ունեցած է Հայ ազգին բախտին վրայ: Մեր օրերը նորաձեւութեան պահանջ մը գարձած է ի նահ կամ յանճահ, նախ եկեղեցւոյ սրաշատենաներուն դէմ՝ յարձակիլ, և սրաշատենաներէն հաստատութեան բարձրանալով, եկեղեցւոյ դէմ մաքառիլ: Բայց եկեղեցին անարդողներ անգիտակ կուզեն ձեւանալ, որ ինչ կենցաղական և ընկերական առաւելութիւններ որ կան, և

որոնցմով ներկայ դարը կը պարծենայ, ամէնքն ալ քրիստոնէական հանճարին արդիւնքն են. թէ ազատութեան սկզբունքները՝ առաջին անգամ քրիստոնէութիւնը հռչակեց, թէ աշխարհքիս մէջ տեղի ունեցած ամէն բարեգումներ և զարգացումներ իրենց սկիզբը քրիստոնէութենէն ստացան. և թէ անոր մէջ արմատանալով զօրացան: Այդ ճշմարտութիւնները, որ անուրանալի են ընդհանուր քրիստոնէութեան նկատմամբ, յայտնի և հաստատուն կերպով ճշմարտուած են մասնատորապէս Հայ քրիստոնէութեան կամ որ նոյն է Հայ Եկեղեցւոյ վրայ ալ:

Ոմանք երեւակայեցին Հայաստանի անկումը՝ անոր քրիստոնէութիւն ընդունելուն վերադրել, և ժամանակակցութեան պարագայ մը յառաջ կը բերեն՝ իբր փաստ: Բայց կը մոռնան թէ Հայոց քրիստոնէութեան և թագաւորութեան վերջանալուն մէջտեղ՝ ամբողջ մէկուկէս դար միջոց մը անցած է, որ ժամանակակից եղած ըլլալու փաստը կը ջնջէ: Միւս կողմէն ամէնէն թեթիւ պատմական զննութիւնն ալ բաւական է ցուցնելու, որ Հայոց քաղաքական անկման նախասկիզբները չորրորդ դարէն ալ առաջ են, և իրենց ծագումը կ'առնեն Հռոմայեցւոց և Պարթևւոց մէջ մղուած պատերազմներէն: Այս է պատմական ստուգութիւնը: Հետեւաբար պէտք է ընդունիլ, թէ Հայաստանի քրիստոնէութիւն ընդունիլը, ոչ միայն անոր անկման պատճառ չեղաւ, այլ ընդհակառակն այդ վտանգը մէկուկէս դար յետաձգելու արդիւնքը յառաջ բերաւ: Այս ալ շատ բնական հետեւանք մըն էր: Որովհետեւ եթէ հակառակը ընդունիլ հարկ ըլլար, պէտք էր միանգամայն ընդունիլ, թէ բարբարոս և անկիրթ վիճակը ամէնէն օգտակար միջոցն է՝ ազգերու քաղաքական գիրքերը զօրացնելու:

Ուրիշներ ալ կարծեցին թէ հաւատոյ պաշտպանութեան համար հինգերորդ դարու մէջ մղուած պատերազմները ազգային տեսակէտէն սխալ մը եղած են, և թէ ազգին ապագայն ապահովուած կ'ըլլար, եթէ Պարսիկներուն դէ-

Նի-մազդէզը ընդունուած ըլլար: Այս ըտզներն ալ անդիտակ կ'ուզեն ձեւանալ, թէ երբ Պարսիկները իրենց կրօնքը բռնութեամբ պարտաւորիչ կ'ընէին, ներքին նպատակին ուրիշ բան չէր, բայց եթէ զանազան ազգութիւնները ջնջելու և բոլոր տարրերը ցեղերը իրենցին մէջ ձուլել և ընկղմել, եթէ Հայերն ալ այդ պայմանին հպատակէին, իրենք ալ ուրիշ դէնի-մազդէզը ընդունող ազգութեանց պէս, այսօր Պարսիկ տարրին մէջ խառնուած և իրենց իսկութիւնը կորսնցուցած պիտի ըլլային: Պարսիկներուն հետ կրօնքով միացող ազգութիւններուն՝ այսօր բնաւ հետքը չկայ. եւ ոչ իսկ անունին կը յիշուի, թող իրենց անբազաբակիրթ վիճակն ալ:

Եղան այնպիսիներ ալ, որոնք ըսին թէ Հայութիւնը այսօր լաւագոյն դիրք մը ունեցած կ'ըլլար, եթէ ազգովին իրամական կրօնքը ընդունած ըլլար: Սակայն չեն պարզեր թէ ի՞նչ պիտի ըլլար այդ լաւագոյն դիրքը, զոր Հայութիւնը ունեցած պիտի ըլլար: Արարական տիրապետութեանէն սողին Հայ տարրին մէջէն նշանաւոր մաս մը մահմետականութիւն ընդունած է, ըլլայ շահի տեսակէտով, ըլլայ բռնադատութեան ներքեւ: Ո՞ւր են ասոնք, ի՞նչ եղան. ամէնքն ալ ձուլուեցան և կորուեցան այն մեծ տարրին մէջ որ թուրք անունը կը կրէ, և որուն մէջն է Քուրդ կոչուածն ալ կրթութենէ և դպրութենէ զուրկ: Ամէն քաշկրտաւոր պատճառարանութեանց վրայ՝ փորձառական իրականութիւնն է որ կը տիրէ: Այսօր Հայ անունը պահող ուրիշ տարր մը չկայ, բայց եթէ այն որ իւր քրիստոնէութեան վրայ հաստատարիմ մնացած է:

Հայերը դաստիարակներուն կարգին խումբ մըն ալ կայ, որ Հայերուն անկման պատճառ կը նկատէ իրենց ազգային եկեղեցւոյն ամուր կապուած մնայնին. իրր թէ իրենց վիճակը շատ աւելի բարձրուած պիտի ըլլար, եթէ Հոռոմեազաւան կաթողիկոսութիւնը ընդունած ըլլային, որով եւրոպիոյ կաթողիկ տէրութեանց պաշտպանութիւնը կը վայե-



լէին : Բայց այդ ենթադրութեան ալ անհիմն՝ և մեղադրանքին անիրաւ ըլլալը հաստատելու համար, բուական է միտք բերել կիրիկիոյ Հայ թագաւորութեան վերջին եղելութիւնները, և այդ եղելութեանց հետեւանք եղող սպառապուռ կործանումը : Այն եղելութիւնները յայտնապէս կը հաստատեն, թէ կործանումը ողորակի հետեւանքն եղաւ Լատիններու հետ հաստատում՝ մերձաւորութեանց : Նմանապէս դժուար չէ անցելոյն մէջէն երեւան հանել, որ այն ամէն Հայեր, որոնք անպայման կերպով հռոմէապետան կաթոլիկութեան յարեցան, հետզհետէ կորսուեցան, մինչև իսկ անուննին ալ չմնաց : Եթէ Թուրքիոյ Հայ կաթոլիկներն ալ նկատի առնենք, որոնք ինքնուրոյն հասարակութեան գիրք ալ ստացան Օսմանեան կառավարութեան շնորհիւ, անոնք ալ շարունակ պապութեան հետ վէճեր և հակառակութիւններ ունեցան և ունին, Հռոմի կողմէն եղած լատինական ձուլման ձգտումները հեռացնելու, և ինքզինքնին Հայ պահելու համար : Այս օրեր ալ իրենց ազգային կերպարանը պահպանելու համար պարտաւորուած են՝ բուն հետապնդումներու դէմ մաքաւիլ :

Այդ ամէն եղելութիւնները բացարձակ կերպով կը հաստատեն, որ Հայոց ազգային Եկեղեցին եղած է այն միակ յօդակապը, որ Հայկոյ սերունդին ցրուած մնացորդները կրցած է իրարմէ անքակտելի պահել, և իրբու մէկ ազգ պահպանել : Եկեղեցին եղած է, որ անվիճելի կերպով ներարկած է անոր մէջ ներքին կենսականութեան տարրերը, և պատրաստած է արտաքին միջոցներ և գործնական եղանակներ և գործառնական ձեռնարկներ՝ Հայ ազգութեան գոյութիւնը ապահովելու : Եկեղեցւոյ շնորհիւն է, որ Հայութիւնը մնացած է իրր յատուկ և ինքնուրոյն մարմին մը, որ դարերու պայլալութեանց և արկածներու բռնութեանց ներքեւ ալ, ինքն իր մէջ շարունակուելով միշտ նոյն մնացած է :

Հայը, դարերէ իվեր քաղաքական միջոցէն զրկուած,

սերտ փարած է եկեղեցական կեանքին, և զայն ճանչցած է իբր փրկութեան խարխուս մը իւր պեկոծ կեանքին մէջ: Անոր շնորհին է, որ թէպէտ վտանգուած ու տկարացած, բայց վերջապէս իւր գոյութիւնը կրցած է պահել, և մահացու արկածներուն մէջ կեանքը ապահովել: Այդ մեծ զօրութիւնը, որ Հայուն անցեալին վրայ գործունեայ և արդիւնաւոր ազդեցութիւն ունեցաւ, չէ դադարած տակաւին իւր կենսական ողին ներշնչել, և պիտի շարունակէ ալ ապագային միեւնոյն փրկարար դերը պահել, քանի որ նոյն կը մնայ քաղաքական և կենցաղական կացութեան պահանջը: Փորձառական ճշմարտութիւն է, որ ուր քաղաքական կապակցութեան կապը կը պակսի, եկեղեցական կապակցութեան կապն է որ զայն կը փոխանակէ, և միութեան ու գոյութեան պէտք եղած ոյժը կ'ընձեռէ: Այս կերպով Ազգային եկեղեցին կը լինի գաղարեալ Հայրենիքին հողին ներկայացնող երեւելի նշանը, և սիրտի գերազանց ձգտումներուն ոգեւորութիւն բաշխողը:

Վերջին տարիներու միջոցին զանազան կողմերէ կրոյցներ հրապարակ նետուեցան, իբրև թէ Հայերը քաղաքական անկախ ազատութիւն ձեռք ձգելու նպատակով խլրրտումներու ձեռնարկած ըլլան: Երկու դրացի կայսրութիւններ, որոնց մէջ Հայերը մեծագոյն մասամբ ցրուած կը գտնուին, այդ կրոյցներէ առիթ առին Հայերու նկատմամբ անողոք խստութիւններ գործածել: Մենք չենք փնտաւր թէ հնար է՞ր արդեօք Հայերը բացարձակապէս դատապարտել, եթէ այդպիսի գաղափարներ ալ ունեցած ըլլային: Միթէ բարեօրման փափաքը՝ ամէն անհատի բնական և անբռնարարելի իրաւունքը չէ՞: Սակայն եթէ փափաքը ինքնարեւարար կը բղխի սիրտէն, անոր ընթացքը կը կառավարուի միտքէն: Հայերը իրականութեանց մասին շատ յստակ ու որոշ գաղափար ունին, որ մտացածին եղջերուաքաղերու վտանգաւոր բախլոյներու մէջ չմտորին: Անոնք

չեն կրնար շտեմնալ, թէ իրենց հայրենական բնաշխարհին տարածութիւնը երեք հզօր պետութեանց բաժնուած է. թէ իրենք սխառած ու ցրուած են աշխարհի ամէն անկիւնները. թէ իրենց մտաւորական և նիւթական կարողութեանց լաւագոյն կեդրոնները օտար հողերու վրայ են. թէ իրենց ձեռնարկներուն նպատուոյ միջոցները բնաշխարհէն դուրս տեղեր են, և չեն կրնար օգտակար կերպով կարծեցեալ նպատակին գործածուիլ: Արդ քանի որ այսպիսի ու այսչափ արդելքներ ունին իրենց դէմ, կրնա՞ն արդեօք որևիցէ կերպով քաղաքական նպատակ մը յաջողցնելու երազներով ինքզինքնին խարել: Այդպիսի ենթադրութիւն մը ընել հնար չէ, առանց Հայ ազգին ողջմտութեան դէմ նախատինք մը արձակելու: Հայը կրնայ հանդուրժել, որ իրեն դէմ ազատասիրական, նոյն իսկ հայրենասիրական ձրգտումներ ունենալու ամբաստանութիւններ վերադրուին, որչափ ալ այդ ամբաստանութիւնները անհիմն և սուտ ըլլան. բայց նա չկրնար ներել որ իրեն վրայ տխմարութեան միտքեր և ապուշութեան գործեր ենթադրուին:

Ճշմարտութիւնն այն է, որ ամէն բարեմիտ Հայ ուրիշ փափաք չունի, բայց եթէ իւր զբաղմունքներուն հետ խաղաղ ու հաշտ ապրիլ: Հայուն պահանջն է, որ փրատ չհասնի իր կեանքին, իր պատիւին, իր ստացութեան, իր աշխատութեան: Հայը կը պահանջէ, որ ինչպէս ուրիշներ, ինքն ալ խաղաղութեամբ վայելէ իւր գործունէութեան պտուղը. և իւր բնական ձիրքերուն արդիւնքները, ինչպէս կը վայելեն միւս ազգեր, որոնց մէջ կ'ապրի: Այս որինաւոր պահանջներուն հետ կը փափաքի ալ, որ հաստատուն պահէ իւր ազգային ինքնութիւնը, իր լեզուն ու իր գրականութիւնը: Իւր նախնիքներէն նախնական ժառանգութիւն մնացած՝ այս բարիքներուն ստացութիւնը պահպանելու համար, ինքն ապահոված է իւր Ազգային Եկեղեցւոյն ծոցը, և կ'ուզէ որ անձեռնմխելի մնայ այն իւր կանոններով ու աւանդութիւններով, իւր հաստատութիւններ-

բով, և իւր ստացած իրաւանց եւ առանձնաչնորհութեանց  
ամբողջութեամբ :

Հայն այն համոզումն ունի, թէ իւր Ազգային Եկե-  
ղեցին, որ զինքն անցեալին մէջ պաշտպանեց, ապագային  
մէջ ալ պիտի պաշտպանէ :

---

# ՅԱԻԵԼՈՒԱԾ

## Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ

(Հիմ սուխուրվ)

- Ա. Ս. ԹԱԴԷՈՍ ԱՌԱՔԵԱԼ. Հայաստանի մէջ աւետարանը կը քարոզէ, կը նահատակուի Արտաղ իրր 50 թուականին: Գերեզմանը կը գտնուի Մակուի վանքը, Եղեօբայէ եկող Ս. Թաղէոս Գրգիմոս առաքեալին նկատմամբ պատմուածը քննադատական գիտողութեանց կը հանդիպի:
- Բ. Ս. ԲԱՐԹՈՂԻՄԷՈՍ ԱՌԱՔԵԱԼ. Թաղէոսէն ետքը կու գայ աւետարան քարոզել, կը նահատակուի Աղբակ իրր 68 թուականին: Գերեզմանը կը գտնուի Պաշքալէի վանքը:
- Գ. Ս. ԶԱՔԱՐԻԱ, Ս. Թաղէոս առաքելոյ աշակերտ, առաքեալներէն ետքը եկեղեցւոյ գլուխ կը ճանչցուի. կը նահատակուի իրր 76:
- Դ. Ս. ԶԵՄԵՆՏՈՍ, առաքելոց աշակերտ, կը կառավարէ 4 տարի, կը վախճանի իրր 81:
- Ե. Ս. ԱՏՐՆԵՐՍԵՆՆ, կը կառավարէ 15 տարի, կը նահատակուի իրր 97:
- Զ. Ս. ՄՈՒՇԷ, Սիւնիքի աթոռէն Արտաղի աթոռը իրտադրուած, կը կառավարէ 30 տարի, կը վախճանի իրր 128:
- Է. Ս. ՇԱՀԷՆ, կը կառավարէ 25 տարի. կը վախճանի իրր 154:
- Ը. Ս. ՇԱԽԱՐՇ, կը կառավարէ 20 տարի, կը վախճանի իրր 175:

- Թ. Ս. ՂԵՒՈՆՒՒՈՍ, կը կառավարէ 17 տարի, կը նահատակուի իբր 193: Ասոր յաջորդներուն անունները անծանօթ կը մնան, բայց գոյութիւննին կը քաղուի Սիւնիքի աթոռին աւանդութենէն:
- Ժ. Ս. ՄԵՀՐՈՒԺԱՆ, Հայոց եպիսկոպոս եղած է Աբտաղու աթոռին վրայ 230—260 տարիներու միջոցին:

1. Ս. ԳՐԻԳՈՐ Ա. ԼՈՒՍԱՒՈՐԻԶ, կը սկսի քարոզել 301, կը ձեռնադրուի 302, էջմիածին կը հիմնարկուի 303: Լուսաւորիչ կը վախճանի 325, իբր 86 տարեկան:
2. Ս. ԱՐԻՍՏԱԿԷՍ Ա. ՊԱՐԹԵՒ, կրտսեր որդի Լուսաւորչին, հօրը օգնական 306, Նիկիոյ ժողովին կը գտնուի 325, կը յաջորդէ հօրը նոյն տարին 325, կը նահատակուի 333:
3. Ս. ՎՐԹԱՆԷՍ Ա. ՊԱՐԹԵՒ, երէց որդի Լուսաւորչին, կը յաջորդէ եղբորը 333, կը վախճանի 341, իբր 80 տարեկան: Իւր որդին Ս. Գրիգորիս Աղուանից կաթողիկոս, կը նահատակուի 337:
4. Ս. ՅՈՒՍԻԿ Ա. ՊԱՐԹԵՒ, որդի Վրթանէսի, կը յաջորդէ 341, կը նահատակուի 347: Ս. Գաբիէլ Աւետիսեցի՝ որ յաջորդութեան կոչուած էր, կը նահատակուի աթոռ չբարձրացած 347:
5. ՓԱԽԷՆ Ա. ԱՇՏԻՇԱՏԵՑԻ, Լուսաւորչի ազգակից, կը յաջորդէ 348, կը վախճանի 352: Աթոռոյ պարապութեան միջոցին կը տեղակալէ Շահակ Մանգլիկեացի:
6. Ս. ՆԵՐՍԷՍ Ա. ՊԱՐԹԵՒ, մականուանեալ Մեծ, թուռն Յուսիկի, կը յաջորդէ 27 տարեկան 353, չորս տարի գործերէ կը քաշուի 359—363, կը տեղակալէ նոյն Շահակ Մանգլիկեացի՝ Չոնակ ալ գրուած: Ներսէս կը վախճանի 373 յուլիս 25:
7. ՇԱՀԱԿ Ա. ՄԱՆԱԶԿԵՐՏԱՅԻ, Աղբիանոսեան սոհմէն, նոյն ինքն վերեւ յիշուած տեղակալը, պատմիչներէն և ցուցակներէն ոմանց մէջ Յուսակ կամ Յուսիկ անունով նշանակուած է: կը յաջորդէ 373, կը վախճանի 377:
8. ԶԱԽԷՆ Ա. ՄԱՆԱԶԿԵՐՏԱՅԻ, Շահակի ազգակից, կը յաջորդէ 377, կը վախճանի 381:
9. ԱՍՊՈՒՐԱԿԷՍ Ա. ՄԱՆԱԶԿԵՐՏԱՅԻ, Զաւէնի եղբայրը, կը յաջորդէ 381, կը վախճանի 386: Աթոռը պարապ կը մնայ տարի մը:

10. Ս. ՍԱՀԱԿ Ա. ՊԱՐԹԵԻ, մականուննայ Մեծ, ներսէսի որդին, կը յաջորդէ 39 տարեկան 387, Ս. Մեսրոպի հետ գիրի գիւար կը կատարէ 404, կ'աքսորուի 428, Սուրմակ Մանգլիերացի հակաթոռ 428, կը մերժուի 429: Բրիքոյ ասորի հակաթոռ 429, կը մերժուի 432: Շմուէկ ասորի հակաթոռ 432, կը վախճանի 437: Ս. Սահակ աքսորէ կը դառնայ, և հոգեւորական իրաւասութեամբ կը հաստատուի Բագրեւանդի Բլուր գիւղը 432: Սուրմակ զարնայ հակաթոռ 437: Ս. Սահակ կը վախճանի 439 սեպտեմբեր 7: Ս. Մեսրոպ տեղակալ հոգեւոր իրաւասութեան, կը վախճանի 440 փետրուար 17:
11. Ս. ՅՈՎՍԷՓ Ա. ՀՈՂՈՑՄԵՑԻ, տեղակալ հոգեւոր իրաւասութեան 440, Սուրմակ կը վախճանի և Յովսէփ կաթողիկոս կը ճանչցուի 444, կը նախագահէ Շահապիվանի ժողովին 445: և Արասչատի ժողովին 450, կ'աքսորուի 451, կը հրաժարի 452, կը նահատակուի 454 յուլիս 25:
12. ՄԵԼԻՏԷ Ա. ՄԱՆԱԶԿԵՐՏԱՅԻ, կ'ընտրուի 452, կը վախճանի 456:
13. ՄՈՎՍԷՍ Ա. ՄԱՆԱԶԿԵՐՏԱՅԻ, կ'ընտրուի 456, կը վախճանի 461:
14. Ս. ԳԻՒՏ Ա. ԱՐԱՀԷՉԱՅԻ, կ'ընտրուի 461, կ'աքսորուի 471, Օթմուս կ'առանձնանայ 472, կը վախճանի 478: Քրիստափոր Ա. Արծունի կաթողիկոսի անունը ստորական ցուցակներու մէջ թիւրիմացութեան հետեւանք է, գոյութիւն չունի:
15. Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ Ա. ՄԱՆԴԱԿՈՒՆԻ, կը յաջորդէ 478, արթուր Դուին կը փոխադրէ 484, կը վախճանի 490:
16. ԲԱՔԳԷՆ Ա. ՈԹՄՍԵՑԻ, կ'ընտրուի 490, Դուինի ժողովներուն կը նախագահէ 506 և 513, կը վախճանի 515: Սովորական ցուցակներու մէջ նշանակուած համառօտ պաշտօնաւարութիւնը ժամանակագրական պահանջներու և սղըրնական աղբիւրներու չհամապատասխաններ:
17. ՍԱՄՈՒԷԼ Ա. ԱՐԿԵՑԻ, կ'ընտրուի 516, կը վախճանի 526:
18. ՄՈՒՇԷ Ա. ԱՅԼԱՔԵՐԵՑԻ, կ'ընտրուի 526, կը վախճանի 534:
19. ՍԱՀԱԿ Բ. ՈՒՂԿԵՑԻ, կ'ընտրուի 534, կը վախճանի 545:

20. ՔՐԻՍՏԱՓՈՐ Ա. ՏԻՐԱՌԻՋՑԻ, կ'ընտրուի 539, կը վախճանի 545:
21. ՂԵՒՈՆԴ Ա. ԵՌԱՍՏԵՑԻ, կ'ընտրուի 545, կը վախճանի 548:
22. ՆԵՐՍԷՍ Բ. ԲԱԿՐԵՒԱՆԴԱՑԻ, կ'ընտրուի 548, Դուինի ժողովին կը նախագահէ 555, կը վախճանի 557:
23. ՅՈՎՀԱՆՆԷՍ Բ. ԴԱՔԵՂԵԱՆ, կ'ընտրուի 557, կը վախճանի 574:
24. ՄՈՎՍԷՍ Բ. ԵՂԻՎԱՐԴԵՑԻ, կ'ընտրուի 574, ամասրի համար ժողով կը գումարէ 574: Յովհաննէս Բագարանցի հակաթոռ Յունական բաժինին մէջ 590: Մովսէս կը վախճանի 604: Աթոռը առանց կաթողիկոսի կը մնայ երեք տարի, և տեղակալութիւնը կը վարէ Վրասնէս Քերթոլ:
25. ԱՅՐԱՀԱՄ Ա. ԱՂԲԱԹԱՆԵՑԻ, կ'ընտրուի 607 ապրիլ 30, Դուինի ժողովը կը գումարէ 608: Յովհաննէս հակաթոռ կը վախճանի 611: Աբրահամ կը վախճանի 615:
26. ԿՈՄԻՏԱՍ Ա. ԱՂՑԵՑԻ, կ'ընտրուի 615, Ս. Հոսիփոսմէի վկայարանը կը նորոգէ 617, կը վախճանի 628:
27. ՔՐԻՍՏԱՓՈՐ Բ. ԱՊԱՀՈՒՆԻ, կ'ընտրուի 628, կը հրամարի 630:
28. ԵՋՐ Ա. ՓԱՌԱԺՆԱԿԵՐՏԱՑԻ, կ'ընտրուի 630, Կարնոյ ժողովը կը գումարէ 631, կը վախճանի 641:
29. ՆԵՐՍԷՍ Գ. ԻՇԽԱՆՑԻ, մականուն Շինող, կ'ընտրուի 641, գործէ կը քաշուի 652, գործի կը դառնայ 658, կը վախճանի 661:
30. ԱՆԱՏԱՍ Ա. ԱԿՈՌԵՑԻ, կ'ընտրուի 661, կը վախճանի 667:
31. ԻՍՐԱԵԼՎԱՆ Ա. ՈԹՄՍԵՑԻ, կ'ընտրուի 667, կը վախճանի 677:
32. ՍԱՀԱԿ Գ. ՉՈՐՈՓՈՐԵՑԻ, կ'ընտրուի 677, կը վախճանի 703:
33. ԵՂԻԱ Ա. ԱՐՃԻՇԵՑԻ, կ'ընտրուի 703, կը վախճանի 717:
34. Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ Գ. ՕՉՆԵՑԻ, մականուն Իմաստօք, կ'ընտրուի 717, կը նախագահէ Դուինի ժողովին 719, Մանագկերտի ժողովին 726, կը վախճանի 728:
35. ԴԱԻԻԹ Ա. ԱՐԱՄՈՆԵՑԻ, կ'ընտրուի 728, կը վախճանի 741:



36. ՏՐԴԱՏ Ա. ՈԹՄՍԵՑԻ, կ'ընտրուի 741, կը վախճանի 764:
37. ՏՐԴԱՏ Բ. ԴԱՄՆԱՒՈՐԵՑԻ, կ'ընտրուի 764, կը վախճանի 767:
38. ՍԻՈՆ Ա. ԲԱՒՈՆԵՑԻ, կ'ընտրուի 763, Պարտաւի ժողովին կը նախագահէ 768, կը վախճանի 775:
39. ԵՍԱՅԻ Ա. ԵՂԻՊԱՏՐՈՒՇԵՑԻ, կ'ընտրուի 775, կը վախճանի 788:
40. ՍՏԵՓԱՆՈՍ Ա. ԴԸԻՆԵՑԻ, կ'ընտրուի 788, կը վախճանի 790:
41. ՅՈՎԱԲ Ա. ԴԸԻՆԵՑԻ, կ'ընտրուի 790, կը վախճանի 791:
42. ՍՈՂՈՄՈՆ Ա. ԳԱՌԵՑԻ, կ'ընտրուի 791, կը վախճանի 792:
43. ԳԷՈՐԳ Ա. ԲԻՒՐԱԿԱՆՑԻ, մականունն Հոլորբուկ, կ'ընտրուի 792, կը վախճանի 795:
44. ՅՈՎԱԷՓ Ա. ՓԱՐՊԵՑԻ, մականունն Կարիճ, կ'ընտրուի 795, կը վախճանի 806:
45. ԴԱԻԹ Բ. ԿԱԿԱՂԵՑԻ, կ'ընտրուի 806, կը վախճանի 833:
46. ՅՈՎՀԱՆՆԷՍ Դ. ՈՎԱՅԵՑԻ, կ'ընտրուի 833, կը վախճանի 855:
47. ԶԱՔԱՐԻԱ Ա. ԶԱԳԵՑԻ, կ'ընտրուի 855, կը վախճանի 877:
48. ԳԷՈՐԳ Բ. ԳԱՌԵՑԻ, կ'ընտրուի 878, կը վախճանի 898:
49. Ս. ՄԱՇՏՈՑ Ա. ԵՂԻՎԱՐԳԵՑԻ, կ'ընտրուի 898, կը վախճանի 899 նոյանբեր 13:
50. ՅՈՎՀԱՆՆԷՍ Ե. ԴՐՍԽԱՆԱԿԵՐՏԱՅԻ, մականունն Պատմաբան, կ'ընտրուի 899, Վասպուրական կը փոխադրուի 928, կը վախճանի 931:
51. ՍՏԵՓԱՆՈՍ Բ. ՌՇՏՈՒՆԻ, կ'ընտրուի և Աղթամար կը նաստատուի 931, կը վախճանի 932:
52. ԹԷՈՒԴՈՐՈՍ Ա. ՌՇՏՈՒՆԻ, կ'ընտրուի 932, կը վախճանի 938:
53. ԵՂԻՍԷ Ա. ՌՇՏՈՒՆԻ, կ'ընտրուի 938, կը վախճանի 943:
54. ԱՆԱՆԻԱ Ա. ՄՈԿԱՅԻ, կ'ընտրուի 943, Արգիշա կը նաստատուի 944, կը վախճանի 967:

55. ՎԱՀԱՆ Ա. ՍԻՒՆԻ, կ'ընտրուի 967, գահընկեց կը լինի 969:
56. ՍՏԵՓԱՆՈՍ Գ. ՍԵՒԱՆՑԻ, կ'ընտրուի 969, կը բանտարկուի 971, կը վախճանի 972:
57. ԽԱԶԻԿ Ա. ԱՐՇԱՐՈՒՆԻ, կ'ընտրուի 973, կը վախճանի 991:
58. ՍԱՐԳԻՍ Ա. ՍԵՒԱՆՑԻ, կ'ընտրուի և Անի կը փոխադրուի 992 մարտ 29, կը հրաժարի 1016:
59. ՊԵՏՐՈՍ Ա. ԳԵՏԱԴԱՐՉ, կ'ընտրուի 1016, Գիսուկորոս Սանահնեցի հակաթոռ 1036, Պետրոս կը վերահաստատուի 1037, Խաչիկ Բ. աթոռակից 1049, Պետրոս Սեբաստիա կը հաստատուի 1050, կը վախճանի 1054:
60. ԽԱԶԻԿ Բ. ԱՆԵՑԻ, կը յաջորդէ 1054, Թաւրուս կը հաստատուի 1057, կը վախճանի 1060: Աթոռը պարսպ կը մնայ 5 տարի:
61. ԳՐԻԳՈՐ Բ. ՎԿԱՅԱՍԷՐ, առաջին անունը Վանքամ, Գրիգոր Մազիտարոսի որդի, կ'ընտրուի և մամիզաւ կը հաստատուի 1065: Գեորգ Գ. Լոռեցի աթոռակից 1069, կը մերժուի 1072: Սարգիս Հոնեցի հակաթոռ 1076, կը վախճանի 1077: Թեոդորոս Ալախօսիկ հակաթոռ 1077, կը վախճանի 1090: Բարսեղ Ա. աթոռակից 1081: Պօղոս Վարազդի հակաթոռ 1086, կը հրաժարի 1087: Գրիգոր կը վախճանի 1105 յունիս 3:
62. ԲԱՐՍԵՂ Ա. ԱՆԵՑԻ, կը յաջորդէ և Շուգր կը հաստատուի 1105, կը վախճանի 1113:
63. ԳՐԻԳՈՐ Գ. ՊԱՀԼԱՍԻՈՒՆԻ, Վկայասէրի եղբորորդի, կ'ընտրուի 20 տարեկան 1113: Գաւիթ Թոռնիկեան հակաթոռ Աղթամարի մէջ 1114: Գրիգոր աթոռը մովք կը փոխադրէ 1125, Համկիլայ կը փոխադրէ 1147, կը հրաժարի 1166 օգոստոս 17, կը վախճանի երեք ամիս ետքը:
64. Ս. ՆԵՐՍԷՍ Գ. ՎԼԱՅԵՑԻ, մականունն Շնորհալի, Պահլաւունիի եղբայրը. կը յաջորդէ 1166 օգոստոս 17, կը վախճանի 1173 օգոստոս 13:
65. ԳՐԻԳՈՐ Դ. ՏՂԱՅ, Շնորհալիի եղբորորդի, կ'ընտրուի 1173, Համկիլայի մոզովք կը գումարէ 1179, կը վախճանի 1193 մայիս 16:
66. ԳՐԻԳՈՐ Ե. ՔԱՐԱՎԷԺ, կ'ընտրուի 1193, գահընկեց կը լինի և կը վախճանի 1194:

67. ԳՐԻԳՈՐ Զ. ԱՊԻՐԱՏ, կ'ընտրուի 1194: Բարսեղ Բ. Անեցի հակաթոռ 1195: Գրիգոր կը վախճանի 1203:
68. ՅՈՎՀԱՆՆԷՍ Զ. ՍՍԵՑԻ, մականուն Մեծաբարոյ, կ'ընտրուի 1203. Անանիա Սեբաստացի հակաթոռ 1204, Դաւիթ Գ. Աբակաղնեցի աթոռակից 1204: Բարսեղ և Անանիոս և Դաւիթ կը վախճանին 1206: Յովհաննէս կը վախճանի 1221:
69. ԿՈՍՏԱՆԴԻՆ Ա. ԲԱՐՁՐԲԵՐԴՅԻ, կ'ընտրուի 1221, կը վախճանի 1267 ապրիլ 9:
70. ՅԱԿՈԲ Ա. ԿԼԱՅԵՑԻ, մականուն Գիսնական, կ'ընտրուի 1267, կը վախճանի 1286:
71. ԿՈՍՏԱՆԴԻՆ Բ. ԿԱՏՈՒԿԵՑԻ, մականուն Պրօնագործ, կ'ընտրուի 1286 ապրիլ 13, գահընկէց կը լինի 1289:
72. ՍՏԵՓԱՆՈՍ Դ. ՀՌՈՄԿԼԱՅԵՑԻ, կ'ընտրուի 1290, Եգիպտոս գերի կը տարուի 1292, կը վախճանի 1293:
73. ԳՐԻԳՈՐ Է. ԱՆԱԽԱՐՉԵՑԻ, մականուն Տուրքերիցանց, կ'ընտրուի և Սիս կը հաստատուի 1293, կը վախճանի 1307: Սոյ ժողովը կը գումարուի մահուրնէ ետքը 1307:
74. ԿՈՍՏԱՆԴԻՆ Գ. ԿԵՍԵՐԱՅԻ, կ'ընտրուի 1307 մարտ 19, կը վախճանի 1322: Սովորական ցուցակներու մէջ Պրօնագործին հետ չի տրուած է:
75. ԿՈՍՏԱՆԴԻՆ Դ. ԼԱՄԲՐՈՆԱՅԻ, կ'ընտրուի 1322, կը վախճանի 1326:
76. ՅԱԿՈԲ Բ. ՏԱՐՍՈՆԱՅԻ, կ'ընտրուի 1327, կը չրաժարի 1341, կը վերընտրուի 1355, կը վախճանի 1359:
77. ՄԽԻԹԱՐ Ա. ԳՐՆԵՌԵՑԻ, կ'ընտրուի 1341, կը վախճանի 1355:
78. ՄԵՍՐՈՊ Ա. ԱՐՏԱԶԵՑԻ, կ'ընտրուի 1359, կը վախճանի 1372:
79. ԿՈՍՏԱՆԴԻՆ Ե. ՍՍԵՑԻ, կ'ընտրուի 1372, կը վախճանի 1374:
80. ՊՕՂՈՍ Ա. ՍՍԵՑԻ, կ'ընտրուի 1374, Եգիպտոս կը տարուի և կը դառնայ 1375, կը վախճանի 1377:
81. ԹԷՌԴՈՐՈՍ Ա. ԿԻԼԻԿԵՑԻ, կ'ընտրուի 1377, կը վախճանի 1392: Աթոռը տարի մը պարապ:
82. ԿԱՐԱՊԵՏ Ա. ԿԵՂԵՑԻ, մականուն Բոպիկ, կ'ընտրուի 1393, կը վախճանի 1408: Սովորական ցուցակներու մէջ երկու համանուններու վերածուած է, և Ազթամարի Դաւիթը ցուցակի անցած է:
83. ՅԱԿՈԲ Գ. ՍՍԵՑԻ, կ'ընտրուի 1408, կը վախճանի 1411:

84. ԳՐԻԳՈՐ Ը. ԽԱՆՁՈՂԱՏ, աթոռը կը գրաւէ 1411, կը մերժուի 1416:
85. ՊՕՂՈՍ Բ. ԳՍՈՆԵՑԻ, կ'ընտրուի 1416, կը վախճանի 1429:
86. ԿՈՍՏԱՆԴԻՆ Չ. ՎԱՀԿԱՑԻ, աթոռը կը գրաւէ 1429, կը վախճանի 1439, Յովսէփ Երեց հետամուտ կ'ըլլայ աթոռին: սուանց յաջողելու:
87. ԳՐԻԳՈՐ Թ. ՄՈՒՍԱԲԷԳԵԱՆ, կը յաջորդէ 1439, կը քաշուի 1441:
88. ԿԻՐԱԿՈՍ Ա. ՎԻՐԱՊԵՑԻ, կ'ընտրուի և էջմիածին կը հաստատուի 1441, կը հրաժարի 1443:
89. ԳՐԻԳՈՐ Ժ. ՋԱԼԱԼԲԷԳԵԱՆ, կը յաջորդէ 1443, Կարապետ Եղիպիացի Սիրի մէջ հակաթոռ 1446: Արիսակես Բ. Արուսակալ կամ աթոռակից 1448, Ջաֆարիա Արամաւրցի աթոռը կը գրաւէ 1461, կը մերժուի 1462: Սարգիս Բ. Աջասար աթոռակից 1462: Գրիգոր կը վախճանի 1466:
90. ԱՐԻՍԱՍԿԷՍ Բ. ԱԹՈՌԱԿԱԼ, կը յաջորդէ 1466, կը վախճանի 1469:
91. ՍԱՐԳԻՍ Բ. ԱՋԱՍԱՐ, կը յաջորդէ 1469, Յովհաննէս է. Աջակիր աթոռակից 1470, Սարգիս կը վախճանի 1474:
92. ՅՈՎՀԱՆՆԷՍ է. ԱՋԱԿԻՐ, կը յաջորդէ 1474, Սարգիս Գ. Միւսայլ աթոռակից 1474. Յովհաննէս կը մեկնի և կը քաշուի 1484:
93. ՍԱՐԳԻՍ Գ. ՄԻՒՍԱՅԼ, կը յաջորդէ 1484, Արիսակես Գ. էջմիածնեցի աթոռակից 1484: Թադէոս Ա. Վաղարշապատցի, աթոռակից 1199: Նիկիէ Բ. էջմիածնեցի, աթոռակից 1504: Յովհաննէս Վաղարշապատցի, աթոռակից 1505, Ներսէս աթոռակից 1506, Ջաֆարիա Բ. Վաղարշապատցի աթոռակից 1507: Յուսիկ Գուգարացի հայրապետ կոչուած, լոկ վանահայր կ'երեւի 1488: Սարգիս կը վախճանի 1515:
94. ՋԱԲԱՐԻԱ Բ. ՎԱՂԱՐՇԱՊԱՏԵՑԻ, կը յաջորդէ 1515, Սարգիս Գ. Վրասացի, աթոռակից 1515: Ջաֆարիա կը վախճանի 1520:
95. ՍԱՐԳԻՍ Գ. ՎՐԱՍԱՆՑԻ, կը յաջորդէ 1520, կը վախճանի 1537:
96. ԳՐԻԳՈՐ ԺԱ. ԲԻԻՉԱՆԳԱՑԻ, կ'ընտրուի 1537, կը վախճանի 1542:

97. ՍՏԵՓԱՆՈՍ Ե. ՍԱՀՄԱՍՏԵՑԻ, կ'ընտրուի 1542: Միխայիլ Ա. Սեբասացի աթոռակից 1542: Բարսեղ Գ. աթոռակից 1549: Գրիգոր ժԲ. Վաղարշապատեցի աթոռակից 1552: Արիսակես Գ. աթոռակից 1555: Ստեփանոս կը վախճանի 1564:
98. ՄԻՔԱՅԷԼ Ա. ՍԵՐԱՍՏԱՑԻ, կը յաջորդէ 1564. Ստեփանոս Զ. աթոռակից 1567: Միքայել կը վախճանի 1570:
99. ԳՐԻԳՈՐ ԺԲ. ՎԱՂԱՐՇԱՊԱՏԵՑԻ, կը յաջորդէ 1570. Թադևոս Բ. աթոռակից 1571. Առաքել աթոռակից 1575. Դավիթ Գ. Վաղարշապատեցի աթոռակից 1579: Գրիգոր կը վախճանի 1587:
100. ԴԱԻԹ Դ. ՎԱՂԱՐՇԱՊԱՏԵՑԻ, կը յաջորդէ 1587. Մելիսեղեկ Ա. Փառնեցի աթոռակից 1593. Աւետիք աթոռակից 1602. Գրիգոր ժԳ. Սրապիոն աթոռակից 1603. Սահակ Գ. Փառնեցի աթոռակից 1624. Դաւիթ կը հրատարի 1629:
101. ՄՈՎՍԷՍ Գ. ՏԱԹԵՒԱՑԻ, կ'ընտրուի 1629 յունուար 13, կը վախճանի 1632 մայիս 14:
102. ՓԻՂԻՊՊՈՍ Ա. ԱՂԲԱԿԵՑԻ, կ'ընտրուի 1633 յունուար 13, կը վախճանի 1655 մարտ 25:
103. ՅԱԿՈԲ Դ. ԶՈՒՂԱՑԵՑԻ, կ'ընտրուի 1655 ապրիլ 8: Եղիազար Ա. Այնթապցի հակաթոռ 1663. Յակոբ կը վախճանի 1680 օգոստոս 1: Աթոռը պարսպ երկու տարի:
104. ԵՂԻՍԱԶԱՐ Ա. ԱՅԵԹԱՊԵՑԻ, կ'ընտրուի 1682, կը վախճանի 1691 օգոստոս 8:
105. ՆԱՀԱՊԵՏ Ա. ԵԴԵՍԱՑԻ, կ'ընտրուի 1691 օգոստոս 10, կը վախճանի 1705 յունիս 13. աթոռը պարսպ մէկ տարի:
106. ԱՂԵՔՍԱՆԴՐ Ա. ԶՈՒՂԱՑԵՑԻ, կ'ընտրուի 1706, կը վախճանի 1714 նոյեմբեր 22:
107. ԱՍՏՈՒԱՅԱՏՈՒՐ Ա. ՀԱՄԱՏԱՑԻ, կ'ընտրուի 1715 մայիս 7, կը վախճանի 1725 հոկտեմբեր 10:
108. ԿԱՐԱՊԵՏ Բ. ՈՒԼՆԵՑԻ, կ'ընտրուի և կ'օծուի Կաստանդուպոլիս 1726 փետրուար 27, էջմիածին կը հասնի 1728, կը վախճանի 1729 հոկտեմբեր 9:
109. ԱՔՐԱՀԱՄ Բ. ԽՕՇԱՔԵՑԻ, կ'ընտրուի 1730, կը վախճանի 1734 նոյեմբեր 11:
110. ԱՔՐԱՀԱՄ Գ. ԿՐԵՏԱՑԻ, կ'ընտրուի 1434 նոյեմբեր 25, կը վախճանի 1737 ապրիլ 18:
111. ՂԱԶԱՐ Ա. ԶԱՀԿԵՑԻ, կ'ընտրուի 1737, կ'օծուի 1738.

- Յովհաննէս Ազուլեցի *Հակաթոռ* 1740, Պետրոս Բ. Քիւրուր *աթոռակից* 1748, *կը դադարի* 1749: *Ղազար կը վախճանի* 1751:
112. ՄԻՆԱՍ Ա. ԱԿՆԵՅԻ, *կ'ընարուի* 1751 *սեպտեմբեր* 15, *կը վախճանի* 1753 *մայիս* 12:
113. ԱՂԵՔՍԱՆԴՐ Բ. ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԵՅԻ, *ազգանուն* Քարաբաբեան, *կ'ընարուի* 1753, *կ'օծուի* 1754 *մայիս* 6, *կը վախճանի* 1755: Սահակ Ե. Կեղեցի, *մականուն* Ահապին, *կ'ընարուի* 1755, *օծում չընդունելուն* *ցուցակի շանցերի*. *կը վախճանի* 1760:
114. ՅԱԿՈՒ Ե. ՇԱՄԱԽԵՅԻ, *որ կը տեղակալէր*, *կ'ընարուի* 1759 *նոյեմբեր* 24, *կը վախճանի* 1763:
115. ՍԻՄԷՈՆ Ա. ԵՐԵՒԱՆԵՅԻ, *կ'ընարուի* 1763, *կը վախճանի* 1780 *յուլիս* 26:
116. ՂՈՒԿԱՍ Ա. ԿԱՐԵՅԻ, *կ'ընարուի* 1780 *օգոստոս* 2, *կը վախճանի* 1799 *դեկտեմբեր* 27: Յովսէփ Արղուբեան *կ'ընարուի* 1800, *կը վախճանի օծում չստացած* 1801:
117. ԴԱԻԹ Ե. ԷՆԷԳԷԹԵՅԻ, *ազգանուն* Ղօրղանեան, *կը յաջորդէ* 1801 *ապրիլ* 28, *կը մերժուի* 1804 *սեպտեմբեր*:
118. ԴԱՆԻԷԼ Ա. ՍՈՒՐՄԱՌԵՅԻ, *որ ընարուած էր* 1801, *պստանին կ'անցնի* 1804 *սեպտեմբեր* 21. *կը վախճանի* 1808 *օգոստոս* 21:
119. ԵՓՐԵՄ Ա. ՉՈՐԱԳԵՂԵՅԻ, *կ'ընարուի* 1809 *դեկտեմբեր* 26, *կը հրաժարի* 1831 *մարտ* 6:
120. ՅՈՎՀԱՆՆԷՍ Ը. ԿԱՐԲԵՅԻ, *կ'ընարուի* 1831 *մարտ* 31, *կ'օծուի նոյեմբեր* 8, *կը վախճանի* 1842 *մարտ* 26, *նոր ընարութիւնները տարի մը յապաղելու սովորութիւնը կը սկսի*:
121. ՆԵՐՍԷՍ Ե. ԱՇՏԱՐԱԿԵՅԻ, *կ'ընարուի* 1843 *մայիս* 18, *կ'օծուի* 1846 *յունիս* 9, *կը վախճանի* 1857 *փետրուար* 13:
122. ՄԱՏԹԷՈՍ Ա. ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԵՅԻ, *ազգանուն* Չուհանեան, *կ'ընարուի* 1858 *մայիս* 18, *կ'օծուի օգոստոս* 15, *կը վախճանի* 1865 *օգոստոս* 22:
123. ԳԷՈՐԳ Դ. ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԵՅԻ, *ազգանուն* Քերեսեան, *կ'ընարուի* 1866 *սեպտեմբեր* 17, *կ'օծուի* 1867 *մայիս* 21, *կը վախճանի* 1882 *դեկտեմբեր* 6: Ներսէս Վարժապետեան *կ'ընարուի* 1884 *մայիս* 9, *կը հրաժարի և կը վախճանի նոյեմբեր* 26:
124. ՄԱԿԱՐ Ա. ԹԵՂՈՒՏԵՅԻ, *ազգանուն* Տէր-Պետրոսեան, *կ'ըն-*

աբրուի 1885 ապրիլ 21, կ'օծուի նոյեմբեր 10, կը վախճանի 1891 ապրիլ 16:

125. ՄԿՐՏԻԶ Ա. ՎԱՆԵՑԻ, ազգանունն Խրիմեան, կ'ընտրուի 1892 մայիս 5, կ'օծուի 1893 սեպտեմբեր 26, կը վախճանի 1907 հոկտեմբեր 29:

126. ՄԱՏԹԷՍՅՈՒ Բ. ԿՈՍՏԱՆԴՆԱՊՈԼՍԵՑԻ, ազգանունն Իզմիրլեան, կ'ընտրուի 1908 նոյեմբեր 1, կ'օծուի 1909 սեպտեմբեր 13, կը վախճանի 1910 դեկտեմբեր 11:

Արո՛ր պարապ է:

Բ.

## ԹԵՄԵՐՈՒ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ

(Հարսնական հաշուով)

### ԱԹՈՒ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ

1. ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍ (Սամսոյ), պատրիարքական վիճակ. կը պարունակէ Սասմոյզ վիլայէթը. թաղեր և գիւղեր 38, եկեղեցիներ 43, հայադասաններ 150,000, կաթողիկներ 10,000, բողոքականներ 1,000:
2. ՆԻՎՈՄԻԴԻԱ (Իզմիր), արքեպիսկոպոսական վիճակ. կը պարունակէ Իզմիր սանճաքը և Բազարքէոյ քաղան, թաղ. 34, եկղ. 40, հայ. 65,000, կաթ. 500, բող. 600:
3. ԱՐՄԱՇ (Էրմիե), վանական թեմ. կը պարունակէ Էրմիէ նահիէն. թաղ. 3, եկղ. 3, հայ, 5,000:
4. ԱԴՐԻԱՆՈՒՊՈԼՍ (Էսիրնի), եպիսկոպոսական վիճակ. կը պարունակէ Էսիրնի, Քըրքթիլիսէ, Տէտէաղաճ և Կիւմիլի-ճինա սանճաքները, թաղ. 4, եկղ. 5, հայ 8,000:
5. ՌՈՏՈՍԹՈՅ (Թեֆնիւրաղ), եպիսկոպոսական վիճակ. կը պարունակէ, Թէֆթիւրաղ, Կէլիպօլու, Չաթալճա, և Քալայիսուլթանի սանճաքները, թաղ. 7, եկղ. 8, հայ. 25,000:

6. ԹԵՍԱՂՈՆԻԿԷ (Սեյանիկ), տեսչական թեմ, կը պարունակէ Սէլանիկ և Մանասթըր վիլայէթները. թաղ. 12, եկղ. 2, հայ. 2,000:
7. ՊՐՈՒՍԱ (Պուրսա), արքեպիսկոպոսական վիճակ. կը պարունակէ Պուրսա սանճաքը, թաղ. 7, եկղ. 8, հայ. 30,000, կաթ. 3,000, բող. 500:
8. ՊԻԼԷՃԻԿ (Էրբողուլ), եպիսկոպոսական վիճակ. կը պարունակէ Էրթողրուլ սանճաքը, թաղ. 10, եկղ. 12, հայ. 17,000, կաթ. 1,000:
9. ՊԱՆՈՐՄԻՈՆ (Պանսրմա), եպիսկոպոսական վիճակ, կը պարունակէ Քարասի սանճաքը, թաղ. 7, եկղ. 8, հայ. 15,000, կաթ. 500:
10. ԿՈՒՏԻՆԱ (Քէօրանիա), եպիսկոպոսական վիճակ, կը պարունակէ Քէօթանիա և Աֆիօն-Քարահիսար սանճաքները, թաղ. 9, եկղ. 10, հայ. 18,000, կաթ. 1,000, բող. 200:
11. ԶՄԻՒՆԻՍ (Իզմիր), արքեպիսկոպոսական վիճակ, կը պարունակէ Այսրն և Ճէզարի-Պահրսէֆիա վիլայէթները, թաղ. 20, եկղ. 23, հայ. 25,000, կաթ. 2,000, բող. 200:
12. ՊԱՓՂԱԳՈՆԻԱ (Քասրամունի), եպիսկոպոսական վիճակ, կը պարունակէ Քասթամունի վիլայէթը, թաղ. 14, եկղ. 8, հայ. 14,000:
13. ԳԱՂԱՏԻԱ (Էնֆարկ), արքեպիսկոպոսական վիճակ. կը պարունակէ Էնֆարկ և Քըրէչիք սանճաքները, թաղ. 8, եկղ. 20, հայ 16,000, կաթ. 7,000, բող. 300:
14. ԿԵՍԱՐԻԱ (Քայսերի), արքեպիսկոպոսական վիճակ, կը պարունակէ Քայսէրի սանճաքը, թաղ. 31, եկղ. 30, հայ. 40,000, կաթ. 2,000, բող. 2,000:
15. ԻԿՈՆԻՈՆ (Քոնիա), եպիսկոպոսական վիճակ, կը պարունակէ Քոնիա վիլայէթը, թաղ. 14, եկղ. 16, հայ. 25,000:
16. ՍԵՖԱՍՏԻԱ (Սըվազ), արքեպիսկոպոսական վիճակ, կը պարունակէ Սըվազ սանճաքը՝ քանի մը քաղանքու բացառութեամբ, թաղ. 74, եկղ. 56, հայ 80,000, կաթ. 5,000, բող. 1,000:
17. ԵԻԴՈՎԻԱ (Թօֆաթ), եպիսկոպոսական վիճակ. կը պարունակէ Թօքաթ սանճաքը, թաղ. 16, եկղ. 19, հայ, 21,000, կաթ. 2,000, բող. 500:
18. ԱՄԱՍԻԱ, եպիսկոպոսական վիճակ, կը պարունակէ Ամա-



- սիս սանձաքը, թաղ. 19, եկզ. 20, հայ. 25,000, կաթ. 500, բող. 3,000:
19. ՆԻՆՈՊՈՒԼՍ (Ճալին-Քարանխար), եպիսկոպոսական վիճակ. կը պարունակէ Քարահասարը-Նարքի սանձաքը, թաղ. 41, եկզ. 35, հայ. 25,000, բող. 200:
20. ՍԱՄՍՈՆ (ձանիկ), եպիսկոպոսական վիճակ. կը պարունակէ ձանիկ սանձաքը, թաղ. 42, եկզ. 39, հայ. 20,000, կաթ. 500, բող. 300:
21. ՏՐԱՊԻՉՈՆ (Թրապուզան), եպիսկոպոսական վիճակ, կը պարունակէ Թրապուզան, Կիւմրչխանէ և Լազիսթան սանձաքները, թաղ. 42, եկզ. 33, հայ. 30,000, կաթ. 2,000, բող. 700:
22. ԿԱՐԻՆ (Էրզրում), արքեպիսկոպոսական վիճակ. կը պարունակէ Էրզրում, Խնուս, Թորթում, Իսպիր և Կիսկիմ քաղանները, թաղ. 90, եկզ. 89, հայ. 75,000, կաթ. 8,000, բող. 2,000:
23. ԵՐՉՆԿԱ (Էրզնէիան), եպիսկոպոսական վիճակ. կը պարունակէ Էրզնէիան, Ռաֆահիէ և Քուզիջան քաղանները, թաղ. 37, եկզ. 44, հայ. 25,000, բող. 500:
24. ԲԱՅԵՐԴ (Պայպուրդ), եպիսկոպոսական վիճակ. կը պարունակէ Պայպուրդ քաղան, թաղ. 30, եկզ. 31, հայ. 17,000:
25. ԲԱՍԷՆ (Հասանալի), եպիսկոպոսական վիճակ. կը պարունակէ Բասէնէր քաղան, թաղ. 30, եկզ. 19, հայ. 10,000, կաթ. 500:
26. ԴԵՐՋԱՆ (Թերհան), եպիսկոպոսական վիճակ. կը պարունակէ Թերհան քաղան, թաղ. 38, եկզ. 33, հայ. 15,000:
27. ԿԱՄԱԽ (Քեմախ), վանական վիճակ. կը պարունակէ Քեմախ և Քուրուչայ քաղանները, թաղ. 19, եկզ. 21, հայ. 10,000, բող. 200:
28. ԽՈՐՉԵԱՆ (Քլի), եպիսկոպոսական վիճակ. կը պարունակէ Քլի քաղան, թաղ. 56, եկզ. 51, հայ. 24,000, բող. 1,000:
29. ԲԱԳՐԵՒԱՆԴ (Պայազիս), եպիսկոպոսական վիճակ. կը պարունակէ Պայազիս սանձաքը, թաղ. 50, եկզ. 32, հայ. 14,000, կաթ. 1,000, բող. 200:
30. ՎԱՆ, արքեպիսկոպոսական վիճակ. կը պարունակէ Վան, Մահմուտիէ, Արճէշ, և Ալճալազ քաղանները, թաղ. 108, եկզ. 130, հայ. 100,000, կաթ. 500, բող. 200:
31. ԼԻՄ-ԿՏՈՒՅ, վանական վիճակ. կը պարունակէ Թիմար նահիէն, թաղ. 28, եկզ. 32, հայ. 11,000:

32. ԱՂԲԱԿ (Պառփալէ), վանական վիճակ. կը պարունակէ Հէք-  
քիարի սանճաքը, թաղ. 20, եկղ. 23, հայ. 10,000:
33. ԲԱՂԷՇ (Պիրլիս), եպիսկոպոսական վիճակ. կը պարունակէ  
Պիրլիս, Ախլաթ և Մասիքի քաղաները, թաղ. 80, եկղ. 98,  
հայ. 50,000, կաթ. 500, բող. 1,000:
34. ՏԱՐՈՆ (Մուռ), արքեպիսկոպոսական վիճակ. կը պարունա-  
կէ Մուռ և Կինճ սանճաքները, թաղ. 332, եկղ. 230, հայ.  
90,000, կաթ. 3,000, բող. 1,000:
35. ՄՂԵՐԴ (Սեհրք), եպիսկոպոսական վիճակ. կը պարունակէ Սէէրթ  
սանճաքը, թաղ. 50, եկղ. 34, հայ. 25,000, կաթ. 500:
36. ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ (Տիարպէր), արքեպիսկոպոսական վիճակ.  
կը պարունակէ Տիարպէրի և Մէրսին սանճաքները, թաղ.  
42, եկղ. 50, հայ. 45,000, կաթ. 10,000, բող. 1,000:
37. ԲԱԼԱՋՈՎԻՏ (Բալու), եպիսկոպոսական վիճակ, կը պարունակէ  
Բալու քաղան, թաղ. 41, եկղ. 40, հայ. 22,000, բող. 300:
38. ԱՐՂՆԻ (Էրկնէ), վանական վիճակ, կը պարունակէ Էրկէ-  
նէ և Մասէն քաղաները, թաղ. 9, եկղ. 10, հայ. 6,000,  
կաթ. 500, բող. 200:
39. ՉԵՔՈՒՇ (Ջերմիկ), վանական վիճակ. կը պարունակէ Ջերմիկ  
քաղան, թաղ. 3, եկղ. 4, հայ. 5,000, բող. 200:
40. ԽԱՐԲԵՐԴ (Խարբուք), արքեպիսկոպոսական վիճակ. կը  
պարունակէ Մամուրէթիւլաղի, Խարբուք, Կապան և  
Փիւթիւրկէ քաղաները, թաղ. 72, եկղ. 75, հայ. 45,000,  
կաթ. 2,000, բող. 4,000:
41. ԱԿՆ (Էկին), եպիսկոպոսական վիճակ. կը պարունակէ Էկին  
քաղան, թաղ. 7, եկղ. 12, հայ. 10,000, բող. 200:
42. ԱՐԱՐԿԵՐ (Արապիք), եպիսկոպոսական վիճակ. կը պարու-  
նակէ Արապիքի քաղան, թաղ. 16, եկղ. 20, հայ. 18,000,  
կաթ. 500, բող. 1,000:
43. ՉՄՇԿԱՆԿ (Չիմիեկեկէ), եպիսկոպոսական վիճակ. կը  
պարունակէ Չիմիեկէզէ քաղան, թաղ. 31, եկղ. 22,  
հայ. 9,000:
44. ՉԱՐՄԱՆՃԱՔ (հօզաք), եպիսկոպոսական վիճակ. կը պա-  
րունակէ Տէրսիմի սանճաքը՝ մէկ քաղալի բացառութեամբ,  
թաղ. 60, եկղ. 50, հայ. 18,000, բող. 500:
45. ԵԴԵՄԻԱ (Ուրճա), եպիսկոպոսական վիճակ, կը պարունակէ  
Ուրճա և Չօր սանճաքները. թաղ. 16, եկղ. 10, հայ.  
24,000, կաթ. 1,000, բող. 800:

46. ԲԱՖԵԼՈՆ (Պաղսաս), հպիսկոպոսական վիճակ. կը պարունակէ Պաղսաս, Պասրա և Մուսուլ վիլայէթները, թաղ. 4, եկղ. 3, հայ. 5,000, կաթ. 1,000:
47. ԿԻՊՐՈՍ (Կիպրոս), վանական թեմ. կը պարունակէ Կիպրոս կղզին, թաղ. 2, եկղ. 3, հայ. 1,000:
48. ԵՊԻՊՏՈՍ (Մըսր), արքեպիսկոպոսական վիճակ. կը պարունակէ Եգիպտոսի փոխարքայութիւնը, թաղ. 10, եկղ. 5, հայ. 14,000, կաթ. 1,500:
49. ՊՈՒԼԿԱՐԻԱ, արքեպիսկոպոսական վիճակ. կը պարունակէ Պուլկարիոյ թաղաւորութիւնը, թաղ. 15, եկղ. 10, հայ. 20,000:
50. ՌՈՒՄԱՆԻԱ, արքեպիսկոպոսական վիճակ. կը պարունակէ Ռումանիոյ թաղաւորութիւնը, թաղ. 17, եկղ. 15, հայ. 10,000:
51. ՅՈՒՆԱՍՏԱՆ, տեսչական թեմ. կը պարունակէ Յունաստանի թաղաւորութիւնը, թաղ. 4, եկղ. 1, հայ. 1,000:

Ա Թ Ո Ռ Ե Ր Ո Ւ Ս Ա Ղ Է Մ Ի

52. ԵՐՈՒՍԱՂԷՄ (Բուսս), պատրիարքական վիճակ. կը պարունակէ Բուսս և Ճէպէլը-Լիպնան սանճաքները. թաղ. 3, եկղ. 10, հայ. 3,000, կաթ. 200:
53. ՅՈՊՊԷ (Եափա), տեսչական թեմ. կը պարունակէ Եափաջի քաղան, թաղ. 2, եկղ. 3, հայ. 1,000:
54. ԴՍՄԱՍԿՈՍ (Եամ), տեսչական թեմ. կը պարունակէ Սիրիա վիլայէթը, թաղ. 1, եկղ. 1, հայ. 2,000:
55. ՎԵՐԻՏՈՆ (Պէրուր), տեսչական թեմ, կը պարունակէ Պէրուրի վիլայէթը, թաղ. 4, եկղ. 4, հայ. 1,000, կաթ. 300:

Ա Թ Ո Ռ Կ Ի Լ Ի Կ Ի Ո Յ

56. ՍԻՍ (Քօզան), կաթողիկոսական վիճակ. կը պարունակէ Քօզան սանճաքը. թաղ. 10, եկղ. 7, հայ. 9,000, բող. 500:
57. ԱՏԱՆԱ, արքեպիսկոպոսական վիճակ. կը պարունակէ Ատանա, Մէրսին և Իշիլի սանճաքները, թաղ. 16, եկղ. 12, հայ. 30,000, կաթ. 1,000, բող. 200:

58. ՀԱՃԸՆ ԵՎԻՍԿՈՎՈՍՏԻՆԻ ԳԻՃԱԿ. Կը պարունակէ Հաճըն քաղան, թաղ. 5, Եկղ. 8, հայ. 20,000, կաթ. 1,000, բող. 700:
59. ՓԱՅԱՍ (Պեռեկեր), Եվիսկոպոսական գիճակ. Կը պարունակէ Պերէքէթաղ սանճաքը, թաղ. 25, Եկղ. 11, հայ. 11,000:
60. ԲԵՐԻԱ (Հայկայ), Եվիսկոպոսական գիճակ. Կը պարունակէ Հայէպ, Իսքէնաէրուն և Պէլլան քաղաները. թաղ. 17, Եկղ. 8, հայ. 15,000, կաթ. 5,000, բող. 2,000:
61. ԳԵՐՄԱՆԻԿԻԱ (Մարաշ), արքեպիսկոպոսական գիճակ. Կը պարունակէ Մարաշ, Ալպսասն և Բաղարճը քաղաները, թաղ. 35, Եկղ. 24, հայ. 30,000, կաթ. 4,000, բող. 3,500:
62. ՈՒԼՆԻԱ (Ձեյրունի), Եվիսկոպոսական գիճակ. Կը պարունակէ Ձեյթուն և Էնտէրուն քաղաները, թաղ. 18, Եկղ. 14, հայ. 20,000, կաթ. 500, բող. 500:
63. ՅԵՆՈՒՉ, գանական թեմ. Կը պարունակէ Փոնուզ նահիէն, թաղ. 6, Եկղ. 10, հայ. 7,000:
64. ԱՅՆԹԱՊ, Եվիսկոպոսական գիճակ. Կը պարունակէ Այնթապ և Քիլիս քաղաները, թաղ. 4, Եկղ. 6, հայ. 30,000, կաթ. 1,000, բող. 4,000:
65. ԱՆՏԻՈՒՄ (Անթաքիա), Եվիսկոպոսական գիճակ. Կը պարունակէ Անթաքիա, Շուղուր, և Մահիուն քաղաները, թաղ. 16, Եկղ. 9, հայ. 12,000, կաթ. 2,000, բող. 1,500:
66. ՄԵԼԻՏԻՆԷ (Մալաքիա), Եվիսկոպոսական գիճակ. Կը պարունակէ Մալաթիոյ սանճաքը, թաղ. 42, Եկղ. 23, հայ. 20,000, կաթ. 2,000, բող. 1,000:
67. ԵՐԶՂԱՏ (Եզկիար), Եվիսկոպոսական գիճակ, Կը պարունակէ Եզկիար սանճաքը, թաղ. 46, Եկղ. 43, հայ. 40,000, բող. 1,000:
68. ԿԻԻՐԻԻՆ (Քիւրին), Եվիսկոպոսական գիճակ, Կը պարունակէ Քիւրին և Ղանդալ քաղաները, թաղ. 11, Եկղ. 26, հայ. 17,000, կաթ. 500, բող. 1,000:
69. ՏԵՓՐԻԿԷ (Տիւրիկ), Եվիսկոպոսական գիճակ. Կը պարունակէ Տիւրիկի քաղան, թաղ. 14, Եկղ. 19, հայ. 11,000, բող. 300:
70. ՏԱՐԱՆՏԻԱ (Տարկեսի), գանական թեմ, Կը պարունակէ Տարկեսի քաղան, թաղ. 2, Եկ. 4, հայ. 7,000:

## Ա. Թ. ՈՒ Ա. Դ. Թ. Ա. Մ. Ա. Ր. Ա. Յ

71. Ա. Դ. Թ. Ա. Մ. Ա. Ր., կաթողիկոսական վիճակ, կը պարունակէ Կալաշ, Շատախ և Կարճկան քաղաքները, թաղ. 130, եկղ. 203, հայ. 70,000, բող. 500:
72. ԽԻՉԱՆ, եպիսկոպոսական վիճակ, կը պարունակէ Խիզան քաղաք, թաղ. 64, եկղ. 69, հայ. 25,000:

## Ա. Թ. ՈՒ Է. Ջ. Մ. Ի. Ա. Ն. Ի

73. ԵՐԵՒԱՆ, կաթողիկոսական վիճակ, կը պարունակէ Երեւան նահանգը. թաղ. 225, եկղ. 240, հայ. 250,000:
74. ՆԱԽԻՉԵՒՒԱՆ, եպիսկոպոսական վիճակ, կը պարունակէ Նախիջեւանի գաւառը. թաղ. 87, եկղ. 116, հայ. 70,000:
75. ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ, եպիսկոպոսական վիճակ, կը պարունակէ Ալեքսանդրապոլ գաւառը. թաղ. 147, եկղ. 151, հայ. 200,000, կաթ. 6,000, բող. 500:
76. ԿԱՐՍ, եպիսկոպոսական վիճակ, կը պարունակէ Կարս նահանգը, թաղ. 91, եկղ. 93, հայ. 65,000, կաթ. 1,000:
77. ՏԱԹԵԻ, վանական թեմ, կը պարունակէ Տաթև գաւառը, թաղ. 87, եկղ. 100, հայ. 75,000:
78. ՏՓՂԻՍ, արքեպիսկոպոսական վիճակ, կը պարունակէ Թիֆլիս և Քուպան նահանգները, թաղ. 133, եկղ. 177, հայ. 150,000, կաթ. 4,000, բող. 1,000:
79. ԳՈՐԻ, եպիսկոպոսական վիճակ, կը պարունակէ Քոթայիս և Բաթում նահանգները, թաղ. 31, եկղ. 33, հայ. 40,000, կաթ. 7,000:
80. ԱԽԼՑԻԱԿ, եպիսկոպոսական վիճակ, կը պարունակէ Ախալցխի և Ախալքալիք գաւառները, թաղ. 71, եկղ. 67, հայ. 90,000, կաթ. 10,000:
81. ԳԱՆՉԱԿ (Ելիզավէրպոլ), եպիսկոպոսական վիճակ, կը պարունակէ Ելիզավէթպոլ նահանգը, թաղ. 92, եկղ. 93, հայ. 100,000:
82. ՇՈՒՇԻ (Ղարաբաղ), արքեպիսկոպոսական վիճակ, կը պարունակէ Շուշա նահանգը, թաղ. 169, եկղ. 167, հայ. 150,000:

83. ՆՈՒԽԻ, եպիսկոպոսական վիճակ. կը պարունակէ Նուխա գաւառը, թաղ. 52, եկղ. 53, հայ. 50,000:
84. ՇԱՄԱԽԻ, արքեպիսկոպոսական վիճակ. կը պարունակէ Դաղբառան նահանգը և Շամախի գաւառը, թաղ. 45, եկղ. 34, հայ. 60,000, կաթ. 2,000:
85. ԲԱԳՈՒ, տեղական վիճակ. կը պարունակէ Բագու նահանգի հարաւարեւելեան մասը, թաղ. 15, եկղ. 10, հայ. 30,000:
86. ԱԺՏԱՐԽԱՆ, արքեպիսկոպոսական վիճակ. կը պարունակէ արեւելեան Ռուսաստան, Սիրերիա և Թուրքեստան երկիրները, թաղ. 45, եկղ. 31, հայ. 70,000:
87. ՂԸՋԼԱՐ, եպիսկոպոսական վիճակ. կը պարունակէ հարաւարեւելեան Ռուսաստանը. թաղ. 25, եկղ. 12, հայ. 60,000:
88. ԲԵՍԱՐԱՅԻՄ, արքեպիսկոպոսական վիճակ. կը պարունակէ հարաւարեւմտեան Ռուսաստանը, թաղ. 19, եկղ. 13, հայ. 20,000:
89. ՆՈՐ-ՆԱԽԻՋԵԼԻԱՆ, եպիսկոպոսական վիճակ. կը պարունակէ հարաւային Ռուսաստանը և Դոնի երկիրը, թաղ. 40, եկղ. 34, հայ. 60,000:
90. ՊԵՏՐՔՈՒՐԳ, տեղական թեմ, կը պարունակէ հիւսիսային Ռուսաստանը, թաղ. 3, եկղ. 2, հայ. 4,000:
91. ՄՈՍԿՈՒԱ, տեղական թեմ, կը պարունակէ միջին Ռուսաստանը, թաղ. 4, եկղ. 3, հայ. 4,000:
92. ՊԱՐՍԿԱՍՏԱՆ (Սպանան), արքեպիսկոպոսական վիճակ. կը պարունակէ արեւելեան Պարսկաստանը, թաղ. 98, եկղ. 70, հայ. 30,000, կաթ. 1,000:
93. ԹԷՂՐԱՆ, տեղական թեմ, կը պարունակէ պարսկական Իրաք նահանգը, թաղ. 17, եկղ. 15, հայ. 5,000:
94. ԱՏՐՊԱՏԱԿԱՆ (Թաւրիզ), արքեպիսկոպոսական վիճակ, կը պարունակէ Ատրոպէճան պարսկական նահանգը, թաղ. 70, եկղ. 100, հայ. 40,000, կաթ. 400:
95. ՀԱՄԱՏԱՆ, տեղական թեմ. կը պարունակէ Գիւրգիստան և Լուրիստան պարսկական նահանգները, թաղ. 10, եկղ. 10, հայ. 6,000, բող. 1,000:
96. ԿԱԼԿԱԹԱ, եպիսկոպոսական վիճակ. կը պարունակէ Հնդկաստան և Հնդկաչին երկիրները, թաղ. 20, եկղ. 10, հայ. 6,000:

97. ԲԱՏԱԻՒԱ, տեսչական թեմ, կը պարունակէ Ջառա կղզին, թաղ. 4, եկղ. 2, հայ. 4,000:
98. ՍՈՒՉԱՎԱ, տեսչական թեմ, կը պարունակէ Պուքոյինա եւ Մաճառաստան երկիրները, թաղ. 10, եկղ. 5, հայ. 4,000, կաթ. 5,000:
99. ԵՒՐՈՊԱ, եպիսկոպոսական վիճակ, կը պարունակէ Անգղիա, Գաղղիա, Բեղղիա եւ Հելուեօրա երկիրները, թաղ. 20, եկղ. 4, հայ. 6000, կաթ. 15,000 Լեհաստանի, Աւստրիոյ եւ Իտալիոյ մէջ:
100. ԱՄԵՐԻԿԱ, եպիսկոպոսական վիճակ, կը պարունակէ Հիսպանիոյն Ամերիկայի երկիրները, թաղ. 50, եկղ. 5, հայ. 50,000, բող. 5,000:







## ՅԱՆԿ ՆԻԻԹՈՑ

### ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ

Գլխ.	Նախաբան բարգմանութեան.	3
	Յառաջաբան Պ. Պարեյի.	9
Ա.	Ինչ է մեր նպատակը.	19

### ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Բ.	Հայ եկեղեցւոյ ծագումը.	22
Գ.	Հայ եկեղեցւոյ նախնական ժամանակը.	25
Դ.	Հայաստանի ամբողջական դարձը.	29
Ե.	Նուիրապետութեան հաստատութիւնը.	32
Զ.	Զորրոգ դարու եկեղեցին.	37
Է.	Հայ դպրութեանց սկզբնաւորութիւնը.	41
Ը.	Հինգերորդ դարու եկեղեցին.	45
Թ.	Քաղկեդոնի ժողովը.	51
Ժ.	Քաղկեդոնական խնդիրներ.	59
ԺԱ.	Խնդիրներու շարունակութիւնը.	64
ԺԲ.	Կաթողիկոսութեան տեղափոխութիւնները.	69
ԺԳ.	Կիլիկիոյ հայրապետանոցը.	75
ԺԴ.	Միաբանութեան փորձեր.	79
ԺԵ.	Միութեանական ձգտումներ.	88
ԺԶ.	Էջմիածին վերադարձը.	95
ԺԷ.	Կոստանդնուպոլսոյ պատրիարքութիւնը.	101

Գլխ.		Երես.
ԺԸ.	Զարբնումի դարը .	104
ԺՓ.	Ուրբեսաներոց դար .	109
Ի.	Իննեսաներոց դար .	115

## ՎԱՐՊԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

ԻԱ.	Գաւանական սկզբունքներ .	123
ԻԲ.	Հայ Եկեղեցւոյ դաւանութիւնը .	127
ԻԳ.	Հաւասոյ հանգանակը .	133
ԻԴ.	Ներողամտութեան հոգին .	138
ԻԵ.	Եկեղեցւոյ խորհուրդները .	143
ԻԶ.	Վարդապետութեան նշանաբանութիւն .	147

## ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

ԻԷ.	Նուիրապետութեան կազմակերպութիւնը .	153
ԻԸ.	Հայ Եկեղեցւոյ նուիրապետութիւնը .	160
ԻՓ.	Եկեղեցական պաշտօններ .	165

## ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆԸ

Լ.	Կղերն ու կուսակրօնութիւն .	168
ԼԱ.	Եկեղեցական հասոյթներ .	174
ԼԲ.	Աւխարհականներու մասնակցութիւնը .	180
ԼԳ.	Եկեղեցւոյ անուներ .	186

## ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ

ԼԴ.	Կրօնական շէնքեր .	190
ԼԵ.	Կրօնական պաշտօնեաներ .	195
ԼԶ.	Կրօնական պարսաւորութիւններ .	201
ԼԷ.	Տոմարական դրութիւնը .	206
ԼԸ.	Տերունական տօներ .	210
ԼՓ.	Սուրբերու յիշատակներ .	216

## ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Գլխ.		Երես.
Խ.	Ընդհանուր տեսություն.	222
ԽԱ.	Վերջին երեսոյթներ.	227

## ՆԵՐԿԱՅ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

ԽԲ.	Արտաքին կերպարանք.	231
ԽԳ.	Զանազան տարրեր.	234
ԽԴ.	Ազգային նկարագիր.	238
ԽԵ.	Նկեղեցւոյ ազդեցութիւնք.	242

## ՅԱՒԵԼՈՒՄՆԸ

Ա.	Կարողիկոսներու ժամանակագրութիւնք.	249
Բ.	Թեմերու միճակագրութիւնք.	259

---





